

ՆՈՐ ՇՐՋԱՆ

IV ՏԱՐԻ

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. Մ Ս Ա. Գ Ի Ր

№ 5

Մ Ա Յ Ի Ս

1904



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագաստիպ Ա. Քուծաթէլածէի
Երկրայեանի փող., № 21.

1904

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

№ 5

	Երես
1. ԼՈՒԹԻՒՆԸ (շարունակ.), վեպ Ա. Ահարոնեանի	5
2. ԳՈՒՆԱՏ ՕՐԵՐ, ոտան. Դ. Դեմիրճեանի	35
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, ծերունի	36
4. ՀԱՅԹՈՒԽ ՍԻՄՈՆԸ, պատմաւածք Կ. Հօօրեանի	51
5. ՅՈՒՐՏ Է ՈՒ ԳԻՇԵՐ, ոտան. Ա. Խաճակեանի	71
6. ԶԱԼԸՄ ՏՂԱՆ (վերջ), դրամա 5 ար., Թլխատի	72
7. ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՆԳՂԻԱՅՈՒՄ, Տ-ի	97
8. ԵՐԵԿՈՅԵԱՆ, ոտան. Տենիսոնի, Թարգմ. անգլ. *	103
9. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԻՒՐԴԵՐԸ, յօդ. Ն. Փրանգեանի	104
10. ԽԵՂՃ ՈՒ ԱՆՈՒՇ ԿՈՐԷԱ, Ժորժ Դիւլլրոկի, Թարգմ. Փրանս. ***	112
11. ՆԻՅՇԷՆ ԻՐՐԵԻ ՓԻԼԻՍՈՓԱ (շարունակ.), Հանս Վայ- հինգերի. Թարգմ. օր. Ս. Իւ.	125
12. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԳ ՄԱՄՈՒԼԸ, յօդ. Տիգրանի	136
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.— Թէ ինչպէս պէտք է գրել վրաց պատմութիւնը:— Վրացի պատմա- կանի կարծիքը վրացի նայրեմաւորների մասին:— Բա- նաստեղծ Կոս. Բարբաձէի մահը, Տ. Փիրումեանի	143
14. ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Յ. Մանանդեան եւ Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վկանե- րը», *— 2) Դրիգոր Արծրունու աշխատութիւնները, Տ. Յով. :— 3) Դարեգին Մեծատուրեան՝ «Ընտրութիւն կամեատուների կամ կամեատ (2) կովերը ճանաչելու մի- ջոցները», Ե. Ա. :— 4) Վաճան Թաւարթեղեանի «Բա- նաստեղծութիւնները», Զ. :— 5) Հ. Համբարձումեան՝ «Անճունի էջերում», Ա. Մ. :— 6) Սմար Խաչկամի «Բառեակները», Ա. Ա. :— 7) Պատասխան պ. Ե. Լալա- յեանին, Ա. Վ. Ղ.	147
15. ՆՈՐ ՍՏԱՅՈՒՄԾ ԳՐԲԵՐ.	172
16. ՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ, Կովկասի ուկու մասին, Յովհ. Նարապետեանի	174
17. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Մարգարային մարմինին արձակած ճառապայմները, Մ. Նալբանդեանի.	180
18. ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ	184
19. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— «Համնի մէջ» պիեսը մեր ին- տելլիկեցիայի մասին:— Ժ. Ի. Ք. Փիմոնէ:— Ժ. Յ.	

Նոր շրջան IV տարի

Հրատ. XVI տարի

ՄՈՒՐՃ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 5

Մ Ա Յ Ի Ս

1904



Թ Ի Ք Ի Ս

Տպարան Ե. Զուլաբեկյանի, Նիկ. № 21.

1904

.....
Дозволено цензурою. Тифлисъ, 27 мая 1904 года
.....

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

№ 5

	Երև.
1. ԼՌՈՒԹԻՒՆԸ (շարունակ.), վէպ Ա. Ահարոնեանի	5
2. ԴՈՒՆԱՏ ՕՐԵՐ, ոտան. Դ. Դեմիրճեանի	35
3. ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ, ծերունի	36
4. ՀԱՅԹՈՒՆ ՍԻՄՈՆԸ, պատմուածք Կ. Հօրեանի	51
5. ՅՈՒՐՏ Է ՈՒ ԳԻՇԵՐ, ոտան. Ա. Խաչակեանի.	71
6. ԶԱԼԸՄ ՏՂԱՆ (վերջ), զրամա 5 ար., Թլկատի	72
7. ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ, Տ. ի	97
8. ԵՐԵԿՈՅԵԱՆ, ոտան. Տենիստի, Թարգմ. անգլ. *	103
9. ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՔԻՒՐԴԵՐԸ, յօդ. Ե. Փրանգեանի	104
10. ԽԵՂՃ ՈՒ ԱՆՈՒՇ ԿՈՐԷԱ, Ժորժ Դիմրոսի, Թարգմ. ֆրանս. ***	112
11. ՆԻՅՇԷՆ ԻԲՐԵԻ ՓԻԼԻՍՈՓԱ (շարունակ.), Հանս Վայ- հինգերի. Թարգմ. օր. Ս. Իւ.	125
12. ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԲ ՄԱՄՈՒԼԸ, յօդ. Տիգրանի	136
13. ՎՐԱՅ ԿԵԱՆՔԻՑ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ.— Թէ ինչպէս պէտք է զրել վրաց պատմութիւնը:—Վրացի գիտնա- կանի կարծիքը վրացի հայրենասիրների մասին:—Բա- նաստեղծ Եսո. Բարբաքի մահը, Տ. Փրանգեանի	143
14. ՔՆՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.— 1) Յ. Մանսդեան եւ Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վիճակ- ը», * :—2) Դրիգոր Արծրունու աշխատութիւնները, Տ. Յով. :—3) Գարեգին Մեծառուբեան՝ «Ընտրութիւն կամեատունների կամ կամնոտ (?) կովերը ճանաչելու մի- ջոյները», Ե. Ս. :—4) Վահան Թաւարէզեանի «Բա- նաստեղծութիւնները», Զ. :—5) Հ. Համբարձումեան՝ «Անհունի էջերում», Ա. Մ. :—6) Օմար Խաչեանի «Բանականները», Ա. Ս. :—7) Պատասխան պ. Ե. Լաւ- րեանին, Ա. Վ. Ղ.	147
15. ՆՈՐ ՍՏԱՅՈՒՄԾ ԳՐՔԵՐ.	172
16. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՅԵՐ, Կովկասի ոսկու մասին, Յովհ. Կարապետեանի	174
17. ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ, Մարկիային մարմինին արձակած ճառապայմանքը, Մ. Նալբանդեանի.	180
18. ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ	184
19. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.— «Ճահճի մէջ» պիեսը մեր ին- տելիգենցիայի մասին:—† Ի. Բ. Փրանգեան:—† Յ.	

- Բրեդիսին:—† Շահլաման, Լ. Սարգսեան . . . 187
- Նոր փոխառումներ:—Լժան բնակարաններ կառուցանող ընկերությունը Պետերբուրգում:—Մամուլի վերաբերիալ կարգադրություններ 187
20. ԱՐՏԱՔԻՆ, ՏԵՍՈՒԹԻԻՆ.—Ռուս-ճապոնական պատերազմը:—Ֆրանսիայի եւ Վատիկանի յարաբերությունները:—Սասունի գէպերը:—Գեղարուեստի եւ գիտության նշանաւոր կորուստներ Աւրուպայում—Լինքոլն, Իսկայ, Դիւկլո, Տարդ, Ստենլի, Լ. Ս. 195
21. ԹԱՏՐՈՆ, Լ. Մանուէլեանի «Նկարիչ Թաշեան», Տիգրանի 203
2. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ 208
23. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ —
24. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ 209
25. I ՅԱԻԵԼՈՒՄԾ, Ջէյմս Ս'որրիէր՝ «ՀԱՋԻ ԲԱՐԱՅԻ ԱՐԿԱՇՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ. կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան 97—112
26. II ՅԱԻԵԼՈՒՄԾ, Իշխ. Ա. Սումբատովի՝ «ԴԱԻԱՃԱՆՈՒԹԻՒՆ», զբամա 5 արար., թարգմ. ռուս. լէնից Ալ. Ծատուրեան. 23—38

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրությունը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ զբեկ պարզ, մանաւանդ թիւերը, յատուկ անուններն ու օտար բառերը, ե թիւք թի միայն մի երեսի վրայ. սոսանձնապէս ուշ զարձնել կէտագրութեան վրայ: Թարգմանութեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը ե' բնագիրը:
2. Չբնորոշուած մեծ յօդուածները պահւում են խմբագրատանը 6 ամիս, իսկ չետոյ ոչնչացւում են: Ձեռագիրը չեա սոսանալու համար պէտք է ուղարկել ճանապարհածախսը: Փոքր յօդուածներն ու սոսանաւորները չեն վերագրւած ձեռնում:
3. Գրուածքների վարձատրութեան չափը որոշում է խմբագրությունը: Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարւում են անվճարելի:
4. Խմբագրությունն իրան է վերադառնում ուղարկուած յօդուածները փոփոխելու կամ կրճատելու իրաւունքը:
5. «Մուտքի» համարը շտապուելու պէտքում պէտք է խմբագրութեանը տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:
6. Խմբագրութեանը պանապան հարցումներով պիտոյ անձինք պէտք է պատասխանի համար ուղարկելն նամակագրւում կամ պատասխին բլանկ:
7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կապ: Հասցէի փոփոխումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսուայ 25-ից ուշ ուշ, որպէսզի առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

Լ Ռ Ո Ւ Թ, Ի Ի Ն Ը^{*)}

«Հօրս չեմ յիշում, այսպէս սկսեց նա՝ հոգոց հանելով ու յետոյեա տանելով իր ճակատի խոպուպները.— Ես երկու՝ և քոյրս չորս տարեկան էր, երբ նա մեռաւ: Մեզ դաստիարակողը և խնամողը եղել է մայրս, մի սիրող, քնքոյշ սրտի տէր մայր, որ մեզ համար ոչինչ չի խնայել: Բարեբախտաբար հայրս, որ մի յայտնի բժիշկ է եղել, այնքան միջոցներ թողել էր, որ մենք նիւթական դժուարութիւններէց միանգամայն ազատ՝ անկարօտ ապրել կարողանայինք:

Ես ու քոյրս շնորհիւ մօրս քնքոյշ հոգածութեան՝ լաւ դաստիարակութիւն և կրթութիւն ստացանք և համարեա միաժամանակ հասած ազջիւններ էինք: Ինչպէս դու էլ նկատել ես, մենք՝ ես ու քոյրս խիստ նման ենք իրար. այդպէս ենք եղել դեռ շատ փոքրից, մեր ծանօթները յաճախ դժուարացել են մեզ որոշել իրարից: Սակայն այդ նմանութիւնը միայն արտաքուստ է, մեր բնաւորութեան, մեր ճաշակների ու հասկացողութեան, առհասարակ մեր ներքինի մէջ երբէք որեւէ նմանութիւն չի եղել: Բնութեան մի անօրինակ խաղ էր կարծես մեր արտաքին այդ ապշեցուցիչ նմանութիւնը և մեր ներքինի նոյնքան ապշեցուցիչ տարբերութիւնը: Եւ այդ տարբերութիւնը միշտ յօգուտ ինձ չի եղել, որքան քոյրս լռակեաց էր, լուրջ, խոհուն, իրերի վրայ պարզ հայեացքի տէր, նոյնքան ես թեթեւ էի, շատախօս, երա-

^{*)} Տես «Մուրճ», № 4.

զող, յափշտակուող, ինչպէս մի միամիտ երեխայ, եւ իմ երազները... բոլորը թեւաւոր, բոլորը վարդազոյն, աշօրինակ: Կեանքն ինձ թւում էր որպէս հաճելի երազների, գրաւիչ հեքիաթների մի անվերջ շարք: Երեկ քեզ պատմեցի, թէ ինչպէս երկար ժամանակ հաւատացած էի, որ ինձ կը փախցնի մի գեւ կամ մի առասպելական սպայ ու կը տանի հեռու, հեռու. և այդ անորոշ, խուլ հեռուները ես կարողանում էի երեւակայել, ապրում էի նրանցով: Քանի-քանի անգամ ես նկարտիզում ծառի տակ հասած՝ մոռացել եմ գիրքը ծնկներիս վրայ, նայել եմ վերեւ, երկնքից սահող ամպերին և դրանց հետ տարուել մի ուրիշ հրաշալի աշխարհ, ուր ամեն բան տարբեր է մերինից:

Մայրս ու քոյրս ինձ աստիկ սիրում էին, գուրգուրում էին վրաս՝ որպէս տան փոքրիկ, այնպէս որ ես մի մօր տեղ երկու մայր ունէի: Քրոջս սէրը մասնաւորապէս այնքան բուռն էր իր արտայայտութիւնների մէջ, որ յաճախ հասնում էր անձնուիրութեան: Նա ընդունակ էր ամենատեսակ զրկանք, նեղութիւններ յանձն առնել՝ ինձ գոհ և երջանիկ դարձնելու համար: Յիշում եմ, ես մի անգամ ծանր հիւանդացայ, և նա քիչ մնաց խելագարուէր վշտից ու յուսահատութիւնից: Չնայելով որ մենք այնպէս նման էինք իրար, բայց նա միշտ կ'աշխատէր ինձ աւելի գեղեցիկ դարձնել մի աւելորդ ժապաւնով, մազերի մի առանձին հիւստւածքով: Նա զուարճանում էր ինձանով, ինչպէս փոքրիկ աղջիկը իր տիկնիկով, իր մասին կարծէք բնաւ չէր մտածում, երջանիկ էր, ինձ տեսնելով ուրախ, կայտառ: Նրա և մօրս քնքոյշ վերաբերմունքը կամաց-կամաց ինձ դարձրին էլ աւելի պահանջող, չարահաճի, երես առած, նոյնիսկ ետասէր: Ես սովորեցի չարունակ զոհեր ընդունել՝ առանց երբէք մտածելու զոհաբերութեան մասին: Ինձ թւում էր, որ ուրիշ կերպ չի էլ կարող լինել, որ իմ մերձաւորները պէտք է ինձանով զբաղուեն, կատարեն իմ ամենատեսակ հաճոյքները, սիրեն ու փաղաքեն ինձ, իսկ

ես ապրեմ իմ ուղածի պէս, անհոգ ու ազատ ինչպէս
թռչունը եթերի մէջ:

Եւ ես ապրեցի ու մեծացայ ինչպէս ազատ ու ան-
հոգ թռչուն... դա կեանք չէր, իմ ընկեր, այլ մի դողալը-
րիկ երազ...

Մի անգամ մեր տուն եկաւ մի ծովային սպայ՝ մեր
հեռաւոր ազգականի որդին: Նա ջահիլ էր ու սիրուն,
բարձրահասակ, թիկնաւէտ, միշտ ուրախ, զուարճաբոս:
Ես չգիտէի, թէ նա ինչո՞ւ է եկել, բայց ուրախ էի և
երեխայի պէս յուզմունքս թագցնել չէի կարողանում:
Ինձ սաստիկ դրաւում էր նրա յաղթ իրանը գեղեցիկ
համազգեստի մէջ, նրա վճռականութիւն ու յանդգնու-
թիւն արտայայտող դէմքը, և ամենից աւելի նրա ոլո-
րուն բեխերը, որոնք միշտ այնպէս վեր էին ցցուած
և նրա կերպարանքին տալիս էին կտրիչ արտա-
յայտութիւն: Եւ այն ժամանակ ես սաստիկ սիրում էի,
որ տղամարդը կտրիչ, արի տեսք ունենայ, որ նրա շար-
ժումները, քայլուածքը զօրեղ բնաւորութիւն և ոյժ ար-
տայայտեն: Իմ մեծագոյն հաճոյքն էր ինձ երեխայ և
հովանաւորուած զգալ մի լաւ տղամարդի մօտ: Ինչո՞ւ
միայն ես, ինձ թւում է, որ իւրաքանչիւր կնո՞յ իդէալը
հուժկու, թիկնաւէտ ու բարեձև տղամարդն է, առնա-
կան էներգիայով լի: Ես չեմ ուզում ասել, որ կինը
միանգամայն աչք է փակում ուժեղ սեռի հոգեկան,
մտաւոր կարողութիւնների վրայ, բայց անպայման
է, որ ոյժ ու զօրեղ առնականութեամբ շնչող օր-
դանիզները համարեա անդիմադրելի դրաւչութիւն են
ներկայացնում կանանց համար:

Գեռ առաջին գիշերը, երբ ամենքը քնեցին և ընդ-
հանուր խաղաղութիւն իջաւ մեր տան վրայ, ես երկար
ժամանակ անքուն էի և լուրջ կերպով մտածում էի,
թէ գուցէ մեր հիւրը, այս անծանօթ ու գեղեցիկ տը-
ղամարդը եկել է յատկապէս ինձ փախցնելու համար: Ես
հաճոյքով երեւակայում էի, թէ ինչպէս նա կը մօտե-
նայ, խաւարի մէջ խարխալելով կը գտնի ինձ, ես կը

գողամ, սիրաս կը բաբախի, բայց չեմ ճշայ. յետոյ նա իմ ձեռքից կը բռնի, կը բարձրացնի, ես վախժխելով կը հետեւեմ նրան, մենք դուրս կը գանք, կը նստենք դրանք սպասող կատաղի նժոյգի վրայ և կը սլանանք հեռու, հեռու, դէպի մի անծանօթ աշխարհ, ուր նա կը փակի ինձ մի գլխակա՛ն գլեհակի մէջ...

Յերեկներն ամբողջ ես նրա հետ էի անցկացնում մտերմաբար. կարծես մենք հին ծանօթ ընկերներ լինէինք: Եւ նրա հետ վարւում էի այնպէս, ինչպէս երեխաները գիտեն վարուել իրանցից մեծերի հետ, երբ նրանք երես են տալիս ու փաղաքշում: Ամենակարճ ժամանակում ես այնքան համարձակութիւն ստացայ, որ երբ նրան գտնում էի պարտիզում նստած, յետեւից գաղտագողի մօտենում էի, ամթողը թիկունքից քաշում ու վայր դնում, կամ ձեռքից խլում փախցնում զանազան իրեր, կարգալու գիրքը, յաճախ գլխարկը: Նա ինձ հալածում էր, ես քրքշալով ու հեալով փախչում էի շտապով և թագ կենում պարտիզում, յանկարծ յայտնւում էի մի ուրիշ անկիւնից, պինդ-պինդ քաշում մազերը կամ բեխերը և կրկին անյայտանում անտառում, յին ֆէայի նման: Նա թոյլ էր տալիս ինձ անել իր հետ ինչ կամենամ, նոյնիսկ օժանդակում էր իմ մանկական չարութիւններին, միայն յաճախ մատը թափ էր տալիս վրաս և ժպտալով ասում.

«Չարածճի՛, թէ կը բռնեմ...»

Եւ մի անգամ պարտիզի մի հեռուոր անկիւնում՝ ծառերի տակ բռնեց ինձ, զրկեց իր ուժեղ բազուկներով և պինդ համբուրեց: Միայն մի վայրկեան այդ ժամանակ ես նրա աչքերին նայեցի ու սաստիկ կարմրեցի... Բայց այնուամենայնիւ այդ համբոյրն ինձ չխրտնեցրեց, ես երկար, երկար ծիծաղեցի և այնուհետեւ նւրան աւելի էի չարչարում: Միայն լաւ յիշում եմ, աշխատում էի էլ երբէք չբռնուել, որ նա այնպէս չհամբուրի ինձ, թէև կ'ուզէի, որ նա կարողանար ինձ բռնել հակառակ իմ ջանքերի. ծայրայեղ դէպքում վճռել էի.

Եթէ այդպիսի բան նորից պատահէր, չնայել նրա աչքերին, նրանց արտայայտութիւնը համըրրի վայրկենին մեր խաղերին նման չէր, սակայն կասկած չկար, որ կը նայէի: Ես միշտ այդպէս եմ, սիրում եմ նայել այն ամենին, ինչից վախենում եմ... Եթէ կարելի լինէր մահը տեսնել առանց խաղին՝ մեռնելու, ես հաճոյքով կը վնդդէի նրան...

Քեզ ասացի, որ ես սիրում եմ սարսափը:

Մայրս իմ բոլոր չարութիւնների ու խաղերի համար կամ ժպտում էր՝ երբ նկատում էր, կամ քաղցրութեամբ յանգիմանում էր առանց խստութեամբ արգելելու: Տարօրինակ էր մանաւանդ քոյրս, նա հեռու նըստած՝ ժամերով դիտում էր մեր խաղերը, լռութեամբ ժպտում էր իմ արածների վրայ, յետոյ երկար մնում էր մտախոհ: Ես շատ ուշ նկատեցի այդ և հաւատացած էի, որ քոյրս չի սիրում սպային, մանաւանդ՝ որ հետը խօսելիս կարճ պատասխաններ էր տալիս և գըլուխը քաշ ձգում: Քրոջս այդ վերաբերմունքը որբան ինձ անհասկանալի էր, նոյնքան էլ դուր չէր գալիս, որովհետեւ ես մեր հիւրին համարում էի շատ լաւ մարդ, լաւ ընկեր, որի հետ կարելի էր շատ հաճելի ժամեր անցկացնել: Յաւում էի քրոջս համար, բայց ես երջանիկ էի և բնաւ չէի մտածում իմ վարմունքի մէջ փոփոխութիւն առաջ բերել:

Մեր հիւրը ամբողջ տառա մնաց մեզ մօտ: Նա դիչերները միայն անց էր կացնում հիւրանոցում, իսկ ցերեկները մեր տանը: Ժամանակն անցնում էր ուրախ, մենք յաճախ զբօսանքներ էինք կատարում քաղաքի շրջակայքում ոտքով, ձիով: Ես դժգոհ էի սակայն, որ նա ինձ չի փախցնում գիշերով, ձի նստելիս՝ քաղաքից դուրս երբ մեր առաջ փուռում էր լայնարձակ հորիզոնը, այն անորոշ հեռուն, որից գէշը մարդ սիրում է երեւակայել խորհրդաւոր աշխարհ, ես լայն շունչ էի առնում ազատ կրճքով, կարծես եթերանում էի թամբի վրայ և քիչ էր մնում մօտենամ իմ սիրուն ասպետին,

կամացուկ փսփսամ՝ «էյ, քչիր, փախչենք»... Եւ կը փախչէի, եթէ նա քչէր:

Տղամարդի հետ փախչելու իմ այդ բուռն ցանկութիւնը միանգամայն երեխայական էր. ամուսնութեան մասին այդ ժամանակ ես լուրջ հասկացողութիւն չունէի. գիտէի, որ հէքիաթների մէջ սիրուն աղջիկներին փախցնում են... և ես սիրուն էի: Բայց թէ ինչո՞ւ են փախցնում, ես այդ մասին բնաւ չէի մտածում: Երկու տասարդ սպային չէի սիրում, կամ թէ սիրում էի այնպէս, ինչպէս երեխան կը սիրի իրանից մեծին, որ փաղաքշում է, գզւում է իրան. գուցէ և կար սեռական բնազդը, որովհետեւ ես սաստիկ ուզում էի նրա հետ լինել, բայց գիտակցութիւն, կնոջ պէս սիրուելու պահանջ չէի զգում:

Ես տաննակեց տարեկան էի:

Մի օր մայրս ինձ առանձնացրեց և ասաց ժպտալով.

— Գիտե՞ս, Մարգարիտ, մեր հիւրը քեզ ուզում է, ինչ կ'ասես:

— Ի՞նչպէս թէ ուզում է, բացառանչեցի ես գովա՝ մակութեամբ:

— Ուզում է քեզ հետ ամուսնանալ, քո ձեռքն է խնդրում, չե՞ս հասկանում:

Ես հասկանում էի, բայց կարկամուեցի, կարմրեցի և մի վայրկեան լուռ կացայ՝ գլուխս քաշ ձգած: Մայրս սպասում էր և ձեռքով շոյում մազերս:

— Թող փախցնի, ասացի ես յանկարծ՝ գլուխս բարձրացնելով ու փախայ հեռացայ մօրս աչքից: Առաջին անգամ իմ կեանքում ես ամաչեցի մօրիցս և առաջին անգամ այդ պատճառով լացս եկաւ. ես թագնուեցի և լաց եղայ: Ինչո՞ւ էի լալիս, չգիտեմ, կարծեմ նրա համար, որ իմ մանկութեան վառ երազները, գողտրիկ հէքիաթների հետ կապուած վարդագոյն յոյսերը ցնդւում էին անգառնալի կերպով: Այնքան տարիներ իմ սպասած, երազներիս մէջ փայփայած «ասպետը» եկել էր՝ վերջապէս և ինձ չէր փախցնում, չէր տանում բիւրե-

ղեայ պալատները մութ անտառների, խոր ձորերի բարձր լեռների միջով, այլ «ուզում էր»... Դա իմ առաջին և խիստ դառը յուսախաբութիւնն եղաւ, այդօրը ես ոտք դրի կեանքի շեմքի վրայ և արդէն ողբում էի փախչող մանկութիւնս, մօտիկ անցեալի դիւթական հէքիաթները, որոնք այնքան տարիներ փայփայել էին իմ երեակայութիւնը: Արցունքներս դեռ վճիռ էին, նրանց ազբիւրը հողուս խորքում դեռ չէր պղտորուել, բայց անորոշ կերպով զգում էի, որ կեանքը հէքիաթ չէ, երազներն այնտեղ ցնդւում են որպէս արշալոյսի վաղանցուկ գոյներ: Միտտ փղձկաց մի անորոշ ցաւից, առանց իմանալու ես կատարում էի կեանքի սուգը, ես ողբում էի այն մեծ ցաւը, որ մաս-մաս աղբում է արարածների մէջ: Եւ լացեցի՜, լացեցի՜...

Ձեռ երկարացնի. ես նրա հետ այնուամենայնիւ նշանուցի կարծես հանաքով և յետոյ ամուսնացայ դարձեալ կարծես հանաքով: Մայրս ցանկանում էր, որ ես ամուսնանամ, որովհետեւ հաւատացած էր, թէ աւելի լաւ ընտրութիւն անել անկարելի է, փեսացուն հաւուստ էր և լաւ ծագումից, լաւ էլ ապագայ ունէր առաջը: Ես էլ սաստիկ շաապում էի իմանալ, թէ ինչ տեսլ է նշանուած, ապա պսակուած լինել մի աղամարդի հետ: Իմ փեսացուն ինձ համար ոչ թէ սիրելի, այլ պարզապէս հետաքրքիր էր: Փոքր ժամանակ ես միշտ անհամբեր էի իմանալու հէքիաթի վախճանը, այժմ էլ աշխատում էի շուտով իմանալ, թէ ինչով է վերջանալու իմ սեփական հէքիաթը:

Գոյրս քանի գնում մույլում էր և անձնատուր լինում մի մութ թախծի: Նշանադրութեանս երեկոյին նա այնքան տխուր էր, որ ես մօտեցայ նրան և ասացի յուզուած.

— Կլարա, հոգիս, ճշմարիտն ասա ինձ, աղաչում եմ, դու չես սիրում նրան, չես ուզում, որ ես նրա հետ ամուսնանամ, այնպէս չէ. երեւի դու մի բան գիտես,

ինչո՞ւ ես ծածկում ինձանից. ասո՛ւ, և ես յետ կը կե-
նամ, ես քեզ այնպէ՛ս եմ սիրում:

— Երեխայ, պատասխանեց Կլարան ժպտալով, նա
այնպէ՛ս լաւ մարդ է: Եւ յետոյ ինձ գրկեց ու պինդ,
պինդ համբուրեց: Նա երբէք ինձ աւելի ջերմ, աւելի
անկեղծ համբոյր չէր տուել: Ես նրա հոգին զգում էի
նրա շրթունքների վրայ, նրա համբոյրի մէջ: Եկե-
ղեցի գնալուց առաջ նա դարձեալ գրկեց ինձ ջերմու-
թեամբ և համբուրեց երկար, երկար ու ասաց.

— Բախտաւոր լինիս, քոյրիկ, ծ, ինչպէս եմ ուզում,
որ դու բախտաւոր լինիս... աշխարհում այնպէ՛ս դը-
ժուար է երջանիկ լինել...

Եւ ես տեսայ նրա աչքերում արցունքներ: «Աւրա-
խութեան, յոյզի արցունքներ են», մտածեցի ես:

Իմ ամուսնութիւնից յետոյ քոյրս իսպառ մոռոյ-
լուեց. նրա ժպիտը դարձաւ աւելի և աւելի սաւառ,
առհարկի, իսկ թախիծը մշտական: Մայրս անհանգիստ
էր, բայց նա էլ ինձ պէս ոչինչ չգիտէր: Կլարան ժա-
մերով մնում էր մտազբաղ, ասես մի վերին աստիճանի
ծանր խնդրի վճռով զբաղուած, յաճախ մեն-մենակ
թափառում էր պարտիզում, աշխատելով աչքի չընկնել.
Իսկ երբ ես ու ամուսինս հանդիպում էինք նրան զօ-
տանքների ժամերին, նա մեզ գիմաւորում էր առհարկի
ժպտով, աշխատում էր կատակել մեր հասցէին և իս-
կոյն մի որևէ պատշաճ պատրուակ էր գտնում մեղա-
նից հեռանալու և կրկին իր սենեակում առանձնու-
թեան անձնատուր լինելու. համար: Եւ այդ բոլորը
նա կատարում էր այն աստիճան քաղցր վարպե-
տութեամբ, որ ես չնայելով իմ կասկածներին՝ ստի-
պուած էի մտածել, թէ դուցէ նա հեռանում է իմ և
ամուսնուս՝ իբրեւ նորապատկաների՝ միայնութիւնը չը-
խոնգարելու համար: Մի քանի անգամ էլ հարցեր տուի.
նա միշտ կարողացաւ վերին աստիճանի հանգստացու-
ցիչ պատասխաններ գտնել, նոյնիսկ մեզ հետ միասին

յաճախակի պարտէզ դուրս եկաւ, զբօսանքի գնաց և դրանով ամեն կասկած փարատեց:

Հարսանիքիցս մի ամիս յետոյ ամուսինս մեկնեց նաւային վարժութիւններին մասնակցելու, որից յետոյ նա պէտք է դար փոխադրելու ինձ իր ընկալալայրէ: Այս վաղաժամ անձատոււմը, որ տեւելու էր ամսից աւելի, ինձ ամենեւին տխրութիւն չարածառեց: Զգում էի, որ ես նրա հետ բնաւ կապուած չեմ այն քնքոյշ զգացմունքով, որ էլ աւելի ուժղին է դառնում անձատման ժամերին, և որ այնպէս կիզիչ է դարձնում կարօտը: Ինքս ինձ ցաւով խօստովանեցի, որ ամուսնացել եմ յիմարաբար, սոսկ իմ անհանգիստ, հետաքրքիր բնաւորութեանը բաւականութիւն տալու համար: Ես այնուամենայնիւ վերսկսեցի իմ նախկին կեանքը, ճշմարիտ է՝ աւելի պակաս եռանդով, բայց սրտի առանձին դահութեամբ, ինչպէս մի ծանր բեռից ազատուած: Ամուսինս կարծես մի անձանօթ անցորդ էր, որ եկաւ ինձ ասաց անողորմ ու անմիտ կեանքի դառն խորհուրդը և հեռացաւ գնաց՝ հոգուս վրայ փռելով մի մութ թախիժ, մի անբացառելի վիշտ: Ինձ հետ կատարուել էր մէկն այն թիւրիմացութիւններից, որոնցով լի է մարդկային կեանքը, և որոնք շատ յաճախ ճակատագրական են դառնում անխորձ, միամիտ հոգիների համար: Ամուսնութիւնն ինձ թւում էր մի երեխայական խազ, ես չգիտէի, որ անգամ երեխայական խաղերի մէջ լինում են այնպիսի վտանգաւորները, որոնք հեշտութեամբ դառնում են արագեղիս:

Աչուն էր արդէն, ամուսինս գեռ չէր վերադարձել: Մի երեկոյ մենք երեքով նստած էինք ճրագի առաջ. քոյրս խորատուզուած էր մի գլբի ընթերցանութեան մէջ, մայրս ակնոցները դրած նայում էր մի հաշուեցուցակի, որ հէնց այդ օր ներկայացրել էր մեր պաշարեղէն հայթայթօղը, իսկ ես նամակ էի գրում ամուսնուս: Դուրսը վատ գիշեր էր, խաւարը թանձր, և առաւօտից սկսուած անձրևախառն բամբին անդադար ձեծում էր

լուսամուտները: Տրամադրութիւնս վատ էր. երբ հասաւ նամակիս այնտեղը, ուր տնակ էի ամուսնուս, թէ տունը նրան ձանձրանում եմ, կանգ առայ... դրածս ճշմարիտ չէր, ես կեղծում էի: Դրիչս վար դրի և մըտածում էի վշտով, թէ ինչո՞ւ եմ կեղծում և յետոյ՝ թէ ես դեռ որքան երկար այսպէս պիտի կեղծեմ, քանի որ նրան չեմ սիրում, պիտի կեղծեմ աշխարհի առաջ, նրա առաջ, մօրս ու բոլորս առաջ: Եւ այս զարհուրելի կեղծիքի շարքը, որի մէջ ընկել էի կամաւ, չլիցի պէս ինձ նեղեց, խեղդեց: Զգացի, որ ձանձրանում եմ ոչ թէ նրա բացակայութիւնից, այլ և՛ կեղծելուց, և՛ նամակ գրելուց: Կռաւորեմ մի անգոր՝ զայրոյթ կրճիցս բարձրացաւ վեր, ես ներկային շարժումներով պատուոտեցի նամակը և գէն չպրտեցի, որ ընկաւ բոլորս ոտների առաջ: Նա գլուխը բարձրացրեց, իր խոշոր, թախծոտ աչքերը ինձ վրայ ուղղեց:

— Ինչո՞ւ պատուեցիր, հարցրեց կամացուկ:

— Ձեմ ուզում գրել, ասացի:

— Ինչո՞ւ չես ուզում գրել:

— Տրամադրութիւնս վատ է, անպիտան եղանակ է:

— Տրամադրութիւնդ վատ է, կրկնեց նա ծանր կերպով ու կրկին գլուխը կախեց դրբի վրայ: Ես նկատեցի, որ նա էլ չի կարգում, այլ մտածում է: Մայրս ուշք չէր գործնում և շարունակում էր իր աշխատանքը: Դրսում քամին շարունակում էր տնալ, և անձրեւ ծածում էր պատուհանները վհատեցուցիչ յամառութեամբ. Ամեն անգամ, երբ փեղկերը թրխում էին, քոյրս գլուխը բարձրացնում էր դրբի վրայից, նայում էր լուսամուտներին վախեցած հայեացքով, մի վոզր մնում այդ դիրքով մտախօհ վիճակում, ապա կրկին շարունակում իբր թէ կարգաւ: Քամին դրսում աւելի սաստկացաւ. լուսամուտների տարակիւններն աւելի ուժգին ձայն հանեցին. Կլարան գլուխը բարձրացրեց և անհանգստութեամբ ասաց.

—Ի՜նչ անպիտան եղանակ է դուրսը. ծովը երևի այժմ սարսափելի է:

Նա կարծես սպասում էր, որ ես մի բան կ'ասեմ, կը միանամ նրան, բայց ես լուռ կացայ ու նայում էի լուսամուտին:

—Կարծես չէր կարելի նաւային վարժութիւններն ամառն անել, շարունակեց Կլարան, այժմ այս դժոխա-յին եղանակով մարդկանց չարչարել ծովի վրայ...

—Երևի այդպէս էլ պէտք է, պատասխանեցի ես, չէ՞ որ պատերազմը ամեն մի եղանակին կարող է պա-տահել:

Կլարան ինձ նայեց մի այնպիսի տարօրինակ հա-յեացքով, որ որքան ինձ անհասկանալի էր, նոյնքան լուռ յանդիմանութիւն էր ինձ հիմ սառն, անտարբեր պա-տասխանի համար: Նա ինձ երբէք այդպէս վատ չէր նայել, և ես առաջին անգամ իմ կեանքում նրա աչքում կարդացի ինձ համար մի անախորժ միտք: Պարզ էր, որ նա միանգամայն ուրիշ պատասխան էր սպա-սում ինձնից, չէ՞ որ ալեկոծ վատնդաւոր ծովի վրայ այդ գիշեր իմ ամուսինն էր: Նա գլուխը քաշ ձգեց դրբի վրայ, դարձեալ չէր կարդում, և ես նկատեցի, որ նրա դէմքը ընդունեց խիստ երազոյ տեսք: Այնպէս կ'ուզէի իմանալ, թէ նա ի՜նչ է մտածում, այդ ժամին, ի՜նչ է երազում, ի՜նչ յուշեր են պաշարել նրա գլուխը: Սակայն նոյնիսկ մի փոքր հաւանական ենթագորութիւն անել անգամ չէի կարողանում: Յանկարծ մեր զանգը տուին. տարօրինակ ոչինչ չկար, բայց քոյրս այնպէս ցնցուեց ու դունատուեց, որ կարծես նա մի վերին աստիճանի ա-նախորժ, մի սարսափելի տխուր բան լսելու նախազգա-ցումով էր բռնուած մինչև այդ: Դուռը բացուեց, աղա-խինը ներս մտաւ մի հեռագիր ձեռքին: Կլարան ոտքի թռաւ ու խլեց. ես և մայրըս նայում էինք և սպասում հետաքրքրուած...

Նա բացեց հեռագիրը դողդոջուն ձեռներով, արագ հայեացքով անցաւ վրայից, երեքաց կանգնած տեղում,

աջ ձեռքով կուրծքը սղմեց ցաւով, իսկ ձախ ձեռքով հեռադիրը ճմուռեց ջղաձգաբար, շնչարգելուած՝ ընդհատ-
ընդհատ հեաց և յանկարծ սկսեց ծիծաղել բարձրա-
ձայն, երկար, երկար, մի սարսափելի ծիծաղով, ապա
կարծես կուրծքը վրաւ ահագին վշտի ծանրութիւնից,
նա հեկեկաց խեղաբար լացով և ուշաթափ փռուեց յա-
տակի վրայ: Ես ու մայրս սարսափած վրայ պրծանք,
բարձրացրինք և անկողնի վրայ դրինք նրան առանց ու-
չինչ հասկանալու այս բոլորից, և երբ երկար չարչա-
րուելուց յետոյ կարողացանք մի փոքր հանգստացնել
նրան, ես այն ժամանակ միայն յիշեցի հեռադիրը և
կամացուկ դուրս բաշեցի նրա սղմուած մատների արան-
քից այդ խորհրդաւոր թղթի կտորը և կարդացի... Նա-
ւը՝ որի վրայ գտնուում էր իմ ամուսինը, խորտակուել
էր շողեկաթսայի պոյթումից, սակաւաթիւ զոհերի
թուումն էր և նա՝ իմ ամուսինը: Մայրս ծնկներին
սուռեց, գլուխը ձեռներին մէջ առաւ ու կծկուեց քրոջ
անկողնի մօտ, իսկ ես մնացի քարացած իմ տեղում՝
չիմանալով ինչ անել, լմլ, թէ՛ ոչ...

Եւ լաց չեղայ...

Այն հեռադիրը, քրոջ անօրինակ յուզմունքը, նը-
րա մութ վիշտը, այս ուշաթափութիւնը տարօրինակ
կերպով զուգադիպում էին, այս բոլորն ինձ շլմեցրեց,
ծանր հարուածի պէս իմ գլխին իջաւ: Ինձ համար գո-
նէ լացի ժամանակ չէր, վերջապէս պէտք էր մտածել:
Ինձ թւում էր, որ մի մութ բան ինձանից միանգամայն
անկախ ու ծածուկ պաշարել է ինձ, խաւարով պատել
իմ աչքերը, և ես երկար ժամանակ քայլել եմ մօայլ
տարածութեան մէջ՝ առանց ոչինչ տեսնելու: Ամենքը,
ամենքը փախչում, խուսափում էին ինձանից, բոլոր ծա-
նօթ ընտանի պատկերները չքանում էին, և ես ինձ ըզ-
գում էի մենակ, անընկեր, մի հրաբխային լեռան վը-
րայ քայլելիս, որ ուր որ է պոյթելու է ահագին օրո-
տով, և որի մօայլ անդունդների մէջ ես պիտի կորչեմ
յաւիտեան:

Միթէ գիտէին այս բոլորը մահամերձ քոյրս և այս ընկճուած, խեղճ մայրս, գիտէին, որ ես մի կորած ա-
րարած եմ, ծանօթ էին այն սև գապտնիքին, որ բոլոր
ժամանակ իմ թիկունքից քայլառքայլ սողացել է հը-
րէշի պէս, մինչև որ ես հասնեմ անդունդի ծայրին, ուր
նա վար է գլորում ինձ՝ յանկարծ բանալով աչքերս, որ-
պէսզի տեսնեմ իմ կորստեան բոլոր սարսափը: Հնարա-
ւոր է այդ, որ նրանք՝ իմ հարազատները իմանա-
յին այս բոլորը և լռէին գաւազիրների պէս: Ե՞րբ
է տեսնուած այդ աստիճան անողորմութիւն, մը-
տածում էի ես ցաւով. ո՛չ, այդ անկարելի է:

Դուրսը քամին մռնչում էր թանձր խաւարի մէջ,
ես ականջ էի դնում սարսափով, կարծես նա էլ նոյն
մութ բանից էր խօսում, աշխատում էր փշրել պատու-
հանները, ներս խռժել և իմ ականջին փափսալ այն սև
ու սարսափելի բանը: Հագիւ մի քանի բոպէ էր, ինչ ես
ապրում էի այս անօրինակ յուզմունքը և սակայն հա-
սունանում էի տարիներով, միաբա դարձում էր անօրի-
նակ ուժգնութեամբ: Ի՞նչ կապ կարող էր լինել իմ քը-
րոջ և այն գեղեցիկ սպայի մէջ, որի հետ մի ժամա-
նակ ես այնպէս գուարճանում էի, և որը անսպասելի
կերպով իմ ամուսինը դարձաւ: Վերստին յիշեցի բոլոր
անցած-դարձածը մինչև այս աղէտը, քրոջս ծածուկ
փիշաղ պաշարեց իմ գլուխը սարգի ոստայնի պէս, և ես
աշխատում էի, բայց չէի կարողանում որևէ բացատրու-
թիւն գտնել: Ի՞նչ էր կատարուել խաւարի ուլուլութեան
մէջ ինձանից ծածուկ, իմ դէմ, ահա այն հարցը, որ ճի-
ւաղի ճանկերի պէս ճմուռում էր իմ ուղեղը, դանդա տըն-
քում էր սև մտքերի ծանրութիւնից՝ կարծես պայթե-
լու համար:

Ես այնպէս գժբախտ էի...

Քոյրս երկար հիւանդ մնաց: Բոլոր այդ ժամանա-
կը նա լուռ էր որպէս գերեզման, ուր անդարձ կերպով
մարել են յոյգերը, իղձերը, մաքերը, և նրա այդ քար
լուսթիւնն էլ աւելի էր մեծացնում սրտիս վրայ ծանը-

րացած սոսկումը իմ վիճակի անորոշութեան հանդէպ։
Ես չէի համարձակուում նրան խօսեցնել, հարց տալ և
տառապում էի նոյն մութ ցաւով, որ փշրել էր նրա էութիւնը։
Մեր ցաւերը երեւի մեզ պէս քոյրեր էին և մեզ
պէս տարբեր բնաւորութիւն ունէին։ Սպասում էի, որ
նա բոլորովին կազդուրուի, որ սիրտս իր մութ կաս-
կածներով փռեմ նրա առջև, խօսեմ, խօսեմ... բայց
տարաբախտաբար իմ յոյսերն իդերեւ ելան. երբ նա վեր կա-
ցաւ անկողնից, արդէն այնպէս էր, ինչպէս դու տեսար։
Յաճախ ծիծաղում էր, ապա անվերջ հեկեկում էր ա-
ռանց արցունքի, իսկ դրսում տղամարդի հանդիպելիս
աշխատում էր խոյս տալ, ծածկուել ինչպէս ատելի
թշնամիներից։ Մարմնապէս բոլորովին կազդուրուած ու
առողջ՝ նա մինչև վերջը անկարող եղաւ հոգեպէս վե-
րականգնուել, նրա էութեան ներդաշնակութիւնը միշտ
խանդարուած մնաց։ Մեզ հաւատացրել են, որ նա ան-
բուժելի է և կարօտ ամենաքնքոյշ խնամքի։

Կարո՞ղ ես երեւակայել իմ ահագին ցաւն ու կսկիւժը,
երբ վերջապէս մօրս ինձ յանձնած մի յիշատակարանից իմա-
ցայ, որ իմ խեղճ, ազնիւ քրոջ անդառնալի դժբախտութեան
պատճառը հէնց ես եմ եղել, անդիտակցաբար, առանց
իմ գործողութեան արժէքն ընբռնելու ես խել եմ նը-
րա սէրը, որ ինձ բնաւ հարկաւոր չէր, և որ հեռու ծո-
վերի տակ թաղուած տղամարդը աւելի նրա ամուսի-
նըն էր, քան իմը, որովհետեւ նա էր սիրել և ոչ ես։

Խեղճ, վատաբախտ քոյր...

Նա դեռ սկզբից այնպէս էր սիրել մեզ հիւր եկած
սպային, ինչպէս հազիւ է պատահում աշխարհում և
ինչպէս դիտեն սիրել կանայք, երբ որեւէ տղամարդ-
նրանց համար դառնում է այն էակը, որի մէջ կենտրո-
նանում է տիեզերքը, և որի համար հարկաւոր է զոհուել
և անցնել աշխարհի երեսից։ Քոյրս սիրել էր նրան իր
բոլոր էութեամբ, իր երակների արիւնով, իր սրտի բո-
լոր թելերով և միւսնոյն ժամանակ նա աշխատել էր
թաղցնել այդ զգացմունքը ամենքիցս, որովհետեւ նրա

Կանացի հպարտութիւնը թոյլ չէր տուել նրան առաջինը յայտնել իր սէրը մի ազամարդի: Իսկ երբ վերջինս սկսել էր նրանով գրաւուել, քոյրս յանկարծ դարձել էր անտարբեր, սառն որովհետեւ ճիշտ նոյն ժամանակ նա տեսել էր, որ ես զուարճանում եմ սուայի հետ, երջանիկ եմ, և իմ երեխայական խենթութիւնների մէջ իմ սէրն էր նկատուել: Սպան վիրաւորումը նրանից, թէ յուսահատուած՝ դարձել էր գէպի ինձ, իր անտարբեր խաղերին տուել էր լուրջ կերպարանք, և յետոյ իմ ձեռքը խնդրել:

Քրոջս համար շատ հեշտ էր խափանել այդ բոլորը և իրերին ուրիշ ընթացք տալ. բաւական էր, որ նա խօսէր, բաց անէր նաև իմ աչքերը. բայց նա լռել էր, պէտք էր համարել լռել. ինձ երջանիկ տեսնելու միակ ցանկութեամբ այդ մահացու լռութեան մէջ թաղել էր իր բուռն զգացմունքը, միայնութեան ու խաւարի հետ սգացել էր իր սէրը, իր հոլթեան բոլոր լարերը ձգուել էին մինչև յետին աստիճանի, և երբ հասաւ աղէտալի լուրը, նրանք ճայթեցին, բանականութիւնը խախտուեց: Այս բոլոր տրագեդիան կատարուել էր լռութեան մէջ. մենք երեքով առանց իրար հասկանալու վազվզել էինք խաւարի մէջ իրար յետևից և փոխադարձաբար անդունդ պատրաստել մէկ մէկի դարձեալ լռութեամբ: Երբ ես մտածում եմ այս բոլորը, ինձ թւում է, թէ մի կոյր ոյժ վարում է մարդկանց ճակատագիրը միանգամայն մեզ անհասկանալի ձևով, մեզ անյայտ մի նպատակով, մենք տարւում ենք նրա թափով՝ ինչպէս մըրրիով բռնուած: Մտածում եմ յաճախ և միշտ դողում այդ ոյժից, որ տեսնել անկարելի է, որ համր է, կոյր և սարսափելի: Դեռ երբէք ես այնպէս խորը կերպով չէի ըմբռնել էդիպպոս թագաւորի անլուր դժբախտութեան բոլոր տրագիկական մեծութիւնը, ինձ թւում էր, թէ Անտիգոնայի գունատ և տառապած հոգին դարբերի մշուշի միջից. հեծեծում է ու լալիս մեզ հա-

մար. չէ որ մենք էլ նրա քոյրերն էինք, լռութեան զոհեր...

Քրոջս փշրուած հողու պատմութիւնը օրըստօրէ փռուած էր իր փոքրիկ յիշատակարանի թերթիկների վրայ, որոնք բոլորն ասես լացել էին նրա հետ։ Նայում էի այդ թերթիկներին և վշտով մտածում, թէ նրանց վրայ ցաքուցրիւ անդառնալի կերպով փռուած են մի երկտասարդ կեանքի բեկորներ, ինչպէս մի բիրտ ձեռքով փետտուած ծաղիկի թերթիկներ, որոնց հետ խաղում է քամին և որոնց վրայ աշխարհը երբէք չի սպում։ Նւ ինչո՞ւ սգայ. ո՞ւմ եմ հարկաւոր նրանք, զոհեր կան անխորհուրդ ու անմիտ, որոնք որքան մեծ են լինում, նոյնքան աւելի են մեծացնում կեանքում իշխող աններդաշնակութիւնը, մեր գլուխների վրայ ծանր-րացած հին տրագիդիա։ Ամեն մի զոհ իր իմաստն ու անունը պէտք է ունենայ. ո՞ւմ էր հարկաւոր քրոջս բերած զոհը, ո՞չ իրան, ո՞չ ինձ և ո՞չ աշխարհին. այդ անցընող կեանքը միայն գոթախոտութիւն էր սփռում իր շուրջը։ Մեծ լռութիւնը որքան այդպիսի կեանքեր թաղած ունի իր ծոցում. լայնարձակ գերեզմանը յոյսերի... Խըլեցի այդ յիշատակարանը, վազեցի մօրս մօտ և գլուխս նրա կրծքում թաղած՝ երկար-երկար հեկեկում էի. գոթախտ էի ու խորատկուած։ Առանց իմանալու՝ ես կողոպտել էի իմ հարազատ քրոջը, կողոպտել էի նրա ամենալու մասը, նրա հոգին։ Նրեխայական խենթութիւններս անցան, և ես հասուն կին դարձայ։ Իմ և կեանքի մէջ երկու գերեզման կար. ես կրկին այրի էի։

Կեանքի մէջ բացի տիեզերական լռութիւնը մի ուրիշ, ո՞չ պակաս խուլ լռութիւն կայ, իմ ընկեր, որ ընթացիկ բարոյականութիւնը, թիւր հասկացողութիւնները, յաճախ նոյնիսկ յիմարութիւնը դնում են մեր շրթունքների, մեր սրտի, մեր հոգու վրայ։ Կնո՞յ բարոյականութիւնը, կնո՞յ կեանքը հէնց մի մեծ լռութիւն է, այդպէս է պահանջել աշխարհը, դարերը սրբագործել են, և մենք ազատուել չենք կարողանում։ Միտել խորը ու ան-

զուսպ սիրով, հոգու մէջ կրել մայրութիւնը, ստեղծագործող, սքանչելի բնութիւնը, սրտի մէջ զգալ կեանքը իր ալեկոծ ու փոթորկոտ խորհուրդներով, իր վսեմ իշխանութիւնը ու վառ երազներով և այս բոլորը, այս դիւթական աշխարհը լուսութեան ու խաւարի մէջ մաշել ու ոչնչացնել կամաց-կամաց—ահա շատ և շատ կանանց ճակատագիրը: Վաղաժամ փետուած վարդի, տրորուած ծաղիկի, փշրուած առնկի առաջ մենք երբեմն հազիւ ենք զգում մեր արցունքները, մեր հոգին ըմբոստանում է այդ փոքրիկ կեանքերի բռնի մահի առաջ: Բայց յուսալսաբար սրտերի մահը... ո՞վ կարող է չափել ցաւի խորութիւնը, որ այդ մահուան ընկերն է: Մեռնող սրտերը լուսութեան մէջ փուլ եկող աշխարհներ են, որոնք այլևս երբէք չեն շինուում:

Այնուամենայնիւ կինը պարտական է լուել, լուել և սպասել, փոյն նրան, եթէ աղամարդը չեկաւ նրան իր սէրն առաջարկելու: Փլչող աշխարհն է նա, անօգուտ անցնող կեանքը...

«Երբ շրթունքները նիրհում են, հոգին զարթնում է և գործի կենում», այս ճշմարիտ է, լուսութեան մէջ հրաշալիքներ են կատարւում գուցէ, բայց եթէ այդ բոլորը պիտի թաղնուած մնայ նոյն լուսութեան մէջ, խօսքը չպէտք է դայ ծածուկ ճշմարտութիւնների վրայ յիշ յետ բաշելու բողբ, ինչ արժէք ունի լուսութեան մէջ կատարուածը: Ո՛չ, բարեկամ, լուսութիւնը զարհուրելի է, և իմ քոյրը նրա զոհերից մէկն է:

Երանի՜ թէ մեր այս դժբախտ աշխարհում ճշալ կարողանան բոլոր զոհերը, նրանք, որոնք տառապում են լուսութեան մէջ, ծածուկ անքում են ցաւերի բեռի տակ, լալիս են իրանց սրտերի խորքում, և նրանք, որոնք տրորուած են օտների տակ, սրտնց հոգին են կողոպտում անողորմ կերպով: Օ՛, ինչ սքանչելի կը լինէր, եթէ իրանց սրտերում ցաւ կրող բոլոր դժբախտները, որոնք շրջում են աշխարհում, ինչպէս շղթայակիր վտարանդիներ, միասին յանկարծ մոնչային իրանց բողբը, իրանց վիշտը և

այնպէս ուժգին ու ցաւագին, որ լսողները սասանուէին ու դողային: Բոլոր սճիրները լռութեան մէջ են կատարուում, իմ ընկեր, ինչպէս և բոլոր անօգուտ զոհերը, որոնք օժանդակում են խաւարի թանձրանալուն: Այդ լռութիւնը ես ատում եմ, նա հրէշի պէս ծանրացած է աշխարհի վրայ և խեղդում է, խեղդում... անհատներ, հասարակութիւններ ու ցեղեր մեռնում են նրա բռնի առկա:

Երբ ես բեզ տեսայ առաջին անգամ, զգացի քո սիրոյ ուժգնութիւնն ու խորութիւնը, հասկացայ, որ ստեղծում է մէկն այն կապերից, որոնցից մարդ էլ չի ազատուում և որոնք կարծես ճակատագրական են: Ինձ ամենից շատ դրաւեց քո սեւ, բաց աչքերի թախիծը, քո համարեա մանկական յափշտակութիւնը, քո անքննադատ ու խենթ ձգտումը դէպի ինձ առանց ճանաչելու՝ ինչպէս թիթեռնիկը դէպի այրող բոցը: Այս բոլորն ինձ յիշեցնում էր իմ սեփական անցեալը, այն երջանիկ օրերը, երբ ինձ համար էլ կեանքը միայն մի հաճելի երազ էր, դիւթական երազ, երբ իմ շուրջը ամեն ինչ բոյր ու սէր, խինդ ու ժպիտ էր միայն: Գու ինձ դրաւեցիր, որովհետեւ ինձ պէս էիր: Եւ իմ այս յափըշտակութիւնը նման չէր առաջինին, այրիները, սրբան և ջահիլ լինին նրանք, հեշտութեամբ չեն սխալուում: Երբ դու ցանցում բռնուած ձկան պէս թրպրտում էիր առաջ, ես ուշի ուշով դիտում, քննում էի քեզ, և քանի աւելի մօտիկից էի տեսնում քո հոգին, այնքան աւելի վտանգաւոր էիր դառնում ինձ համար: Քո ներկայութիւնը, հակառակ եմ բոլոր ջանքերի, դառնում էր ինձ համար մի մութ անդունդ, ուր նայելիս գլուխս չշարժում էր, բայց սիրում էի նայել: Քո տխրութիւնը, քո անյոյս վիճակը, այն սիրուն թախիծը, որ քեզ տալիս էր խռոված երեխայի կերպարանք, ինձ համար անդիմադրելի գրաւչութիւն ունէին: Գու ազամարդ ես, սիրելիս, և դուք չգիտես, թէ ինչ կը նշանակի մի կնոջ դեռ ևս կոյս հոգու համար այն գիտակցութիւնը, թէ գլմացի

երկտասարդը տանջւում է իր սիրով, դա մի ամբողջ երանութիւն է:

Այնուամենայնիւ ես որոշեցի իմ սառն վերաբերմունքով, իմ յաճախակի հեգնութիւններով, կծու ակնարկներով հեռացնել քեզ ինձանից, որովհետեւ ես դողում էի իմ քրոջ համար, դողում եմ և այժմ: Օ՛, եթէ նա իմանայ այս բոլորը, եթէ նրա խախտուած բանականութիւնը կարողանայ մի վտրը ըմբռնել, թէ ի՞նչ է կատարւում իր շուրջը, թէ ինչպէս կեանքը ընթանում է իր սովորական թափով առանց նրան, ես հաւատացած եմ, որ երկրորդ անգամ կը դառնամ յանցաւոր և այն դիտակցաբար: Յիշում ես, որ ես յուզուած ու թուլ լացած նստեցի այն ճանապարհի նստարանի վրայ, երբ դու ասացիր, թէ ինձ սիրել ես իմ քրոջ մէջ: Հին պատմութիւնն էր կրկնւում, ինձ թուաց, թէ ես էլի մի անգամ կողոպտում եմ նրան, սիրտս փչձկաց, բիշ մընաց, որ լաց լինէի, շտապեցի դէպի տուն՝ արցունքս քեզանից ծածկելու համար: Յետոյ քո առաջին համբոյքը սրբան արցունք խլեց ինձանից դարձեալ բոջն պատճառով: Նրանից առաջ ես ունեցել էի գիշերներ, ամանջանքի, յուսահատութեան գիշերներ, երբ ես պայքարում էի, ելք էի փնտրում քեզանից ազատուելու համար: Ես լալիս էի իմ անդօրութեան մէջ և հեկեկանքս խեղդում բարձերի տակ: Պայքարեցի երկար, և յաղթող չհանգիստացայ. դու բռնել էիր իմ հոգին, և նա իզուր էր թռչնի պէս թրպրտում քո ափերից դուրս թռչելու համար: Այս բոլորի հետևանքը... ահա, իմ ընկեր, իմ հըմայիչ դե, մենք գիշերներ ենք լուսացնում այս նրատարանի վրայ թառած՝ որպէս զոյգ սիրահար ազաւնիներ: Դիպուածները երևի բախտեր են վճռում, խուսափել անկարելի է: Ես այժմ յաղթահարուած՝ թողել եմ իմ նաւակը ջրերի երեսին, առանց գեղի, առանց առաջատարի և երեկ պատմածս սգաւորի պէս տարւում եմ, մինչև վրայ կը հասնի վտթորիկը:

Դու այժմ գիտես ամեն ինչ, սիրելիս, օգնիր ինձ,

որ փոթորիկը չտանի մեզ, նա—Կլարան չիմանայ, չհասկանայ մեր յարաբերութիւնները, թէ չէ էլի մի ցնցում, և նա կորած է, ես էլ նրա հետ։ Զարհուրելի է այն գոյութիւնը, որի հետ կապուած է մի յանցանք, թէկուզ ականայ։ Իսկ ես դեռ ջահիլ եմ, այնքան ջահիլ մատաղ տունիկի վրայից երբ փչում է կատաղի հողմը և կռացնում, դեմնին հաւասարեցնում, միթէ նա նորից չի բարձրանում և ժպտում արեւին։ Ա՛հ, կեանքը...

Նա վերջացրեց, կռացաւ իմ կրծքին և սկսեց մեղմիւ հեծկտալ։ Ես գրկեցի նրա գլուխը և մխիթարում էի։

—Մի լար, իմ հրեշտակ, ես կ'անեմ բոլորը, ինչ կամենաս, միայն թէ դու չտանջուես, մի նոր վիշտ չդայ քո հոգին պաշարելու։ Կլարան չի կարող իմանալ, նա չպէտք է իմանայ, անհոգ եղիր։ Ես քեզ կը լինեմ հլու հպատակ, քո հաճոյակատար ստրուկը, կը հետեւեմ քո թեթեւ նշանին, քո աչքի շարժումին՝ քո ամենաչնչին ցանկութիւնները կատարելու համար, միայն թէ դու մի լար, աղաչում եմ։ Կեանքը միայն ցաւին չի պատկանում։

—Կեանքը... ցաւերի հովիտ, տանջանքի պարտեզ, ուր ծաղիկների բոյրը մահառիթ թոյն ունի, ուր ամեն մի պտղի արմատին մի թունաւոր օձ է դալարուել ու փշուր, և ուր խոտերը բոլորը փշաւոր են։ Հեռուից այնտեղ ամեն ինչ գեղեցիկ է, գրաւիչ, վայելքի, երջանկութեան ծարաւով ներս ես մտնում համարձակ և հէնց առաջին քայլից ընկնում ես փշշրուած ու արիւնոտուած՝ ինչպէս որսորդի գնդակով եթերային բարձունքից վայր գլորուող թռչուն։ Ես հազիւ քսան տարեկան եմ և, տեսնում ես, թէ արդէն որքան եմ ապրել։ Է՛հ, կեանքը... նա մի թունաւոր պարտեզ է։

Մի աստղ ցլաց երկնքից, լայն բոց արձակեց, լուշաւ գէպի հորիզոնը և կորուս։

—Աստղը բոց արձակեց ու մեռաւ...—մրմնջում էր

Նա կարծես ինքն իրան.—աստղերն էլ են մեռնում...
 Ի՞նչ լաւ է, որ նրանք էլ են մեռնում... Տիեզերքի մէջ
 երևի ամեն ինչ մահ ունի... անմահը միայն տառա-
 պանքն է, որ կապուած է մարդկային խղճուկ ճակա-
 տադրին... մեռնում են, մեռնում են ամենքը... Ի՞նչ
 լաւ է, որ աստղերն էլ են մեռնում, թէ չէ մենակ
 մեր մահը սարսափելի կը լինէր...

—Իմ վշտացած հրեշտակ, անխուսափելին տիե-
 զերքում միայն մահը չէ, հապա և ծնունդը. երկրի
 վրայ իշխողը սէրն է, հզօր ու ստեղծագործող, գեղե-
 ցիկ սէրը, որի բոցը խլուած է արեգակից, իսկ գեղեց-
 ւութիւնը՝ երկնքի աստղերից։

—Հա, հա... սէրը, իրաւունք ունիս, գոնէ սէրը...
 Էլի մի բան է, նա խորհուրդ է տալիս մեր ցաւոտ գո-
 յութեանը, մեր ճակատագրին, գերեզմանի երկիւղն է
 թուլացնում, և ոչնչութիւնը մի փոքր լցնում...

Նրա խօսքերը լի էին քնքոյշ ու տխուր յոյզով,
 ձայնը դողդոջուն ու մեղմ՝ ինչպէս հովի առաջ լացող ծա-
 ղիկը՝ հմայիչ շեշտ ունէր։ Նրա գլուխը կամաց-կամաց
 կուսցաւ ուսիս, կարծես իր շուրջն իշխող թանձր խաւարն
 ու մահու երկիւղը վանելու համար նա զօրավիգ էր փըն-
 տրում։

Եւ մեր չրթունքները միացան իրար մի բոցոտ ու
 Թրկար համբոյրով. խաւարի մէջ մենք հեգնում էինք
 մարդկային ճակատագիրը և կեանքի ցաւը։

X

Սեպտեմբերի սկիզբն էր, թաց, լալկան օրեր. ա-
 շունը փութկոտ էր։ Եւ անձրև՝... հինգ օրից ի վեր
 մռայլ երկինքը գիշեր ու ցերեկ մոմուռ էր քամում,
 մանրիկ կաթիլները մաղմղում էին վերից միակերպ,
 ձանձրալի...։

Պատուհանիս առաջ նստած ես յուսահատ ու ցաւ-
 ւոր՝ հայեացքս դարձրել էի գէպի հօրիզոնը, ուր լեռ-

ների վրայից դուրջ ամպերի կարաւանները սողում էին դաւադիրների պէս, բարձրանում էին, իջնում, կծկւում, բացւում և ի վերջոյ լուծւում երկնքի միապաղաղ սևութեան մէջ։ Խոնաւ ու ցուրտ էր իմ շուրջը, և ամեն ինչ կարծես ինձ պէս մռայլ էր, և՛ պարտիզի ծառերը, որոնց դեղնած տերեւների վրայից լալկան ճղվացով մի խեղդող ներդաշնակութեամբ ընկնում էին ծանրացած կաթիլները միևնոյն տեղում՝ փոքրիկ փոսիկներ առաջացրնելով, և՛ կծկւած ու խեղճ խոտերը, որոնք երկնքից յուսահատ՝ էլ վեր չէին նայում, աւելի հեռուն՝ մուգ անտառը իր մառախուղէ ծածկոցի տակ սրթսրթում էր դժգոհ ու մռայլ, իսկ նրա վրայ բարձրից հսկող մենաւոր ժայռը կարծես աշխատում էր ամպերի պատառներով՝ ինչպէս մի հին զգեստի ծլանքներով՝ ծածկել իր այլանդակ մերկութիւնը։

Բնութեան թախծոտ պատկերը, այս լացող ծառերն ու խոտերը, կապարի պէս ծանրացած երկինքը ինձ ոչ միայն տխրեցնում, այլև զայրացնում էին—հինգ օրից ի վեր դիշերները դուրս գալը անկարելի էր դարձել։ Թւում էր, թէ իմ շուրջն ամեն ինչ ինձ հեղնում է—և՛ երկինքը, և՛ լեռները, և՛ մանաւանդ այն սողացող ամպերը, որոնք իրանց մութ ծալքերի, անթիւ գալաքումների մէջ բռնած տանում էին իմ գաղտնիքը, և գիտէին իրանց արածը։ Դեռ երբէք ես այդպէս չէի տեսել բնութիւնը և դեռ երբէք մի զայրոյթ այդ աստիճան անզօր ու խղճուկ չէր եղել։ Իմ դէմ էր դուրս եկել ինքը բնութիւնը, այդ հսկայ ու համր վհուկը, որ չը՝ գիտես ինչո՞ւ այդպէս անսղորմ կերպով գիտէ խաղաղ մահկանացուների բախտի, նրանց երջանկութեան հետ։ Ո՞վ կարող էր վերադարձնել ինձ այն, ինչ ես կորցնում էի իւրաքանչիւր դիշեր, այնքան երջանիկ ժամեր ու վայրկեաններ, որոնք այն ամպերի պէս լուծւում էին յաւիտենականութեան ծոցում։ Եւ յետոյ մեր կեանքը միշտ այնքան խաւար է, այնքան սև առանց այդ վայրկեանների, արցունքը մշտապես, ժպիտը վաղանցուկ,

յոյսերը երկչոտ, այս բոլորի հանդէպ վայրկեաններէ մոռացութիւն, որի մէջ լուծում ենք մեր ցաւոտ անհատականութիւնը. այն էլ անցնում է երազի պէս՝ էլ երբէք, երբէք յետ չդալու համար:

Մտերւոյ սև էին, բայց անձրեւը դալիս էր միակերպ, տաղտուկ... կարելի էր խենթանալ զայրոյթից ու յուսահատութիւնից. այլևս ոչ մի փիլիսոփայութիւն ինձ չէր օգնում. երևի սեփական վշտի փիլիսոփայութիւնը ոչ համողիչ է և ոչ մեղմացուցիչ: Երբ կեանքի հաղուսդիւս լուսաւոր վայրկեաններն են վախճում, նրանց տեղը սառը միտքը ոչինչ չի կարող դնել, ինչպէս անկարող է լցնել գերեզմանի պարսպը, վանել մահուան դարշանքը, յաւիտենական ձմեռը ջերմացնել:

Մխիթարութեամբ էի նրանով, որ Մարգարիտն ու իր քոյրը գեռ երկար պիտի մնան ամառանոցում, գուցէ մինչև հոկտեմբերի վերջը: Ինչ ատել կ'ուզի, որ ես էլ մեկնելու մասին չեմ մտածում: Յերեկները մենք պատահում էինք սեղանատանը, ուր մեր յիմար ու բարի տանտիկիներ մի վայրկեան մեզ մենակ չէր թողնում. քնութեան պէս նա էլ էր դարձել անտանելի: Այն գողարիկ, սիրազեղ գիշերներից մեզ մնացել էր սեղանի տակ մեր ստներէր գաղտաղտի հպումը, լուռ հաշիւները, մութ ակնարկները, որոնցից տանտիկիներ ոչինչ չէր հասկանում, և որոնք մեզ համար այնքան խորհուրդ ունէին: Սիրոյ, երջանկութեան այն ծովից յետոյ այս բոլորը միասին կաթիլներ էին, որոնք չէին կարող զովացնել իմ պապական հոգին:

Լաւ որ Մարգարիտը գեռ սիրտ ունէր հանաքներ անելու. երբ տանտիկիներ մի վայրկեան խոհանոց էր մըտնում, նա կ'ուսնում էր դէպի ինձ իր սովորական ձևով ու կամացուկ ասում.

— Գիշերը լաւ քնեցիր, դե՛:

Պատասխանի փոխարէն ես աշխատում էի սեղանի տակ սաքը սղմել ցաւեցնելու չափ. նա շտապով փախջընում էր ու վրաս ծիծաղում:

—Խռոված երեսայ, ի՞նչ լաւ է, որ դու այդպէս ես...—չարունակում էր նա քրքջալով: Իսկ դուրսն անձրեւը գալիս էր, գալիս: Ներս էր մտնում տանտիկինը:

—Այնպէս չէ, տիկին, այս անձրեւը դեռ երկար կը շարունակուի, դառնում էր նրան Մարգարիտը: Հարցն ինձ չարացնելու համար էր անշուշտ:

—Ո՞վ գիտէ, մոռում էր տանտիկինը՝ յուսահատ կերպով նայելով դէպի լուսամուտը, անցեալ տարի այս ժամանակ դարձեալ անձրեւոտ էր, բայց էլի մենք դեռ մի փոքրիկ ամառ կ'ունենանք մինչև ձմրան գալը: Խեղճ տանտիկին, նա աշխատում էր մեզ մխիթարել, որ չըթողնենք հեռանալը:

Անցաւ դարձեալ մի անխորհուրդ ու տխուր օր, վրայ հասաւ նոյնքան անօգուտ, վհատեցուցիչ գիշերը: Ես բարձրացայ սենեակս, նստեցի լուսամուտի առաջ, նայում էի այն թաց խաւարին և մտածում էի, թէ ինչ հնարով կարելի է գլուխ բերել մեր ընդհատուած տեսակցութիւնները, մեր սիրուն գիշերները: Զանազան մտքեր ու ծրագրեր անցնում էին գլխովս, բայց բոլորն էլ անհեթեթ էին, անիրագործելի: Հաւատացած էի, որ գրանցից և ոչ մէկը Մարգարիտին ընդունելի չի լինի: Նա սիրում էր այն ամենը, ինչ որ գեղեցիկ էր, անգամ դադտագողի սիրային տեսակցութիւնը նրա համար մի գեղարուեստական հաճոյք էր: Յիշում էի, որ մեր սիրոյ ամենաբուռն զեղմունքի րոպէին նա իրան չէր կորցնում երբէք, իր շարժումները մնում էին նազելի, շշուկը քաղցր ու քնքոյշ, անգամ իր արտաքինի մէջ նա թեթեւ անկարգութիւն տանել չէր կարողանում, ուր մնաց թէ յանձն առնէր տեսակցութիւն ոչ գրաւիչ պայմաններում: Իմ մտածած հնարներից և ոչ մէկը գեղեցիկ էր, որ ես համարձակուէի յայտնել առանց նրան վիրաւորելու: Կանայք միշտ աւելի հնարամիտ են սիրոյ մէջ,—մտածում էի ես,—եթէ Մարգարիտը կամենայ, գուցէ մի աւելի գեղեցիկ, աւելի խելացի միջոց

գտնել կարողանայ: Սակայն զբաղուած էր նա այդ հարցով, թէ ոչ, ես չգիտէի. նա միշտ այնպէս ուրախ էր ճաշի ժամանակ, իմ հարցերին պատասխանում էր զանազան կատակներով, որոնցից ես ոչինչ չէի հասկանում: Երբ կամենար, նա միշտ գիտէր դառնալ անհասկանալի, առեղծուածական, ինչպէս մի սֆինքս: Զուր չէր, որ ես նրան հէնց այդ անունը տուի սկզբից:

Գիշերը քանի գնում սեանում էր, և խաւարը լալիս էր իմ պատուհանի տակ իր անվերջ արցունքով: Զայրոյթիցս քիչ էր մնում ես էլ լաց լինէի նրա հետ: Ես լսեցի, թէ ինչպէս հարեանուհիներս պատրաստուում են քնել, ինչպէս Մարգարիտը մօր պէս հոգում է քրոջ պէտքերը, կատարում է նրա բազմաթիւ մանր քմահաճոյքները, մերթ ծիծաղում է նրա հետ, մերթ համուզում է երեխայի պէս. յետոյ կամաց-կամաց ամեն բան խաղաղուեց: Ես էլ վեր կացայ, անկողին մտայ, գլուխս թաղեցի վերմակի տակ, որ չլսեմ դրսից անձրևի կաթիլների միակերպ, վհատեցուցիչ ձայնը, այդ խեղդող խաւարի լացը, աշխատում էի մոռանալ ինձ, մի կերպ բուն մանկ մինչև յաջորդ առաւօտ, երբ գուցէ արև ծագի, բնութիւնը նորից հաշտ ժպտայ մեզ: Սակայն իզուր, քնել չկարողացայ և թաւալում էի անկողնումս տենդով բռնուածի պէս, ճմռում էի բարձս, գլուխս ցաւում էր, խեղդւում էի օդի սակաւութիւնից, և լուսաբացը դեռ հեռու էր:

Կէսգիշերն անցաւ. հարեան սենեակից փոքրիկ իրարանցման ձայնն իմ ուշադրութիւնը գրաւեց: Մէկը կամացուկ ցած իջաւ անկողնից և երեւի կանգ առաւ լուռութեան մէջ, որովհետև չարժուելու ձայնը դադարեց: Ես նստեցի և ականջ էի դնում, թէ ինչ է լինելու: Ո՞վ էր արդեօք, Կլարան, թէ՞ Մարգարիտը: Ես համարեա հաւատացած էի, թէ դա Կլարան է, որ զարթնել է ով գիտէ ինչ հրէշաւոր երազներից յետոյ, և այժմ գալիս ինձի մօտ: Բայց ինչպէ՞ս պատրաստուում է մի սարսափելի խենթ բան անել, լուսամուտից վար նետուել, կամ

քրոջը խեղդելէ Վերջին միտքն ինձ սոսկումով պատեց և բոլորովին հաւանական թուաց. ես վար ցատկեցի անկողնիցս, առաջացայ դէպի դուռը, որ հէնց փոքրիկ աղմուկ, կասկածելի ճիչ, խռիւռոց լսեմ թէ չէ, խորտակեմ մեզ բաժանող դուռը և օգնութեան հասնեմ։ Այս վատ զիչերն այնպէս տրամադրում էր ինձ դէպի սև մտքերը, որ ես երեւակայում էի խաւարի մէջ Կլարային, կիսամերկ, մաղերը խռիւ, աչքերը չուած ու կատաղի, բերանը ծռւում և փրփրոտ, և նրա երկաթէ մատների տակ Մարգարիտը սոսկումից ու ցաւից այլանդակուած ու կիսամեռ։ Պատկերը զարհուրելի էր, և ես զգացի, թէ ինչպէս գողում եմ։ Լսողութիւնս լարած՝ ես լուռ սպասում էի, լռութիւն էր և՛ տփռեղ, պարզ էր, որ նա էլ շարունակում է ափանջ գնել։ Անտանելի վայրկեան էր։ Ես լսում էի իմ սեփական սրտի բաբախիւնը, սաստիկ յուզմունքից՝ նա ընտուած թըռչունի պէս աշխատում էր դուրս փախչել կրծքիս տակից։ Ապա ես լսեցի, թէ ինչպէս խորհրդաւոր անձը շարժուեց զգուշութեամբ, կամացուկ, այնպէս որ ես հաղիւ էի կարողանում հետեւել նրա մերկ, թեթև ստների ձայնին յատակի վրայ։ Մի արկղ կամացուկ բացուեց ու փակուեց՝ հազիւ լսելի քստոց հանելով, կրկին լռութիւն։ Նա երեւի դարձեալ ափանջ էր գնում։ Միթէ իմ կասկածները ճշտւում են, միթէ Կլարան իր խենթութեան մի զարհուրելի վայրկենում պարտաստում է գործել մի անլուր ոճիր. գուցէ մի գանձակ էր, որ նա գուրս քաշեց արկղից...

Սոսկումս դադարեցնակէտին հասաւ, ես էլի մի քանի քայլ մօտեցայ դրանը, հեռււ էի, կուրծքս սղմում, ներս էր ընկնում և կրկին ուռչում, բարձրանում, շունչս դուրս էր դալիս ընդհատ-ընդհատ հառաչանքներով։ Բռնեցի դրան կանթը ու մտածում էի, էլի մի այդպիսի ձայն, և ես կը քաջեմ կատաղի թափով։

Հաւատացած էի, ինչքան որ ամուր լինի դուռը, այնուամենայնիւ կը խորտակեմ. Մարգարիտի թեթև ճի-

չը միանգամայն բաւական էր, որ ես երկաթէ պատուարներ փշրելու կարողութիւն ստանայի։ Սպասում էի... և յանկարծ լսեցի, թէ ինչպէս նա մեզմիւ քայլեց դէպի իմ դռուը... մի բանալի ներս սողաց կողպէքի մէջ, պոռոյտ գործեց, և պողպատը չոր, անախորժ ճռուոց արձակեց։ Ես ակամայ յետոյեա քաշուեցի դէպի իմ անկողինը և կանգ առայ քարացած... մի վայրկեան, միայն մի վայրկեան զլլտովս անցաւ մի երջանիկ միտք՝ ինչպէս փայլակ, ցնցեց ու շշմեցրեց ինձ... իսկ եթէ այս բոլոր հրէշաւոր կասկածներս անհիմն են և դռուը բաց անողը հէնց Մարգարիտն է... սիրող կիներ ինչէր չի կարող հնարել։ Բայց այդ միտքը մինչև վերջը տանել, լրացնել չկարողացայ, նրա բոլոր մանրամասնութիւնները նոյն իսկ ըմբռնելու անկարող եղայ։ Այդ միտքն այնքան աներևակայելի, այնքան երջանիկ էր, որ նրա ծնունդն անգամ ինձ շշմեցրեց, մտածելու կարողութիւնս դադարեց, աւելի հեռուն տանել չէի կարող, արիւնը յանկարծ կանգ առաւ երակներիս մէջ... Դռուը կամացուկ բացուեց, և իմ առաջ խաւարի մէջ ծրագրուեց մի կանացի սքանչելի պատկեր։ Միանգամայն ինձ կորցրած այս անակնկալ, աներևակայելի երջանկութիւնից՝ ես արդէն պարաստուում էի ակամայ բոլոր ուժով ճշալ՝ «Մարգարիտ»... բայց նոյն վայրկենին բազուկներիս մէջ դպացի նրա լիքը ու քնքոյչ մարմինը, և շրթունքներիս վրայ հեքս մարեց մի բոց համբոյրով... նա էր... ես նուազեցի՝ այսքան երջանկութիւնը տանելու անկարող... «Թափուիր, անձրև, թափուիր հազար դարեր, և թող այս դիչերը էլի սեւանայ և շարունակուի անվերջ», երեւի վերջին բառերը ես մրմնջում էի, որովհետև Մարգարիտը բռնուած եղնիկի պէս դողդողում էր իմ բազուկների մէջ և բերանս փակում ձեռքով։

— Սո՛ւս, սո՛ւս, երեխայ, փափսուկով ասում էր նա, դարհուրելի է, եթէ նա լսի, հասկանում ես, դարհուրելի՛ր... բայց նա չի լսի... նա միշտ ընում է մինչև լուսաբաց... Ժամացոյց կայ... հա՛, այսպէս, լուցկի էլ

պատրաստիր... երեք օր է փնտրում եմ դրան բանալին, այսօր վերջապէս կարողացայ գտնել խոհանոցում և վեր բերի... դէ սո՛ւս, սո՛ւս:

—Այդ դժու ես... մի՞թէ այդ դու ես, ճ, ես կը մեռնեմ, եթէ դու լինիս... այդ անկարելի է... այդ անկարելի է... ես ի՞նչպէս կարող եմ երկնքից աստղ խել և գրկել այսպէս...

—Սուս, սուս, թէ չէ կ'երթամ, զարհուրելի է, եթէ նա իմանայ, հասկանո՞ւմ ես, իմ հօգի... ես քեզ համար արել եմ անկարելին, անհնարինը... դեռ երբեք մի կին այսքան յանդուգն չի եղել... ոճրի մօտ եմ, շատ մօտ... այս ի՞նչ արի, Տէր Աստուած... տես նա չղարթնի՛ր, նայիր, ականջ դիր, մի՞թէ զարթնեց. շարժւեց... լուռ է, լուռ է այսպէս:

Օ՛, այն փափսոցը խաւարի մէջ, մեղմ, գուրգուրիչ ու սարսափելի, նրա հմայիչ ձայնի իւրաքանչիւր հնչիւնը որպէս մի երկնային երաժշտութեան ամենանուրբ խազ ընկնում էր իմ վրայ, և ես լուծւում, չքանում էի ասես մի դիւթական անձրևի կաթիլներով տակ:

—Մարգարիտ... ես մեռնում եմ, այսքան երջանկով ինն տանել անկարելի է, սարսափելի է... միայն այս սէրը բաւական է տիեզերքը զարդարելու համար... կեանքի ցաւը սրան դիմանալ չի կարող...

—Սո՛ւս, սո՛ւս...

Եւ նա փաթաթւում էր ինձ՝ ինչպէս բազդերը ծառին՝ պի՛նդ, պի՛նդ. մերթ խեղդում էր իր շշուկը, մի վայրկեան ականջ դնում, ապա կրկին տաք համբոյրով վանում իր երկիւղը: Եւ մենք փոխադարձաբար պատուիրում էինք իրար լուել, և իւրաքանչիւրս այնուամենայնիւ մի բան էր գտնում ասելու, միշտ մեղմիւ, միշտ փափսուկով: Լուով թիւնն էր խօսում մեր շրթունքներով, նա, որ օրերի, շաբաթների ընթացքում մեր հոգիների մէջ մեղմիւ կերտել էր մի կախարհական աշխարհ, ուր ամեն ինչ կեանք էր, բոյր ու սէր: Եւ մենք խօսում էինք այն սիրուց, մաքուր, գեղեցիկ սի-

րուց, որ մեր բախտերը խառնել էր իրար և պիտի լուսաւորէր այնուհետեւ մեր ուղին, պիտի փայլ և գին տար մեր գոյութեանը: Մեր իւրաքանչիւր մեզմ շշուկի, զգոյշ ձայնի իւրաքանչիւր ելեւէջի մէջ լսուում էր այն անբխի, քնքոյշ զգացմունքը, որ յատուկ է իսկական ոիրուն, սր մարմնից աւելի հոգուն է խօսում և երազանքների մէջ մեզմիւ օրօրում մարդու երջանիկ էութիւնը:

Երբ խօսում էինք, մենք ցնցւում էինք մեր ձայնի շեշտից, այն աստիճան յոյզ ունէր նա. իսկ երբ լուում էինք, մեր հոգիները փոթորկուած ու բոցոտ վառում էին մեր չրթանքները մի բան ասելու, ճշաւու, կանչելու անյադուրդ ծարաւով: Լռել անկարելի էր, խօսել նոյնպէս: Եւ յանկարծ ես զգացի, թէ ինչպէս նա սարսուաց բռնուած եղնիկի պէս:

— Ես վախենում եմ, ասաց նա կարճ լուրթիւնից յետոյ:

— Ինչից, իմ ընկեր:

— Խաւարից. լսի՛ր՝ ինչպէս նա լալիս է դրսում. ինձ թւում է, թէ նա մի հսկայ սուղ է անում, որի մէջ ես բաժին ունիմ, ինձանից ծածուկ:

— Աքանչելի մանուկ, հէքիաթները քեզ հանգիստ չեն տալիս. խաւարն անդօր է մեր այսքան երջանկութեան հանդէպ:

— Ես յանցաւոր չեմ, այնպէս չէ, ես, ես ջահիլ եմ...

— «Փոթորկի տակ կռացած տունկը, միթէ էլ չի բարձրանում», կեանքը միայն ցաւին չէ, հոգիս:

— Այն ինչ է վայլում այնտեղ... խաւարն է նա՝ յում կարծես պլպլան աչքերով:

— Կեանքը տեսնելու համար խաւարն աչք չունի:

— Նա վեր կացաւ... դալի՛ս է, լսեցիր...

— Քամին է զարկում փեղկերին, հանգստացիր, սիրելիս, ոչինչ, ոչինչ չկայ: Նա ընած է խորը, երջանիկ քնով, բամին ու անձրեւը օրօրում են այդ քունը:

—Կեանքի փոթորկից յոգնած՝ իսկական փոթորկի տակ նա քնած է երջանիկ... Եւ կեանքը ընթանում է առանց նրան. խեղճ... խեղճ...

—Սուս, սուս, մենք նրան կը զարթեցնենք:

Եւ նա հանգստացած, կրկին փարում էր ինձ, բռն զրկախառնութեան ու համբոյրի մէջ խեղդում իր երկիւղը: Սիրոյ մի անօրինակ պոռթկումն էր այն, որ դուրս էր զեղում մեր կրծքերից ու խեղդում մեզ: Մենք այնքան երջանիկ էինք, որ կարող էինք մեռնել խնդալով, աչքներս փակ, չրթունքներս ի մի ձուլուած: Եւ եթէ յանկարծ մեռնէինք, մենք մեզ հետ կը տանէինք ողջ տիեզերքը, մեզանից ոչինչ չէր կարող խուսափել, ոչ մի աստղ, արեւի ոչ մի շող, տիեզերական համերգի ոչ մի հնչիւն: Ողջ տիեզերքն այդ ժամին մենք էինք, նրա կամքը՝ անհատականաւի ու անմահ՝ մեր մէջ էր մարմնացած, մեզ օրօրում էր անուրջների մէջ, և մենք տարւում էինք եթերային բարձունքներից... զարհուրելի էր և սքանչելի միաժամանակ... երազներից ամենավսեմը...

Եւ իմ զիրկը դատարկ էր... Ե՞րբ գնաց... եկել էր արդեօք... Թէ՛ բոլորը մի անսիրտ երազ էր միայն: Ես նստած էի անկողնիս վրայ՝ գլուխս ձեռքերիս մէջ առած, մինչդեռ դրսում դեռ մաղում էր անձրևը: Լուսաբացի դռնատ, վախումի ցոլքերը մառախլապատ օդը պատռելով՝ ներս ընկան սենեակս, ուր առարկաներն իրանց զալուկ, մթնապատ պատկերներով սկսեցին դուրս սողալ խաւարի միջից՝ ինչպէս քանդակագործի մուրճի տակ սև մարմարի միջից դուրս սողացող ձևեր: Նրանք բոլորը տաքս զարմացած նայում էին ինձ և կամացուկ հարցնում. «Այստեղ էր նա արդեօք»... անկարելի է... մի շող կար, որ մի ժամանակ միւս սենեակից ներս էր սպրդում այստեղ և յետ փախչում, այդ ճիշտ է, բայց նո՞ւ... այդ անկարելի է... Նայեցի շուրջս, իմ կողքին անկողնի վրայ դեռ երևում էր այն տեղը, ուր նա նըստած էր, խորութիւնը դեռ պահել էր նրա հմայիչ մարմնի

ձեւը ակնապարար ճշտութեամբ. ձեռք տուի, դեռ տաք էր այնտեղ. յանկարծ մասներս շօշափեցին մի փոքրիկ առարկայ, նրա գլխի սանրն էր մնացել՝ կարծես ինձ ասելու, ինձ համոզելու համար, թէ նա այստեղ էր... վերցրի, ջերմութեամբ համբուրեցի։ Այո՛, այո՛, նա այստեղ էր, երևի կեանքը, իրականութիւնը նոյնպէս իր երազներն ունի, շատ անդամ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ, քան քնի երազները։ Իմ երազը զարմանալի էր. նրանից մնացել էր մի սքանչելի բուրմունք, որ լցրել էր իմ սննեակի օդը, պարուրել էր ինձ, որի մէջ ես նրա տած էի այժմ անչափ երջանկութիւնից հարբած։ Որքան ապրեցի... Եութիւնս յոգնած էր, ծանրացած գլուխս ընկաւ բարձի վրայ և այն փոքրիկ սանրը կրծքիս պինդ-պինդ սզմած՝ քնեցի խորը, երջանիկ ընով։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(Գլ շարունակուի)

Գ Ո Ւ Ն Ա Տ Օ Ր

Հանդաւ երազ... Ահա՛ կրկին գունատ օր
Նայում է ինձ աչքսիւ իր թանց ու պլտո՞ր...
Թռան, կորսն զուարթուններն հրածին,
Որ իմ տխուր կեանքիս ընում ծաղկեցին...

Բայց ո՞վ էին և ո՞ր երկրից բճց, անհո՛ւն,
Եւ ո՞ւր թռան իրենց թեւովն այն լոյսի.
Չկար կեանքս, ա՞յլ էր միտքս, վիշտս՝ հեռուն,
Վառւում էի առանց ցաւի և յոյսի։

Բայց, ա՛խ, ինչո՞ւ եկար, ցերեկ, այսպէս վաղ,
Իզո՞ւր, էլ չեմ օւզում ապրել ես արթուն,
Մարիւր, դնա՛, ինչպէս ընկերդ անուրախ
Անցաւ երեկ՝ բեզ պէս տխուր, ապարդիւն...

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՉԵԱՆ

ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳԸ ՆԵՐԿԱՅՈՒՄՍ *)

IX

Վ ա ն ճ ա ղ ա Բ Ե

Վան քաղաքը.— տեղը. սահմանները. տարածութիւնը. դիրքը. ջրերը. ոռոգումը. հողի կազմութիւնը. կլիման. ձմեռուայ տեղութիւնը. ձիւնը. միւս եղանակների տեղութիւնը. եղանակների նկարագրութիւն. ձմեռ. գարուն. ամառ. աշուն.

Վանի նահանգի մասին մեր ընդհանուր համառօտ տեսութիւնը վերջացնելուց յետոյ այժմ դառնանք մեր բուն նիւթին:

Վան քաղաքը նահանգի կրծքումն է տեղաւորուել, որի սահմաններն են արևելքից՝ Վարազայ և Շուշանից լեռները, հիւսիսից Ակոնայ-քար կոչուած լեռկ ըարածայուր, արևմուտքից Վանի լճակը, իսկ հարաւից այն լեռնաբլուրները, որոնք բաժանում են քաղաքը Հայոց-Ձորի գիւղախմբից: Բացի այս բնական սահմաններից քաղաքին սահմանակից են հետեւալ գիւղերը, որ Վանի արուարձաններն են համարւում և բացի արևմուտքից՝ մնացած երեք կողմերից շրջապատում են Վան քաղաքը, Աւանց, Լէզկ, Շահրալի, Լամըզկերտ, Ձորովանց, Սզկա, Շուշանց, Կուռուտաշ, Զէվիկ, Կենդանանց, Ծվստան, Արտամեա, իսկ քաղաքի շուրջը գտնուող վանքերն են՝ Վարազայ վանքը՝ համանուն և Շուշանից լեռների հովտում, Կարմրուորայ վանքը՝ Շուշանից լեռան արևմտեան լանջի վրայ, ս. Գրիգոր՝ միևնոյն լեռների ձորամիջի հիւսիսային ծայրում, Կանկու վանքը՝ ս. Խաչի հողաբլուրների արևմտեան փէշի վրայ, ս. Խաչի վանքը՝ հարաւային հողաբլուրների Կուսանաց-սար կոչուած լեռնագագաթի հիւսիսային լանջի վրայ:

Այս սահմաններում գետեղուած քաղաքը բռնում է բաւական ընդարձակ տարածութիւն, երկայնութիւնը ձգուած է

*) Տես «Մուրճ», № 4.

արևելքից-արևմուտք, որ հաւասար է մօտաւորապէս 8 վերստի, իսկ լայնութիւնը մօտ 6 վերստի:

Քաղաքը փռուած է հայկուռ պէս հարթ և գրեթէ հորիզոնական մակերևոյթի վրայ. ասում ենք գրեթէ հորիզոնական, որովհետև արևելքից դէպի արևմուտք քաղաքի դիրքը հետզհետէ ցածրանում է, երեք կողմից շրջապատող լեռներն ու լեռնաբլուրները տալիս են քաղաքին հովտի կերպարանք: Եթէ կայ քաղաքում ընդհանուր հարթութիւն խանգարող որևէ բարձրութիւն, դա քաղաքի բերդն է, որ մի ընական ժայռ է:

Վան քաղաքն իր շուրջ, և մասամբ էլ բաւական հեռու ընկած լեռների շնորհիւ ունի բաւական առատ ջուր: Գլխաւոր ջրամբարներն են համարւում Վարազայ և Շուշանից լեռները, որոնք միմեանց զուգահեռական և գրեթէ կից՝ բռնում են քաղաքի ամբողջ արևելեան սահմանագիծը: Քաղաքի հարաւում Հայոց-Ձորի մէջ գտնուող Սարբուլաղ կոչուած լեռնաբլուրն էլ իբրև ջրամբար է համարւում Վանի համար:

Վարազայ և Շուշանից լեռների հիւսիսային փեշերից բղխող աղբիւրներից կազմւում է մի գետակ, որ անցնելով Վանի Յանկոյաներ կոչուած թաղի միջից՝ իր վրայ է առնում այդ թաղի անունը—Անգիւաներայ գետ—և քաղաքի հիւսիսային ափերը ոռոգելով, դէպ արևմուտք հոսելով՝ թափւում է Վանի լճակը: Նոյն լեռների հարաւային փեշերից բղխող աղբիւրներից կազմւում է մի ուրիշ գետակ Կուռուպաշայ գետ անունով, որ նոյնպէս դէպ արևմուտք հոսելով՝ թափւում է միևնոյն լճակը. իսկ Սարբուլաղ լեռնաբլրից իր սկիզբն առնում է Շամիրամայ առուն, որ Հայոց-Ձորը ոռոգելուց յետոյ մտնում է քաղաքի Շամիրամայ թաղ կոչուած մասը և այնտեղի այգիները ոռոգելուց յետոյ դէպի լճակն է դիմում: Բացի այս երեք գլխաւոր գետակներից՝ Վան քաղաքն ունի ջրի ուրիշ առուներ, որոնք բղխում են քաղաքի արևելքում գտնուած փոքրիկ լճակների կամ գետիկի մէջ արհեստական կերպով ամբարւած ջրերից: Բացի այս գետակներից և առուներից՝ քաղաքն ունի բազմաթիւ մեծ և փոքր քահրէզներ—աղբիւրներ, որոնք գոյանում են նոյնպէս Շուշանից լեռան ստորոտի խաւերից և արհեստական ջրանցքներով բերուած են քաղաքի այս ու այն մասերը: Վերոյիշեալ թէ գետակները և թէ աղբիւրները հասում են արևելքից դէպ արևմուտք, որովհետև՝ ինչպէս վերը յիշեցինք՝ քաղաքի դիրքը արևելքից դէպի արևմուտք ցածրանում է:

Երեք լճակներից գոյացած առուները, երեք գետակներն ու 20-ից աւելի առատահոս աղբիւրներ ծառայում են Վան քաղաքային, 1904.

քը ոռոգելու համար. այս ջրերի շատ աննշան մասն է ունենալով պարապ տեղն, առանց որևէ տեղ ոռոգելու, իսկ ընդհանուր կերպով ջրի թէ բնական և թէ արհեստական ճանապարհները յարմարութիւն ունին քաղաքի զանազան մասերը ոռոգելու:

Քաղաքի հողը թէև զանազանակերպ է, բայց ընդհանուր առմամբ զորշ գոյն ունի. կան ընդարձակ տարածութեամբ տեղեր, որ եթէ մակերևոյթը մէկ սոնաչափ փոքրնք, կը հանդիպենք կարմրագոյն կարծր հողի, իսկ այդ խաւն էլ փոխելուց յետոյ կը հանդիպենք խճերի կամ աւազի, շատ տեղեր սեւահողը խառնուած է աւազի հետ, իսկ կարմրահողը քիչ տեղ չի բռնում քաղաքի այս ու այն մասերում:

Վան քաղաքի կլիման համեմատելով նահանգի հիւսիսային և արևելեան շատ մասերի հետ՝ կը տեսնենք, որ բաւական մեղմ է, բայց և այնպէս արևելքում և հարաւում ձգուող երկար և բարձր լեռնաշղթաների պատճառով ցրտութեան չափը քաղաքում շատ անգամ խիստ բարձր աստիճանի է հասնում: Ամենախիստ ցրտերի ժամանակ պատահել է, որ գիշերը բացօդեայ տեղ դրուած ջրով լիքը, բերանը գոց, $\frac{1}{2}$ վերջովաչափ հաստութիւն ունեցող պղնձէ սափորներ ճաքել են: Հակառակ այս աստիճան խստութեան երբեմն էլ այնպիսի ձմեռներ են պատահում այստեղ, որ յունուար ամսին անգամ ջուրը չի սառչում: Այսօրինակ մեղմ ձմեռ ունեցաւ քաղաքը 1902 թ., իսկ ներկայ 1903 թիւը ընդհակառակն խիստ ցուրտ. դեկտեմբեր և յունուար ամիսներում շաքաթներով շարունակ ցերեկներն Ռէոմիւրի ջերմաչափը ցոյց էր տալիս ցրտի չափը—23°: Սակայն այս տեսակ խիստ ձմեռներ որքան որ պատահում են Վանում, բայց և այնպէս դրանք սովորական չեն կարող համարուել: Քաղաքի համար ձմեռուան ձրտի սովորական չափը նոյն ջերմաչափի վրայ հասնում է 12°—20°-ի:

Ձմեռուայ տևողութիւնն էլ փոփոխական է քաղաքում. երբեմն պատահում է, որ 3 կամ 4 ամիս աւելի չի տևում, իսկ շատ անգամ էլ տևում 5—6 ամիս աւելի: Սովորաբար հոկտեմբերի վերջերին սկսում է ցուրտը և վերջանում է մարտի կէսերին, թէև շատ անգամ էլ աւելի շուտ է սկսում և ուշ վերջանում: Կարելի է ասել, թէ ճիշտ է այն ասացուածքը, որ ծերերի բնրնում կրկնուում է. «Բանի չեն անցել ր տառ ունեցող ամիսները, ձմեռը չի հեռանայ Վանից»: Ութ ամիս՝ սկըսած սեպտեմբերից մինչև ապրիլ՝ ր տառ ունեն: Որ սեպտեմբերին Վանի լեռների (Վարազայ) վրայ ձիւնը նստում

է, դա հազուադիւս դէպք չէ, նոյնպէս էլ ապրիլ ամսին: Անցածները բարեկամներիցս մէկը պատմեց, թէ մի անգամ ապրիլի 24-ն ս. Գէորգի տօնի օրը խաղողի վազերի վրայ արշալոյսի ժամանակ ջրի կաթիլները սառել էին և «լիւլա-լիւլա կախուներ էին»: Ներկայ տարուայ ապրիլի նոյն օրը քաղաքում անձրեւած ժամանակ Վարազայ լեռը ծածկուեց ձիւնի նօսր շերտով, իսկ սրանից մօտ 27 տարի առաջ 1876 թուի յուլիսի 22-ին ձիւնը ծածկեց նոյն և շրջակայ լեռները: Եթէ չհաշուենք այս բացառիկ դէպքերը և արտակարգ երևոյթները, այլ ընհանուր սովորական չափը վերցնենք, կը տեսնենք, որ սովորական տևողութիւնը $4\frac{1}{2}$ —5 ամիս է լինում, այսինքն նոյեմբերի սկզբից կամ կէսից մինչև մարտի վերջերը:

Քաղաքում շրջակաների—նահանգի միւս մասերի չափ ձիւն չի տեղում, շաբաթը 1 կամ 2 և երբեմն էլ ամիս 2—3 անգամ է ձիւն տեղում. եթէ ամբողջ ձմեռուայ ընթացքում տեղացող ձիւնի շերտերն առանց հալուելու իրար վրայ բարդուեն, միջին հաշուով 1 — $1\frac{1}{2}$ արշինաչափ բարձրութիւն կարող են կազմել սովորական ձմեռներում. բայց շատ քիչ անգամ է պատահում որ ձիւնի շերտերն առանց հալուելու միմիանց վերայ բարդուած մնան, որովհետև օդի փոփոխութիւնը մէկ կողմից հալեցնում է:

Ձմեռը որքան խիստ է լինում Վանում, դուցէ նոյնքան էլ ամառը շոգ լինէր, եթէ չլինէր քաղաքի արևմտեան սահմանագիծ կազմող Վանի լճակը, որ իր պարբերական մեղմ ու զով զեփիւտը դէպ արևելք փչելով՝ մեղմացնում է տաքութեան չափը: Ամենատաք ամիսներում—յուլիսի և օգոստոսի ընթացքում ջերմութեան չափը հասնում է 15 — 25° -ի Րէոմիւրի ջերմաչափի վրայ:

Ընդհանրապէս ամառը տևում է 3 ամիս—յունիս, յուլիս, օգոստոս. երբեմն անցնում է սեպտեմբերի մէջն էլ:

Գարունն, ինչպէս նաև աշունն, անցնում են քաղաքում բաւական մեղմ, բայց չափազանց կարճատև. իսկապէս մայիսն է միայն Վանի գարնանային ամիսը. երբեմն ապրիլը կիսով չափ միանում է նրա հետ, իսկ աշնանային եղանակն աւելի կարճ է. շատ անգամ ամրան շոգին յանկարծ յաջորդում է ձմեռը. եթէ չհաշուենք այդօրինակ բացառիկ դէպքեր, պիտի ընդունենք, որ սեպտեմբերի վերջը և հոկտեմբերի առաջին կէսերն են կազմում բոլոր աշնանային եղանակը Վան քաղաքում. երբեմն, և նոյնիսկ յաճախ է պատահում, որ Վանի աշնանային եղանակին հասունացող պտուղները—խաղող, սեխաստաններ, բանջարանոցներ և ուրիշ ծառաստանի պտուղներ—յանկարծ ձմեռուայ

ցրտին ենթարկուելով՝ սառչում և ոչնչանում են: Նոյնը կարող ենք ասել և վարնան մասին. պատահում է, որ սկսում է գարունը մարտի վերջերին, ապրիլի սկզբներից մինչև կեսը. մինչ ծառերի կոկոնները բացուելու վրայ են, յանկարծ ձմեռը հտ է գառնում և մէկ օրուայ ընթացքում ոչնչացնում քաղաքի ամբողջ ծառերը. այսպէս պատահեց՝ օրինակ՝ անցած 1902 թուի ապրիլի 12-ին—մեծ սիւնքի առաջ ուրբաթ օրը. երեկոյեան դէմ յանկարծ սկսեց ձիւնի բուքը, կէս ժամ տեեց, ծածկեց գետինն սպիտակ շերտով, գրան յաջորդեց գիշերային պարզ օդը, որ իր խիստ ցրտութեամբ ոչնչացրեց ծառերի ծաղիկները և գրկեց քաղաքը պտուղներից: Ներկայ 1903 թուին էլ գարունն այնքան ուշ սկսուեց, որ մայիսի սկզբներին ծառերը նոր սկսեցին ծաղկել, այն ինչ՝ սովորական է ապրիլի սկզբներին տեսնել Վանում ծաղկապարզ ծառեր:

Քաղաքի չորս եղանակների առաջացրած ցրտութեան և տաքութեան, ինչպէս նաև իւրաքանչիւր եղանակի տեղութեան մասին այսքան խօսելուց յետոյ՝ մի քանի անպաճոյճ և պարզ խօսքերով նկարագրենք Վանի եղանակների ընծայած տեսարանները:

Ձմեռուանից սկսենք:

Ձմեռուայ մէջ ենք. դեկտեմբեր ամսում ենք գտնուում. այս ամիսն է Վանի ձմեռային բուն ամիսը:

Վանի կապուտակ երկինքը սպառնում է, սևաւորուել է: Թուխ ամպերի անթափանցիկ բուլաններով քողաւորուել է. ամեն բոպէ կարծես թէ երկինքը պատրաստ է լալու, արտասուելու և այդ թանձր քողի միջից սառած արտասուքի շիթերը ցած թափելու: Արեւն անգամ թւում է թէ սոսկում է զգում երկնքի այդ մռայլ կերպարանքից, Ս. Գրիգորի լեռան գագաթից փախել մտել է ս. Նաչի սարի ետեւը, պաղել, փէտացել է. վախվժելով, երբեմն ամպերի ձեղքերից իր երեսը գաղտնագողի բոպէսպէս ցոյց է տալիս և թագնւում է, շատ անգամ շաբաթներով կարօտ ենք մնում նրա տեսքին: Երկինքը արևի շողերի փոխարէն անընդհատ թափում է Վանի վրայ ձիւնի առատ բաթիկներ, սպիտակ սաւանով ծածկում նրա սարերն ու ձորերը, դաշտերն ու հովիտները, փողոցներն ու այգիները, բակ ու տանիք, դուռ ու երգիք. փողոցներում միմեանց վրայ բարդւում, կուտում են կտուրներից հաւարուած ձիւնի լեռնանման երկարաձիգ շեղքեր, որոնց կատարները երբեմն-երբեմն և տեղ-տեղ միայարկ անների կտուրների գագաթներին են հաւասարւում և նեղ փողոցներում անցուկարձը խանգարում: Ճանապարհների վրայ լճաշափ սառցակեղև է կաղմուել, ոտքը կոխե-

լիս գետինը ճրճուում, տրաքում է և շատ անգամ անցորդների ոտքը սկրթացնելով՝ իրան երկրպագել է տալիս: Կտուրների փայտէ շոռորդաններից ձիւնի հալուած կաթիլները ցած հոսելիս սաստիկ ցրտի ենթարկուելով՝ սառել և լիւլա-լիւլա կախուել են. գարնան ժամանակ փողոցներում այնքան անուշ կլկլոցով խոխոջացող առուակները ծածկուել են ձիւնի և սառոցի թանձր կեղևի տակ, միայն տեղ-տեղ լսուում է գետնի տակից խուլ զլրղոց, կարծես թէ ջուր և սառոց կուում են մլմեանց հետ, առուակները իրանց ծանր բեռան տակ տքաքում են՝ ինչպէս համալը զփռարատար հակի տակ: Երկընաւորմարի տակ ոչ մի թռչուն չի երևում, ոչ մի թռչնի երգ չի լսուում, միայն տգեղ ապոււն ու անհրապոյր կաշաղակը երբեմն-երբեմն ծաւից-ծառ թռչելով և իրանց այլանդակ կըռկոցոյով լրացնում են ձմեռուայ գառնութիւնը. խեղճ ծաերը փախել մտել են կտուրների և սլատերի ճիւղքեր, արևի երեսը տեսնելիս դուրս են գալիս և արեգդէմ տեղերն են հաւաքւում: Նրանք էլ թախծոս համբերութեամբ գարնան են սպասում: Փողոցներում կենդանութիւնը դադարել, երթեկութիւնը դանդաղել է: Կործի տէրերը շուռուտ և երեկոյ ականջ ու երես, քիթ ու բերան, վիզ ու շինք փաթթոցներով ծածկած, ձեռները ձեռնոցներում կամ զրպաններում կծկած՝ շտապում, վազում են իրանց տեղերը. դպրոցականներն էլ տնիցն դպրոց և դպրոցից տուն շատ շտապ քայլերով են գնում: Չարաճճի և անհանգիստ երեխաները թէև չեն կարող տանը նստել հանդարտ և յաճախ դուրս գալով, սխում են ձնաղնտի և ձնաբերդի խաղալ, բայց այդ խաղը երկար տևողութիւն չի ունենում, մանուկների ձեռները մրմռում են, զէմքերը գունատւում, կապտում են, աչքերից արցունքի տաք կաթիլները գլորւում են, և նրանք վազում են ներս, թոնրի շուրջը հաւաքւում տաքանալու համար:

Ծերունի պապիկը և պառաւ մամիկը, որոնք ամառուայ ընթացքում այնքան հաճոյքով իրանց ժամերն անց էին կացնում այգիների և փողոցների ծառերի շուաքում, այժմ շատ քիչ անգամ են համարձակւում ոտքը տան շեմքից դուրս դնել, այն էլ երեկոներ եկեղեցի գնալու համար, այլ ամբողջ օրը պառկում են թոնրի մօտ, կուշտ-կուշտ քնում են, յորանջում և Սաստուն փառք տալիս, երբեմն և յաճախ իրանց թոնրիկների հետ խօսում, զուարճաբանում և երբեմն իրանց մանկութիւնը և երիտասարդութիւնը յիշելով՝ ախուվախ են քաշում:

Ձմեռուայ խառութիւնը տհաճութիւն է պատճառում նաև Վանի նապելի փիսիկին, որ վանեցի գեղեցիկ և պճնադարդ հարսներից աւելի նազանքով տան մէջ այս ու այն քունջ ու պու-

ճախ մի քանի անգամ շօրօր-մօրօր ճեմելուց յետոյ գնում է թոնրի կամ թանձր մինդարների վրայ պառկում և անուշ-անուշ մրափում:

Եկեղեցիներում, սրճարաններում, գինետներում, առաւօտներ և երեկոներ մեծ ոգևորութիւն է տիրում: Ձմեռ հայ եկեղեցու գոների սեզոնն է, ժողովուրդը եկեղեցին է դիմում հոգեպէս տաքանալու, ոգևորուելու, իսկ սրճարանն՝ ֆիզիապէս կենդանանալու համար: Միայն բազմաթիւ մուրացկաններն են, որ ոչ եկեղեցում կարող են տաքանալ, ոչ էլ ուրիշ տեղ, այլ տոպրակ ուսերից կախած, ամբողջ ձմեռուայ ընթացքում, այդ ցուրտ ու սրուին մերկ ու չլուս դողդըղալով թափառում են դռնից-դուռ՝ «կտոր մը խաց» ճարելու համար: Սրանց համար ձմեռը մահուան չափ ահուելի է:

*
**

Բնութիւն սիրողի համար Վանի գարունը զմայելի է. մայիսն է Վանի միակ գարնանային ամիսը, մենք էլ մայիսումն ենք. գարնան սքանչելիքները միանգամից դիտելու համար շուտ գանք Վանի Այգեստանի մէջ և շուրջ:

Արշալոյսը նոր պիտի բացուի, ժամկոչները իրանց կոչ-նակները տկտկացնելով շրջում են փողոցներում, ծեծում են «հայ քրիստոնեաների» դռները և հաւատացեալներին հրաւիրում են եկեղեցին: Գոռնը թոթուի աչերիցդ, բաւական է որքան քնեցիր, վեր կաց, բաց սենեկիդ պատուհանի փեղկերը. ձգիր վերարկուդ ուսիդ վրայ և նստիր լուսամուտի մէջ, զըլուխդ պատուհանից հան դուրս, առջևդ ձգուող պարտիզին վրայ նայիր. ծաղկաբոյր անուշոտութեամբ տոգորուած թարմ, անուշ և զով օդը մեղմիկ ղեփիւռով օրօրուելով, պատուհանից ներս սփռելով շոյում է քնաթաթախ դէմքդ: Հայեացքդ դէպի վեր ձգիր, երկինքը ջինջ, կապոյտ, թափանցիկ է, անհամար թռչուններ ու թռչնիկներ—ծիծեռնիկ ու սարեակ, բազէն և ուրուր ճախրում են երկնակամարի վրայ, ճախրելիս նրանք երգում, ճլվում, ճվճվում, ճկճկում, գեղգեղում և դայլայլում են, վայրկենապէս պատուհանիդ առջևից սրանալով, սրանալով անցնում և բարձրանում են եթերի մէջ. խոնարհեցրու աչքդ երկնքից դէպի ցած ծառերի վրայ, բաղմազան ծառեր քողաւորուած են մոյգ-կանաչ թաւշանման թփերով, տերեւներով և սաղարթներով, պտուղները դեռ նոր են կոճկել և թափուել տերեւների մէջ, ահա այդ ծառերի ոստերի մէջ հաւաքուել են բլբուլն ու դեղնափորիկ, լծէլծէն ու ճնճղկիկ և նուազում են:

աններդաշնակ ներդաշնակութեամբ յօրինուած տիեզերական այդ համերգին ականջ դիր, որքան անուշ, որքան դիւթիչ և հրապուրիչ է այդ բազմաձայն այգերգն, ալէլուէն և մեղեդին. բաժանուել այդ նուագահանդէսից անախորժ և դժուար է, ականջդ թոյլ նրանց, իսկ աչքդ իջեցրու ցած, գետնի վրայ նայիր, սակայն գետին չի երևում, այլ իր մայրական գրկում փրուուած զմրուխտ, յակինթ և ադամանդ խոտերն ու ծաղիկները ամբողջապէս ծածկել են նրա դէմքն ու կուրծքը, միայն տեղ-տեղ մարդկային ձեռքը պատառոտել, ճեղքել ու կտրատել է նրա կուրծքը, արմատախիլ է արել մայր բնութեան հարազատ գրկից ծնուած և նրա մատակարարած առատ սնունդով սնուած վայրենի խոտեր ու ծաղիկներ և նրանց փոխարէն տեղ է տուել խորթ զաւակների—ընտանի բոյսերին. նայիր այդ երփնեբանդ դալարների վրայ ցանուած մարգարտայեռ, ականա-կիտ, արատօր ցօղերին, որոնք այնքան ճարտարօրէն և ներդաշնակաբար շարուած են թերթիկների վրայ, որոնց կեանքը սակայն որքան գեղեցիկ, նոյնքան կարճ է:

Թողնենք այգու տեսարանը, ցած իջնենք սենեկից, բանանք դուռը, ելնենք փողոցը. դռների առաջ ջրջնուկ աւելուկ է, հարս ու աղջիկները առաւօտ շատ կանուխ, ժամկոչի ժամանակ ջրով ցօղել ու մաքրել են իրանց բնակարանի դրան առջև ձգուած տարածութիւնը. փողոցում առաջին քայլափոխիդ ականջիդ դարկուում է դրան առջևից հոսող կարկաշատ առուակի խոխովիւնը. նստիր այս առուակի շուրջ տնկուած երկտակ ծառուղու մէջ, կարճիկ ու ճճան ուռենիների տակ, դիր գլուխդ «չուկի» պղպշացող փրփուրների մէջ. ահա լսում է փողոցի ծայրից նախրապանի խռպոտ յայտարար ձայնը—«կովեր հանէք»: Տանախիկները արդէն վաղուց կը թել են կովերը և նախրապանի յայտարարութեամբ փողոցի դռնից դուրս են հանում նրանց. ահա փողոցը սկսում է դողալ. կովերի բառաչիւնով, դանդաղ և յամբ քայլով նախիրն սկսում է առաջանալ իր ետևից թողնելով ամպանման թանձր փոշի, որի մէջ հագիւ թէ տեսնում են դէս ու դէն վազվզող 8—10 տարեկան պզտիկ, նիհարիկ, դժգոյն ու պատառոտուն մանուկներ ու աղջիկներ. ոմանց կոնակի վրայ տեսնում են ծառի ճիւղերից հիւտուած ձագարաձև կողո՛ւններ. իսկ ոմանց գլխի վրայ դարձեալ միևնոյն ճիւղերից պատրաստուած պնակաձև սալա-ներ կամ բիւնիկներ. թշուառութեան զոհեր են դրանք, որոնցով լեցուն է Վան, որոնք այդքան վաղ բախտի իրանց շնորհած դառն բաժակը մինչև մրուրը քամել են, որոնք զարուն հասակից այս գարնան մէջ կամենում են դօրավիզ լինել իրանց:

թշուառ ծնողներին, ամէն օր այդ ժամանակ նախրի հետ դուրս են գալիս տներից և նախրի ետեից ընկնելով՝ հաւաքում են իրանց ձմեռուայ վառելիքի մէկ կարեւոր մասը (ցան ու փթիւր)։ որքան ուրախ են այդ մանուկները, երբ 1—2 ժամ յետոյ տուն են դառնում կորաքամակ, կծկուած ու տքտքալով։ մի զզուիր դրանց կեղտոտ հագուստներից, սրբիւր նրանց ճակատի քրախնքը և քայլերդ ուղղիւր դէպի դաշտը։

Արեւն արդէն վաղուց դուրս է պրծել վարագայ սարի սղոցաբերան կառարներից և իր պողոտէ ճառագայթները ցանել է վանի հովտի վրայ։ Այգեստանի շուրջ փռուած դաշտերն երևում են միապապաղ և կանաչագարդ, այդ կանաչ սփռուցի վրայ, դէս ու դէն արևի շողերի տակ փայլիւում, պըսպղում են ջրերի օծապտոյտ առուները, նախիրը այս դիմացի բլրալանջի վրայ սեին է տալիս։ Այստեղ պղպլիկ հօտաղը իրանից աւելի պղպլիկ ուլերի և գառների հետ թաւալել է կանաչների մէջ, ինքնիրեն երգում, գնդնում է և երբեմն էլ իր հօտի չարածձի ուլերի վրայ բղաւում է, նրանց հրահանդիներ է տալիս։ Այստեղ երկրագործ մշակը իր արտն է հերկում՝ առաւօտեան անուշ «եօլ եօլ»-ով քաջալերելով իր եղներն ու գոմէշները։ մի քիչ հեռու մի խումբ «սարակներ» բահերով փորում են արտը, սեխաստուն են պտտրաստում նրանք, և աշխատում են, և՛ երգում են, և՛ զուարճարանում են, իսկ այս մօտակայ բանջարանոցի մէջ մի խումբ տէջի, սպարկերտցի և շատախցի կանայք քաղհան են հանում, տւելորդ խոտերն արմատախիլ են անում, իսկ բանջարանոցի կշտի առուակից ջուրը վազում է ու ոռոգելու այն ցորենի արտը, ուր մշակը ջրուտ ոտներով ակօսներ է բանում, թումբեր է շինում, արտի մէջ կանգնող թզաչափ հասակ ունեցող հացահատիկներին հաւասար չափով ջուր մատակարարելու համար։

Այսօրինակ տեսարաններ դեռ շատ կան դաշտում գիտելու համար։ Բայց քուցէ յոգնես պտտելով, ուրեմն բարձրանաւք մի այնպիսի տեղ, որտեղից կարելի լինի վանի ընդհանուր տեսարանը միանգամից դիտել։ Բարձրացիր Այգեստանի հիւսիսում ցցուած Զըմ-զըմ Մաղարայի գլուխը։ ամբողջ վանի հովիտը փռուած է ոտքիդ տակ, գեղատեսիլ և կախարդիչ է այդ տեսարանը, ամբողջ Այգեստանը երևում է ինչպէս սաղարթախիտ մի անտառ, իսկ շինութիւնները՝ իրրև անտառային խոտապատ հիւղակներ, արևելքում և հարաւում դաշտերի միապապաղ կանաչութիւնն է հայելիանում, իսկ արևմուտքում՝ արևի ճառագայթների տակ այրւում, վառւում է վանի լճակը՝ սեղմուած ժայռերով և ծառագարդ գիւղերով, խաղաղ աւելի

քան օգը, կապոյտ աւելի քան երկինքը, համեստ աւելի քան վանեցի նորահարսը, ժպտուն քան մանուկը, վճիռ քան նրա սիրտը:

Վերջացրու այդ պտոյտը, և եթէ դեռ հիանալ ես ուզում, իրիկուան խոնջութիւնդ մեղմացնելու համար մի թեթեւ ընթերիք արա և ապա շարունակիր. Վանի գարնանային ընթերիքը շատ պարզ է. Վանի տառետի, թանապուրի և «Ջլրիւրի» առատ ժամանակն է, տանտիկինը սեղան պատրաստել և զարդարել է կանաչեղէններով. լուսնակն արդէն երկնակամարի վրայ փայլում է, ինչ անուշ է ընթերիքը լուսնակի լոյսի տակ. ընթերիքից յետոյ շատ հեռու մի գնա, ելիր նորից այգին, որքան խորհրդաւոր, որքան վսեմ և ապաւորիչ է այգու տեսարանը լուսնակի տակ, մանաւանդ երբ գիշերային խորհրդաւոր լուսնեան մէջ լսում ես խոտերի տակ եռացող գորտերի և զանազան սողունների սուլոց, դուռոց և շվշվոցը. բայց ամենաքաղցրը սրնգի ձայնն է, որ լսում է այգիների հազար ու մի անկիւններից: Սրինգը վանեցիների ամենասիրելի նուագարանն է. այդ գործիքն է, որ խիստ նրբութեամբ կարողանում է արտայայտել նրանց հովուական, տխուր, մեղամաղձոտ զգացմունքը. սրնգի ձայնը մինչև կէս գիշերը շարունակում է, այդ ձայների հետ միանալով գիշերային պաղ զեփիւռը՝ մի թեթեւ քուն են մօտեցնում աչքերիդ, աչքերդ ծանրանում են, զարձիւր դէպի սենեակդ, սրնգի գեղգեղանքի, զեփիւռի սլսլոցի և արծաթափայլ լուսնակի պաղ շողերի տակ քեզ անոշ քուն:

*
* *

Վանի ամառը զուրկ չէ դարնան հրապոյրներից, բայց չունի այն թարմութիւն և թովիչ, գիւթիչ չքնադութիւն, որ գարնան յատուկ է միայն:

Յուլիսի վերջերունն ենք. մայիսի արշալոյսի պտոյտը յուլիսում կէսօրից յետոյ սկսենք: Ջերմաչափը ցոյց է տալիս 22^o, շոգ է. երեսնք այգին. տեսարանը շատ կերպարանափոխուել է. խոտերը մի անգամ հնձուել են, երկրորդ անգամ թէեւ նորից կանգնել են, բայց նախկին դալար կանաչութիւնը չի երևում նրանց վրայ, տեղ-տեղ բոլորովին դեղնել և չորացել են, բնականից բուսնող ծաղիկները տեղի են տուել արհեստական կերպով մշակուած ծաղիկներին, բանջարեղէններին: Ծառերի մոյգ կանաչութիւնը փոխուած է բաց դոյնի, և տերևների վրայ երևում է փոշու թանձր խաւ. ճիւղերը ծանրարեւոնուել են պտուղներով և վանեցի ութսունամեայ ծերունիների

հման կռացել են դէպի գետին. փայտէ նեցուկներ են զրուած նրանց տակ կոտրտուելու վտանգից ազատ պահելու համար. սալորն ու ծիրան, բալն ու կեռաս, թուխն ու դամոն, փսիկ խնձորն ու շուտահաս տանձը հասունացել, դեղնել ու կարմրել են, կարծես ժպտում, ծիծաղում են, արիւն է կաթում նրանց թշերից. անուշ է մանաւանդ խնձորի կարմրութիւնն ու փայլը, այնքան նուրբ, թափանցիկ և շողշողուն է, որ պատկերդ երևում է մէջը: Այգում ամեն կողմից թրկ-թրկոցի ձայներ են հասնում ականջիդ, հասունացած պլտուղներն սկսել են վար ընկնել, «կաթիւ կ'անեն», վերցրումի քանի հատ այդ ջրալից և համեղ պտուղներից, թրջիր և զովացրո՛ւ կէսօրուայ տօթով պապակած լեզուդ. ճնճուկ ու սարեակ, ագռաւ և ապունակ ծուարել են ծառերի ճիւղերի մէջ, երգելու, գեղգեղելու փոխարէն կտցահարում և ուտում են այդ սրտուղները. այս անգամ իրանց ձագուկներն էլ բերել են իրանց հետ:

Այգուց ելնենք դէպի դաշտը, թէև շոգը հետզհետէ աւելի և աւելի սաստկանում է, բայց առունների ափով, ծառերի շուաքով կ'երթանք: Առաջին տպաւորութիւնն, որ ստանում ենք դաշտային տեսարանից—եթէ մայիսի տպաւորութիւնն դեռ չես մոռացել—տխուր է: Անմշակ դաշտերը չորացել և ծածկուել են դեղին գոյն կրող փշերով և խոտերով. արտերը բոլորն էլ ոսկեզունք են, ահա ամեն տեղ երևում են խումբ-խումբ հնձուորներ, որոնք քրտինքի մէջ թաղուած՝ շարժում են իրանց մանգաղները, հացահատիկների խուրձեր են կապում, դէզեր են շեղջում. մեքենայի պաշտօն վարող այդ հնձուորները արևի տակ ռըքան այրուել, կրակցել են. կոպարագոյն երկնակամարը կարծես կրակի փռչիւններ է մաղում ցած: Թռչունների հարիւրաւոր երամները փախել են երկնակամարի երեսից և թաղանուել շուաքներում, իսկ հնձուորները մի ըսպէ անգամ հանգիստ չեն կարող առնել. արտի տէրը, որ դէզի շուաքում անուշ մրափում է, շուտ-շուտ բաց է անում իր աչքերը և բզաւում կանգնողների վրայ: Եթէ երբեմն բանաստեղծական գրուածներ կարգալով հրապուրուել ես երկրագործների, հընձուորների կեանքով,—այժմ այդ տպաւորութիւնդ պիտի փոխուի, պիտի համոզուես, որ երկրագործի կեանքը ամբողջապէս տանջանք և դառնութիւն է: Բաւական է սակայն, որքան այստեղ սպասեցինք. տեսնում ես մեր շուրջը փոքր տարածութեան վըրայ միմեանց մօտիկ սպիտակ վրաններ են երևում, ուղիղը քայլերդ դէպի սրանցից մէկը, շատ հեռու չէ, 3—4 բոպէի ճանապարհ է. ահա վրանի առջև փռուած է ընդարձակ կանաչ

տարածութիւն. սեխաստան է դա, մտիւր չաղըրի տակ և հրամայիւր պախէզպանին, որ վարունկ կամ ձմերուկ բերի, ան, կեր և հովացրու ներսդ. թէև Վանի սեխը աւելի համեղ է, բայց դեռ լաւ հասունացած չէ, մի քանի օր էլ պէտք է, օգոստոսին սպասիր, ձմերուկ՝ որքան ուղում ես՝ կեր, աժան է, Չ կոպէկով կարող ես կշտանալ:

Վրանի տակ փչում է Վանի լճակի ծոցից բղխող մեղմ գեփիւռը, լաւ հանգստացիր, որպէսզի կամաց-կամաց մեր ճանապարհը ուղղենք դէպի Վանի լճակը. դնանք, ծովակը այս ժամիս այցելուներ շատ ունի, Այգեստանից և մանաւանդ Քաղաքամիջից, շուկայից խմբեր միմիանց ետեից շտապում են դէպի Աւանուց և Չայրի ծովափերը լողանալու համար, հիմիկուայ լողանքը շատ հաճելի է. հանիր շորերդ և ընկիր ջրի մէջ, շուրը գաղջ է, հետզհետէ մեծանող և ուռչող ալիքները քեզ իրանց հոսանքի հետ բարձրացնում են ջրի երեսը, տարբերում, օրօրում: Ծփացող ալիքների հետ՝ որքան ուղում ես՝ դու էլ ծփծփա, բայց տես, արևը կամաց-կամաց թեքում է դէպ իր մուտքը, առիթը ձեռքիցդ մի փախցնիր, դիտիր այդ տեսարանը, գեղեցիկ է: Հեռու արևմուտքում ծովը միացել է երկնքի հետ, այդ գծի վրայ կանգնել է արևը, որի հրեղէն գունտը հետզհետէ աւելի ու աւելի մեծանում է, երբեմն կարծես իր լոյսը նուազում և անմիջապէս նոր փայլ է ստանում. թւում է քեզ, թէ արևն էլ լողում է ջրի մէջ, երբեմն թաղում է ջրի մէջ և անմիջապէս դուրս է թռչում. արևի վերջալոյսի ճառագայթների տակ ծովակը ուռել և հրեղէն ովկիանոսի կերպարանք է ստացել, վէտ-վէտ ծփացող ալիքները ինչպէս բոցեղէն սիւներ, հետզհետէ զայրանալով, յուզուելով՝ ժայթքում, ծովափին են խփում, փշրում են, կարծես զայրացած ետ են դառնում աւելի ուժգին ընդհարման պատրաստուելու: Նայուածքդ որքան հեռուն ես գցում, լճակն այնքան աւելի կարմրում, բոցավառում և այլում է: Եղբրով, Արսօս և Սիփան լեռների գագաթների շուրջը լողացող նօսր ամպերի բարակ շերտերը վարդագունել, շիկացել են, կարծես բոցավառուող ծովակի հրեղէն ալիքների տաքութիւնը հասնում է այնտեղ, նրանց առանց վառելու այրում է: Չես յապենալ այդ տեսարանից, բայց օրը մթնում է, և մենք չենք կարող շատ ուշանալ—մեր ճանապարհը հրկար է, միանանք յետ դարձող խմբերից մէկի հետ. օրուայ խնդիրների մասին խօսակցելով դառնանք տուն և մեր պտոյտը վերջացնենք:

Սեպտեմբերի վերջերումն ենք. երեսնը աշնանային պըտոյտի. թէն դեռ շուտ է, բայց այս պարագայում լաւ է հետեւել այս առածին՝ «լաւ է շուտ, քան թէ երբէք», որովհետեւ Վանն ունի կանխահաւ ձմեռներ: Տես, երկինքը ինչպէս իր երեսը թթուեցրել է, ո՛ւր է նրա փայտեան ջինջ կապոյտ գոյնը. մռայլ ամպերը յաղթանակը տարել են արդէն և քողաւորել են երկնակամարը, հիւսիսից փչող քամին ու փոթորիկը սուրալով ներս են մտնում, Վանի նեղ փողոցների դիզադէզ բարդուած փողինիւրը աւնում բարձրացնում են վեր, օդի մէջ տարածում և ապա ցանում են անցորդների վրայ:

Տեսնում ես այս թռչունների կարաւանները, ահա սրանք էլ զգում են աշնան ազդող դառնութիւնը, վերջին հրաժեշտ տալով իրանց ամարանոցին, իրանց ձագուկներ աւած ուղեւորում են դէպ իրանց ձմեռանոցը. ռըքան տխուր է նրանց չուերգը. պանդխտի տէրերը տեսնելով այդ կարաւանները՝ յիշում են իրանց պանդխտաներին, զգացւում և արտասւում. հեռու, հեռու երկնակամարի խորքում հազիւ երևացող կուռնկների դանդաղ վնացքը և տխուր չուերգը յիշեցնում է ձեզ «կոռնկ, ուստի՞ կու գաս» երգը:

Դաշտային տեսարանը հաճելի տպաւորութիւն պիտի ազդի քեզ, որովհետեւ իր անուշ կրկնագարունն է փռում առջիւղ. արտուրը ծածկուած են աշնանացան հացահատիկների բարակ կանաչութեամբ, աւելի թաքմ և դալար գոյնով. դաշտեր և արօտավայրերը նոյնպէս զարդարուած են նօսր արօտներով և դալարներով. համատարած այդ կանաչութիւնը աւելի քաղցր չի՞ թւում, երբ ամեն բոպէ առաջիկայ ձմեռը իր մօտաւորութեամբ երկիւղ է ազդում քեզ. գարնան ժամանակ գուցէ միշտ աւելի լաւն սըպասելու ակնկալութեամբ եղածովն չբաւականանայիր, իսկ այժմ երբ համոզուած ես, թէ այսօրուայ տեսածիցդ վաղը կարող ես զրկուել և ամբողջ 6—7 ամիս զրկուած մնալ—գոհ պիտի լինիս:

Այժմ ու ոչխարը, կովն ու հորթը ընկել են դաշտերի և արօտավայրերի այդ նօսր արօտները, կրծոտում են և դանդաղարար դառնում են դէպի տուն, վերջին անգամ իրանց սիրելի զբօսավայրերին և արօտավայրերին մնաս բարովի պատրաստուելու դառն մտածումով:

Ահա սևխատտաները ոսկեգունել են, ծածկուել են դեղին սեխերով. պախէզպանը շուռ է գալիս իր պախէզի մէջ, քննում է սեխերի վիճակը, երբեմն նայում է մռայլած երկնակամարին, շվշվացող քամուն, ապա ինքն իրան խորհրդածում է,

անվճռականութեան մէջ է երևում, վախենում է օդերից, մի թեթև ցուրտ—և ահա ամբողջ պախէզը պիտի սառի և ոչնչանայ. ահա այս հարցն է որ նրան մտատանջում է—քանդի՞լ պախէզը—այսինքն միանգամից հաւաքի՞լ պտուղները—թէ՞ դեռ մի քանի օր էլ սպասել, պտուղները իրանց արմատի վրայ աւելի թանգ գնով ծախելու յոյսով:

Բանջարանոցներում ոգևորութիւն է տիրում. շարթէ-շաբաթ, գլխաւորաբար շաբաթ օրերը էշերի և սայլերի կարաւաններն ահագին աղմուկներով բանջարանոցների բերքերը կրում են դէպի հրապարակները:

Մի քանի օր յետոյ դաշտերում կենդանութիւն բոլորովին պիտի դադրի, բայց այգիներում դեռ ոգևորութիւն կայ: Թէև շվշվացող քամին օրօրում և տատանում է բարձրագագաթ ծառերի կատարները և նրանց թօշնած ու դժգոյն տերեւները դողդողալով ցած է թափում, բայց դեռ վաղը պիտի կթեն խաղողը: Երթանք այգեկութի, հրաւէրներ շատ ունենք հարեաններից և բարեկամներից: Այգեկութը Վանի հաճոյքներից ամենագեղեցիկն է: Ահա խաղողի այգին կանաչ-կարմրին է տալիս, հարս ու աղջիկ, երիտասարդ ու պատանի մէկ-մէկ դանակ բռնած ձեռքերում՝ կտրում են խաղողի ողկոյգները, զետեղում են սալաների և կողովների մէջ. ուժեղ երիտասարդները այդ կողովները շալակն առած՝ կրում են հնձանը: Խնչ անուշ եռ ու զեռ է տիրում, հարսները իրանց քօղերի տակից հաղիւ թէ միմեանց լսելի ձայնով զուարճարանում են միմեանց հետ, ծիծաղում են իրանց կողքի առուի մէջ հաւաքուած նշանելու աղջիկների վրայ, սրախօսութիւններ են անում, չարածճի մանուկներն էլ շուտ-շուտ այս առուից միւս առուն են թռչկոտում, իրանց վաղուան պաշար պահելու համար ողկոյգներ են թագցընում յարմար տեղերում:

Թող այդ խայտաբղետ բազմութիւնը զուարճութեամբ շարունակէ իր այգեկութը, թող նրանք ասեն, ծիծաղեն, կթեն, ուտեն և զուարճանան, իսկ մենք դնանք դէպի հնձանը, շատ հեռու չէ—Վանում ընդհանրապէս հնձանները այգու մէջն են լինում—այնտեղ յատակի վրայ դիզուած խաղողի ողկոյգներն սկսել են «փլխել»—ճմլուել, և շիրան—քաղցուն կաթիլ-կաթիլ քաժում է գետնափոր քարաշէն և քառակուսի գուռի մէջ: Վերցրու թունգանոցը, քաղցուով լցրո՛ւ, կուշտ խմիր այն յոյսով, որ էլ գինի չիմես, որովհետև Վանի գինին թթու է:

Այժմ մի քիչ էլ պտոյտ անենք այգու «ափնի» կոչուած մասում, այսինքն ծառաստանում. դեռ ձմեռնուկ մրգերից՝ սեր-կիւի, մալաչի, նռնիկ, աբանիկ և մէորոնիկ տանձերը,

ինչպէս նաև դեղձ ու ձմեռնուկ խնձորներ ծառերի վրայ ճութ-ճութ կախուել են, խակ են, ծառի վրայ չեն կարող հասունանալ, մի քանի օր յետոյ այգետէրը դրանք էլ պիտի հաւաքէ և շարան-շարան կախկիսելով մառանում՝ պիտի պահէ ձմեռուայ ընթացքում ուտելու համար:

Անակնկալ երևոյթներ շատ են պատահում Վանի եղանակներում: Ահա արեւմուտքում թուխ ամպերի քուլաները միմիանց վրայ բարդուած են արագ-արագ և մի քանի բոպէի մէջ փուռում են երկնակամարի վրայ: Գոռում-գոչիւնը դըղըդեցնում է երկիրը, այգեկիթները միմեանց բղաւում են «շուտ արէք, անձրև պիտի գայ»: Ահա մի քանի բոպէ էլ, և արդէն սկսուեց տեղատարափը, փախչող-փախչողի եղաւ, էլ ճար չկայ. դու էլ լաւ պիտի թրջուես, բայց մի տիբրիր, փնաս չուհի, այս անձրևը Աստուածային օրհնութիւնն է. վաղուց է, որ հողագործը սերմը հողին աւանդել և սպասում էր անձրևի. այս անձևը անջրդի դաշտերին կեանք, հոգի է տալիս: Աստուած տայ, որ դեռ երկար շարունակուի. մենք կարող ենք տուն հասնելուց յետոյ փոխել մեր թրջուած շորերը:

Ահա սրանով վերջացնում եմ Վանի չորս եղանակների նկարագրութիւնը: Թէ մէկ և թէ միւս եղանակի մէջ դեռ շատ տեսարաններ և երևոյթներ կան, որոնք մեր նկարագրածներից աւելի ուշագրաւ են, սակայն նիւթը չճապաղեցնելու նպատակով այսքանն էլ բաւական ենք համարում:

ԾԵՐՈՒԿ

(Կը շարունակուի)

ՀԱՅԹՈՒԽ ՍԻՄՈՆԸ

Ա՛խ, մեր սիրտը լիքը զարդ, ցաւ,
Օր ու արեւ շրտեսանք.
Վա՛խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք:

Աւ. Իսահակեան

I

Այդպէս էր նրա անունը, այդ անունով էր ճանաչում նրա ամբողջ գիւղաքաղաքը: Մի անգամ մի նամակ ստացուեց «ի ձեռն հասանի ի մեծապատիւ պարոն Սիմոն Մանուկեանցին» մակագրութեամբ, շաբաթներով այդ նամակը պտտեց ամբողջ գիւղաքաղաքում, և ոչ ոքի մտքովն անգամ չանցաւ, որ այդ «մեծապատիւ պ. Սիմոն Մանուկեանցը» հանրածանօթ հացթուխ Սիմոնն է—«Հացթուխ Սիմոն», ուրիշ կերպ նրան չեն ճանաչի:

Ահա նա:—Բարձր հասակով, նիհար, ածիլած երեսով, սև դիւրաշարժ աչքերով: Նրա թաւամազ բեխերն ու յօնքերը դարձնում են ոսկրոտ դէմքը մի տեսակ մռայլ և բարկացկոտ: Դրան նպաստում են մանաւանդ հաստ, զսպուած կնճիռները, որ համախմբում են ճակատին, աչքերի տակ ու բերանի շուրջը: Սակայն դրանք այն կնճիռներից չեն, որոնք անշարժ, խոր ակօսւում են մարդու դէմքին միմիայն վերջինս դաժան դարձնելու համար: Ընդհակառակը, հացթուխ Սիմոնի կնճիռների այդ կոյտը, երբեմն հովհարի թևերի պէս բացւում ու ցրւում են, ծիծաղում, երբ նա լաւ է տրամադրուած: Եւ այդպիսի ժամանակ հացթուխ Սիմոնի դէմքը մի առանձին գրաւչութիւն է ստանում ու հաճոյք պատճառում: Հարկաւոր է միայն այդ հովհարը բանալու գաղտնիքն իմանալ:

Գլխին ունի մինչև յօնքերն ու ծոծրակը խրած՝ քթախոտի գոյնի մի հնամաշ կարտուղ. հագին՝ մինչև ծնկները հասնող կապոյտ շապիկ. մէջքին փաթաթուող կաշու կտորը, որին

նա «դօտի» անունն է տալիս, առաջացնում է շապկի վրայ մի քանի կեղտոտ ու անտեղի ծալքեր: Այնուհետև ցամաքած սըրունքներից հազիւ իջնում է էթանանոց, կաշուէնման, զոլ տրիկօնից շալվարը, որի շարունակութիւնը կազմում է սպիտակ բրդէ մրկած գուլպան ու մի քանի տեղից կարկատուած չուսեր:

Սա նրա ամառուայ գգեստն է:

Ձմեռը նրա այդ գգեստի վրայ աւելանում էր միայն երկու բան. առաջինը՝ գորշագոյն, հարուստ տնից բանելու փոխարէն ստացած մի մահուդէ վերարկու, որի վրայ յաճախ կապոյտ շապկից տեղափոխուած էր կաշուէ կտորը և եռանդով սեղմում իր գրկի մէջ, և երկրորդը... սրթսրթոցը: Ծիշտ է, վերջին հագուստը շատ շատերին չէ վիճակուած, բայց հացթուխ Սիմոնի և իր նմանների համար դա մի անխուսափելի գգեստ է: Հացթուխ Սիմոնը վաղուց հետէ հաշտուել էր այդ գգեստի հետ էլ, և եթէ տանից դուրս գալուց առաջ հագնում էր առաջին գգեստը՝ վերարկուն, պարզ համոզուած էր,—և նա այդ համարում էր անհրաժեշտ,—որ տանից դուրս գալուց յետոյ պիտի հագնի և միւս գգեստը՝ սրթսրթոցը: Երկուսն էլ ցուրտ եղանակի, ձմեռուայ գգեստներ:

Եւ երբեմն նա ինչպէս էր սրթսրթում...

Այն գիւղաքաղաքն, ուր ապրում էր հացթուխ Սիմոնը, շրջապատուած է բարձրաբերձ, լերկ լեռներով, որոնցից մի երակ բաժանուած և ուղիղ գիւղամէջն է գալիս՝ առաջացնելով մի բաւականին մեծ թումբ: Այդ թումբը անմարդաբնակ չէ, երեւում են մի քանի տներ. ուր վերջանում է թումբն ու սկսւում մի զառիվեր գէպի գիւղաքաղաքը, բառանկիւնանում է մի քաղաշէն խրճիթ: Դա բնակարան չէ դանազան յարմարութիւններով, այլ մարդկային մի որջ, բնութեան տարերքներին հազիւ դիմադրող, բաղկացած չորս հատ չեչոտ պատերից, սև, մրոտ առաստաղից—որի մէջ քառագծուած է փոքրիկ երգիքը—խսիւրազարդ, խոնաւ յատակից և ութ հատ մութ, գարշահոտ անկիւններից...

Դա հացթուխ Սիմոնի տունն է:

Արեւելեան պատի մոխրագոյն քարերի մէջ սևանում էր թաղիքանդը դուռը, որ կարծես սիրահարուած լինէր շրջանակին—հազիւ թէ իրարից բաժանուած տեանէիք: Չնայած, որ այդ դուռը խիստ կեղտոտ էր ու մրոտ, բայց և այնպէս հացթուխ Սիմոնը սիրում և մի առանձին համակրանքով էր վերաբերում գէպի նա: Գիտէր դռներ—նա շատ դռներ է տեսել, շատ դռներ է բաց ու խուփ արել—որոնց բաւական է ձեռք տաս, որ անզգամի պէս իրանց ճոճոցը աշխարհք ձգեն, մարդու ա-

կանջ տանեն, իսկ բաւական է վրայ բերես—մանաւանդ մի քիչ բարկացած—որ իրանց ուժգին, կոշտ բաղխումով մարդու ուղեղ շարժեն: Սակայն այդպէս չէր հացթուխ Սիմոնի դուռը. նա շատ խելօք էր, կարծես սովորցնովի. մինչև անգամ իր տիրոջն էլ ճանաչում էր: Բաւական էր, որ հացթուխ Սիմոնը նրան մի քիչ հրէր. նա իսկոյն փստալով ու պատկառանքով յետ էր քաշւում, տեղ տալիս մտնողին, իսկ վրայ բերելիս քսփսալով մեղմ փակւում և մի ախորժալուր ձայն հանում, նման այն ձայնին, երբ ձին իր ատամների տակ դարի է փշրում, կամ երբ քթախոտի ամանի ծածկիչն ես փակւում:

Հացթուխ Սիմոնի քէֆը գալիս էր իր դռնից:

Բայց ի՞նչ արած, երբ այդ խրճիթը իր խելօք դռնով հացթուխ Սիմոնի սեփականութիւնը չէր: Սկզբում դա հարեան մեծ տան համար ծառայում էր դարմանանոցի տեղ: Երբ գիւղաքաղաքի մէջ լուր տարածուեց, որ մի լաւ հացթուխ է եկել, շատերը ուրախացան, որովհետեւ—երկար ժամանակ էր—հացթուխի պակասութիւն էին քաշում, և նոյն օրը մի քանի բարերար մարդիկ իրանց բարոյական պարտքն համարեցին հոգալ նորեկ հացթուխի բնակարանի մասին: Նրանք շուկայում երկար գլուխ գլխի տուին, խորհուրդ արին և վերջապէս վճռեցին զիմեւ Համբարձում ապօրը, որ նա դատարկի իր դարմանանոցը և հացթուխին տայ, որովհետեւ նա բացի դրանից ուրիշ դարմանանոց էլ ունէր: Դէհ, հիմայ նրան խօ չեն ասում, որ անպատճառ ձրի տայ, առ այժմ տեղ տայ, յետոյ ինքն է իմանում ու հացթուխը:

Եւ այդ օրից Համբարձում ապօր դարմանանոցը դարձաւ հացթուխ Սիմոնի բնակարանը:

II

Ո՞ւմ ասես, որ հացթուխ Սիմոնը չճանաչէր, այն թւում տունն էր, ուր նա հաց թխած չլինէր: Ամենքին նա ճանաչում էր, ամենքը նրան ճանաչում էին, ամենքի տանն էլ նա հաց էի թխել: Ամեն մի տուն ունէր իր սեփական թոնրատոււնը,—յատակին խորացող մեծ թոնրով,—և հաց թխելու բոլոր անհրաժեշտ պարագաները: Իւրաքանչիւր ընտանիք տարին մի քանի անգամ ամբողջ օրով հաց էր թխում մէկ կամ երկու ամսուայ պաշար, չորացնում և դարմաններում դարսում: Եւ «հաց թխում» օրը մի այդպիսի ընտանիքի համար ամենատաժանակիր օրն էր դառնում:

«Հաց էինք թխում»—այդպիսի ընտանիքի անդամը մի Մայիս, 1904.

որևէ անճշտապահութեան համար յանդիմանութիւն անողի առաջ դժուար թէ սրանից աւելի լաւ պատրուակ կարողանար դնել:

Իսկ «հաց թխում» օրուայ խակական հերոսը հացթուխ Սիմոնն էր:

Ահա մաշուած շեմքով, ճոճուան կրնկով մի սև, փոքրիկ դուռ բաց է անում ներքին յարկում համեմատաբար ընդարձակ թոնրատունը:

Թոնրատունը՝ «հաց թխում» օրը:

Դեռ ներս չմտած, դրան շեմքին, երեսովդ է տալիս այրուած խմորի ծխախառն հոտն ու խաշուած, գոլորշիախառն օդը: Այնուհետև այդ դժոխային հոտի ու տաքութեան մէջ նըշմարում են բանողների անդոյն ու անհանգիստ ուրուադձեր: Պատերից մէկի մօտ գտնւում է թոնիրը, որի յատակին նստած ոսկեգոյն կրակը անխնայ տաքացնում է թոնրի կուրծքն ու թոնրատան մթնոլորտը: Դրա կողքին կապոյտ շապիկը հագին ծալապատիկ նստած է հացթուխ Սիմոնը: Նա մերթ կռանում, յարդէ բարձով լաւաշը թոնրի կրծքին է զարկում ու շտապով յետ քաշւում, կամ եփած հացը սև, երկայն շամփուրով հանում ու մի կողմ շարտում: Իսկ անսպառ քրտինքը նրա ճակատից յորդ կաթիլներով հոսում է դէպի ցած, յաճախ դէպի թոնիրը, ուր նրանք մեռնում են ընկած բոպէին և կորչում անհետ...

Նւ քաշում է թոնիրը դէպի իր գիրկը շրջապատող ցուրտ օդը, տաքացնում, այրում, հրեղէն ալաններ դարձնում և որպէս լերան մի անգուպ հրաբուլդիս արձակում կատաղութեամբ դէպի թոնրատան բարձր առաստաղը, աշխատելով նրա սև, մռայլ գերանները քերել իր ծիրանի արշալոյսով: Բայց գերանները իրանց հպարտ մռայլութեան մէջ միայն ժպտում են կարծես բարձունքից բոցոտ թոնրի անգօրութեան վրայ... Բորբոքւում, կատաղում է թոնիրը, պուկում կրծքին զարկուած լաւաշը, թշաղանում, խեղդում իր հրեղէն շնչի մէջ և կուրացնող ծխի ուժգին քուլաներ զարկում գերաններին վրէժանդիր թափով: Շուարում են մի քանի բոպէ գերանները, մթնում ծխի մէջ, բայց շուտով զգաստանում, կուրծք տալիս և ամպող քուլաներին դէպի մօտակայ երդիրը հրում: Անցնում է ծուխը, և անվիաս գերանները բարձրից կրկին ցոյց են տալիս իրանց դէմքը խիզախ թոնրին ու մեղմ շարժելով վարդապոյն շրթունքները՝ նորից ժպտում...

Բարկանում է հացթուխ Սիմոնն իր անհմուտ զարկին, կռանում դէպի թոնիրը, շամփուրը խրում խմորի սևացած

Վիճակին ու մի կողմ շարժում: Ապա վերցնում է երկայն թար-
ցըն ու եռանդով թոնիրը խառնում:

Եւ ամեն անգամ, երբ նա կոտնում է դէպի թոնիրը, նրա
կնճիռների առանց այն էլ զսպուած ցանցը աւելի է սեղմուած
ու կծկուած: Իսկ երբ բարձրանում ու տեղն է նստում, կրկին
նստարանում է այդ ցանցը: Եւ երբ այնուհետեւ լսում է մի
սրամիտ խօսք, կամ ինքն է հանաք անում, նրա կնճիռների
կոյտը աւելի և աւելի է ցրւում, բացւում ինչպէս հովհարի
թևեր և դրաւիչ դառնում:

Եւ դառն քրտինքը շարունակում է թրջել նրա դէմքի
սկօսները, կաթիլներով գլորուել դէպի ցած, ուր նրանք կամ
կորչում են կրակի հրաշունչ ալաւների մէջ, կամ ընկնում թո-
նրի տաք եզերքին, մի քանի անգամ ցատկոտում, թշնամ,
հալւում ու մեռնում...

Քանի գնում՝ աւելի է ոգևորւում հացթուխ Սիմոնը, ա-
րագաշարժ դառնում, քանի գնում՝ աւելի է ծլում քրտինքը
ամբողջ մարմնով, կտալոյտ շապկից դուրս գալիս ու մէջքին
սեւ լճակ կազմում...

Հացթուխ Սիմոնի աջ կողմում շարուած են միւս բա-
նուորդները: Պատի տակ դրուած է մի մեծ տաշտ, որի առաջին
չոքած հոլանի կռներով կինը՝ բռնեցքներն անընդհատ
անկել, կարծր խմորին է ցցում—հունցում: Նրա կողքին
մի սւրիշ կին հունցած խմորը սուր քերիչով մասերի է բաժա-
նում և գնդակներ շինելով՝ առաջին դարսում: Սրա կողքին,
կարճլիկ տախտակէ սեղանների առաջին ծալապատիկ ուրիշ
երկու կանայք են իրար դէմուդէմ նստած, որոնք վերցնելով
խմորէ գնդակները՝ տափակեցնում և երկու ծայրից բռնած
գլանակով ապա սեղանի վրայ բարակեցնում ու հացթուխ Սի-
մոնին են տալիս: Մի ուրիշն էլ կանգնած հացթուխ Սիմոնի
առաջին՝ արդէն թխած հացերն է հաւաքում:

Դրանք բոլորն էլ իրանց կեանքի մեծագոյն մասը այդ-
պիսի թոնրատներում են անցկացրել, միշտ անմաս մնալով
կեանքի վայելքներին և ուրախութիւններին, այս աշխարհի
խորթ դաւաններն են, որոնց չէ վիճակուած նրա սեղանից
բաժին ստանալ. թերևս այդ է պատճառը, որ նրանց բուժ և
յամառ հաւաքները միշտ ակնկալող և սպասող են: Եւ յող-
նած ու ձանձրացած իրանց տաղտկալի, ծանր աշխատանքից՝
բոլորն էլ դանդաղաշարժ են դարձել, լճացել ու թմրել: Նրանց
մէջ կարծես մեռել են ձգտում, ցանկութիւն, զգացմունքներ
և վերջապէս այն ամենը, ինչ որ մարդկային է: Միայն անե-
րես յօրանջն է, որ ձեռք չէ քաշում և յաճախ ծովում է նը-

րանց դէմքը և անքուն աչքերից արցունքներ քամում: Պատահում էլ է, երբ նրանց գլուխները արճճի ծանրութեամբ դէպի կրծքներն է իջնում, ալրաթաթախ թերթերունքներն իրար են կպչում, կոնները դադարում շարժուելուց, իսկ գլանակներն ու քերիչները մի կողմ ընկնում: Նրաք նիրհում են... բայց այդ երկար չէ տևում. յանկարծ լսում է տանտիրոջ կծու յանդիմանութիւնը, կամ կոնների վրայ զգում են հացթուխ Սիմոնի ծանր շամփուրը:

—Թոնրի կողքին պիտի լինէք, որ բուններդ տանի, արդարանում է հացթուխ Սիմոնը, կարծես խղճահարուելով իր վարմունքի համար:

Եւ ամեն ինչ իսկոյն կարգի է ընկնում, ու գործը շարունակում է նոյն լարուած ու արհեստական փութկոտութեամբ, նոյն դանդաղաշարժութեամբ... Միայն հացթուխ Սիմոնն է, որ յոգնածութիւն չգիտէ—նրա թոնիրն այդպէս է պահանջում...

Թոնրատունը՝ «հաց թխում» օրը...

Նա՞միշա խորհրդաւոր էր մնում: Այնտեղից դուրս էին անում կողմնակի մարդկանց, ընտանիքի արական սեռին, երեխաներին: Նեղուացք է, փոշոտ ու տաք: Սակայն չարճճի մանուկներին թոնրատունը մագնիսի նման դէպի իրան է ձգում: Այնտեղի աշխատողները հետաքրքիր են, որովհետեւ նման չեն սովորական մարդկանց, մի տեսակ մտախոհ են, ուշագրաւ: Իսկ որքան հետաքրքիր էր հացթուխ Սիմոնը... ափսոս, որ նա չի սիրում երեխաներին. երբ վերջիններս մտնում են թոնրատունը, նա զանազան ձևերով խեղճերին դուրս է անում: Գուցէ հէնց այդ է պատճառը, որ նա այնքան հետաքրքիր է: Մէկ էլ տեսար դէմքի կնճիռների ցանցը ցրուեց, երկու հակառակ կողմերում կուտակեց, բերանը լայն բաց արեց, աչքերը՝ բների մէջ խաղացրեց և դէպի երեխանները շարժուելով՝ կատուի նման մլաւեց.

—Միաճճու...

Երեխաները մէկը միւսի յետևից դուրս են թափում թոնրատնից, իսկ փոքրիկները վախից յաճախ լաց լինում:

Յայտնի չէ ճրտեղից, մի տան երեխաներ հացթուխ Սիմոնի մասին նոր պատմութիւն էին լսել. այդ օրը նրանք ձեռք չքաշեցին հացթուխ Սիմոնից. թոնրատան դրան շեմքից մի փոքր անցնում էին՝ իւրաքանչիւր բոպէ պատրաստ փախչելու և անդադար կրկնում.

—Հացթուխ Սիմոն, ա՛յ, հացթուխ Սիմոն, մենք որ ներս մտնենք, դու ի՞նչ կ'անես, ա՛յ, հացթուխ Սիմոն...

Վերջապէս հացթուխ Սիմոնը բարկացած պատասխանեց.

— Շորերս կը հանեմ, քիթներդ կը մտնեմ:

Երեխաները երկար հրհռացին: Կարճ ժամանակից յետոյ հացթուխ Սիմոնի այս պատասխանը իմացան գիւղաքաղաքի բոլոր երեխաներն ու իրանց հերթին կրկնել տուին նրան:

Նրանք դեռ երկար կը ձանձրացնէին հացթուխ Սիմոնին, եթէ սովորաբար այդպիսի ժամանակներում մէջ չխառնուէին մայրերը, չնեղանային ու մի քանիսի ականջներէց քաշելով՝ չհեռացնէին:

— Հացթուխ Սիմոն, մէկ էլ ասա, ինչ կանես, այ հացթուխ Սիմոն...

Ընդհանրապէս հացթուխ Սիմոնը որպէս մարդ անգնահատելի էր. նա սրանչելի բնաւորութիւն ունէր. մեծի հետ մեծ էր, փոքրի հետ փոքր: Ծիշտ է, նա շատախօս չէր, աւելի սիրում էր լսել, քան թէ խօսել, սակայն նրա լռութիւնը մի գեղեցիկ շրջանակ էր դառնում այն կատակներին, որ նա յաճախ անում էր բոլորի հետ անխտիր: Ահա այդպիսի ժամանակներում է սկսում նրա կնճիռների տեղատուութիւնը, այդպիսի ժամանակներում է նա գրուիչ դառնում, իսկ ձայնը հնչում է աղբու, կտրուկ և մի քիչ էլ ծիծաղաշարժ: Որպէս հացթուխ նա կրկին անգնահատելի էր: Նա ուրիշ բանողների նման չէր, որոնց շարժումներից իսկոյն երևում էր վարձու լինելը: Ուր էլ որ հաց թխելու լինէր, այն տունը նրա սեփականութիւնն էր դառնում, այնքան նա ազատ էր պահում իրան, այնքան նա սրտացաւ ու բարեխիղճ էր վերաբերւում: Եւ հում քէֆը չէր գալիս նրա այդ վարմունքից: Մի բան միայն մութ և անհասկանալի էր մնում շրջապատողներին, որի մասին հացթուխ Սիմոնը երբէք չէր սիրում խօսք բաց անել— դա նրա ներքին աշխարհն էր և մառախուղի մէջ ծածկուած անցեալը:

Մէկ թէ երկու անգամ հացթուխ Սիմոնը խօսք բաց արեց իր տեսածների մասին: Տէր Աստուած, ինչէր ասես, որ տեսած չլինէր: Նա պատմում էր մեծ քաղաքների մասին, ուր փողոցների մարդիկը մըջիւնների կարաւանի են նմանում, պատմում էր հոյակապ աներից, որոնք մի-մի թագաւորական պալատներ են և որոնց մուտքի մօտ մինչև անգամ հսկելու համար «ասլաններ» են դրած, պատմում էր հարստութիւններից, ոսկուց, որ աւազի պէս թափած է, խօսում էր երջանիկ, բախտաւոր մարդկանց մասին, որոնք այդ աւազի մէջ լողում են և որոնք իսկի սովորական հացն էլ լայաղ չեն անի ուտել և՛ ո՞վ գիտէ՝ դրա տեղ ինչ են բանեցնում. պատմում էր աղմկաշատ գործարաններից, հսկայական մեքենաներից, ձիերից, ան-

ձայն կառքերից և ուրիշ շատ ու շատ զարմանալի բաներից։ Ճիշտ է, պատմում էր այդ իսկիսկ անմահական քաղաքների մասին, բայց մի անբացատրելի սառնութեամբ, մի աղմուկայտնի անզրաւութեամբ ու անտարբերութեամբ, տեղ-տեղ նոյնիսկ հեգնութեամբ ու զղուանքով, ճիշտ այնպէս, ինչպէս մոլեռանդ մահմէդականը կը խօսէր խողի մսի առաւելութիւններէ մասին... Ինչո՞ւ... Այդ ոչ ոք չէր կարողանում բացատրել ու հասկանալ։

Դեռ այդ մի կողմը. անբացատրելի էր ժանաւանդ այն, թէ մարդ ի՞նչպէս կը թողնի այդպիսի հրաշալիքներով լիքը քաղաքները և այս խաւար գիւղ տեղը կը մտնի ու կը նստի մարդու եղը հանող թոնրի կողքին։ Նրանք այստեղ մի գաղտնիք էին տեսնում։

—Հացթուխ Սիմոն, չհամբերեց վերջապէս խմորը գնդող կինը. քո տունը շինուի, բաս մարդ այդպիսի երկիրները կը թողնի ու այս խաւար տեղը կը մտնի։

Այդ հարցին հացթուխ Սիմոնը շատ կերպ կարող էր պատասխանել, բայց չուղեց. այո՛, հէնց ուղղակի չուղեց պատասխանել, այլ միայն գլուխը շատ խորհրդաւոր կերպով շարժեց։

—Հացթուխ Սիմոն, այս անգամ էլ հարցրեց խմոր բաղակացնող կինը. լսւ, որ ասում ես այնտեղ այդքան հարըստութիւն կայ, որ ասում ես ոսկին աւազի պէս է, և մարդիկ մէջը լողում են, բաս, հէր օրհնած, խելքդ չկորե՞ց՝ դրանից մի բաժին էլ քեզ հանե՞ս։

—Ե՛հ, Մարիամ բաջի, ասում ես, էլի՛,—այս անգամ տաքացած խօսքը կտրեց հացթուխ Սիմոնը.—ախր մէկը գիտես, միւսը ոչ. կարծում ես հեշտ է հա՛, կամ հազրի փլաւ է հա՛. որքան որ ոսկի կայ, ախր այնքան էլ արիւն-քրտինք կայ. հէնց այդքան արիւն-քրտինք կայ, որ այնչափ էլ ոսկի կայ, է՛հ... Այնտեղի չարչարանքը, կեանքը Աստուած հեռու տանի. ջհաննամը, այստեղ էլի մեր գլխի տէրն ենք, էդ անիծած բարբաղներում իսկի այդ էլ չկայ... Ե՛հ, դու լաւաշը տո՛ւր, թոնիրը անցնում է. ախր դրանք ի՞նչ ձեր գիտենալի բաներ են ...

Հսողները զլուկները խորհրդաւոր կերպով շարժում էին՝ չկարողանալով մտքի այս խճճումներից դուրս գալ։

Մի անգամ էլ նրան շատ զօրեցին, որ իր ընտանեկան կեանքից պատմի։ Հացթուխ Սիմոնը ուղեց սկսել, բայց կարծես մի քանի կաթիլներ խեղդեցին նրա կոկորդը, և նա լռեց։ Այդ նկատեցին, աւելի ևս հետաքրքրուեցին, բայց և այնպէս աւելի լաւ համարեցին դրա մասին հրեք խօսք բաց չանել։

Երբեմն էլ աշխատանքի ընդհանուր թմրութեան միջոցին բանողների մէջ ծագում էին խօսակցութիւններ ու դատողութիւններ, որոնք շատ անթոխիչք և նեղ էին:

— Ինչպէս երևում է, ձմեռս շատ ցուրտ պիտի լինի:

— Լաւ, ինչի՞ց պիտես:

— Ամառս շատ է տաք անում, ես ուրիշ տարիներ փորձել եմ:

Եւ խօսակցութիւնը վերջանում էր:

Բայց ամենից յաճախ, եթէ տեղի էին ունենում խօսակցութիւններ, պտտում էին միայն դիւղաքաղաքի ընթացիկ նորութիւնները—հարուստ հարսանիքների, ինչոյքների, կնուսներ, շուայլ հագուստների և ուրիշ ընտանեկան զաղտնիքների, երկպառակութիւնների շուրջը, որոնք ըստ մեծի մասին բամբասանքի բնաւորութիւն էին կրում:

Այդպիսի դէպքերում վերջ էր տալիս խօսակցութեանը անմասնակից հացթուխ Սիմոնի կտրական հրամանը.

— Դէ՛հ, շո՛ւտ արեք, ըխտլաթի ժամանակ չէ, խալխի դարդերը ձեզ չեն տուել, թոնիրն անցնում է:

Պատահում էլ էր, երբ խօսակցութիւնը պտտում էր իրանց շուրջը:

— Հացթուխ Սիմոն, բաս դու ե՞րբ պիտի պսակուես:

— Զեռք քաշեցէք, ի սէր Աստուծոյ, պատասխանում էր նա. իմ աշխատանքով քաջալ գլուխս հազիւ եմ պահում, կնոջս ոտներս հօ չպիտի ուտացնեմ: Զէ, ես փորձուած մարդ եմ...

— Խէ՛ղճ լինենք մենք, աւելացնում էին կանայք. բաս մենք լո՛ւնչպէս ենք մեր քոռ կոպէկներով մի ահագին ընտանիք կառավարում, այնքան որբեր պահում:

— Է՛հ, գիտենք, այդ կեանքն էլ ենք տեսել, յանդիմանում էր հացթուխ Սիմոնը, և դուք էլ ասում էք, թէ ապրում ենք էլի՛:

— Այդպէս բան չկայ, վրայ էր բերում խմոր-հունցող Չահլ որբեայրին—ես քեզ մարդու եմ դալու:

— Տէրը մի արասցէ, Տէրը մի արասցէ. եթէ կինը լաւ բան լինէր, մէկն էլ Աստուած կ'ունենար, խօսքը կտրում էր հացթուխ Սիմոնը, որին հետևում էր երկարատև հրհուցը:

Բայց այսպիսի խօսակցութիւններ երկար չէին տևում. կրկին մէջ էր խառնւում տանտիկինը և կոշտ յանդիմանութեամբ ջրի պէս կտրում բոլորի ձայնը.

— Այ երեխայ-երեխայ խօսում էք է՛, մի ամաչեցէք, էլի՛... Շուտ արեք, բաններդ կացէք, աշխարհքի խմոր ունինք, օրն արդէն անցնում է:

Տիրում է մի անհանգիստ, տենդային լուռթիւն: Լսում են միայն հացթուխ Սիմոնի յարդէ բարձի թոնրին զարկելու դրմփոցը, տախտակների ու գլանակների խառնիխուռն աղմուկը և ուրիշ անորոշ ձայներ... Իսկ թոնրատան դուռը շարունակում են անդադար բաց ու խուփ անել և թխած լաւաշներով դարսած սալակները ուսերի վրայ դէպի դուրս տանել փռելու համար:

Նւ այդպէս այսօր, վաղը, միւս օրը... Ամբողջ տարին, ամեն օր:

III

Ամառնային տօթաշունչ երեկոներից մէկն էր: Ահա ձգուեց նախրի երկայն շարքը և ծածկեց ամբողջ փողոցը՝ գլխին ունենալով փոշու անձեռագործ մի հսկայական ամպհովանի, որ զուգընթացաբար շարժւում է կովերի հետ: Անցաւ նախիրը, անցաւ և երկարահասակ նախրապանն իր յամր, ցիկլոպային քայլերով, ձեռքին ունենալով մի անագին մահակ՝ աւելի շուտ պատահարներից տաշտպանուելու, քան անասուններին բշելու համար: Աջ ու ձախ, դռների առաջին շարուեցին կովեր և վայնասուն բառաշներով աւետեցին տէրերին իրանց դալուստը: Կամաց-կամաց դռները բացուեցին, և կովերը կուլ գնացին նրանց մէջ: Ահա երեսային ժամաւորների, դաշտային ու բանուորական աշխատանքից վերադարձողների փոքրիկ խմբերն ու հալուեցին այսուայն դռների առաջ: Շուտով փողոցներում կտրուեց երթեկեւթիւնը, և տիրեց մի յամառ լուռթիւն, որ երբեմն խախտում էր մօտիկ գիւղից կամ այգուց վերադարձող ուշացած ձիաւորը, կամ անհրաժեշտ գործով շտապող երթեկը:

Արեգակը արդէն մայր էր մտել: Սակայն նա այստեղ այնպէս չէ մայր մտնում, ինչպէս հարթ տարածութիւնների մէջ, երբ առաջը բացւում է երկայն հորիզոնը, և ուր արեգակը՝ որպէս շիկացած երկաթի մի անձեռագործ գունտ, կորցրած իր ասեղնոտ ճառագայթները, մեղմ սահում է երկնակամարի հեռաւոր ծայրին ու անհետանում դալարուն բարձունքների տակ, որից յետոյ հրալաւուում, կարմրատակւում է երկնակամարի այդ կտորը և կարմիր վարդի բոսորային նեկտար ծորում...

Այլ կերպ է նա հրաժեշտ տալիս երկրին լեռնոտ վայրերում, ձորերի մէջ, որոնցից մէկում գտնւում էր գիւղաքաղաքը: Ահա նա սկսեց մօտիկից ողջունել լեռների զագաթներն, և գիւղաքաղաքի տները, եկեղեցիները, ժառերը, պարտէզների պատերը սկսեցին ձգել սև և որոշակի սահմանադժերով ըստուերներ: Քանի արեգակը մօտենում է լեռներին, այնքան ա-

ւելի ծնւում, բազմանում ու երկարում են ստուերները: Սա-
կայն արեգակը նոյն արեգակն է, նա չի կորցնում իր ասեղնե-
րը, նա չի կարմրում ու անգորանում: Յանկարծ ծնւում է մի
հսկայական ստուեր, որ ձգւում է ձորի ամբողջ երկայնութեամբ,
և կլանելով սարալանջի կարճահասակ ստուերները՝ սկսում է
ծաւալուել, ուժեղանալ ու յաղթական քայլերով դէպի դիմացի
սարերն շտապել: Մանր-մունր ստուերները վերջ են տալիս
իրանց գոյութեանը: Վերջապէս նա յափշտակում է գիւղամիջի
բարձրագմբէթ եկեղեցու ստուերն էլ, անցնում է մօտակայ բլը-
րակի գագաթը, հասնում դէմուդէմ սարի լաջը, ծովանում,
ուռչում, բարձրանում և ծածկում իր թևերի տակ բոլոր
կոնների գագաթները...

Փչում է զով օդի մի զգալի հոսանք:

Արեգակն այլևս չկայ:

Միայն վերևում մի քանի թափանցիկ և դեղնագոյն ճա-
ռագայթներ, սկզբում նեղ, վերջում լայն, ցանկապատում են
մոխրա-կապտագոյն երկնակամարը, որոնք շուտով լուծւում և
շաղախւում են եթերի հետ ու միապաղաղ դառնում...

Այն մեծ ստուերի յափշտակութիւնների ժամանակն էր,
երբ հացթուխ Սիմոնը սովորականից աւելի շուտ վերագարծաւ
տուն: Նա նստել էր խրճիթի առաջին գտնուող քարի վրայ և
օրուայ լարուած աշխատանքից յետոյ հանգստանում էր: Նա
նկատեց, թէ ինչպէս այն մեծ ստուերը լիզելով սարերի լան-
ջերը՝ բարձրացաւ և գրկեց հորիզոնի բոլոր բարձունքները. նա
նկատում էր, թէ ինչպէս այդ ստուերը քանի դնում՝ թանձրա-
նում է և տեսդային աշխատանքով բնութեան վրայ է թափում
հանգստութեան կաթիլներ: Եւ հացթուխ Սիմոնը գուցէ ա-
մենից շատ զգար այդ ազատարար հանգստի ազդեցութիւնը,
որովհետև ամենից շատ նա էր աշխատել, չարչարուել:

Դեռ լոյսը չբացուած՝ նա շտապեց իր գործին: Եւ այդ
ժամանակից մինչև երեկոյ նա քանի՜ հաց է թխել, քանի՜ ան-
գամ է կռացել, յարդէ բարձր լաւաշով թոնրի կրճքին զար-
կել և սև, երկայն շամփուրով հանել ու մի կողմ ձգել: Իսկ հը-
րավառուած, թեք թոնիրն ամեն անգամ իր կրակի կարմիր ա-
լաւները նրա երեսովն է տուել, տաքացրել, այրել և ամա-
ռուայ առանց այն էլ տօթ եղանակին քրտինքը ձլծլացրել
նրա ամբողջ մարմնով:

Յոգնել էին նրա ծնկներն ու կոնները, շատ կռանալուց
ջուր էր մաղում մէջքը, իսկ այրուած, ճաքճքուած երեսը
կսկծում ու արմուռն երեկոյեան զով գեփիւռին:

Եւ այս բոլորից յետոյ ի՜նչ լաւ էր պարապ, հանգիստ

նստել ցուրտ քարին, ազատ մեկնել ոտները, շնչել երեկոյեան թեթև օդը, զգալ մօտեցող գիշերուայ հանգստացնող խաղաղութիւնը:

—Փնոք Քեզ, Աստուած, որ գիշերը պարգևել ես մարդուն, եթէ ոչ ի՞նչ կը լինէր մեղպէսների հալը, հոգոյ հանեց հացթուխ Սիմոնը և մի անհանգիստ շարժում արաւ, յետոյ կարծես ակամայ յիշեց մի բան և համարեա լսելի ձայնով արտասանեց.

—Իսկ էգուց ճւղ մօտ պիտի գնամ.— և մի փոքր յետոյ պատասխանեց մաղձոտ եղանակով՝ երևում էր, որ այնքան էլ ուրախ չէր, որ իր հարցի պատասխանը գտաւ.

—Հա, «նրանց» մօտ:

Եւ հացթուխ Սիմոնի ճակատին կուտակուեցին մաշլ ամպեր: Նա մի յոգնած շարժում արաւ, երևի ուղեց վեր կենալ, բայց չկարողացաւ, գուցէ և չուզեց ու անդգայացած՝ որպէս ալիւրով լիքը պարկ՝ ընկաւ քարի վրայ:

Նրա գլխից դեռ ևս չէր անցել այն մեծ ստուերի տպաւորութիւնը, որը անգիտակցաբար առիթ գարձաւ ուրիշ տնրապասելի խոհերի: Հացթուխ Սիմոնը ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս յանկարծ այդ ստուերը նմանեցրեց մի ուրիշ, սև, ստուերի, որ իր ծնունդը գերեզմանի խորքիցն է առնում: Այո, այն ստուերն էլ ժամանակով կը գայ— և այդ հեռու չէ— կը բարձրանայ դէպի հացթուխ Սիմոնը, կը լիզէ նրա մազերի սևութեան մնացորդը և մի օր էլ ամբողջովին տիրապետելով՝ կ'առնէ իր գրկի մէջ, ինչպէս այն ստուերն, այն սարը: Եւ այդպիսով մի անյիշատակ ու խեղճ կեանք կ'անցնի այս աշխարհից... Հացթուխ Սիմոնը այլևս չի՛ լինի...

Բայց մինչ այդ շատ կը գան այսպիսի խաղաղ գիշերներ, և միւս առաւօտունից կը կրկնուի նոյնը:

Իսկ նրա կեանքը ի՞նչ է որ. լաւաշ հացերի մի անծայր շարք, խմոր, տաշտ, շամիուր, թարոյ, կրակ և քրտինք—կրակ կեանք...

Նրա առաջ երեկոյեան թանձր աղջամուղջի մէջ ըացուում էր համարեա ամբողջ գիւղաքաղաքը: Նրա աչքերը թափանցում էին շատ ընտանիքների ներքին կեանք, նրա ականջին հասնում էին ձայներ:—Ահա դէմուզէմ պատշգամբի վրայ լաղմանդամ ընտանիքը համախմբուած՝ մի փոքրիկ շրջան է կադմել և ընթրում է: Գիւղական համեստ և խորհրդաւոր ընթրիքի ժամ: Ահա ընտանիքի հայրը,—նա հացթուխ Սիմոնից շատ մեծ չէ—ունի կին, երեխաներ: Նա երեխաների հետ հանաք է առնում, խաղում է, երեխաները հնչուն աղաղակներով ծիծաղում

են, նա էլ է ծիծաղում... Իսկ հացթուխ Սիմոնը տխուր, մե-
նակ, բուռի պէս խաւարում, քարի վրայ պալլած...

Կամ թէ չէ ուրախ, աղմկալի հարսանիք է: Նորահարս,
նորափեսայ, նոր և մաքուր շորերով հարսնքաւորներ հանդի-
սաւոր ժպիտներով և կարծես «պատուիրուած» ուրախ տրամա-
դրութեամբ. զինի, կենացներ, երգ ու երաժշտութիւն... և
այս բոլորին հացթուխ Սիմոնի տեղ միայն նրա թխած հացն է
մասնակից լինում: Ահա նրանք շարուած ահագին սեղանի
ամբողջ երկայնութեամբ: Հիւրերն անփոյթ վերցնում, կտրում
և ուտում են: Բայց ով է մտածում զրանց թխողի մասին: Իսկ
զրանցից իւրաքանչիւրի վրայ հացթուխ Սիմոնը ջանք է գոր-
ծադրել. թեք թոնրի մէջ կուացել, մէջքը ցաւացրել, որքան
քրտինք է թափել... Ե՛հ, այդպիսի հարցերի մասին երբ
մտածել... Հնչում է երաժշտութիւնը, եղում է պարը, թնդում,
շարժւում է ամեն ինչ...

Իսկ հացթուխ Սիմոնը միշտ մենակ, միշտ անհիւր, ամեն
բանից անսասն և մոռացուած...

Ե՛հ, նրա կեանքը ի՞նչ է որ. միայն անթիւ հացերի մի
անծայր շարք, խմոր, տաշտ, շամփուր, թարոց, կրակ և յըր-
տինք—կրակ կեանք...

Կար ժամանակ, երբ նա ունէր կին, երկու սիրուն երե-
խաներ: Նա էլ գիւղացի էր, ունէր մի փոքրիկ խրճիթ՝ շրջա-
պատուած փոքրիկ պարտիզով: Նրան ասացին. «Ինչո՞ւ ես այդ-
պիսի աղքատութիւն քաշում, քաղաքներ դնո՞ւ, զարիւրութիւն
քաշիր, հաց կը ճարես»: Խորհուրդը զրաւիչ էր: Նա թողեց
տունը և հեռացաւ հայրենի գիւղից: Բայց վիճակի մէջ մեծ
տարբերութիւն չգտաւ—ստացած ոտճիկը բաւականութիւն չէր
տալիս թէ իրան և թէ գիւղում բնտանիքը պահելուն: Նրան
կրկին խորհուրդ տուին, ասացին. «Ինչո՞ւ ես երկու տեղ ծախս-
քաշում, ծախսերդ միացրու, քիչ փող դուրս կը գայ. տունդ-
տեղդ քաղաք բեր»: Նա լսեց, գնաց, ծախեց ամեն ինչ և վերա-
բընակուեց քաղաքում: Բայց այն գերեզմանի պէս մութ ու խո-
նաւ նկուղում շունն անգամ չէր կարող իր դոյութիւնը քարշ
տալ, ուր մնաց մի ամբողջ ընտանիք: Շուտով կինը հիւանդա-
ցաւ, հիւանդացան և անխնամ երեխաները: Ինչպէ՞ս բժշկէր,
ի՞նչ միջոցով, և ամեն ինչ թողեց Աստուծոյ կամբին և նրա
ամենաողորմած խնամքին... և թոյեց այդ երկրի վրայ ու ան-
դարձ հեռացաւ...

Այդ օրերից անցել են ամբողջ տասը տարիներ: Ի՞նչ լաւ,
որ այդ արհեստը գիտէր: Նկաւ, ասաց՝ «հացթուխ եմ»: Նրան

հաւանեցին, նա իր ընդունակութեան շնորհիւ մեծ ընդունելութիւն գտաւ և դարձաւ յայտնի «հացթուխ Սիմոնը»:

Եւ այսպէս նա իր ամբողջ կեանքում ինչ է տեսել որ. աղքատութիւն, չարքաշ աշխատանք, սրտի կսկիծներ, երկաթ, մուր, կուշտ և հաստ փորեր, հայհոյանք... անծայր շարք, կըրակ, ծով քրտինք—կրակ կեանք...

Եւ այս բոլորի մէջ գուցէ ոչ մի վարդագոյն օր...

Նրա ուղեղում արճճի պէս ծանրացաւ իր կեանքի ու նայնութեան դառնագին գիտակցութիւնը, սիրտը լցուեց անյոյս թախծով, իսկ աչքերի մէջ շարժուեց մի վշտախօս խոնաւութիւն: Նա այժմ իրան աւելի յոգնած էր զգում, քան երբևիցէ և կարծում էր, թէ իսկոյն. մկանունքներն ու ոսկորները պիտի քայքայուեն:

Նա երբէք այսքան խորը չէր մտածել, այսքան հեռու չէր գնացել: Չէ՞ որ նա հաշտուել էր ճակատագրի հետ: Երևի կեանքումը սխալ քայլեր շատ է արել, որ այդ օրն է ընկել. գիւղը չհաւանեց, քաղաք գնաց... Եւ վերջապէս այդպէս է, աշխարհումս հօ բոլորն էլ երջանիկ չ'են լինիլ, այն ժամանակ իսկի աշխարհս էլ աշխարհ չի լինիլ...

Բայց ինչպէ՞ս չմտածէր. անցել էր ուղիղ տասը տարի, մի տասնամեակ էր լրանում. և վերջապէս նա մեղաւոր չէր, այն անցնող ստուերը առիթ տուեց այդպէս խորը մտածելու, առաջը բացուող դիւղի պատկերը տրամագրեց շատ բան յիշելու: Յիշեց, մտածեց ու տխրեց:

... Անծայր շարք—կրակ կեանք:

Այն ժամանակ, երբ իր խոհերի ու թախծի մէջն էր հացթուխ Սիմոնը, նրա զառիւլերով բարձրանում էր դէպի նա մի հեացող ստուեր: Բայց հացթուխ Սիմոնը նրան չնըկատեց, մինչև որ անծանօթը բարձր ձայնով չկանչեց.

—Հացթուխ Սիմոն, այդ դժւ ես, բարի երեկոյ:

Հացթուխ Սիմոնն սթափուեց անսպասելի ձայնից, գլուխը բարձրացրեց և առաջին տեսաւ գիշերուայ մութ ֆոնից հագիւ նշմարուող մի տղամարդու սելուէտ:

—Աստու ըարին, պատասխանեց հացթուխ Սիմոնը, որի ձայնի մէջ հնչուեցին և՛ վախի, և՛ բարկութեան շեշտեր:

—Հինգշաբթի օրը կարճիկ ես գալ մեզ մօտ հաց թխելու, խօսեց կրկին նորեկը:

—Հը՞, հա՛, հինգշաբթի՞, շատ լաւ... սպասի՛ր, չէ՛, հինգշաբթի օրը ազատ չեմ, պատասխանեց հացթուխ Սիմոնը, դեռ ևս չկարողանալով ազատուել այն մոայլ մտքերից:

—Այն ժամանակ ուրբաթ օրն անպատճառ պիտի գաս:

Բաջին ասաց, եթէ չգաս, կը նեղանամ: Տես, ուրեմն խօսք չտաս, այս մթնխաւարով վեր եմ կացել, եկել դուռդ... Այդ լինչ է, հացթուխ Սիմոն, մի տեսակ ես երևում, հը՞...:

Բայց երիտասարդն ուրիշ պատասխան չկարողացաւ լսել:

— Լաւ, կը գամ, ասաց կտրուկ հացթուխ Սիմոնը և անհաստատ քայլերով շտապեց դէպի խրճթի դուռն ու ներս մտաւ:

— Բարի գիշեր, հացթուխ Սիմոն... գոչեց յետևից տղան, երբ նա արդէն ներս էր մտել: Ապա դարմացած հացթուխ Սիմոնի այդ վարմունքի վրայ՝ մի քանի բոպէ քարացած մնաց և գլուխը շարժելով սկսեց իջնել բլրակի կածանով: Խրճթի շուրջը տիրեց գերեզմանային լուռութիւն. միայն լսւում էր հացթուխ Սիմոնին այցելող տղայի ձեռնափայտի ձայնը, որ անխնայ այստեղան քարին էր դարկում: Շուտով այդ ձայնն էլ խլացաւ:

Գիւղաքաղաքը թուխս մտած գիշերուայ սև թեւերի տակ արդէն մտել էր խորը քնի մէջ: Տեղ-տեղ նշմարելի էին լինում մի քանի պլպլացող լոյսերի աղօտ ճառագայթներ— այն էլ՝ ով գիտէ՝ որ տանը հիւանդ կայ, կամ որ մայրն է անքուն, լալկան երեսային ծիծ տալիս: Մերթնդմերթ փողոցներում լսւում էին գիշերապահների խորը սուլոցները, որոնց հետ մի տարօրինակ ներդաշնակութիւն էին կազմում գամփռ շների ծոյլ ոռնոցներն ու իրանց հետեղ քոթոթները փութկոտ հաջոցները...

Բայց շուտով բնութեան տրամադրութիւնը փոխուեց. ձայները դարձան աւելի յաճախ, բնութիւնը պատրաստւում էր գիմաւորել մի ինչ-որ բանի: Արեւելքը երկունքի մէջ էր... Ահա և գիմացի լեռների յետևից կամացուկ երևաց բոլորի սպասածը: Տիրեց մի զգոյշ իրարանցում, մի խուլ փսփսոց: Լուսինը բարձրանում էր...

... Անծաշյր շարք—կեանք...

IV

Անցել էր մի տարի: Դարձեալ ամառ էր: Գիւղաքաղաքը դեռ լոյսը չբացուած սկսել էր արթնանալ. իսկ արեգակը ծագած բոպէից թափում էր երկրի վրայ այրող ճառագայթներ: Հէնց վաղ առաւօտից կարելի էր գուշակել, որ այդ օրը տօթ պիտի լինի:

Գիւղաքաղաքի կենտրոնում գտնւում էր մի հրապարականման տարածութիւն, շրջապատուած չորս կողմից խանութներով և ահեստանոցներով: Սրանց առաջին շղթայ էին կազմում սաղարթախիտ թթենիներն ու չինարիները, որոնք արեգակից

տաքացած և լուսաւորուած գետնի վրայ ձգուած էին մութ և զով, տեղ-տեղ չեչոտ ստուերներ: Դա գիւղաքաղաքի շուկան էր, միակ հասարակական տեղն, ուր մարդիկ միմեանց հանդիպում էին և ուր հոգում էին իրանց տնտեսական պիտոյքները: Դա միևնոյն ժամանակ գիւղաքաղաքի խորհրդատեղին էր, ուր վճռում էին զանազան տեսակ հասարակական հարցեր, հաղորդում էին ընթացիկ նորութիւններ: Հեռուից անգամ լսւում էր շուկայի բաղմաձայն ու խուլ աղմուկը, որն ամառ ժամանակ աւելի էր սաստկանում, երբ քաղաքներից վերադառնում էր գիւղաքաղաքի հարուստ դասակարգը:

Վերջին ժամանակներս գիւղաքաղաքի ստորին մասից շուկայ գնացողների մէջ աչքի էր ընկնում մի ըստ երևոյթին դառամեալ և միևնոյն ժամանակ անդամալոյծ ծերունի, ցընցոտիների մէջ, որ չորեքթաթ տալով՝ կրիայի արագութեամբ նոյնպէս շուկայ էր շտապում:

Այդ տաք օրը հովանոցներով շուկայ գնացողների մէջ կրկին երևում էր նա:

Նրա գլխի և երեսի ալեխառն մագերը, ինչպէս երևում էր, վաղուց հետէ մկրատի երես չէին տեսել, որ և հէքլաթներում պատահող անտառաբնակի տալաւորութիւն էր թողնում: Շատերն էին անցնում կողքովն առանց ուշադրութիւն դարձնելու նրա վրայ. շատերին էլ նա չէր իսկի մտիկ տալիս:

Դեռ ևս ամառնամտին էր, երբ քաղաքներից ամառանոց եկողների շարքը նոր սկսել էր բացուել: Կէսօրուան մօտ երկու ճոգի բարձր խօսելով ու ծիծաղելով դէպի շուկայ էին գնում: Դրանցից մէկը վերջին տարագով լաւ հագնուած երիտասարդ էր, ըստ երևոյթին քաղաքից նոր եկած, իսկ միւսը տեղացի էր: Արդէն ուշ էր, շուկայ գնացողները վերադառնում էին տուն, որոնց մէջ երևում էր և՛ նա: Յանկարծ լաւ հագնուած երիտասարդը լուրջ դէմք ընդունելով՝ դարձաւ ընկերոջը և հարցըրեց.

— Լսիր, Սմբնտ, սա ի՞նչ անդամալոյծ է:

Ընկերը դեռ ևս նախկին ուրախ խօսակցութեան տրամագրութեան տակ, հազիւ գսպելով ծիծաղը, պատասխանեց.

— Ապա մի լաւ նայիր, կը ճանաչեմ:

— Ձէ, չճանաչեցի, ասա տեսներք:

— Հացթուխ Սիմոնն է, պատասխանեց ընկերը մի այնպիսի տոնով, ինչպիսով— եթէ հարցնելու լինէիր՝ «ժամը քանի՞ն է» — կը պատասխանէր՝ « $3\frac{1}{2}$ -ն է»:

— Բայց, սպասիր, հետաքրքրուեց կրկին նորեկը, ապա ինչո՞ւ այդ օրն ընկաւ, խեղճ...

—Հնա, հնա, ծիծաղեց ընկերը, դա ինչ հարց է. գուցե դրա ճակատին էլ այդ էր գրուած: Այդ օրն ընկաւ էլի: Լաւ, հիմայ որ վաղը, միւս օրը վեր ընկնի մեռնի, պէտք է հարցնես, թէ ինչո՞ւ մեռաւ. ժամանակը եկաւ, մեռաւ, այ, քեզ պատասխան, հա՛, հա՛, ինչո՞ւ մեռաւ, չկարողացաւ ապրել, մեռաւ, հա՛, հա՛...

Նրանք արդէն հեռացել էին, բայց նրանց խօսակցութեան ու հրհռոցների ձայնը դեռ ևս պարզ լսոււմ էր: Գուցե ընդհատուած ուրախ պատմութիւնն էին շարունակում...

Այո՛, այդ մարդը հացթուխ Սիմոնն էր...

—Երեւի նրա ճակատին էլ այդ էր գրուած, այսպէս ասաց մի անգամ հաց թխելիս խմոր բարակացնող կինը, այդպէս կրկնեց ամբողջ գիւղաքաղաքը:

Երեւի նրա ճակատին այդպէս էր գրուած:

Այն չարագուշակ գիշերից, երբ նրա գլխովն այնքան խորը մտքեր անցան, և տխրեց, անցել էր 5 ամիս: Նա կրկին մի տան մէջ հաց էր թխում: Սաստիկ ձմեռ էր. փչում էր մի դառնաշունչ քամի, որ ծանր թռիչքներով գիւղաքաղաքի մի ծայրից մինչև միւսն էր չափում և տղա անցնում սարերն ու դաշտերը կարծես նրա համար, որ մտնի այնտեղի ձիւնի ու սառույցի մէջ, հաւաքի նրանց ցրտութիւնը և բերի գիւղաքաղաքը թափի...

Երեկոյեան, երբ հացթուխ Սիմոնը վերջացրեց իր գործը քստ սովորականին, հազիւ հագաւ մէկ զգեստը՝ վերարկուն ու վրայով քաշեց կաշուէ կտորը, ապա, երբ դուրս եկաւ տաք թոնրատնից, հագաւ և երկրորդ զգեստը՝ սրթսրթացիլ. ցուրտ քամին, որպէս սառցէ կտորներ ներս էր մտնում նրա հագուստի կունքի, վղի և սրունքների արանքներով, ոտները սկսել էին մրմնջալ, իսկ ծնկները կարծես սուր դանակով կտրելիս լինէին... Փորձեց վազելով մի քիչ տաքանալ, բայց չօգնեց. իսկ ծնկները... քամին շարունակում էր այժմ կացնի պէս ջարդել...

Էլ յայտնի չէ, թէ ինչ պատահեց, միայն հեռեւաւ օրը նա չգնաց հաց թխելու և այդ օրը դարձաւ նրա հացթխութեան վերջին, հրաժեշտի օրը: Լուր տարածուեց, որ նրա ոտները քամիով են բռնուել, և որ նա անդամալոյծ է դառել: Այդ լուրն իմացաւ ամբողջ գիւղաքաղաքը:

Երեւի նրա ճակատին էլ այդպէս էր գրուած...

Եւ ո՞ւմ լինչ փոյթ, թէ այնուհետև ինչպէս էր ապրում հացթուխ Սիմոնը: Ձէ՛ որ շուկայում պատմում էին, որ նրա հիւանդութիւնը անբուժելի է, և որ նա այլևս հաց չթխութիւն

անել չի կարող, և վերջապէս այժմ գիւղաքաղաքում մէկի տեղ երկու հացթուխ կայ...

Նա այլևս առաջուայ հացթուխ Սիմոնը չէր: Նրա անհամբոյր ճակատին դրոշմուած էր թշուառութեան մի վնասեցուցիչ կնիք: Կնճիռները քարացել էին ոսկրոտ դէմքին՝ երբէք չցրուելու և դէմքի արտայայտութիւնը ալևս գրաւիչ չդարձնելու համար: Նրա կշտամբող աչքերը փոսացել էին իրանց խոռոչների մէջ, իսկ թաւամազ յօնքերն իջել դէպի ցած: Մի գերեզմանային սառնութիւն ու խոնաւութիւն էր փչում այդ մարմնացած դանդաղկոտութիւնից: Բայց այդ միայն արտաքուստ: Նոյն վայրկենին նրա հոգեկան աշխարհում մի սարսափելի փոթորիկ էր իշխում, որի նմանը հացթուխ Սիմոնն իր կեանքում երբէք չէր տեսել:

Ճիշտ է, նա տեսել էր գառնութիւններ, փորձել էր մարդկանց սրտի կարծրութիւնը, բայց այս աստիճան—հէ՛ Նա միշտ իր թշուառութիւնների պատճառն իրան էր վերագրում. ինչո՞ւ քաղաք գնաց, որ այդպիսի զժրախտութիւնների հանդիպի: Իսկ միջոց, այժմ ինչ կարելի է ասել, հօ արդէն գիւղումն է... Եւ նա իր քան միամիտ է եղել մարդկանց և կեանքի վերաբերմամբ:

—Սա մեր հացթուխ Սիմոնն է, Աստուած սրան մեղանից անպակաս անի, լսել է շատ տներում այդպիսի մտերմական խօսքեր և այն աստիճան դրաւուել, ոգևորուել, որ հէնց կամեցել է բոլորի համար էլ ձրի աշխատել... Այն ինչ՝ այդ եղել է մի նողկալի ծաղր նրա անհեռատեսութեան վրայ: Այո, էշի պէս աշխատում էր, շան պէս չարչարում, համեստ էր, աչքը ծակ չէր—և գովում էին. իսկ միջոց... հիւանդ է, բանի անպէտք—և նրան որպէս փալասի մի անպէտք կտոր աղբակոյտն են շարտում...

—Ո՛չ, պիտի ասեմ, անպատճառ պիտի ասեմ: Ես բոլորին էլ ճանաչում եմ, ոչ մէկիցն էլ չեմ վախենում... Միևնոյն է, վաղը կամ միւս օրը քաղցից պիտի սատկեմ... մթմթած հացթուխ Սիմոնը և մի վճռողական շարժում արաւ դէպի շուկան:

Շուկան բազմամարդ էր և աղմկալի: Հացթուխ Սիմոնն արհամարհական ժպիտը երեսին՝ ոտքից մինչև գլուխ աչքի անցկացրեց հանդիպողներից շատերին, որոնց տանը նա հաց էր թխել: Բայց նրանք ըստ սովորականին բոլորովին ուշադրութիւն չդարձրին նրա վրայ և զբաղուած՝ իբր թէ միշտ կարևոր գործի մասին մտածող դէմքերով այսուայն կողմ գընացին: Այդ հացթուխ Սիմոնին աւելի գրգռեց:

Նա քաշ եկաւ դէպի թթենին և մօտեցաւ ստուերում
էանգնած մի շրջանի: Այդտեղ բոլորն էլ ունէին մաքուր, նոր
շորեր, բոլորի ձեռքին էլ շարժում էին կամ թանգանոց հո-
վանոցներ կամ արծաթէ գլուխներով ձեռնափայտեր. իսկ փո-
շու թեթև շղարշով ծածկուած կօշիկները շարունակում էին
էմալի պէս պսպղալ գետնից անդրադարձող լուսաւորութիւնից:
Նրանք անվրդով զրուցում էին: Եւ այդ անդորրութիւնը, նը-
րանց դէմքերի այդ վանող սառնութիւնը կարծես հացթուխ
Սիմոնի վրայ մի կուժ սառը ջուր ածեց...

Այդ մարդկանց հետ նա պիտի խօսէր... բայց ի՞նչ է
ուզում նա դրանցից և ի՞նչ իրաւունքով. այժմ աշխատում է—
նչ. իսկ ի՞նչ մեղաւոր են այդ մարդիկ, որ... այդ հրտեղ է
տեսնուած, չէ, այդպիսի օրէնք աշխարհքումս գոյութիւն չու-
նի... Եթէ այդպէս չլինի, այն ժամանակ աշխարհքս էլ աշխարհք
չի լինի...

Եւ հացթուխ Սիմոնն աւելի մոայլ, քան առաջ էր, յու-
սահատ և թևակտուր՝ երեսը շուռ տուեց ու շարժուեց դէպի
տուն...

Նա այդ օրը հրկա՛ր մտածեց, համարեա թէ ամբողջ գի-
շերը չընեց: Ասելուն մնար, նա կ'ասէր, նա միշտ համարձակա-
խօս է եղել. սակայն իրաւունքի խնդիրը նրա համար մնում էր
անլուծելի: Որտեղ է լսուած, որ մէկը հացթուխ Սիմոնի պէս
փորձ անէր. գուցէ հէնց այդպէս էլ պիտի լինի. չէ՞ որ աշ-
խարհքիս ստեղծողն Աստուած է, ապա Աստուած... Ձէ, հէնց
սկզբից էլ այդպէս է եղել...

Սակայն այդ մտքերը նսեմանում էին, երբ նա մտածում
էր հակառակ կողմի մասին: Նա միամիտ է եղել կեանքի և
մարդկանց վերաբերմամբ. նրան խաբել, շահագործել են, և այդ
բաւական չէ, այժմ նրան իր խրճիթում էլ հանդիստ չեն տա-
լիս... Ատելի են այն բոլոր մարդիկ, որոնք ձեռքներին այն-
պիսի թանգանոց հովանոցներ ունին, դրանք են նրան այդ օ-
րը ձգողը, իսկ իրանք... միշտ կուշտ, առողջ, մաքուր... Այդ-
պիսիներէ՞ թոնիրները չէին նրան անդամալոյծ դարձնողը. և
ինչպիսի՞ աշխոյժով էր նա բանում, ինչպէ՞ս էին նրան գո-
վում. իսկ ա՛յժմ, լոկ մի խօսք, դատարկ, պաշտօնական մի
բա՛ռ...

Օ՛, նա շատ ասելիք ունէր... և պէտք էր ասել. միևնոյն
է, վաղը կամ միւս օրը քաղցից պիտի սատկի, ինչո՞ւ նրանք
չիմանան. այ՛ր, պէտք է ասել...

Հետեւեալ օրն առաւօտուանից նրան տիրել էր մի ան-

հանգստութիւն, որպիսին տիրում է զժուար քննութեան դուրս եկող աշակերտին:

Եղանակը կրկին տաք էր, յուլիսեան ամիս օրերից մէկը: Ծառերն իրանց տերևները յոգնած շան լեզուի պէս կախ էին գցել արեգակի կիզիչ ճառագայթների տակ և կարծես հեռւմ էին: Այդպէս յոգնած էր և ամբողջ բնութիւնը: Միայն ընդհանուր թմրած լուծեան մէջ ականջ էին ծակում ծիրանաստեղների միակերպ և չափածոյ ծվծվոցները, որոնց տակտով կարծես հեռւմ էր և շնչապառ բնութիւնը:

Հացթուխ Սիմոնն իր ժամանակին արդէն ճանապարհ էր ընկել դէպի շուկան:

Նոյն բազմամարդ և աղմկալի շուկան էր: Հասարակ հագուստներով մարդկանց մեծամասնութեան մէջ որպէս կարկատան աչքի էր ընկնում նոյն ծառի շուաքում կրկին երեկուայ շրջանը, որ քանի գնում՝ բազմամարդ էր դառնում: Նրանք բոլորն էլ երեկուայ պէս նոր շորեր ունէին, երեկուայ պէս մաքուր լուացուած ու սանրուած: Երևում էին էլի նոյն թանգանոց հովանոցներն ու ձեռնափայտերը: Բայց այս անգամ նրանց պաշտօնական, անիմաստ և ցուրտ դէմքերը հացթուխ Սիմոնի վրայ նախկին տպաւորութիւնը չթողեցին, ընդհակառակը՝ աւելի գրգռեցին և համարձակ դարձրին նրան:

Նա արդէն նրանց մօտ էր, գետնի երեսին:

Նա մտածում էր բռնել ծառի բնից, մի կերպ չանդուելով բարձրանալ, և ապա վերից ասել իր ուզածը. բայց իր ուժերի վրայ վստահանալ չէր համաձարկում. վերջին շաբաթների քաղցածութիւնը ջլատել էին նրա ուժերը: Բայց նա այդպէս էր ուզում անել: Եւ լարելով իր ուժերի վերջին մնացորդները՝ մի կերպ մազլեց դէպի վեր... համարեա թէ կանգնած էր: Նա զարմացաւ իր այդ արածի վրայ, իսկ նրանցից ոչ ոք ուշադրութիւն չդարձրեց: Կատաղեց հացթուխ Սիմոնն այդ քարային անտարբերութեան վրայ և իր մէջ զգաց մի անդուսպ վիշապ, որ ուզում էր յարձակուել, առանց մի որևէ խօսքի բոլորին յօշոտել, ոչնչացնել... ա՛խ, մի այդպիսի սթ... Բայց ժամանակն անցնում էր, նա վերջապէս սթափուեց և ուզեց սկսել... ու մի րոպէ մնաց շուարած: Որտեղից սկսել, ինչպէ՞ս սկսել... Տէ՛ր Աստուած, միթէ՞ նա ամեն ինչ մոռացաւ և ոչինչ չի՞ կարողանալու ասել. իսկ տես, հեռուից մարդիկ են նկատել և դէպի իրան են շարժւում, խանգարելու են... Նրա սիրտն սկսեց բաբախել, կուրծքը բարձր ու ցածր անել, վերջապէս հաւաքեց բոլոր ուժերը և սկսեց.

— Է՛յ, պարոն աղաներ, գոչեց դողդոջուն ձայնով՝ չիմա-

նալով, թէ դրանից յետոյ ինչ պիտի ասի: Բոլորը զարմացած յետ նայեցին. դա հացթուխ Սիմոնին ոգևորեց, որ կարծես մի գիւտ արաւ և շարունակեց.

—Թքեցէք իմ երեսին, ձեզ եմ ասում, թքեցէք... Երբ ձեր տներում ես հաց էի թխում, միշտ մի սխալ էի գործում... Այժմ փոշմանել եմ, զղջացել եմ... թքեցէք: Ես պիտի իմ թըխած հացերի մէջ թոյն խառնէի, որ... որ բոլորդ էլ... շան պէս կոտորուէիք... թքեցէք...

Նրա ձեռները թուլացան, նա այլևս չկարողացաւ պահել իր հաւասարակշռութիւնը և շղթայի պէս ծալծլուելով՝ գետին փռուեց...

Շրջապատողների մէջ հայհոյանքների հետ մի քանի ձեռնափայտեր բարձրացան նրա վրայ: Բայց արդէն ուշ էր: Նրա բերանից արիւն էր հոսում, իր վերջին ջղածգական շարժումների հետ նա փչում էր վերջին շունչը:

Կ. ՀԶՕՐԵԱՆ

*
* *

Տնւրտ է ու զիշեր...
Միգամած սարից
Կ'արշաւէ քամին
Պնդ ու բքաբեր...
Ա՛խ, ինչպէս աշնան՝
Ծաղկունքը թօշնան
Հողմից՝ ցրտահար.
Ինչպէս անտառի
Շաւիղը դալար
Ծառի, մացառի
Զորցած ու զեղին
Տերեւների տակ,
Թաղուեց ու կօրաւ
Շաւիղը մենակ, —
Ա՛յնպէս էլ կօրաւ
Զուարթութիւնս.
Զուարթութիւնս
Ա՛խ, անդարձ կորած...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Զ Ա Լ Ը Մ Տ Ղ Ա Ն *)

(Թատերախաղ հինգ արարուածով)

ՏԵՍԱՐԱՆ Ժ.

Մագլու մինակ, յետոյ Լուսիկ

Մագ. (Փոքրիկ հայլի մը ձեռքը՝ ինքզինք կը դիտէ։ Հիւանդ է, թափթու՜ն վիճակ մը, շունչը կը բռնուի պահ-պահ, որ արդէն քիչ մը ոտքի ելած կը պտտի վեր-վար ու նորէն կ'երթայ լոկի իր անկիւնը գտնել)։

Օր մը այնքան միս կար երեսս ու կլոր էր, որ ծործակէս հայողը դէմքս հտէէս կը տեսնէր։

Հալեցայ, հալեցայ, խոտի պէս չորցայ։ Հայրս տերեւներս փետտեց, մայրս ծիղս տրորեց, ան անօրէն տղուն, զալըմ տը-ղուն հոջն ալ հիւթս, հոգիս ցամքեցուց։

Հիմայ անանկներուն կը հաւատեմ, որ մասս մը չոր հացով կուշտ բարկենդանք կ'ընեն։ Ա՛խ, ա՛խ։

Օր մը, «հաղարն էտիս, հաղարն էռջիս», չորս բոլորտիքս՝ մեղուի թևերով կը թռչկոտէին։ Ես մոռցայ անոնք ու ան տը-ղան ուզեցի**)։ Անոր տուի սէրս ան օրէն, որ հօրաղբօրը հետ մեր տունը կ'երենար։ Որբ մնացեր էր կ'ըսէին, հօրաղբարը զինք հօր գորովանքով կը փայփայէր ու փէշը փէշէն չէր զատեր։ Մեր տունը կու գար, դպրոցէն փախիլը կ'ըսէր, ես ալ ասեղը շուք կ'ընէի, իր հետ կ'ապրէի։ Տանիքին վրայ քարովկը, գը-լովկը, ծրտովկը, ըոն-ըոնը***) մեր խաղերն էին։ Իրկունը ինք իմ քարովկներս կ'ափէր կը փախէր, ես ալ իր թռուռունը չուան գնդակը կը պահէի քովս, որ առտուն իրենը իրեն տամ, իմս ինծի առնեմ։

*) Տես «Մուրճ», № 4.

**) Ուզել—կնկայ ու աղջկայ բերանը «սիրել»-ին մէկ պարկեշտ հոմանիշը։

***) Տեղական մանկական խաղեր։

Այսպէս ուզեցի ան տղան, սիրուս առաջին ծիւղ երկու տերեւով, այսպէս էր որ դուրս եկաւ:

Ետքը, օր մը, գլան գլան ոսկիներ բերին կախեցին կուրծքէս: Նոր լաթ վրաս, նոր կօշիկ ոտքս:

Նշանուեր էի: Ի՞նչ Ամերիկա, ես հոս, նշանուեր էինք: Լեռները վկայ, ջրերն ու աղբիւրները վկայ, արև-աշխարհ ու Աստուած վկայ, նշանուեր էինք:

Լուս. (Ներս կ'երեւնայ, կ'ընդմիջէ աղջկան աս հին յուշերու շարքը): Ատ ի՞նչ հայլի, Նազու, ատ ի՞նչ, ատ ի՞նչ:

Նազլ. (Ծանր շնչառութիւն, հեւք, հագ եւայլն) Ասօր երեկուընէ ալ գէշ, մայր:

Լուս. Ու նորէն սիւսիդ կը հայիս:

Նազլ. Աբելենց աղջիկն ըսաւ որ աս օր շատ դեղներ ես:

Լուս. Ել, շիտկուիւր մէյ մը:

Նազլ. Պիտի պառկիմ, մայր:

Լուս. Սիրտս նեղ է արդէն, աղջիկ, դանակ զարնես, արին չելլար:

Նազլ. Մեռնէի որ ետքը հասկնայիր:

Լուս. Ես ալ, ես ալ: Ան շանորդին, ան նշանածդ:

Նազլ. Նոր՝ ի՞նչ:

Լուս. Ամերիկա պիտի հերտըլի եղեր:

Նազլ. Ո՞վ գիտէ, անգամ մը կ'ըսէր որ քեզ ալ հետս պիտի տանիս:

Լուս. Զէ, օղուլ, չէ, ասչափ խաբել-խաղցնելէն վերջը, ասանկ ալ խաղքութիւն...

Նազլ. Մեռցնէր նէ, ի՞նչ կրնայինք ընել, մայր: Ետեղ հայր, դուռը կը զարնեն: Ես ալ երթամ, անկողինս գտնեմ:

Լուս. Խեղ մը չե՞ս տար, ի՞նչ ընենք...

Նազլ. Ծուռկերս, ծուռկերս: Ինծի մի հարցնիր:

Լուս. Ի՞նչ աղէկ կ'ըլլէր որ անգամ մը մենք ալ թուղթ մը հայիլ տայինք: Սըվի հէջ չինկաւ. միտքերնիս:

Նազլ. Զգէ, ձգէ: Կրակը ինկած տեղը պիտի էրէ:

ՏԵՍԱՐԱՆ ԺԱ.

Վարդուկ, Սահակ, Թորիկ, Եղիս

(Թորիկին տունը աչք-լուսի զացած)

(Առջեւին կորիկ սեղան մը, դինի, ու սեղանին վրայ պղտիկ ամակիկներով զանազան տղանդեր):

Սահ. (Գաւաթը ձեռքը) Մէկ թագով, մէկ պսակով, Թորիկ, կէսճըցար, աղաս, Աստուած խէյլի խատէմի ընէ:

Թոր. (Մէզէն ձեռքը՝ Սահակին երկնցուցած) Շնորհակալ եմ, ճանրա:

Սահ. (Գաւաթը պարպել յետոյ) Մեղը է, ճիշտ մեղը: Խճիս է, Հաւճաւ է:

Վարդ. Ես տեսայ առնելդ ատենը—Խուլագեղ է, հէմ շատ աժան, (գաւաթը ձեռքը) կենացդ, Թորիկ, «մեղգրողին տունն հանդիպի»:

Թոր. (Միշտ ինքը մատակարարող) Անուշներ, անուշներ, հէմ մեղգրողին, հէմ մեղքը դնողին. պ. Վարդուկ, ձեզի բան մը ըսեմ:

Վարդ. Սահ. (Սէկտեղ) Հրամէ:

Թոր. Աղէկ բան է (ամուսնութիւնը կ'ակնարկէ), դիժար է:

Սահ. Հիչ ալ դիժար չէ: Թող մարդուն կնիկը մեռնի, թող փարա ըլլի, թող վրաս գրուի: Ախրըր ուսկէ՞ ճարեցիր:

Թոր. Մի հարցնէք:

Վարդ. Սա Բաղդիկին չի դացի՞ր ա:

Թոր. Բաղդիկը—ամմա գտար ու ըսիր, հա:

Վարդ. Ես ալ ատ էր պիտի ըսէի թէ՞ մարդը հիմայ քիչ կը մնայ որ ոտքին տակ նալ զարնէ: Լեռը վրան, ինք տակը: Անանկ կը տքայ:

Սահ. Զգեցէք սըվոնք, տղաք, ձգեցէք, հոս քէյֆի եկեր ենք, դէհ, Թորիկ, (գաւաթը ձեռքը) էսի հին ըլլի, հազարը նոր ըլլի, կեանքիդ, աղաս:

Վարդ. (Քրքիջներ) Աղէկ, աղէկ:

Թոր. Պսակն ալ աղէկ չըրի՞:

Վարդ. Պատուելի՞ն:

Սահ. Ես ալ էն առաջ ատ խելքը տուի իրեն—Խնչ պէտք էր տէրտէր, վարդապետ, կամ դուն ըսէ, Խնչ պէտք էր պսակ, պսակադրութիւն: Հիմայ, պակսոս են անանկները, որ ուզած կնիկինն դուան վրայ, ոչխարի մը պէս կը սակարկեն, թաշկինակի մը պէս ալ ծոցերնին կը դնեն: Հաս է, չհաս է, պաք է, ուտիք է, սև է, ճերմակ է, Խնչ պէտք կար:

Թոր. (Քրքիջներ) Բարի եկեր էք, գլխուս, երեսիս վրայ, բոլորիդ ալ կենացը (հատ մըն ալ ինքը կը խմէ):

Սահ. Վարդ. Անուշ, անուշ, «էտի հին ըլլի, հազարը նոր ըլլի»:

Թոր. Տես... Շնորհքով խօսքին Խնչ ըսես:

Սահ. Անանկ է նը, հատ մըն ալ իմ ձեռքովս, նոր փեսան. (գաւաթը իր ձեռքովը կը լիցնէ, Թորիկին կ'երկնցնէ) հրամէ:

Թոր. Հատ մըն ալ, հաղար ալ (խմելէ ետքը): Խօշ ատ
մուպարէկը մարդով կը խմուի:

Սահ. (Մէզէն տալով) Անուշ ըլլի:

Թոր. Շնորհակալ եմ:

Վարդ. Անուշ, անուշ:

Թոր. Շնորհակալ եմ, հոգիս, Աստուած կեանք տայ:

Սահ. Ըսեմ թէ՛ երէկ իրկուն ինչո՞ւ չես կրցեր խմել:

Թոր. Ինչո՞ւ, հրամէ...

Սահ. Պարտքդ էր ընկեր միտքդ:

Թոր. Թա՛, հո՛ւ... Թորիկ անանկ մանր-մունր բաները
սալլամիշ չընէր, չընէր: Անողը թող մտնտայ:

Վարդ. Անցաւ քսան դեղինը:

Թոր. Հատ մը պակաս ըսիր, բայց իրաւ որ ոսկին ոսկիի
տուի: Տունս ոտք դրաւ թէ չէ, պատերը ծծողտացին:

Վարդ. Զըսի՛ր թէ՛ սէսկէ:

Թոր. Տէրարուն տղայէն, պ. Վարդուկ, բայց շունշան-
որդին տոկոսը շատ թունդ փախցուց:

Վարդ. Վնաս չունի, էֆէնդիմ, (դէպի Սահակ) մէկ մը որ
կովը եղոտ է, մէկ մըն ալ որ սրտին սիրածն է կարծեմ:

Թոր. Սիրածս չըլէ՛ր... խե՛նթ էի:

Սահ. Ան ալ դ՛ար քեզ կուգէի, Թորիկ, աս մէկը, աս մէկը
պարագան մանաւանդ կարգուողին համար հաղար բախտա-
ւորութիւն կ'արժէ:

Վարդ. Շատ շիտակ, շատ ճշմարիտ:

Սահ. Ժամանակին Իսոյենց տղան ալ կ'ըսեն, աղուոր
այրիի մը հետ, հարս տակաւին, ամուսնութիւն հանկուրցեր
է, բայց զէվալլին քաշանքը...

Մարդը իր կնիկէն սրտով չի սիրուիր, ինչ որ կ'ընէ, ինչ մի-
ջոցներու որ կը դիմէ. կնկան վրան գլոխը ոսկի, արծաթ, մէր-
ճան, մարգրիտ, օգուտ չընէր, թուղթ հայիլ կու տայ, օգուտ
չընէր, մատաղներ կը կըլրէ, վանքերը ուխտի կ'երթայ, հե-
տեանք շունենար, կնիկը զինք չսիրէր, ու դեռ աս կնիկը լո՛ւն
ընէ, որ հաւնիք—վեց տարի միօրինակ ինքզինք հիւսնդ կը
կեղծէ, անկողինն մէջ միշտ, անկողինը գետնէն չի վերցուիր,
հիւսնդ, հիւսնդ, հիւսնդ:

Էրիկը չի դիմանար աս վիճակին, ցաւի կու դայ, կը մեռ-
նի: Կնիկը քովը ըստկուած տեսնելով, էրկանը մահուանէն յե-
տոյ, շաբաթ չանցնիր, գլուխը գինճ-գինճ բարձէն վեր կ'առնէ,
կ'ելլայ ուրիշ էրիկ մը կը գտնէ, անհոգ, անտարբեր, չի նայելով
անգամ թէ՛ ետեւ հաղար փէրիշանութիւն ձգեց: Այսչափը դեռ
իմ գիտցածս:

Վարդ. Գտաւ Թորիկը վերջապէս, գտաւ, գտաւ: Շատ ժամ չերթար, ամմա բանն աջող է:

Թոր. (Յափրանք, գաւաթը ձեռքը) Քէֆերնուդ հայեցէք, է-ֆէնդիմ, Աստուած կ'ըսէ որ չդուն շիտակ եղիր, Ես քու հետ կ'ըլլեմ: Բարի էք եկեր, բայց չէ, պ. Վարդուկ, ձեռքդ ականջիդ, տեսնենք, «նէ կէլէ, կէլէ»:

Վարդ. Նոր հարսը վրանիս չի՞ խնդար:

Թոր. Ա՞տ ինչ խօսք:

Սահ. (Իէպի Վարդուկ) Մեր քոյրն է նոր հարսը:

Վարդ. Անակ է, բայց դեռ ի՞նչպէս... է՛, Բաղդիկին աղջը-կան շէրը պիտի ըսեմ:

Թոր. Ըսէ, ըսէ: Ասօր ուրիշ օր է: (Նոր հարսին կը ծայնէ) Եղիս, Եղիս, ներս եկուր: (Նղիս ներս կու գայ, կը բարեւէ, հիւրերը լայն-լայն նայուածքներ մը կ'ուզողին իրեն): Մէյ-մէկ գիւնի, հատէ եաւրոմ, հէմ ձեռքովդ տի տաս, մտերիմ աղբրտաքս, աչք-լուսի եկեր են: Առ աս գաւաթը, հատ մը պ. Վարդուկին, հատ մը Սահակ աղային, հատ մըն ալ դուն գիտես:

Վարդ. Օ՛ֆ, օ՛ֆ: Իմ ալ կարգուելու օրս միտքս ինկաւ:

Սահ. Տէ, Վարդուկ, շատ մի՛ կոտորուելիր: (Նղիս կու տայ հիւրերուն մէյ-մէկ գաւաթ, վերջինը Սահակին առջեւ):

Վարդ. Անուխ եմ, տերեւ չունիմ,

Շատ աղուոր եմ, եար չունիմ,

Ընկեր եմ ծովուց մէջը,

Ջահիլ եմ, խապար չունիմ:

Ա՛լ ի՞նչ ընեմ աշխարհքը,

Ա՛լ ի՞նչ ընեմ արևը,

Ա՛լ ի՞նչ էրգեմ գիշերը,

Ա՛լ ո՛ւր հայիմ ցորեկը:

(Խաղը ըսուելու ատեն միւսները ծափ կը զարնեն դիւողի յափրանքով: Նղիսի ներկայութիւնն ալ պակաս պատճառ անոնց քէյֆին):

Թոր. (Իէպի կինը) Գաւաթ մը՛լ ինծի. (Քէսը մէկ կողմ կը նետէ քէյֆէն ու ինքն ալ ծունկի եկած՝ կը մռմռաւայ) *հւհ, հւհ, հւհ, հւհ:* Թե թի հաղա մի, խօլ սարմասի մի (Թեւերնին երեքը մէկ-տեղ մէջ՝մէջ կ'անցընեն, ու կը սկսեն ձուլոտայով խմել):

Վարդ. Ձէ, չեղաւ ատանկ. (Սահակին) առաջ անցար, մենք դեռ վրայի (գաւաթին վրայի) սերն ալ չառինք:

Թոր. Շո՛ւտ, Եղիս, շուտ, նըվոր գաւաթը կարմրցուր: Շո՛ւտ, շո՛ւտ, Սահակ աղան կը վառի:

Սահ. (Նղիս արտօրբով կը լնցնէ Սահակին գաւաթը. անգամ մըն ալ կը կրկնուի թեւ թեւի խմելու հանդիսաւոր ձեւը: Աս անգամ ուժպ-

ուսպ կուլ կու տան, որ բոլորը մէկ տեղ խմած ըլլան գաւաթներն, աս կերպով ալ հէնէքի տեղ չի մնար) Օ'խ, օխ: Հաւակաթ շիտակ:

Թոր. Շաքար, շաքար...

Սահ. Հաւու կաթ, ձագու մեղր, մեղրորդին տունն հանդիպի (գաւաթը ուժգնակի մը սեղանին վրայ կը դարնէ):

Վարդ. (Խմելը քիչ մը շուտ լմնցուցած) Մէզէ մը, եղիս խաթուն: Մենք աղբար մարդիկ ենք. խտուտն *) ինձի, լէպլէպուն անոնց: Գանկիդ, Բաղդիկ, գանկիդ վրայ:

Թոր. Ըսիր, ըսիր, մարդը կրիայի պէս շրջեցիր:

Սահ. (Իէպի Թորի) Մարդուս անէծքը շատ թունդ է:

Վարդ. Աղջիկը, աղջիկը...

Սահ. Ետ ձգեցին. ըն:

Վարդ. Ետ ձգեցին. փեսանին ալ Ամերիկա:

Սահ. Գնաց մի:

Վարդ. Պիտի երթայ, կ'ըսեն:

Թոր. Աղջիկն ալ շատ նեղն է **) կ'ըսեն:

Սահ. Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛...

Վարդ. Կնիկ ըսածդ աճայիպ սատանայ մըն է, տղաք. գլխուն վրայ երկար մազ ունի նը, ոտքն ալ թաղիքէ գուլպայ անցուցած քեզ կը լրտեսէ: Դէմն ելար նը, «էրիկս ես» կ'ըսէ, կը քծնի, սրունքներուդ կը պլուր. չէ, ատ հանդիպումը չեղաւ նը, ալ Աստուած պիլէ չի գիտեր թէ՛ թնչ է ան (Նդիս փարցով ղինի քերելու դայած աս ատէն):

Սահ. Ես ալ պիտի բսեմ թէ՛ կնիկ մը խենթուկ երեխայ մըն է, տեսածին կը փափագի, շատ անգամ ատ փափաքածին հասնելու ջանքերուն մէջն է, որ փէշը մատառին կը փաթթէ:

Վարդ. Որձ մը տեսնան նը, բա՛թ, դուռն ու պատուհանը կը գոցեն, ատով ըսել ուզածնին է թէ մեզի ինչո՛ւ կը հայիս, մենք տէր ունինք, մենք ուրիշին կը վերաբերինք, շատ ուշ կ'իյնայ մտքերնին թէ՛ մեղք կը գործեն:

Սահ. Գոցուած դռան ու պատուհանին մէկ ճեղքէն կարելի է անանկ փեռեկոտուած աչք մը կը բանան, կը հային, որ կոպերնին կը խղաի:

Թոր. Բոլոր կնիկներն ալ մէկ չեն ա:

Վարդ. Հատ մըն ալ խմեմ նը, էն շիտակը ես պիտի ըսեմ:

Թոր. (Չեղքը անմիջապէս գաւաթին տարած՝ կը լեցնէ ու Վարդուկին կու տայ) Հատ մըն ալ, երկուք ալ:

*) Չորցուած ձկնիկ:

**) Հողեկարքի մէջ հիւանդ:

Վարդ. (Խմել է առաջ) Կեցէք բարով, տղաք. (զաւանթը պարպելով) ճիւ, անամ, պատւամ: Թուփիդ տակը քնանայի:

Թոր. Սահ. (Մէկտեղ) Անուշներ, անուշներ...

Վարդ. Շնորհակալ եմ, աղաս, անուշը բերուելիդ ըլլի: (Պելս, թաշկինակով սրբել է ետքը) Ես ըսեմ շիտակը—կնիկ ըսածդ մատակ ձի մըն է, ասօր քու հայիրդ կարծի նը, դունչն ու պոչը քու առջևդ կը խաղցնէ, բայց վաղը ըլլի որ մեռնիս, կամ չի մեռնիս աէ, խոտը պակսեցնես, վայը եկաւ գլխուդ:

Սահ. (Ելելի Թորիկ) Միշտ վերջապէս հանտարլի պիտի երևնաս: Կինը մեղու մըն է. եթէ անոր քիչ մը մեղրն ալ չըլլէր, բղղացող կարիճ մը պիտի ըսէի:

Թոր. Քիչ մը ցած, աղբար, ցած խօսեցէք:

Վարդ. Կ'ուղէք, հեգնեցէք ալ, ես կ'լին անուշին տակ հաղիւ մայրս կընամ յարգել:

Սահ. Այո, այո, սանկ թուղթ մը ես ալ կը ստորագրեմ:

Վարդ. Չարմանալի արարած մը, որ մարդ չի հասկնար: Ըսես թէ՛ միայն երիտասարդին կը հաւատին—շիտակ չէ, ծերացածն է ընտրածնին—շիտակ չէ, միայն գեղեցիկին երազովն է որ երջանիկ կ'ըլլին—աս ալ շիտակ չէ:

Թոր. Ալ հերիք, պ. Վարդուկ, սայղին ալ աղէկ բան է: Ես իմս երէկ բերի ու ասօր դեռ հին չեմ գտներ: Հէրիք, էֆէնդիմ, հաւտայլ՞ թէ՛ վաղը զոգ-զոգ պիտի առնէիք, եթէ Աստուած մի՛ արասցէ, ձերինները մեռնէին: Փակեցէք, մոռցէք աս եարանկութիւնը:

Վարդ. Մեր բոլոր խօսքը Բաղդէիկին կնկան վրայ է, սիրելիս, հէրիքին տունը խղէնին *) հիմէն փլցուց:

Թոր. Անպիտանը ինքն իր ձեռքովը ըրաւ, ես ինչ ընեմ, դուն ինչ ընես:

Երկու օր առաջ ալ տունին կապերտները կը ծախուէին (Նոյս հիւրերուն քով ծառայութեան մէջ):

Եղիս. (Երկանը ակնջին կը փափսայ) Երէկ ալ կ'ըսէին թէ՛ աղջկան ոսկի շարոցը քշեր է:

Թոր. Տես, մեր Եղիսն ալ կըսէ որ էֆէնդին աղջկան նշանին ոսկիներն ալ կարճեր է:

Վարդ. Էֆէնդիւն... ինչ յարմար անուն:

Սահ. Հելպէթ, տղաք, ուրիշին ահ ու հարին հե՛տ կը խաղաք:

*) Մառան:

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ.

Շահին, Մարան, Փառէն

(Անցքեր Շահինին տանը մէջ)

(Շահին ու Փառէն կրքոտ, բարձր խօսուղոտութեամբ փողոցէն տուն կու գան կր մտնեն)

Շահ. Ձեմ ճանչնար, չեմ ճանչնար: Գնա, գտիր, խօսք առ, խօսք տո՛ւր, ինչ կ'ընես, ըրէ: Աղբարս ալ հողէն ելլայ դայ, չեմ ճանչնար:

Փառ. Ես հիմ եմ որ... իմ հայրս հիմ էր:

Շահ. Դուն քուկդ ես, քու մօրդ ես, հայրդ աղբարս, դուն քեզ քու մօրդ հարցուր, հիմ ես:

Մարան. (Ոտքի ելած՝ տալիս ու տղայ դիմաւորելու վիճակով մը) Ինծի ըսէ, ինծի, ինծի, ինչ որ ունիս, ինչ որ կ'ընես, պիտի ըսես, ինծի, իմ անունս տուր:

Հիմայ ալ տեղ չի գտար... տղուս գլուխը... ճամբուն մէջ կը ցեցկես:

Փառ. Հօրս բաժինը, մօրս բաժինը, իմ բաժինս խանութին ապրանքէն մինչև տանը աւելը՝ մեր իրաւունքը, քնթիղ վերի դիէն պիտի հանեմ:

Մարան. Նեղճ չոճուխս ոտքը երկիր դրաւ թէ չէ, չի թողիր որ հալալ ջուր անգամ խմէր:

Փառ. Դեռ ես նշան տարուած ոսկիներն ալ իրմէն պիտի պահանջեմ:

Շահ. Պահանջէ... (հեղնոթիւն):

Փառ. Պահանջեմ պիտի, անանկ բաներ, որ մօրէդ ալ չեն անցնիր:

Շահ. Պահանջէ... վերջն ալ ճրագ մը, ու գրպանդ բընտրուէ:

Փառ. Կը տեսնես վերջապէս:

Մար. Լոէ, Փառէն, լոէ: Զայնդ ցած հանէ, դրացները կը լսեն:

Շահ. Ան դրացները առաջ-տուջ իմ հաշիւներս պիտի լսեն, վերջը՝ Աստուած ալ անմեղ արընի մը հաշիւը պիտի լսէ:

Փառ. Ի՞նչ ըրինք, հիմ մեղացեցեր ենք:

Շահ. Դեռ խօսելու բերան ալ ունիս:

Փառ. Բերան, քիթ, աչք, ախանջ: Փնոք Աստծու:

Շահ. Ատ երկրէն դարձողը, անխիղճ մը եթէ չըսուի,

լիրը՝ անպատճառ, բայց դուն երկուքը երեքը մէկտեղ միացուցեր ես մէջդ: Խեղճ աղջիկը կը մեռնի ահա:

Մար. Բարակ ցաւ առեր է կ'ըսեն: Հէլպէթ:

Շահ. Ձեզի հանդիպողը ցաւին հաստին բարակին լո՛ւն պէտք ունէր: Ձեր հո՛ն ալ հերիք չէ՞ր:

Փառ. Քէֆդ բերէինք:

Շահ. Դուք պատիւ ալ չունիք:

Փառ. Քու ունեցածդ մերն ալ էր, չէ՞:

Շահ. Մարդուն կուշտէն հարիր, հարիր յիսուն ոսկիէն էւել դրամ շորթելէդ վերջը, մօտ տարի մը խաբել-խարխրելէդ վերջը, աղջկան արընին պատճառ ըլլալէդ վերջը, թուք ունես ու լեզուդ կը թրջես:

Փառ. Մտիկ ըրէ, մտիկ: Ես քու ձեռքովդ փախցուած դրամն էր որ անգամ մըն ալ ետ առնելու կերպը գտայ: Ի՞նչ ըսել կ'ուզես: Եթէ պարապը վատնած թուքս էր մեղքցածդ, քու երեսդ կը թրջես: Թ՜ո՛ւ... (Թուք մը դիմացինին):

Շահ. Սրիկան (յառաջացում գէպի Փառէն):

Փառ. (Լուսիկին հասցէին դրուած թուղթը հօրաղբօրը աչքին դէմ, բացած դողողացող մատներով) Հոս կը ճանչնայի՞ր պատկերդ: Սրիկայ մը Էս, աղա հօրաղբար: Քու գիրդ, քո թուղթդ, քու ստորագրութիւնդ: Եւ գիտե՞ս որու հասցէին...

Շահ. (Այլալ մը եղած՝ Փառէնին ձեռքէն թուղթը կը խլէ, կը ծմռթի ու իր բերանը կը նետէ. կլլելու ջանքեր, խեղդոււթներ: Աղբրորդուն քթին բերնին վրայ ուժգին բռունցքներ: Մարան կը ձգէ կնկայ սուր ձայնով, դարակներէն ամաններ հեւայն կը թափին. վար պէշ շտապով մը) Պիտի սպանեմ, պիտի սպան... նեմ, պիտի, դժուրս, դժուրս, տունէս դուրս, ալ մի կենաք, ալ չեմ ուզեր, իմս է տունը, տէրն ես եմ: Դժուրս, դժուրս...

(Շահին աս խօսքերը ըսելու ատեն կը զարնէ Փառէնին անխնայ ու զայն դուրս հրելու ծիպեր մը կ'ընէ: Փառէն հարուածներուն կը պատասխանէ թէեւ, բայց վերապահութիւն մը կը ցուցնէ իր շարժումներէն մէջ ու շատ աւելի պոռոտ կոկորդով մը կը պոռայ միայն):

Փառ. Բաժինս... հօրս... բաժինը. իմս, մօրս...

(Ապա յուզմունք, անխնայ խօսքեր):

Մար. Տղաս կը սպաննեն, սպաննեցին, վայ, Փառէն, առջիդ կտորտիմ, Փառէն, Փառէն (նուաղում, գետին փռուած):

Փառ. Ու հիմայ մայրս ալ կը տրորես, ապիրադ դուն: Հօրս տունը քակել փակելէդ ետքը, մօրս դաւաճանը, աչքիս առջև խեղճ մօրս դահիճը կ'ըլլան (յարձակում հօրաղբօրը վրայ, հարուածներու փոխանակութիւն երկու կողմէն):

Շահ. Այդ բոլորէն ետքը դեռ աս տունն ալ պիտի վա-

ռեմ, ձեզ ամենքդ... ոչինչ ազատ... ոչ մէկդ ողջ... Հասկցիր, աղէկ հասկցիր, Շահին չի վախնար, Շահին ուսկէ՞ պիտի վախնար:

Փառ. Գիտեմ, կը հաւտամ, չի վախնալուդ համար է որ տարիներու ընթացքին մէջ գաղտնի կեանք մը, պղծութիւն մը հտնէդ քաշեր ես, չամչնալուդ համար է որ քու աղջիկդ քու աղբորորդուդ ծոցը տալ կ'ուզես: Ալ ի՞նչ մնաց որ չի հասկցուէր, ի՞նչ մնաց, ո՞վ ունէիր որ մէկ ձեռքը կողքին վրայ ու միւսովն ալ ճակտիդ մուրը երկննար սրբել:

Պատուեցիր թուղթը, անանկ չէ՞, այն նամակը որ քու պատմութեան էն վերջին մասը կ'ամբողջացնէր, պատուելէդ հտքը կերար, կլլեցիր ալ. ի՞նչ... բայց իրողութիւնը—բայց իրաւ է որ յայտնի սրիկալութիւն մը ու ասոր կենդանի հետեանքը կարելի պիտի ըլլար կլլել, մարսել ու բերան սրբել:

Դեռ եթէ կ'ուշանաս ըմբռնել սվոնք, ան ատեն պիտի ապացուցանեմ ալ թէ՛ ամեն բանի հետ յիմար մըն ալ ես: (Աջքը մօրը վրայ դարձուցած, անոր մօտը) Ե՛լ, մայր, վեր էլ, դուրս երթանք, դուրս, ուր որ ալ ըլլայ, թող կ'ուզէ գժոխքը ըլլայ:

(Մայրը սթափեցնելու ծիպեր):

Մայրս ալ հա՛, անխիղճ վանդալ (կը խոյանայ անդամ մըն ալ հօրադբօրը վրայ. հարուստներ): Մայրս ալ, մայս ալ: Երթամ, արդարութեան դիմեմ, երթամ բոլիսը, ոստիկանը...

(Պուրս կը ցատկէ ու կ'երթայ որ կսռաւարուծեան դուռը դռնգատի մը ձեռնարկէ):

Շահ. Գնա՛, բայց գիտցիր՝ որ Շահին բանէ մըն ալ չի վախնար:

ՏԵՍԱՐԱՆ ԺԳ.

Մարան, Շահին, Հոռմիկ, ոստիկան մը

(Փառէնին հեռանալէն հտքը շատ ատեն չանցնիր, Մարան կը սթափի ինքնիրենը ու կը ժողվառուի որ ինքն ալ դուրս ելլայ):

Մար. Տղաս սպանեցին, տղաս դուրս նետեցին, հա՛. էրիկ կնիկ մէկ տեղուած աշխատեցան որ իմ գլխուս ալ ջուր դնեն (հեկատութիւն): Փառէ՛ն, Փառէ՛ն, ո՛ւր գացիր, եաւրում, իրաւ է որ աս քած ու որձ գայլերն էին քեզ բզբտողները: (Տքալէն դուրս կ'երթայ որ տղուն հետամտի) Փառէ՛ն, Փառէ՛ն:

Հոռ. (Մարանին հտեւէն) Ա՛խ. ձեռքս անցնէիր (սկրան կնոցնելով):

Շահ. Տես թէ՛ ինչպէս մայրը սուտմեռ կը ձեռնցնէ, տը-

դան կառավարութեան կը վազէ: Շահին ալ ոճրագործ մը որ արդարութենէն պիտի վախնայ:

Հոռ. Շիտակը պիտի ըսենք, անանկ չէ՞, ես քու ըրածներէդ ալ բան մը չի հասկցայ:

Շահ. Շատ մի հաջիր:

Հոռ. Ա՞ս էր վերջի ընելիքդ:

Շահ. Ի՞նչ ըրի, չ'ընէի՞, չի լսեցի՞ր ըսածները:

Հոռ. Ատանկ պիտի վարուէիր:

Շահ. Ասօր համբերեմ, վաղը համբերեմ, տարին տասներկու ամիս աս հալը, աս չուզուհանքը: Հայլին կը հայէի, ալ արթըլս էշ մը ճիշտ:

Հոռ. Նէրը շատ մեղքս չէր գար... Փառէնը:

Շահ. Շունն ալ, շան ձագն ալ մէկ տոպրակ:

Հոռ. Ուզէիր, կրնայիր քիչ մը համբերել:

Շահ. Դանակը ոսկորիս հասուցին, անոր սրողն ալ ան լկտին՝ մայրը:

Հոռ. Ա՛խ, էրիկ մարդ, դուն հիչ մեղք, յանցանք չունիս զհար:

Շահ. Մարդավարութիւնը՝ մեղք... որը մը շահել մեծցընելը յանցանք...

Հոռ. Քիչ մը քիչ գնայ եկո, կ'ըսէի, քիչ, քիչ: Խնամին՝ հասկցանք, հարմնցուն՝ ատ ալ կը հասկնայինք, դուն սակայն, կ'ուզես ցաւիր ալ, գլոխդ կ'ելլար անկէ, ոտքդ չէր ելլար: Ալ միւսն ալ չըսէի:

Շահ. Դեռ կը կասկածեմ որ առաջ-առաջ դուն հանած ըլլիս անունս, քեզու խլուրդ: Ատ նամակը թնչպէս դուն ան փիճին ձեռքը անցուցիր: (Ոստիկան մը մէկէն ներս կը մտնէ):

Ոստիկան. Շահինը դժուր էք—ոստիկանութենէն ձեզ կ'ուզեն, հրամեցէք:

Շահ. Շահինը ես եմ, այո, ո՞վ էր ինծի դէմ գանգադողը, ես մէկու մըն ալ հետը գործ չեմ ունեցած:

Ոստիկան. Ձեմ գիտե՞ր—ոստիկանապետը ձեզ կ'ուզէ: Ուշանալ չուզէր, Հրամեցէք, հոն կրնաք հասկնալ ձեզ գանգադողը:

Շահ. Քիչ մը չէի՞ք թոյլ տար, քանի մը բոպէ վերջը:

Ոստ. Ո՛չ, ո՛չ, ճիշտ հիմայ ու առջևս:

Շահ. Շատ լաւ, երթանք (ոստիկանին առջեւ դէպի ոստիկանատուն):

Հոռմիկ. (Մենակ) Ես գիտէի թէ՛ աս պիտի ըլլի էն ետքը, գիտէի, ատ մարդը ինքն ալ գիտէր, բայց չուզեց որ առջեւս առնուի:

Հիմայ ալ ահա ընկիր, ելիր որ դոր ճամբան գտնես, հանգիստ ճամբադ քալես:

Զիս բանի տեղ չի դնել, շիտկէ-շիտակ հետս չի խօսիր, խօսիմ, ըթիս բերնիս կը զարնէ, երբ օր մը անուշա տուեր, երեսիս խնդացեր է, երբ օր մը, գիշեր մը մէկտեղ քնացեր անցուցեր է:

Տէրտղ ուրիշին բանաս... ասոր ալ տակէն ի՞նչ գիտեմ ինչ կ'ելլայ, ինչ չելար:

Ան նամակն ալ ինչ պիտի ըլլէր որ բերան բերեց.*) Թուղթ մը խնամ Լուսիկին ձեռքը հասցուր ըսաւ. հարսնիքին վրայ գրուեր է. վերջը աս Թուղթը ալ բնորէ որ գտնաս: Ատ-չափ յանցանք իմս, որ անհոգ գտուալ ու կորուսի:

Ա՛խ, էրիկ մարդ, տունդ աւերի, ինդոր՝ որ աւերուաւ զաթի, էրիկ-չէրիկ, աչքերէս հանեցիր, հիմայ ալ հոգիէս պիտի հանես:

Ինդոր աղոտոտեցիր նէ, անանկ ալ մաքրելու եղիր, հիչ ալ հոգ չպիտի ընես:

Ա Ր Ա Ր Ո Ւ Ա Փ Ե.

ՏԵՍԱՐԱՆ Ա.

(Բաղդիկին տունը, անշուք խցիկ մը—Նազլու անկողնին մէջ, ճղնա-ժամային վիճակ: Պատերէն կախուեր են հիւանդ աղջկան սովորական հագուստները. զվտուն վերեւ սափոր մը, պարապ սկահակներ:

Հայրը սենեակին վերի կողմը, ծալապատիկ նստած կը մտմտայ. հիւանդին մօտը հսկողը մայրն է միայն):

Լուսիկ, Բաղդիկ, Նազլու

(Նազլու անհանդիստ, բարձր-բարձր տքուկներ)

Լուս. Ի՞նչ, հոգիս, ի՞նչ կ'ուզէիր. (լուռիւն) ոտքի ելլար նէ, օղերս ծախէի, ս. Նշան դոգ մը խոռոզ տանէի:

Նազ. Շունչս... մայր, շունչս:

Լուս. Կոտրտիմ, կոտրտիմ: Աս ինչ էր կպաւ ու չի թողուր խեղճ մէսըմըս, ալ չի թողուց որ շիտկուէր (ինքնիրենը միշտ, ոչ իսկ երկան կողմը նայելու սիրտն ընելով):

Նազ. Պատուհանը... բա... կը խեղդուիմ: (Մայրը աղջկանը գլուխը կամացուկ մը վեր կ'առնէ, կը նստեցնէ, ինքն ալ անոր ետեւը

*) Յիշեց:

նստելով, պահ մը բարձի պէս յենակ մը կը կրկնայ, պուտ մը ջուր կը խմցնէ ու նոյն դիրքով յետոյ եւ յենակի վրայ կը պառկեցնէ):

Լուս. Պառկիր, ձագուկս, պառկիր: Ըսա, որտեղդ է ցաւդ, ես առնեմ, ես դնեմ ծոցս:

(Դէպի էրկը) Ախ, դուն ալ զհար հայր եղար նէ, ճիկէր ունիմ ըսիր: Բժիշկ-բժիշկ ըսի, իմ ձայնս ես լսեցի: Եկո՛ւ, տես թէ՛ ինչոր բերանը ճնճողայ պէս կը բանայ, կը խփէ:

Բաղդ. (Գունէն արթնցողի գծուած երես) Հիշ ալ բան չի կայ կ'ըսեմ նէ, դուն չես հասկնար: Պաղ առեր է անգամ մը, քիչ մը պիտի պառկի:

Լուս. (Նաղլու նուաղած վիճակի մէջ) Պաղի-մաղի չլմանիր աս, չես գիտեր:

Բաղդ. Պաղ ըսածդ լրերով կը մտնայ, տրէմ-տրէմ դուրս կ'ելլայ:

Լուս. Հիմայ նորէն կորսնցուց, բժիշկ մի:

Բաղդ. Հը՛ն... զհար գիտէք թէ՛ բժիշկ գայ նէ հոգի պիտի սայ:

Լուս. (Ինքնիրեն) Երէկ չէ առջի, տուր տուրում *), էճէլէ, ծամկալը կ'ուզէր որ բարձին տակ դնէ:

Բաղդ. Ասըլ հէքիմը՝ Աստուած:

Լուս. Ուրիշները հէնց որ քնթերնին կը ծոխ, դեղ-դարման կը հասցնեն, դրամ կը խարճեն:

Բաղդ. Թող տան, թող խարճեն: Աստուած գործին խառնուիլ չլիւր: Դուն չես գիտեր:

Լուս. Ես աստոնք չի հարցուցի քեզի:

Բաղդ. Ես ալ որ էւելի կող ունիմ, քու վրայ քիչ մը էւել ալ խելք ունիմ: Ինչերէ անցանք, յիմար, ու հիմա լի՛նչն է որ կը պաճըգտես:

Լուս. Խեղճ մէսըմըս կը վախնամ քի անէճէլ... անկէ ալ կ'անցնենք:

Բաղդ. Վաղէն որ լմնցեր է, էս ինչ ընեմ, դուն ինչ ընես: (Նաղլու վայրկեան մը շարժնուծեան նշաններ կը ցուցնէ, հատ-հատ կը հազայ. հեւք, տաղնուտ):

Լուս. Զեռքերն ալ միշտ անկողնէն դուրս կը նետէ: Նաղլու, Նաղլու, ի՞նչ կ'ըսէիր, աղջիկս, աչքդ բաց մէյ մը. (ձեռքը հիւանդի ճակտին ու կուրծքին տանելով) կ'էրի ձագուկս, կ'էրի, կ'էրի, ետեւէն ալ պաղ քրտինք մը կը...

Բաղդ. Հիմայ կը հասկնամ թէ՛ պաղ առեր է: Մէյ մը տէրտէրը բերել տայիր, թող աւետարան մի թոթուէր (ոտքի)

*) Փութկոտ:

վրայ կը պտտի, պաղարին միշտ դէպի հիւանդը). աղէկ է ասօր, աղէկ է: Ես առջի օրուէնէ աղէկ կը տեսնեմ:

Լուս. Անանկ ըսէ...

Բաղդ. Խեղբիս պառկածը պիտի ըսեմ ա: Ե՛լ դուն մէյ մը—բանի մարդ-մուրդ չէ եկեր—սնդուկդ բաց:

Լուս. Ձեմ հասկնար, խեղբ չիկայ դոխս, չիկայ, չիկայ (սրտադող վիժակ):

Բաղդ. Սնդուկիդ մէջ դրուած մատնի, ժամացոյց, խաթար, ինչ որ կար: Հասկցար:

Մազլ. Քիչ մը... կողմս... դարձուր մայր:

Լուս. (Հիմայ քիչ մը աւելի անմատուր ձիւնդին ծառայութեան) Ա՛խ, եաւրում, քիչ մը աչքդ բաց, ինծի հայիր, քիչ մը հոն լոյսին հայիր: (Նազլու չի խօսիր): Հայկանուշը *, բարե խրկեր է, Նազլու, խնձոր մը խրկեր է, տէս, աչքդ բաց: (Մայրը խնձորը աղջըկան կը ցուցնէ, աղջիկը նուազուն, ոչ կը տեսնէ, ոչ կը խօսի: Մայրը ինքնիրեն անիմաստ բաներ մը կը մրմնջէ: Տրտում, միշտ տրտում):

Բաղդ. Ձի լսեցի՞ր, Լուսիկ:

Լուս. Ի՞նչ սիրտ, ի՞նչ հոգի:

Բաղդ. Եթէ ոչ սնդուկիդ բալլին ինծի, Ես ելլամ:

Լուս. Իմ կրակս, իմ խշխշս. իրեն ալ հիմայ սնդուկ քրքրելը կը բռնէ:

Բաղդ. Անտուն փէշ մը փարայ պիտի հաժընմ, կնիկ, առ թոնջ անմոռութիւն, թոնջ ծանր բան է որ իմ ըսելս բռնեք է նը, քու ալ ինաստութիւնդ կը բռնէ: Ձէ, եթէ կը պահես որ աղջկանդ ճիշէկ տաս օր մը, ան ըսէ, որ մենք ալ վաղ անցընինք: Ինչեքէ՛ չանցանք, ինչե՛ր չի կորուսինք: Վաղ կ'անցնինք ու վաղը անկողին մըն ալ մենք կը փռենք հոն: Վեր ել, ոտքի ել, սանկ բան չըլլիր (Բաղդիկ ուժը համբիշին տուած՝ պահ-պահ ալ սիկառին, կը քաշէ, կը մտածէ ու կը սպասէ):

Լուս. (Գիտմամբ հիւանդով կը զննողի, որ երկանը պահանջածը մոռցնիլ տայ) Աղջկանս հոգին առնողը դուն ես եղեր, հիմայ ալ դուն կ'ըլլիս: Երթալով կը խնկուի **) երեսը:

Բաղդ. Հասկցանք, էֆէնդիմ, հասկցանք. ասօր խնկուեր է նը, վաղն ալ կը խնձորուի դհար: Իմ ցաւս, իմ տէրտս, իրեն ալ խոռնկն ու խնձորը: «Հէր քէս» ոտքի վրայ եկեր կը սպասէն որ տուած ուշէննին առնեն, իրենք ալ իրենց ստորագրած սէնէտնին ազատեն: Ել սնդուկդ բաց, սէնէտներուն ծրարն ալ մէկտեղ բեր, որ մէյ մը դէֆթէրիս հետ թաթալիք ընեմ, բան

*) Աղջկան մտերմութիւններէն:

**) Կը դժգունի, կը դալկանայ:

մը հասկնամ: Ո՞ր մենք սրկէ-նրկէ առնուած զրաւները մեզի մալ չպիտի ընէինք: Ի՞նչերնուս պէտք, ուրիշն ալ մարդ է ու նէֆս ունի, մենք ալ տարին անգամ մը գոնէ սա խիղճ ըսուածը բանի տեղ դնելու մարդավարութիւնը ունենանք: Մինչև հիմա ի՞նչ չըրի, ինչե՛ր չըրի—արդիւնք—կ'երուայ ահա հալեր-նիս: Ու աս բոլոր խօսքերը քեզի մէկ բան մը հասկցնելու համար միայն—բալլին, մնդուկիդ բալլին:

Հուս. (Վախ, վարանում, անձրկանք) Չիկայ, չիկայ: Չեմ գիտեր ո՛ւր գրեր եմ, ո՛ւր կը մնայ: Կ'ուզես, եկուր վրաս գլոխս դուն հայեր, գուն հասկցիր մէյ մը, գտար նէ, աչքս կոխէ: Մեղայ, Տէր, մեղայ, Աստուած: (Նորէն հիւանդին վրայ կը գծի, իբր թէ՛ անկէ նոր բաներ մը կը հասնի ականջին) Ի՞նչ, հոգիս, ի՞նչ կուգար ձեռքէս, ի՞նչ կրնայի ընել: Քովն եկուր (դէպի էրիկը), տես, ինչ կ'ըսէ չոճուխս—բժիշկ չիկայ, եււրում, ատ անունով, ատ տեսակ մարդ չիկայ աշխարհիս վրայ: Հոս եկուր, ականջովդ լսէ—թող բժշկի մը երես տեսնամ, վերջը մեռնիմ կ'ըսէ: (Յաւէտ հիւանդին կառչած, փղծկում, ոտքի կ'ելլայ, անգամ մը պատէն կախուած աղջկան լուսանկարը կը դիտէ ու ձեռքն ալ գոտիին մէջ, կու գայ նորէն հիւանդին սնարը կը կծկտի: Անբայատրելի տաղնաս):

Բաղդ. (Աս ալ մէյ մը նստելով, մէյ մը կայնելով) Ա՛խ, Տէր Աստուած, իրաւ է եղեր որ դժբախտութիւնը մարգուն բըշակը մտնալու հաղար ճեղք, հաղար ծերպ կը գտնայ, ետքը անկէ դուրս ելլալու համար ասեղի ծակն ալ չի գտնուիր: Սըվի ուսկէ՞ ալ միաքս մնաց: (Բաղդիկ երբեմն գրպանէն մատիտի ծայր մը կը հանէ, թղթի կտորի մը վրայ թիւ, թուանշան կը շարէ, հաշիւներ կ'ընէ, մէկէն չելլալու ատեն-ատեն հիւանդին կը մօտենայ, սեւեռուն նայուածք մը անոր ու կը հեռանայ մէկ դի անպիտակից քայլերով—դարակ մը կը բանայ, մէկ-երկու գաւաթ ետեւէ ետեւ քերանը կը լեցնէ ու յետոյ խոշոր, քծքծուած տոմար մը ձեռքն առնելով՝ արագ-արագ թերթերը կը շրջըրջէ: Աս վիճակին մէջ հիւանդոտեսի եկող դրացի ընտանիքի մը ներկայութիւնը —Լուսիկին ուզածը աս անակնկալը ու էրկան համար ալ կատողեցնող դէպք մը):

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Ծոյները ու Պօղոս, Հեղին

Բաղդ. (Ոտքի վրայ, տոմարը մէկ կողմ նետած) Հրամեցէք, աղա Պօղոս, հրամեցէք:

Պօղոս. Բարի իրկուն, ճանըս. ճշմարիտ որ շատ պիտի

գանք, երթանք, բայց, ով էր, չեմ գիտեր, հիւանդին քով ե-
րեալը արգելուած է ըսաւ...

Բաղդ. Աղէկ ըսեր են, դուն ալ աղէկ լսեր ես:

Լուս. (Սգաւորի երեւոյթով դէպի հիւրերը) Բարի եկար, Պօղոս
աղա, Հեղին, դուն ալ բարի եկար, հոգիս, իշտէ կ'երուայ հա-
լերնիս:

Հեղ. Ըսին որ հիւանդը կը նեղուի եկող-գացողէ:

Լուս. Դրացիներ դրացնին տունը կ'երթայ, կու գայ, Հե-
ղին:

Հեղ. Ինդ՞որ է. բան-ման կ'առնէ՞ բերանը:

Լուս. Շաբաթ մըն է որ եղայ վաստակ *) չէ աղցեր ալ-
ռային տակ:

Հեղ. (Դօտին փաթէն մէկ-երկու տանձ կը հանէ) Տանձը աղէկ
է կ'ըսեն (կը տեղատեք հիւանդին բարձին քով):

Լուս. Շնորհակալ եմ, քուրճակ, Աստուած մէկիկդ պահէ
(աս միեւնոյն ատեն Բաղդին ու Պօղոսն ալ իրենց խօսուըտուըին մէջ):

Բաղդ. Ես համ չառի աշխարհքէն, Պօղոս. հարստութիւն
ունենաս, մէկ տէրտ չունենաս, կամ կորսնցնես, ուրիշ տէրտ:
Ասանկ ալ ահա, էֆէնդիմ, գաւակ-ունենալ չունենալն ալ ան-
հասկանալի ցաւ մըն էր:

Պօղ. (Խօսքը հիւանդին վրայ) Դե՞ղ, բժի՞շկ:

Բաղդ. Դեղը, բժիշկը ի՞նչ կ'ընէին որ, Պօղոս, աղան...

Հեղ. (Անդի խօսքին արծաղանդ ըլլալով) Մըյնս, իրմաւ որ
հէքիմ չէք բերեր:

Լուս. Ձի լսեցի՞ր, ինչ ըսաւ մեր խելացին, ես ըզիս բղը-
քտեցի, կերայ, ան նորէն իր խօսքը...

Հեղ. (Արգահատանք) Վհւշ, վհւշ, վհւշ:

Լուս. Է՛հ, ինչ կ'ըսես հաղա, Հեղին, Աստուած ինծի մէկ
տէրտ տուեր է կը կարծէք: Երիկ մը որ ես հայնաւ **) կ'ըսեմ,
ինք քրդերէն կը հասկնայ: Իմ մեղքէն, իմ մեղքս...

Հեղ. Իրաւ, հէքիմն ալ հոգի չի տար ամմա, էհ, թող ըլ-
լի, վերջի մնացողին աղէկ է: Հիչ նշանածը կը բնդրէ, Լուսիկ,
Փարդին չես գացեր (աս խօսքերը ցածկիկ):

Լուս. Մի՛ ըսեր, մի՛ ըսեր, եարաս մի խառնիւր, Հեղին,
պատմութիւննիս զիտէք թէ՛ աշխրբին բերանը եղաւ:

Բաղդ. Դժոխքն ալ, արքայութիւնն ալ աս աշխարհքն է
եղեր, Պօղոս, սիրելիս:

*) Եղայ վաստակ—հատեղէն կերակուր: Չաբաթ մըն է որ սնունդ չէ ա-
սեր ըսել է:

**) Հայերէն:

Պօղ. Աստուած շատ տեղ իր սիրածները կը չարչրկէ, աղան:

Բաղդ. Ո՛չ ան սէրը, ո՛չ աս չարչարանքը, ա խուզում: Հարստութիւն՝ փճացաւ. պատիւ՝ գնաց, տղայ մը՝ ան ուրիշ տեսակ մը մեռաւ ու մեռցուց մեզ: Աս մէկն ալ (աղջիկը) ահա աչքերնուս առջեւ, աս վիճակին մէջ: Օ՜Ֆ, պապա, դրացիս պոռնա չէք իմէզ տէրտէր (ոտքի վրայ, վեր վար): Ալ աս չափին անունը սէր կամ հէնէք չէր ըսուիր:

Պօղ. Մենք չենք հասկնար ատոնք, աղա դրացիս, ինզոր չենք հասկնար թէ՛ մեր պէտքն ի՞նչ էր որ ստեղծուեր ենք: Միայն՝ սա է ճշմարիտը թէ՛ բոլորը իր խաւհակը *) շինելէ ետքն է որ վարկեան մըն ալ թրգելու կը դնէ: Հարցուր թէ՛ ինչո՞ւ կ'ընես այդպէս—շատ պարզ պատասխան մը, ինչ որ հիմայ յիշեն ալ աւելորդ է կարելի է, բայց, վստահաբար, կաւապործին ըրածը դէպի իր շինած ամանը ո՛չ քմայք է, ո՛չ թշնամութիւն:

Բաղդ. ԷօՖ, Պօղոս, էօՖ (սրտնեղած):

Պօղ. Մի՛ նեղուիր, խնդրեմ, իմ վաւաքս էր որ քիչ մը հրամանքդ մխիթարած ըլլայի: Անուշ պարտականութիւն մը՝ կամ՝ աւելի շիտակը, ես հիմայ է որ քեզ շատ պիտի սիրեմ:

Բաղդ. Պունդան պէօյլէ դահա բան չի բռներ հոս: (Կլովր ցուցնելով) Անցած ձմերուկի **) մը պէս ճըլիս ***) եղեր է, բան չի բռներ:

Պօղ. Մտիկ ըրէ որ ըսեմ թէ՛ աշխարհքին բաները իրարու հետ մօտիկ յարաբերութեան մէջ մէկը եթէ արդիւնք է, միւսըն ալ պատճառ մըն է:

Բաղդ. Չեմ լսեր, չեմ ուզեր, ի՞նչ ըսել կ'ուզես, էֆէնդիմ, չեմ լսեր, վէսսէլամ:

Պօղոս. Քանի որ պարտք մըն է կատարածս, չուզես ալ պիտի ըսեմ թէ՛ արեւուն տակ, ամեն ինչ որ կայ, որոնց մենք դժբախտութիւն, թշուառութիւն ու դեռ չգիտեմ, ի՞նչ տնուններ կու տանք, մեղքէն կը ծնին: Յիշէ, սիրելիս, թէ՛ դուն քու կենացդ բոլոր օրերը ինչպէս անցուցիր: Քաւելու ատենդ չի լսեցիր անէծքները, որ ետեւդ կը խրկուէին, չի լսեցիր լացողները, քու իսկ լացուցածներուդ աղաղակը, չի տեսնօր դուրսէ գտուածները, որ ալ իրենց ծխնինքուն վրայ երբէք չէին

*) Հողեղէն փարչ:

**) Անցած ձմերուկ.—հինցած ձմերուկ որ երկար պահուելով մէջը կը փթի կամ ջուր կը դառնայ:

***) ճըլիս եղեր է—չբայել է:

ճոնչեր: Անօթի ընտանիքները, բոքիկ, գլխիբաց պզտիկներու խումբերը փողոցին մէջ, պատառ մը գարի ու կորեկ հացին կարօտովը մեռելացած, բնաւ չի հանդիպեցան աչքերուդ: Է՛հ, եղբայր, չէս հաւտար որ՝ ասոնք օր մը մէկտեղուած՝ մէկը իր էրած սրտին մուրովը, ուրիշ մը իր վերաւոր հոգուն արի-նովը բողոք գրէին Աստծու, քու անունդ տային, ու լսուէր վե-րէն: Մեղքը, մեղքը, մեղքը: Խօսք մըն ալ քեզի, Լուսիկ քոյրս: Ընդունէ որ կին մը իր ընտանիքին կէսէն աւելի կ'արժէ, եթէ չըսեմ ամբողջութիւնը: Այսպէս ընդունէ որ խոհեմ, պարկեշտ կնիկը, ինչպէս մեծ իմաստունը կ'ըսէ, իր տունը շիներ է, յի-մարն ալ դայն իր ձեռքովն է կործաներ: Ես կը կարծեմ որ աս եղածներուն մէկ պատասխանատուն՝ ու կարելի է՝ առա-ջին պատասխանատուն դուն ինքդ պիտի ըլլաս: Յաւալի յայտ-նութիւն, բայց նաև ճշմարիտ յայտնութիւն մը, որ մի-այն իմ՝ իբր քրիստոնեայ դրացի, անկեղծութիւնս պի-տի կրնար քու ուշադրութեանդ առարկայ դարձնել: Ազ-գերը իրենց օրէնքներն ունին, ժողովուրդները իրենց ներ-դաշնակութեան փոխադարձ պայմաններն ունին, ընտանիք մըն ալ իր կարգին իր ընդունուած կազմակերպութեան մէջ, համտէրտ, համերաշխ միութեան անմեռ քաղցրութիւնը պէտք է պահէ: Էրիկ մը մոլորանքի մէջ, Էրիկ մը՝ տգիտութեան մէջ, Էրիկ մը՝ այս ինչ շեղումով, գայթակու վրայ ու ան ինչ ան-խոհեմութիւնով երբեմն իր անտանելիութեան մէջ, Էրիկ մը ցորեկի լոյսէն յետոյ, գիշերը իր քուն վիճակի մէջ, վերջապէս Էրիկ մը՝ ծերութեան ու Էրիկ մը աղքատութեան մէջ, երբէք պատճառ մը չպիտի ըլլար որ կինը ատ երևոյթները իր հաշ-ւոյն ծառայեցնելու յիմարութիւնը ընէր: Չեմ գիտէր թէ կրնամ հասկցնել միտքս: Ինքը միևնոյն իմաստունն է ըսող թէ՝ աս արևուն տակ չորս բան կայ որ չեմ գիտեր, «օգին մէջը՝ արծիւին ճամբան, ապառաժին վրայ՝ օձին ճամբան, ծովուն մէջը՝ նաւին ճանբան»: Շնացող կնկան ճամբան ալ այնպէս է, կ'ուտէ ու բերանը կը սրբէ և չարութիւն չըրի կ'ըսէ: Տէրը զգաստ, իմաստուն կեանքի մը շնորհներովը պահէ մեզ բոլո-րէս: Է՛հ, երթանք, Հեղին:

Հեղ. Երթանք:

Պօղ. Մնաք բարի: Աստուած հիւանդին լաւութիւն տայ:

Հեղ. Մնաս բարի: Լուսիկ, շատ հոգ ընելու չի գար, քու-րսկ: Թեթև դռակի ըլլի, Աստուած ապաշխարանք համարէ:

Լուս. (Ընկճած ձայն) Բարի եկաք, բարի երթաք:

ՏԵՍԱՐԱՆ Գ.

Բաղդիկ, Լուսիկ, Շագլու

(Վայրկեան մը լուռութիւն—էրիկ կնիկ ինքզինքնին մէյ-մէկ կողմ կծկտցուցած՝ միայն առջեւնին կը հային):

Լուս. Ի՞նչ սայղըսըզ մարդ, մըլեա: Հապա թէ ամեն օր դար, երթար, ան ատեն ըսել է, լեռը վրան մը պիտի քաշուէինք: (Բաղդիկ չի պատասխաներ): Հիւանդի քով ասչափ առնել նստիլ: Եկեր էր որ հոգի առնէր: Հոգի առնող ճիշտ: Գէշ մանրդ: (Լուսիկ կը սպասէ պահ մը, ու միայն ինք կ'ըլլայ խօսողը) Ատ ի՞նչ խօսքեր, ատ ի՞նչ քարոզ: Վերջն ալ ի՞նչ էր ան որ դու գոաց: Շատն ալ չէր հասկցուիր ա: (Լուռութիւն): Ծշմաւրիտ որ գինով էր ատ մարդը: Եկաւ թէ չէ, ալ չի թողուց որ բերան բացուէր: Մեռած կեսարս ալ եթէ գար, ատ խօսքերը ատ լեզուով երեսիս զարնէր, ես չպիտի ներէի: Ինչ որ է, աղէկ որ չի պատաստանեցինք: Մէյ մը չոճուսին, մէյ մը խենթին, մէյ մըն ալ գինովին հետ իյնալ չըլլիր, փորձանք է:

Բաղդ. (Խորունկ, առիւծի մոռնչ մը) Հը՞մմմ...

Լուս. Գիտցող չգիտցողը գլխնուս աւետրան մը կը կարդայ ու կը հերտըկի:

Բաղդ. Անանկ է ես, խօսքեր՝ որ եկողը հիմայ ամաշկաւրա երեսնուս նետելու համարձակութիւնն ալ ունի:

Լուս. Մեզ մեր ցաւերուն հետ թողէին:

Բաղդ. Է՛, Լուսիկ, խաթուն Լուսիկ, մենք նորէն մեր բնարանին դառնանք: Եկողը գնաց, գիշեր էր նը, լուսցաւ, համբերել էր նը, համբերեցինք: Հիմայ կրնայ ուրիշ մըն ալ գալ, եկողին դէմ ալ դուռ չի գոցուիր, ել դուն, սա սնդուկիդ ամանաթները բեր, անգամ մը ես ինծի Փալ մը պիտի բանամ: Դեռ ես կը կարծեմ թէ՛ սնդուկին յատակը եթէ աւլենք, ստըկենք, հարիւր յիսունէն մօտ երկու հարիւր ոսկիի չափ հին թթխմոր պիտի գտնենք: Ատ գրաւները իրենց տէրերուն կը յանձնենք մենք ալ գլխու վրայ *), անոնցմէ առնելիքնիս կը փրցնենք, կը վերջանար: Աս անգամ, էը, թող ըլլէր որ բարիկենդանէն ետքը, ատեն մըն ալ մեծ պահքին աղ-հացովը ապրէինք: Աշխարհք է, կը պատահի եղեր: «Մի՛ ըլլիր ուրիկ կ'ըսէ, որ չուտես խոտիկ»: Անգին մեր աղա տղին, Գիրգորին հացը կը մնար: Աստուած մեծ է: (Լուռութիւն, Լուսիկ հիւանդին հետ): Ատ

*) Անմիջապէս:

հիւանդն ալ խօշ մինչև վերջը, ատ վիճակին մէջ չէր մնար: Ե՛ւ, շուտ ըրէ:

Հուս. (Ականջը հիւանդին բերնին տարած՝ անկէ բան մը լսելէ ետքը) Տամ, աղջիկս, տամ: Հոգիս ուզէ, կեանքս ուզէ, ուզէ որ կրակը նետուիմ. ուզէ, միայն ուզելու եղիր, որ ես զիս ան պահուն ջուրը նետեմ: (Մէկ կողմ) Աղբօրը պատկերը կ'ուզէ որ կարօտը առնէ (փղծկում): Ի՞նչ ընեմ, Աստուած, չի լամ, չցաւիմ եթէ, մայր կ'ըլլիմ, չպիտի՞ պատժես: Կը մեռնի զաւակս, պէմուրատ կը մեռնի, ուզածը աղբօրը պատկերը միայն թէ՛ ան տղուն՝ նշաններն ալ կ'ուզէր: Տամ, տամ... Ինչո՞ւ չի տամ, մի՞ է արգիւտող վերջին անգամ, թող աղբարն ալ, նշանածն ալ մէկտեղ տեսնէր: (Պատին վրայէ զոյգ մը պատկեր կ'իջեցնէ որքան կարելի է երկան աչքերէն վրիպեցնելու ջանքով, կամայցուկ մը աղջկան ձեռքը կու տայ: Նազու աս պատկերները աչքին դէմ բռնելէ յետոյ կը ձգէ վերմակին վրայ):

Բաղդ. Անգամ մըն ալ ըսեմ, կնիկ: Մնդուկիդ բալլին:

Հուս. Աղբօրը պատկերը տուի որ վերջին կարօտը առնէ (յուզմունք, քմուռք): Կոխած գետինս չեմ տեսներ, նստեմ՝ նըստած տեղս կը քարանամ, քալեմ՝ ճանրաս կը կորսնցնեմ:

Բաղդ. Մէյ մը ես երթամ, ես հայիմ, խօշ ատ մնդուկ ըստածն ալ երկաթ քացայ մը չէր ա (ներս կ'երթայ ընդոստ ու վայրկեան մը վերջը խաշորկիկ սնդուկ մը քաշքշելով՝ հիւանդին կեցած տեղը կը բերէ): Տէ՛հ, կնիկ, սըվի մնդուկը ահա: Դուն ալ ասանկ չէ՞ր ուզեր, չէ՞ որ կ'ըսես թէ՛ նստես, կը քարանաս, քալես նէ, ճանրադ կը կորսնցնես: Հրամմէ... բալլին:

Հուս. Ըրէ, ըրէ: Ալ ի՞նչ որ իայ, ի՞նչ որ կ'անցնի մըտքէդ... ուզես հիմայ խոհանոցին բաներն ալ դուրս կը թափես:

Բաղդ. Կ'ընեմ ա, պիտի ընեմ ա: Դուն միտքդ զրեր ես որ էն ետքը զիս խենթցնես ալ... խենթցուցեր ես արդէն... խենթ մը ի՞նչ կ'ընէ... կամ՝ էրիկ մը ինչո՞վ կը յիմարանայ, քանի որ քեզի պէս անհոգի քածի մը կին անուճը կու տայ:

Հուս. Անհոգի՛, Խս, թէ՞ դուն, որ հիւանդն աս հալին մէջ, քովը քնճիկն ալ չուզեցիր մօտենալ: Խօսքդ ճանչցիր, խօսքդ, խօսքդ... Տեսա՞ր, հիմայ տեսա՞ր որ մնդուկը մնդուկ է, տեղն է եղեր. գող չէ տարեր:

Բաղդ. Բալլին...

Հուս. Զիկայ, կորսուեր է:

Բաղդ. Բեր մէյ մը, ես հայիմ քովերդ:

Հուս. Հայիր, հասկցիր (Թող կու տայ որ հայի):

Բաղդ. Եթէ ոչ, պահեր ես:

Հուս. Ինչո՞ւ, ի՞նչ պատճառ... Մնդուկէս սիրականս պիտի ելլար:

Բաղդ. Ատ մէկը սնդուկդ չես պահեր, գիտեմ...

Հուս. Խօսքդ ճանչցիր, խօսքդ, խօսքդ: Դուն սիրտ չունի՞ս, դուն Աստուած չունի՞ս, հոգին բերանը հիւանդի մը գըլխուն վերեւ լսուած, տեսնուած բան է աս անօրէնութիւնները:

Բաղդ. Բալլին, Լուսիկ:

Հուս. Մնդուկն ատ է, բալլին ալ դուն ճարէ, չի հաւըտցէ՞ր որ կորսուեր է ըսի:

Բաղդ. (Ոտքը վտօնը կը վարնէ) Բալլին, եթէ ոչ հիմայ ցրեղ ցրեղ կ'ընեմ (մէկ-երկուք արագելով սնդուկին կողքին): Տախտակներն ալ մէկ մէկ աչքդ կը կոխեմ:

Հուս. (Հիւսնդը ցնցուած այն ծայներէն ընդօստ ցաւադին առողմը կը լսցնէ, Լուսիկ շուտով մը անոր մօտը կ'ամփոփէ ինքզինք) Սընդուկը կոտորեալուդ՝ եկուր առաջ աղջկանդ փորոլուն վրայ տըրորէ, կը խալլեախ: Արընտէր, արընտէր. կը մեռնի ահա, վույ, տունս աւրաւ, բան մի եղաւ չոճուխս, վույ. Նաղլու, Նաղլու... (աղջիկն աւանդիւր է հոգին, լաց, վայնասուն):

Բաղդ. (Յիմարացածի քրտնալեզուն մէջ բարկացած՝ չուզելով իսկ այն կողմը ուշադիր ըլլալ, ոտքովը բաժ-բաժ սնդուկին կը վարնէ, կը փրցնէ վրայի կափարիչը, ծրարները մէկիկ մէկիկ հոնելով դօրս կը տանէ) Կեցիր որ հասկցնեմ քեզի, անամօթ լկտի... հիւանդ է... բալլին չիկայ... սուսմեռ կ'ըլլին, լաց կը փրցնեն, կեցիր... դուն լալու եղիր: (Թուղթ մը կը դտնէ ան դուրսը նետածներուն մէջէն, սրահարանը կը սրտոնէ ու աչքին դէմ կը բռնէ) Անանկ է ետ, ալ թող չի խենթնայ Բաղդիկ, ալ թող չի բզբտէ ինքզինք: «Անուշիկ Փառէնս. երկու օր է որ մօրս հետ կը կուտիմ, մօրս մազերը վար կը բերեմ, կը պահանջեմ որ վերջին եկողներուն հետ բեզի աստեղէն աղամանդ մատնի մը խրկենք»: Կը խըրկես, ինչո՞ւ չէ, ո՞վ պիտի արգելէր որ, մատնի՞ ու աղամանդ մատնի... է, ալ ի՞նչ: «Եկողները չսպասեցին ախըրը, հաղիւ կըրցանք տոպրով նուշ ու դոյզ մըն ալ բուրդ գուլպայ իմ ձեռքովս շինուած ճանբայ հանել»:—Էօյլէ ետ, նուշ ալ, շաքար ալ, դահա, դահա: «Ատ գուլպային ամեն մէկ կուլթը պատմութիւն ունի, անուշիկս, վերջին բերանը խծպելուս կուշտ մըն ալ լացեր եմ»:—Սըվոր նայէ, սըվոր, սա ջլդիկին նայէ, զըպրոց խրկեցանք, գիր, կարդալ սորվեցուցինք որ տունս տեղս սրիկայի մը, փիճի մը տէվը ու թէսլիմ ընելու տէֆթէրներ գըրեն ետեւս: Աֆէրիմ, բայց աս չէր բնգըածս (Նամակը կը խըրտէ, կը ճմռթի, կը նետէ ու կը շարունակէ միւսնոյն կատարողութիւնով սնդուկին մէջ քնորոտութիւններ ընել):

Հուս. (Աս միեւնոյն ատեն մայրը աղջկան մարմինն վրայ իր կսկծանքներուն մէջ): Վախ, ձագճուկս, ես մեռնէի, քու տեղդ ես մեռնէի, պէմուրադ մեռար, անէճէլ մեռար: Նազլճու, Նազլճու, նազերդ սիրեմ, աղջիկս, մազերդ սիրեմ. աղուոր պոյրդ, աղուոր աչքունքդ սիրեմ: Ձագ չեղած փիճիկիդ մէջ խեղդուար, եաւրճւմ. արե չի տեսած կոկոնիդ մէջ չորցար: Ա՛խ, սիրտս անցաւ, ահուաս կը կղպուի հիմայ: Աղբօրն ու նշանձին պատկերներն ուզեց, որ վերջին պահուն աչքին բռնէ: Ան ի՛նչ նալուածք, ան ի՛նչ կարօտ, ան ի՛նչ հեկոտուք: Ի՛նչ խորհեցար արդեօք, ի՛նչ անցուցիր մտքէդ, հոգիս, երբ արցունքներուդ մէջնէն անոնց կը հայէիր: Լուիկ իրենց հետ, իրենց դիմացը, ու դուն չի տեսար անգամ թէ՛ անոնք քեզի պատասխանելու համար շրթունք շարժէին: Պատկերները՝ թոյլ, դողդաղացող մատուլներով բռնած, մէկիկ-մէկիկ վար ընկան ձեռքէդ, ալ չի կըցար հայիլ, ու տեսայ թէ՛ արցունքներդ արնով խառնուած՝ կարկահատի պէս կը թափէին երեսներէդ վար: Աղուոր Նազլուս, անուշիկս: (Արգողկ ու Պօղոս իրենց կնիկներուն հետ ներս կը մտնեն ու տրտում սոսկանքներու մէջ ականատես կ'ըլլան մորմորիչ տեսարանի մը, որ մէկ կողմէն մայրը աղջկան վրայ ընկած՝ անոր ձեռքերը, երեսները ու հանդիպած տեղը համբոյրներով կ'ոգողէ ու կու լայ մեծ ծայնով մը—միւս կողմէն ալ Բաղդիկ միեւնոյն տոնով իր պահանջները կ'ընէ կնկանէն):

Բաղդ. (Մտղուկին վերջին ծրարը քակտելով մէկ կողմ նետելէ յետոյ) Ո՞ւր են, վերջապէս ո՞ւր պահուած, ի՞նչ եղան բաները, ոսկի, արծաթ, աղամանդ, թանկազին երեղէններու ամբողջութիւն մը, որուն մէկ մասը հնչուն դրամ, կեանքիս, պատուիս վերջին փրկադիւնը, ի՞նչ եղաւ, ո՞վ գողցաւ, Լճափիկ, Հոս բան չիկայ ահա (ոտրով միշտ հարուածներ սնդուկին), ըսէ, ի՞նչ ըրիր:

Հուս. Ա՛խ, ախ, ախ, ախ, աման, աման, աման, ես ալ, ես ալ... ալ թող ինձի հարամ ըլլի աս արեւ, աս աշխարհքը (վայս'ք անընդհատ, սիրտը կը ծեծէ, մաշկը կը փետտէ):

Բաղդ. Ախր, ամանը ուկանջս չեն մտներ, անդուկին մէջ պահուածները: Հիմայ կը հասկնամ թէ՛ ինչու կը փախփախէր, ինչու չէր տար բալլին:

Պօղ. Բաղդիկ, Բաղդիկ, մեռելին խնայէ:

Բաղդ. Ձէ, դրացի, չէ, մեռած չէ ան, անոնք՝ մայր, աղջիկ ամեն օր ալ այնպէս սուտ-մեռ, սուտ-սատկիլ կ'ընեն: Մեռեր է, բայց եթէ մեռեր է, իրաւ է, ինձի ի՞նչ, իմ ինչս էր ան. կ'աղաչեմ, մի՛ խօսեցնէք, զիս, իմ ցաւերուս, իմ անխոստովանելի, անգարամանելի ցաւերուս ձգեցէք: Ձգեցէք, ձգեցէք: Հողը միայն կը պարտըկէ աս տէրտը, քարին տակ պիտի լռեմ:

Վարդ. Եթէ չէ փախուցեր աս մարդը, ես թող շուն դառնամ, Պօղոս:

Բաղդ. Մեռեր է...

Վարդ. Ձեռն հաւտար, մարդ: Գողջը անցիր ու հասկնալ փորձէ: Լերան զազանն անգամ իր սատկած ձագը հոտուրտալու սիրտը կ'ընէ: Ըսէ, եթէ խենթ մըն ես, ես լաւ կապել դիտեմ, աս ալ թող երկուք ըլլար: Ուժէս ալ տեղեկութիւն ունիս ա:

Բաղդ. Մեռեր է... Բաղդի^օ կն հապա—միջ մնաց, միջ—ի^օ նչպէս: Թող ըսէր ձեզի, թող խոստովանէր թէ՛ ինչ եղան սնդուկին իրեղէնները: Դաշտին հարստութիւնը տղաս փշացուց, տունինը ան աղջիկը հալեց, սնդուկինը մի:

Դոհար, Վարդուկ. (Անդին լսելի ձայնով մը) Մեղայ, Տէր, մեղայ, Տէր:

Դոհար. Աս գէշ մարդուն պէս չիկայ, չիկայ, Հեղին, դուն չես գիտեր: Մըյեմ... աշխարհքը ասանկ բան ալ կայ:

Լուս. Ըսէք ատ մարդուն թէ՛ սնդուկին եղածները նորէն իրեն համար, իր պատիւին համար խարճուեր է: Փեսան աղջիկը չէր առներ, մայրիկ, շան տղին բերանը անուշցնելու համար ելայ, իմ խելքովս բան մը ընեմ ըսի, խէլէթ տուի, հէտիյէ տուի որ խաղքութիւն մը փակուի: Կնկայ խելք. ինչ գիտնամ: Ես իմ ըրածիս չիհաւնեցայ ամմա, ալ անգամ մը ատշափ մեղք, ատշափ յանցանք գործած գտնուեցայ: Ելաւ ձեռքէս, ու հիմայ ձեռքս ալ, գիրկս ալ ի^օ նչ մնաց որ, ցաւուս մը մէկը ասկէ (մեռելը ցոյց տալով) պզտիկ, մըր տարուելիք տէրտ ու խշխշ: Ըսէք, ըսէք ատ մարդուն, եթէ ատոր համար զիս սպաննէր պիտի, թող աւրինս իրեն հալալ ըլլի, հերիք որ մէկ ատեն, մէկ մահով զաւակիս հետ մէկտեղ նոյն գերեզմանը պիտի դրուիմ: Փեսին խէլէթ տուի:

Բաղդ. Կը լսէք հիմայ, դրացներ, լսեցի՞ք նըվոր բայատորութիւնը: Պատիւս Շահէնի մը ծախելէ ետքը հարստութիւնս ալ, վերջին տասնոցս ալ անմը... ու հիմա դմբ էք պահանջողը որ Բաղդիկ մոռնայ, չի լայ ինքզինք ու սատկած քածին վրայ արցունէ *): Ան՝ չէ իմա, ինծի չի վերաբերիր:

Պօղոս, Վարդ. Ամօթ, ամօթ (երկուքն ալ կը թրնեն երեսը) Թնւ, Թնւ:

Բաղդ. Աշխարհքը շատ բան լսեր է, աս մէկն ալ հա ինծի վիճակ ձգեցին որ ես խոստովանիմ: Թքացէք, ապտակեցէք ալ, բայց՝ այնպէս է: (Լուսիկ աղջկան վրայ ընկած՝ նուաղուն, քովի

*) Արցունել—արտասուել:

կնիկները անոր երեսին ջուր կը սրսկեն, քթին ալ թան մը կը ծխեն, որ սթափի, արթննայ, բայց)...

Վարդ. Բայց դուն ալ կը տեսնես թէ՛ հիմայ այն մէկն ալ կը լիննայ, խեղճ մայրն ալ:

Պօղոս. Գնա, Վարդապետ, գնա, շուտ ըրէ, ժամկոչը, տէր-տէրը... մենք չենք կրնար, ու կը վախցուի որ հիմայ ուրիշ նոր դէպքի մը վկայ հրաւիրէին մեզ:

Վարդ. Բռնենք, դուրս հանենք մէյ մը—վերջը...

Բաղդ. Դուրս... զիս մի տունէս դուրս ալ պիտի քշէք և հար:

Վարդ. Դժոխքին ճիշտ մէջտեղը, քեզի համար անկէ աւելի տեղ չեմ ճանչնար: (Բաղդիկ կը բռնուի աս երկուքէն, բռնի դուրս կը քաշըշուի. մոռնչներ, հայհոյութիւններ եւայլն: Ճիշտ աս պահուն կը լսուի զանգակի ձայն մը, որ աս մահը կը գուժէ):

ՏԵՍԱՐԱՆ Դ.

(Յուզարկաւորներու անշուք անցք մը—Նազուլին մարմինը պատանքուած՝ առանց սնդուկի, գերեզման կը փոխադրեն—ցուրիքներուն վրայ ու փողոցին երկու կողմի պատուհաններէն բազմութիւն մը, շատ աւելի կնիկներ):

—Վո՛ւշ, վո՛ւշ, վո՛ւշ, վո՛ւշ...

—Մէրն ըլ հեաը, մէրն ըլ, մէրն ըլ:

—Օղո՛ւլ, օղո՛ւլ, օղո՛ւլ:

—Խեղճ աղջիկը պէ՛տուբադ գնաց...

—Մի հայիք, աղջիկ, մի հայիք, մարդուս սիրտը...

—Էնոր սըֆթայ պապուն շըլլին տակը մնար որ:

—Պապո՛ւն—չէ՞ նը մօրը:

—Երկուքին ըլ, ի՞նչ մեղքս ծածկեմ:

—Պապը խենթցեր է, կ'ըսեն:

—Տես, մըյեա, տես, տես, տես, մեղան, Տէր, մեղան, Տէր, նըվ ըլ նշանածն է ելեր Ամէլըզան կ'երթայ, մէրն ըլ հետն է, կը տեսնաք, իրարու ռմատ ըլ տի դային, մըյեա, կու լայ ըլ-գիտես թէ: (Փառէն ու մայրը ծանթու ըզզեստներ հազած՝ անանկ կը պատահի որ ատ օրը ելեր, իրենք ալ Ամերիկա կ'երթան: Փառէն կու լայ կարծես դադաղին «ի տես», բայց ցուրիքներէն իր վրայ նետուած քակորի ու քարի կտորտանքներէն ազատելու համար կը փոխէ ծանթան, ուրիշ կողմ մը կ'անցնի արագ քայլերով մը):

—Ճուռըս կոտրտէր, ը՛ն, շան փիճ, հէրիֆին տունն աւ-րեցիր, աջինին արընտէրն եղար, ելար հիմայ ըլ կը հերտը-կիս:

—Վայ, շան ձագ, վայ, «զալըմ տղայ»:

—Տուշմիս ըլ չի ցուցնէ էտ կրակը:

—Հիմայ վո՛վ լաս, կնտէք:

—Շիտակն ըսեմ նէ, ես աղջիկը կը մեղքնամ: Էնոր մօրը միսը քէլփէրթիով քաշես, քէլփէրթիով...

ՏԵՍԱՐԱՆ Ե.

(Բաղրիկ յիմադուծիւնը ծայր աստիճան հասուցած՝ ինքզինք կը կտիտ վերջապէս իր տանը ձեղունէն: Վարդուկ հանդիպաբար անոր տունը այցելելու առիթով, սոսկալի անակնկալի մը ղէմը կը գտնուի):

Վարդ. Աջ ձեռքը ղէպի ան կտխուողին երեսին վերցնելով): Մինչեւ հող կրնայիր մագլցել ու կենալ արդէն, ո՛վ անօրինակ վատութիւն, ատկէ անդին. վերը՝ գիտէիր թէ՛ քու տեղդ չը պիտի ըլլար ապահովապէս: Վերը՝ արեւին ու աստղերուն բարձրութիւնը, ու դեռ անկէ ալ վեր, շուշան անմեղութեան ու պսակուած արդարներուն հայրենիքը, քեզի հիւրընկալ ապաստանարանը չպիտի ըլլար: Դիտէիր: Դուն հող ատ դերբուկ դիրքին վրայ նպատակով մը կեցար ու կապեցիր ինքզինքդ որ ոտքիդ տակ բացուած անդունդին խորը խփուելէ առաջ քու արաքքներդ մոռցող՝ մօտէն ղէմքեր մը նշմարես, բայց՝ չէ... աշխարհք ներէ քեզի, ես չեմ ներեր. Աստուած ներէ, քեզի աղջիկդ չպիտի ներէր:

ԹԼԿԱՏ

ԼՐԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ *)

IV

Ասածներինց պարզ է որ քաղաքական մասուլը Անգլիա-
յում վաղուց խոշոր արդիւնագործութեան շարքն է անցել:
Որպէսզի լրագիրը կարողանայ ամբողջ Մեծ Բրիտանիայում հէնց
լոյս տեսնելու օրը վաճառուել, որպէսզի այս լրագիրը բաղկա-
ցած 8 երեսներինց (56 մեծ սիւնեակ) վաճառուի երկու կողմէ-
կով, և որպէսզի այդ գինը նոյնը լինի թէ Լոնդոնում և թէ
Շոտլանդիայի ամենավերջին անկիւնում,—դրա համար անհրա-
ժեշտ է լրագրական արդիւնագործութեան բարձր աստիճանի
համակենտրոնացում, դրա համար անհրաժեշտ է որ վաճառուին
հարիւր հազարաւոր օրինակներ: Համակենտրոնացման հէնց
այդ իրողութիւնն է պատճառը որ Լոնդոնում իր 6 միլիոն
ազդաբնակութեամբ, այդքան չնչին է ամենօրեայ քաղաքական
լրագրների թիւը. 1855 թուականին դրանց թիւը հաւասար էր
15-ի, 1883-ին՝ 18-ի, իսկ ներկայումս 19-ի: Որպէսզի նոր լը-
րագիր հիմնուի, պէտք է միանգամից ծախսել հարիւր հազար-
ներ, եթէ ոչ միլիոններ. իսկ լրագրի նման անհաստատ գործի
վրայ այդպիսի մեծ դրամագլուխներով ընդ անողների թիւը
իհարկէ շատ չնչին է: Ահա, իմիջի այլոց, թէ ինչու Անգլիա-
յում մինչև այժմ չկայ ամենօրեայ սոցիալիստական լրագիր:

Լրագրական գործը իբրև խոշոր արդիւնագործութիւն
ցոյց տալու համար ծանօթացնենք Եւրոպայի ամենամեծ լրագը-
րի՝ Times-ի տպարանական գործունէութեան հետ: «Times» լը-
րագիրը բաղկացած է 20—28 ահագին երեսներինց. այդ լրագը-
րի տեխտի բառերի միջին թիւը հաւասար է 113,000-ի, չհա-
շուած յայտարարութիւնները որ իւրաքանչիւր համարում բու-
նում են 60—80 սիւնեակ **): Բացի ամենօրեայ «Times»-ից նոյն
տպարանում տպագրւում են այդ լրագրի հետ կապուած հե-

*) Տե՛ս «Մուրճ», № 4

**) «Մշակ»-ի ամբողջ մի համարը բաղկացած է 16 սիւնեակինց: Ծ. Փ.

տեղալ հրատարակութիւնները. «The Male» (գինը 2 պենս—8 կոպ.) որ լոյս է տեսնում շաբաթը 3 անգամ և կազմում է «Times»-ի երկու օրուայ համառօտութիւնը. «Times Weekly Edition» (գինը 2 պենս) որ լոյս է տեսնում շաբաթը մի անգամ և պարունակում է շաբաթուայ ընթացքում «Times»-ում տպուած ամենակարեւոր նկատողութիւնները և յօդուածները, և վերջապէս, «Literature» (գինն է 6 պենս), որ ներկայացնում է համաշխարհային գրականութեան ամենշաբաթեայ բնական տեսութիւն: Բացի այդ, իբրև «Times»-ի կողմնակի հրատարակութիւններ են «Times Law Reports», այսինքն դատաստանական լրագիր, երկու կիսամեայ գրքեր—«Issues», այսինքն բոլոր նոր ակցիոներական ընկերութիւնների համարատուութիւն, և «Financial Half Year», այսինքն ֆինանսական կիսամեայ հանդէս: Վերջապէս, նոյն լրագրի հրատարակութիւնն է «Times Atlas», հիմնալի քարտէզ 26 պրակներէից, յատուկ հրատարակութիւն «Encyclopedia Britannica», 1899 թուականին լոյս տեսած հսկայական հանրագիտարանը, «Ceintury Dictionary», վեց հատոր «History of the War in South Africa» ևայլն. «Encyclopedia Britannica»-ի (բրիտանական հանրագիտարան) տասներորդ հրատարակութիւնը բաղկացած 35 հագին հատորներից նոյնպէս տպուած է «Times»-ի տպարանում:

Դժուար չէ հասկանալ թէ որքան մեծ պէտք է լինեն թէ «Times»-ի տպարանը և թէ նրա գրասենեակը, որպէսզի կարողանան պլուխ հանել այդ տպագրական և հրատարակչական հաշիւն աշխատանքի մէջ:

«Times» լրագիրը միացրուած է սեփական հեռագրական թիւով Բերլինի և Պարիզի հետ: Եւրոպայից, Ամերիկայից, Հարավային Աֆրիկայից, Աւստրալիայից «Times»-ի, թղթակցութիւնները ոչ այլ ինչ են, եթէ ոչ վիթխարի հեռագիրներ, որոնք լրագրին ահագին փողեր են նստում: Այդպէս օրինակ 1878 թ. Բերլինի դաշնագիրը տպուած էր «Times»-ում իսկոյն, հէնց որ մեծ պետութիւնների ներկայացուցիչները Բերլինում ստորագրեցին այդ դաշնագիրը: Այն հեռագիրը որով ուղարկուած էր «Times»-ին այդ դաշնագիրը, նստել է լրագրին 8000 բուրլի *): «Times»-ի պարիզեան թղթակից Բլովիցը պատմում է որ 1882 թուականին Կոլումբիայից ստացուած մի հեռագիր նստեց այդ լրագրին 40,000 ֆրանկ: Նոյն տարին միայն նշխարաւոր ստացուած հեռագրները նստել են կէս միլիոն

*) Այսինքն տեղի քան «Մուրճ» ամսագրի ամբողջ բաժանորդագրութիւնը 1903 թ. ընթացքում... Ե. Դ.

Ֆրանկ: Սակայն այդ բոլոր թուերը չնչին են թուում համեմատութեամբ նրան, ինչ որ «Times» և միւս խոշոր լոնդոնեան լրագրները ծախսում էին հեռագրների վրայ Հարաւային Աֆրիկայից վերջին պատերազմի ժամանակ: Ամեն օր նրանք տպում էին վիթխարի հեռագրներ «սեփական թղթակիցներից» պատերազմական բեմի զանազան տեղերից, և այդ հեռագրների իւրաքանչիւր խօսքի համար վճարւում էր 3 շիլլինգ (1 ր. 20 կոպ.): Այդ ծախքերին պէտք է աւելացնել զինուորական թղթակիցների պահանջութեան ծախքերը, որոնք ահագին են, որովհետեւ անգլիական զինուորական թղթակիցն. ըն սովորել են փող չխնայել, երբ հարցը վերաբերում է տեղեկութիւններ ձեռք բերելուն և այդ բոլորը իր լրագրին աւելի շուտ հաղորդելուն, քան մրցակիցները:

Անգլիական պարլամենտում «Times»-ը ունի 16 սղագիր (ստենօգրաֆ): Պէտք է նկատել, որ անգլիական պարլամենտը չի տպում սեփական սղագիր տեղեկագրներ և այդ բացը վաճուղ ի վեր լցւում է «Times»-ի նախաձեռնութեան շնորհիւ: Պարլամենտի նիստերի ժամանակ այդ լրագրի 16 սղագրները հերթով աշխատում են խումբ-խումբ: Իւրաքանչիւր 15 րոպէում սղագիրը մօտենում է «Times»-ի տպարանի հետ միացրուած հեռախօսին և բարձր կարգում է ընդդիմախօսութիւնների գրի առած մասը: Տպարանում իրարից առանձին ձայնարգել անջրպետներով բաժանուած գրաշարները անընդհատ շարում են սղագրների կողմից հեռախօսով հաղորդածները: Պարլամենտի այդ ընդդիմախօսութիւնների մաս-մաս շարուածքները իսկոյն յանձնւում են գլխաւոր խմբագրին, որ տեղն ու տեղը հաղորդում է առաջնորդողներ գրողներին՝ լրագրի շարուող համարում ցանկալի առաջնորդողների ծրագիրը: Առաջնորդողներ գրողները գիշերուայ ժամի 12-ին—իւրաքանչիւրը նստած իր առանձին բիւրօում՝ կաղմում են առաջնորդող յօդուածներ, որոնք մաս-մաս իւրաքանչիւր 10 րոպէում ուղարկում են տղայ-սուրհանդակների միջոցով տպարան, ուր անընդհատ աշխատում են գրաշարների չորս յատուկ խմբեր սովորական չորս առաջնորդողների համար: Պարլամենտի նիստերը ոչ սակաւ կէսգիշերից անցնում են, նրանց մասին տեղեկագրները և հեռագրները ոչ սակաւ հասնում են առաւօտեան ժամի 2—2½-ին և այնուամենայնիւ առաւօտեան ժամի 5-ին արդէն «Times»-ի առաջին հրատարակութեան մէջ գրանք սլանում են յատուկ գնացքներով Բերմինգհամ, Լիւերպոլ, Մանչեստր, Գլասգօ, Էդինբուրգ և Մեծ Բրիտանիայի այլևայլ անկիւնները:

Յոյց տալու համար թէ ոքան մեծ է անգլիական լրագրը—

ների նախաձեռնութեան ոգին, բերենք մի իրողութեան. 1810 թուականին անգլիական գլխաւոր մինիստր Պիտտ հրամայեց պոստում պահել «Times»-ի համար ցամաքից եկած բոլոր թղթ-թակցութիւնները, որպէսզի մինիստրութեան օրգանները կարողանան նորութիւնները աւելի շուտ տպել: Այն ժամանակ «Times»-ի խմբագիր Ջոն Ուալտերը հիմնեց սեփական պոստ, սեփական հեռագիր, սեփական սուրհանդակներ, սեփական նաւեր և այդպիսով ապահովեց իր անկախութիւնը կառավարութիւնից:

V

«Թայմզ»-ի նման են կազմակերպուած և Լոնդոնի միւս մեծ լրագրները: Այնտեղ ևս լրագրական բանուորի համար հիմնական պայմանն է հանդիսանում ճշտութիւնը և ժրջանութիւնը: Թէ այդպէս դրուած գործը ինչպիսի տիպարներ է մշակում, այդ կարելի է տեսնել Ջոն Դելէյնի օրինակում, որ 37 տարի խմբագրելով «Times»-ը ոչ մի անգամ չի թողել խմբագրատունը, չկարդալով ամբողջ համարը *) և չտեսնելով այն ամբողջապէս տպուած վերջացած: Եւ լրագրական այդ կատարելագործուած աշխատատեղերն ստանում են փառաւոր վարձատրութիւն. «Times»-ի մշտական աշխատակիցները 7—15 հազար բուրլի, բաժինների խմբագիրները 30—40 հազ. բուրլի, իսկ գլխաւոր խմբագիրը ի հարկէ դրանից էլ աւելի մեծ վարձատրութիւն:

Եթէ Լոնդոնում լրագրական աշխատանքը մշակում է ջանասիրութեան և ճշտապահութեան հերոսներ, արտասահմանեան և մանաւանդ պատերազմական թղթակիցների համար բոլորովին այլ յատկութիւններ են պահանջւում: Այդ թղթակիցները ոչ սակաւ ստեղծում են լրագրի փառքը, կրկնապատկում և եռապատկում են նրա ընթերցողների թիւը, իսկ այդ բանին հասնելու համար պէտք է ընդունակ լինել խիղախութեան, հնարադիտութեան և սրամտութեան հրաշքներ գործելու: Այդպէս Օ'Րէյլի լողալով անցաւ 1848 թ. փետրուարի 4-ին գիշերը մի ուղորմելի մակոյկի մէջ Լամանշը, որպէսզի առաջինը Անգլիա սնանի ֆրանսիական յեղափոխութեան լուրը: «Daily News»-ի պատերազմական թղթակիցները տեղեկագիրները ֆրանս-պրուսական, եգիպտական, հարաւ-աֆրիկական պատե-

*) «Թայմզ»-ի իւրաքանչիւր համար տառերի թիւով հաւասար է ին 8⁵ 300—400 երեսանոց զրքի:

րազմների ժամանակ և մանաւանդ Մակ-Գախանի հեռագրները Բուլղարիայից 1876 թուականին, ուր նա կարողացաւ մուտք գործել և իբրեւ առաջինը պատմել աշխարհին այդ երկրում թիւրքերի կատարած զաղանութիւնների մասին, — ստեղծեցին այդ թերթի համբաւը և նպաստեցին նրա լայն տարածման: «Daily Telegraph», որ այժմ միացած է սեփական կաբելով և թելաւոր հեռագրով Նիւ-Իորկի, Պարիզի և Վիեննայի հետ, ուղարկեց իր հաշուով ճանապարհորդ Սմիտին Աբխազիա, իսկ 1871 թ. «New-York Herald»-ի հետ միասին՝ թղթակից Ստենլինն *) Կենտրոնական Աֆրիկա Լեւինգստոնին գտնելու համար:

Բոլորը յիշում են և՛ «Daily Telegraph»-ի հռչակաւոր թղթակից էմ. Դիլլոնին, որ 1894—1895 թուականին չնայած թիւրքաց կառավարութեան յարուցած բոլոր խոչընդոտներին կարողացաւ մուտք գործել Թիւրքիա և Եւրոպայի ականջին հասցնել այդ դժբախտ երկրում տեղի ունեցած եղեռնագործութիւնների մասին: Դիլլոնի յօդուածների շնորհիւ Թիւրքիայի աներեւակայելի խժոժութիւնները Հայաստանում մերկացրուած էին քաղաքակիրթ աշխարհի առաջ: Այդ գրուածքները Անգլիայում զայրոյթի այնպիսի փոթորիկ բարձրացրին, այն աստիճան գրգռեցին Գլադստոնից ղեկավարուող հասարակական կարծիքը, որ այն ժամանակուայ պրեմիէր (առաջին մինիստր) լորդ Սոլսբերին պատրաստ էր պահանջել Թիւրքիայից Հայաստանի ազատումը. դժբախտաբար պետութիւններից մի քանիսի դժկամութիւնը արգելք դրեց այդ հարցի արդար լուծման առաջ:

Հայաստանից Դիլլոնը նոյն «Daily Telegraph»-ի յանձնարարութեամբ գնաց Սպանիա, սպանո-ամերիկական պատերազմի նախընթաց օրը: Սպանիայից գնաց Կրետէ. ապա նա ներկայ է լինում Հաագայի «խաղաղ կոնֆերենցիան», Պարիզից թղթակցութիւններ է գրում Դրէյֆուսի դատի մասին, եւրոպական զօրքերի հետ մտնում է Պեկին բոքսէրների ապստամբութեան ժամանակ... ահա այդչափ մեծ է անգլիացի թղթակցի աշխատելու ընդունակութիւնը:

VI

Եթէ անգլիական մամուլը հասաւ այդպիսի նշանաւոր

*) Վախճանուեց այս տարուայ ապրիլին: Լեւինգստոնից տեղեկութիւններ չունէին սկսած 1869 թուից և միայն զիտէին որ նա գտնուած է Կենտրոնական Աֆրիկայում, Տանզանիկա լճի մօտերքում: 1871 թուականին Ստենլին յաջողութիւն գտնել Լեւինգստոնին և նրա հետ միասին վերջացնել այդ լճի հետապնդութիւնը: Ե. Փ.

զարգացման, եթէ նա ահագին ազդեցութիւն է ձեռք բերել ոչ միայն իրա Անգլիայի կեանքում, այլև միջազգային գործերում, դրանով նա նախևառաջ իհարկէ պարտական է մտքի այն անսահման ազատութեան որ թագաւորում է Անգլիայում վաղուց ի վեր:

Մտքի ազատութեան նշանակութիւնը հիանալի կերպով հասկացել էր դեռ Միլտոնը (1608—1674). «Տուէք ինձ ազատութիւն ճանաչելու, սեփական մտքերը արտայայտելու և քննելու գործերը իմ խղճի համեմատ,—տուէ՛ք ինձ այդ ազատութիւնը, որ աւելի բարձր է բոլոր միւս ազատութիւններից»—բացազանչում է նա իր «Արիտագիտիկէ» գրուածքում:

Անգլիայում գրաքննչութիւնը (ցենզուրա) վերացւում է 1695 թուականին: Այդ բանից սկսում է մամուլի բարգաւաճումը Անգլիայում թէ քանակութեան և թէ որակի կողմից: 1855 թուականին վերացրուած էր լրագրների վրայ դրած տուրքը: Թէ ինչ արագութեամբ էր աճում մամուլը Անգլիայում, բերենք մի քանի թուեր. չհաշուելով Շոտլանդիան և Իրլանդիան, Անգլիայում 1782 թուականին լրագրների թիւը հասնում էր 50-ի, 1882-ին արդէն 1200, իսկ 1901 թուականին ամբողջ Անգլիայում 2491, որոնցից 247-ը ամենօրեայ: Բացի այդ հանդէսներ և տեսութիւններ՝ ամսեայ, շաբաթեայ և եռամսեայ, 1901 թ.-ին հրատարակւում էին 2446, մինչդեռ 1846 թուականին հանդէսների և տեսութիւնների թիւը հաւասար էր 200-ի:

Մամուլի կատարեալ ազատութիւնը դառել է հասարակական կեանքի անսասան հաստատուած մի պայման. այդ ազատութիւնը շատ խոր արմատներ է գցել անգլիացիների բարքերի մէջ: Անգլիայում չկան մամուլի ազատութիւնը որոշող յատուկ օրէնքներ. այդ ազատութիւնը հիմնուած է աւանդութիւնների ու սովորութիւնների վրայ, բղխում է նրանից որ գոյութիւն չունեն մամուլի վրայ օրէնսդրական ճնշումներ, և ամենից շատ պայմանաւորում է նրանով որ անգլիական ամբողջ ժողովրդի գիտակցութեամբ—մտքի ազատութիւնը նրա անձեռնմխելի իրաւունքն է, նա հաւատացած է որ առանց այդ ազատութեան անհնարին է խաղաղ և կանոնաւոր հասարակական կեանքը: Ահա ինչպէս է ձևակերպում մամուլի ազատութիւնը անգլիական դատաւորներից մէկը (Վինֆոր). «Իմ կարծիքով, մամուլի ազատութիւնը կայանում է նրանում, որ ամեն մէկը առանց երկիւղի կարողանայ մամուլի միջոցով արտայայտել ինչ նոր վարդապետութիւն և կամենայ, մի պայմանով, իհարկէ, պատկառ (respect) ոճով վերաբերուելով կրօնին և երկրի կառավարութեան: Անհրաժեշտ

է, որ ամեն մէկը կարողանայ ցոյց տալ հասարակական գործիչներին սխալները, սակայն չպէտք է նրանց վերագրել քրէական գործողութիւններ: Մամուլի ազատութիւնը չի կարող այդքան հեռու գնալ, որովհետեւ հակառակ դէպքում նա կը լինէր խախտում ոչ պակաս նշանաւոր իրաւունքի, այն է անհատական պատուի անձեռնմխելիութեան: Այդ իրաւունքը կարող է յարձակումների ենթարկուել միմիայն դատաստանի առաջ, որ ամբաստանուողը ունի ամբաստանողի հետ պաշտպանութեան հաւասար միջոցներ: Ուր սկսւում է անապացոյց պարսաւանքի ազատութիւն, այնտեղ վերջանում է մամուլի ազատութիւնը»:

S.

ԻՇԽԱՆՈՒՀԻ ՊՕՏԷՄԱՅԻՅ

(Տենիսոնից)

Երեկոյեան արտի միջով անց կենալիս՝
Հասունացած հասկերն էինք մենք հաւաքում
Մենք գժտուեցանք իրարու հետ,—ես և կինս—
Օ՛, գժտուեցանք, ինչու համար՝ չեմ իմանում,
Բայց և նորից համբուրուեցանք օրտասուելով.
Որովհետեւ հասանք այնտեղ, ուր պառկում էր
Առջի տարուայ մեր կորցրած սիրուն ժանկիկ:

*

ՊԱՐՍԿԵՍՏԱՆԻ ՔԻՒՐԳԵՐԸ *)

I

Քիւրդ կամ քիւրտ պարսկական բառ է, որ նշանակում է հօր, դօրեղ.—մի ածական, որ խիստ յատուկ է այդ ցեղին և հնչրիտ կերպով բնորոշում է քիւրդ ժողովրդին: Արաբները այդ ժողովրդին կոչում են քարտ, իսկ քիւրդերը իրանց ասում են քարտմանջէ և համարում են իրանց արաբական ցեղից սերուած: Յոյն դրող Քսենոֆոնը ևս իր «Անաբազիս» գրուածքում յիշատակում է «Կարդուխ» ցեղը, որ այժմեան քրդերի նախահայրերն են:

Քիւրդերը Փոքր Ասիայում բռնում են Հայաստանի և Միջագետքի մէջ եղած բարձրութիւնները և հովերը: Ամբողջ Քիւրդիստանը ծածկուած է լեռնային շղթաներով, բարձրաբերձ սարերով, որոնց վրայ թառած, բուն դրած ապրում է քիւրդ ազգաբնակիւթիւնը, բաղկացած մօտաւորապէս $2\frac{1}{2}$ միլիոն հոգուց: Ամբողջ Քիւրդիստանը բաժանուել է երկու տէրութիւնների՝ Թիւրքիայի և Պարսկաստանի մէջ: Քիւրդ ժողովրդի մեծ բաժինը, մօտաւորապէս $1\frac{1}{2}$ միլիոնը հաշւում են Թիւրքիայում. դրանք ապրում են գլխաւորապէս Դէրսիսի, Վանի, Բայազէդի, Սասունի, Աղբալի, Բաղէշի, Մուշի, Շատախի, Մոկսի գաւառաւանդներում: Մէկ միլիոնի չափ ապրում են Պարսկաստանում: Ռուսական երկրներում, Անդրկովկասում, ապրում են մօտ 70,000 քրդեր:

*) Մի անգամ և բնգմիշտ ասենք, որ այս յօդուածը զրելիս ձեռքի տակ ունեցել եմ մի քանի հայերէն հատուկտոր յօդուածներ, էլիզէ Ռէկլիսի՝ Լագետան, Հայաստան և Քիւրդիստան գիրքը և Խ. Лекеръ.-ի «Ճանապարհորդութիւն դէպի Արարատ» գրքի Курды и Тезиды զուխը:

Քիւրդիստանի մեծագոյն մասը ճանաչում է Օսմանեան կառավարութեան գերիշխանութիւնը, իսկ ամբողջ քիւրդերի համար Սուլթանը համարուած է մեծ խալիֆ:

Սակայն շատ տեղերում կախումը օսմանեան կառավարութիւնից լոկ անուանական է: Հարիւրաւոր դէպքերից և փաստերից յիշենք մի երկուսը: Ամբողջ կէս դար, դեռ էլ աւելի երկար ժամանակ օսմանեան կառավարութիւնը արիւնահեղ կռուիւններ է մղել Դիւսիւմի դէմ, քանի՛ քանի՛ անգամ ահագին զօրքով յարձակուել է այդ մի ափ, բայց բաջարի լեռնականների վրայ և յաղթուած յետ է դարձել: Բերենք մի այլ օրինակ. պարսկա-տաճկական սահմանադիւտում ապրում է յայտնի Իբրաղուլահ Շէյխի որդին, Շէյխ Մահմադ Սըդիկը, որը ահագին հեղինակութիւն է վայելում քիւրդերի մէջ: Նա կարիքի դէպքում կարող է պարսից կառավարութեան դէմ հանել առնուազն 50000 քիւրդ: Ճիշտ պարսկա-տաճկական սահմանադիւտում նա երկու տարի առաջ ձեռնարկել էր մի բերդի շինութեան, իբր թէ իր երկիրը պարսկարնակ քիւրդ ցեղերի պարբերական յարձակումներից ազատ պահելու նպատակով: Միայն բերդի շինութիւնը վերջանալուց յետոյ պարսից կառավարութիւնը հասկացաւ, որ ռազմագիտական տեսակէտից ապագայում կարող է շատ վտանգաւոր լինել այդ անառիկ բերդը: Վախիւթի հրամանով Խոյի և Ուրմիի ընդհանուր դատաւորը բանակցութիւններ է սկսել շէյխի հետ այդ բերդի առթիւ: Բերդը շինուած է սահմանագիծ առուից այն կողմը, որ կազմում է օսմանեան հող: Բերդը դեռ կանգուն է:

Սալմաստից երկու ժամուայ հեռաւորութեան վրայ, Ճաւրա բերդաւանի շրջակայքում բուն դրած Զաֆար-աղայից պարսից կառավարութիւնը սարսափում է: Զաֆար-աղան հազիւ 200 կուռող աշիրէթներ ունենայ, բայց մօտիկ գաւառները ահ ու դողի մէջ է պահում: Պարսից կառավարութիւնը իհարկէ ուզում է բնաջինջ անել նրան, բայց չի համարձակուած:

Ռուս-տաճկական պատերազմից յետոյ քիւրդերի մէջ մուտք գործեց քաղաքական անկախութեան ձգտումը: Փորձեր են եղել նոյնիսկ հիմնելու մի «քիւրդական զաշնակցութիւն»: Քիւրդիստանը տուել է շատ սակաւաթիւ կըթուած, Եւրոպա տեսած լուսաւորուած անձնաւորութիւններ, որոնց այսպէս թէ այնպէս յայտնի չափով զբաղեցրել է «Ազատ Քիւրդիստանի» գաղափարը: Աւելորդ չհամարուի յիշել, որ դեռ անցեալ տարի Եւրոպայում հրատարակուած էր «Քիւրդիստան» թերթը: Բէզլիւսն բէյի խմբագրութեամբ, որը արծարծում և պաշտպանում էր անկախ Քիւրդիստանի գաղափարը, բայց յետոյ,

ինչպէս յայտնի է, այդ առաջաւոր քիւրդն անգամ կաշառուեց, օսմանեան կառավարութիւնից և յետ կանգնեց իր քարոզած մտքերից:

«Քիւրդիստանից» զատ, քիւրդերի մէջ գործել են պատըրաստուած քիւրդ շրջիկ քարոզիչ-պրոպագանդիստներ, որոնց նպատակն է եղել ներշնչել և հասկացնել օսմանեան կառավարութեան նենգ խաբէութիւնները, հող և մտքեր պատրաստել ապագայ «Ազատ Քիւրդիստանի» համար, քիւրդ ցեղերին բարձրացնել անգիտակից դրութիւնից և աչքները ուղղել դէպի հեռուն:

Այդ բոլոր փորձերը և ջանքերը, ճիշտ է, չեն առաջացրել առանձին շօշափելի և աչքի դարձող հետևանքներ, բայց չեն էլ անցել միանգամայն ապարդիւն: Ասում եմ, քիւրդերը այնքան գիտակցութեան են եկել, որ մի ժողովրդի դէմ կռուելիս երբեք նախայարձակ չեն լինում, այլ պահանջում են, որ առաջ տաճիկ զօրքը յարձակուի, ապա իրանք: Վերջին երկու տարին նման օրինակներ շատ է տուել տաճկական Քիւրդիստանը: «Մենք մի անգամ լաւ խրատուեցինք *), պատճառաբանում են քիւրդերը, էլ չենք խաբուիլ: Առաջ թող կառավարութեան զօրքը գնայ, մենք էլ նրանց կը հետևենք, կամ թող մեզ կառավարութիւնը տայ յարձակուելու ֆէրմանը, դնենք ծոցներս, ապա նախայարձակ լինենք, որպէսզի՝ եթէ կառավարութիւնը ուզենայ մեզքը բարդել մեզ վրայ, մենք կարողանանք այդ ֆէրմանով արդարանալ Եւրոպայի առաջ»:

Մի քանի տեղերում քիւրդերը ամուսնական, խնամիական կապեր են հաստատում ասորիների, թուրքերի, նոյնիսկ հայերի հետ: Թէև ընդհանրապէս քիւրդերը կռուիտ և անտաշ են, բայց կան և գեղեցիկ ցեղեր, բարձրահասակ, խոշոր և սև աչքերով, թուխ, սև առնական դէմքով: Կան և այնպիսի քիւրդեր, որոնք ունեն կապոյտ աչքեր, շէկ մազեր: Քիւրդ կիւնը ընդհանրապէս գեղեցիկ է, ունի կանոնաւոր գծագրութիւն, մեծ աչքեր, արծուային քիթ, խոշոր և կանոնաւոր կազմուածք, երկար մազեր: Քիւրդ կանայք զանազան ոսկէ օղեր (խզմա) անցկացնելով ուղեներին՝ միանգամայն այլանդակում են բնական գեղեցկութիւնը. շատ տեղերում ականջօղեր են գործածում, զանազան նախշեր նկարում երեսների վրայ: Քիւրդ կանայք էլ այդ մարդկանց նման սիրում են դէնք, նրանք արի-

*) Եկնարկում են հայկական կոտորածը:

են և հարկ եղած դէպքում իրանց ամուսինների հետ միասին կուռի դաշտ են նետուում:

Քիւրդները բաժանուած են զանազան մեծ ու փոքր ցեղերի: Այդ ցեղերից իւրաքանչիւրը ունի իր ցեղապետ շէյխը կամ աղա-բէյը, որը գրեթէ լիազօր, անկախ պետ է համարուում իր աշիրէթների և ռայայի համար: Այդպիսի ցեղերի և ցեղապետների թիւը Քիւրդիստանում շատ մեծ է: Այս երևոյթն էլ որոշ տեղ է բռնում ազատ Քիւրդիստան կազմելու արգելադրութ պատճառների երկար շարքի մէջ: Այդ ցեղերը յաճախ ընդհարուում են իրար հետ, մեծ կոտորած տալիս և ահագին աւերումներ առաջ բերում: Շատ ցեղերի մէջ անհաշտ թշնամութիւն է տիրում:

Քիւրդները բաժանուում են երկու կրօնի, սիւննի և եղզի: Քիւրդերի մեծագոյն մասը կազմում են սիւննիները, որոնք ապրում են գլխաւորապէս տաճկական Քիւրդիստանում: Պարսկաստանի բոլոր քիւրդերն էլ պատկանում են սիւննի դաւանանքին: Եզիդիներ չկան Պարսկաստանում, նրանք ապրում են գլխաւորապէս Տաճկաստանում և մասամբ Ռուսաստանում: Տարբեր կրօնի պատկանող քիւրդները առհասարակ հաշտ աչքով չեն նայում իրար վրայ:

Այդքան ցրուածութեան և ցեղերի բաժանուածութեան պատճառով քիւրդ ցեղերի լեզուն զգալի կերպով տարբերուում է: Համարեա ամեն մի ցեղ ունի իր ուրոյն բարբառը, թէև պիտի ասել, որ բոլոր բարբառներն էլ ընդհանուր ձևերով նշման են: Պարսկաստանի քիւրդերի լեզուն խառն է պարսկական և թուրքական բառերով ու դարձուածքներով, իսկ Քիւրդիստանի արևմտեան քիւրդերի լեզուն խառն է արաբական բառերով:

Քիւրդները չունեն սեփական գիր, նրանք փոխ են առել արաբական այբուբէնը, պարսիկների փոփոխած ձևով: Քիւրդները գրեթէ չունեն գրաւոր գրականութիւն, իսկ նրանց բանաւոր բանահիւսութիւնը շատ ճոխ, հարուստ է: Քիւրդները ունեն խորը զգացուած ժողովրդական երգեր. երգն է քիւրդերի միակ գրականութիւնը, ամբողջ վէպեր, դրամաներ է երգում քիւրդ ժողովուրդը:

II

Բաւականանա՞նք այս ընհանուր տեսութեամբ և խօսենք մասնաւորապէս Պարսկաստանի քիւրդերի մասին:

Հիւսիսային Պարսկաստանի ամբողջ արևմտեան բարձրու-

թիւները և գաւառները բռնել են քիւրդերը, սկսած ամենահարաւային մասերից մինչև ամենահիւսիսային ծայրերը: Օսմանեան երկրին սահմանակից բարձրութիւններ չկան, ուր բռն դրած չլինեն Պարսկաստանի քիւրդերը:

Պարսկաստանի քիւրդերին էլիզէ Ռէկլիւն հաշուում է $1\frac{1}{2}$ միլիոնից աւելի, իսկ ուրիշները գտնում են մօտաւորապէս 1 միլիոն: Դժուար է իհարկէ այդպիսի աստանդական թափառաշրջիկ ցեղի վերաբերութեամբ աւելի ճիշտ թիւ տալ: Պարսկաստանի քիւրդերը բռնում են գլխաւորապէս Ուրմիոյ լճի շրջակայ գաւառները և լեռնագոտիները, ինչպէս Սոմալի, Սոուզ-Բուլազ, Ճարա և իր շրջակայ գիւղերը, Ուրմիոյ ծովակէր արևմտեան և հարաւային գաւառակները, օրինակ՝ Մարգաւար, Թարգաւար, Սուլգուզ կայլն, Խոյ, Ղոթուր գաւառաւանդ, Մակուի խանութեան ամբողջ արևմտեան մասերը: Քիւրդեր կան նաև Սալմաստ գաւառի շրջակայ բարձրութիւնների վրայ, ինչպէս Հարաուլ լեռների փեշերին կայլն:

Պարսկաստանի քիւրդերի մեծագոյն մասը բռնում են Սոուզ-Բուլազ և Սոմալի գաւառները: Սոմալի գաւառում հաշուում են մօտաւորապէս 200 գիւղ, իսկ Սոուզ-Բուլազում և շրջակայքում կան 4—500 քիւրդաբնակ գիւղեր: Բնական է, որ այդ մասը կոչւում է Պարսկական Քիւրդիստան:

Պարսկաստանի քիւրդերը բաժանւում են երկու խոշոր դասակարգերի, աշիրէթներ և ռայա: Աշիրէթը կոռուղ, պատերազմիկ դասակարգն է, իսկ ռայա քիւրդերը սրանց հօտերն են, սրանց կերակրող, աշխատող ձեռքերը: Ամեն մի աղա կամ շէյխ անցած իր աշիրէթի գլուխը վարում է իր գործերը և յայտնի իշխանութիւն է վայելում իր աշիրէթի վերաբերութեամբ: Որպէսզի ցոյց տանք, թէ որքան շատ են աշիրէթները, մենք կը վերցնենք միայն Սոմալի քիւրդերը: Վերևում ասացինք, որ Սոմալում կան 200 գիւղեր: Այդ գիւղերը բաժանուած են 9 աշիրէթների, ինչպէս՝ Ֆանկցի, Դալլցի, Նիսամցի, Հնալցի, Դաւրիզցի, Փաշիկցի, Խալլֆի, Համդանի և Մագուրցի: Այս իննը դեռ գլխաւոր աշիրէթներն են, կան և մանր աշիրէթներ, որոնք ունեն 50—20 կոռուղներ: Այսպէս ահա Պարսկաստանի բոլոր քիւրդերը բաժանուած են մանր և մեծ աշիրէթների: Ուրեմն ամեն մի քիւրդաբնակ գաւառ ունի մի քանի աղաներ, կառավարիչներ: Այդ աշիրէթներն ունեն և՛ իրանց մեծ աղան, որ համարւում է բոլորի պետը: Ճիշտ է, Սոմալին ունի տասից աւելի աղաներ, բայց բոլորից մեծը համարւում է Մուստաֆա աղան, որը միայն ճանաչւում է պարսից կառավարութեան կողմից: Սոմալի և Ճարայի քրդերը թէև բաժանւում են տարբեր աշի-

բէթներէ, բայց կազմուած են կարգար մեծ ցեղի մասերը: Իսկ բոլոր աշիրէթ-կոռուղները կոչուած են ուսանող:

Պարսկաստանի միւս քիւրդ աշիրէթներէց յիշենք և մի քանիսը, օրինակ՝ Աւգօի, Մամադի, Հայդարանցի ևայլն: Աւգօի աշիրէթը, որի ցեղապետն է յայտնի Ջաֆար-աղան, բըռնուած են ճարա բերդաւանը և շրջակայ գիւղերը, թուով մօտաւորապէս 100. բերդը շինուած է բլրի վրայ և շատ յարմար ռազմագիտական դիրք է գրառել: Մամադիները, որոնց գլխաւորն է Մատո ուրսպին, բռնուած են Հարաուլ լեռների փեղերը: Մամադիները, թուով շատ քիչ են, մանաւանդ այժմ, երբ նրանք բաւականին ցրուեցին. նրանք հազիւ 20—30 գիւղ լինեն. կարող են միայն տալ հարիւր կոռուղներ, գուցէ և պակաս: Իսկ Հայդարանցի քիւրդերը բռնուած են Մակուի արեւմտեան եզրները, սահմանակից գիւղերը և հազիւ թէ 50 գիւղ լինեն, հաշուած և մի քանի մանր աշիրէթներ: Ղոթուրի քիւրդերը աւելի քիչ են. այնտեղ կայ միայն 18 գիւղ:

Այս բոլոր ցեղերը և աշիրէթները վայելում են սահմանափակ անկախութիւն: Ռայա ժողովուրդը, ինչպէս և՛ աշիրէթները, չեն ճանաչում պաշտից կառավարութիւնը, այլ իրանց ցեղապետին, իրանց ռաշուն (աղսախկալ): Իւրաքանչիւր ցեղ պարտաւոր է տալ նշանակուած տուրքը կառավարութեան իր ցեղապետի միջոցով: Ահա դրանով էլ զրեթէ վերջանում է նրանց կախումը: Պակաս չեն և այնպիսի օրինակները, որ ցեղապետները այդ էլ չեն տուել կառավարութեանը և մնացել են իհարկէ անպատիժ: Սոմայի քիւրդերը հարկ են տալիս 5000 թուման, որից 2000 թումանը տալիս են ռայա ժողովուրդները, իսկ 3000-ը աշիրէթները: Կան և քիւրդական դաւաճներ, ինչպէս Ղոթուր, ուր կառավարութեան կողմից առանձին պաշտօններ, հաքիմներ են նշանակուած, որը կառավարուած է և հաւաքում արքունական տուրք:

Պարսկաստանի քիւրդերը, մանաւանդ պարսկա-տաճկական սահմանագլխում բռն դրած քիւրդերը անընդհատ շարժման մէջ են. յաճախ Պարսկաստանի քիւրդերը անցնում են տաճկակն հողը, էլի վերադառնում են, և այսպէս շարունակ: Այս հանգամանքը ամենամեծ պատճառներից մէկը կարելի է համարել, որ անհնարին են դարձնում գէթ մօտաւոր թիւ տալու քիւրդերի մասին: Դեռ մի քանի ամիս առաջ Մուստաֆա բէյը՝ հայդարանցիների ցեղապետը պաշտից հողի վրայ էր, բայց այժմ անցել է Տաճկաստան: Մակուի ներկայ սարդարը, Մուրթուղա-կուլի խանը իւրացրել էր Մուստաֆա-բէյի գիւղերի մի մասը. վերջինս անկարող լինելով դիմագրել սարդարի ա-

հագին ուժին, թողնում է իր գլխաւոր գիւղը՝ Կարէինը և բարձրանում սարերը, իհարկէ՝ յետոյ յարձակուելու դիտաւորութեամբ: Խոյի գատաւոր Ամիր-թումանը կանչում է Մուստաֆա-բէյին հաշտեցնու նպատակով, բայց այնտեղից ղրկում է Թաւրիզ, վալիաթի մօտ: Մուստաֆա-բէյը երկար ժամանակ մնալով Թաւրիզ և տեսնելով որ իրան ուզում են միայն խաբուսիկ յոյսերով օրօրել, թողնում է Թաւրիզը և դնում Մակու, հաւաքում իր աշիրէթները և սկսում իր անհատնում յարձակումները Մակուի խանութեան վրայ: Այս ամառ Մակու եղած ժամանակ Մուստաֆա-բէյը մի քանի անգամ յարձակուեց Կարէնի վրայ, ուր սարդարը մարդիկ էր ղրկել, ջրադուցի մէջ մորթեց 4 թուրքեր, 5 վիրաւորեց, ամբողջ խոտի դէզեր այրեց, որի մէջ երկու մարդ այրուեցին, ձիերի ամբողջ մի երամակ քշեց տարաւ: Մարան-ղայլաղ ձորի մէջ բռնեց մի ամբողջ կարաւան, 21 հոգու մորթեց, որոնց մէջ՝ կային մի քանի նշանաւոր պարսիկներ և երկու սէրդ, ամբողջ ապրանքը և ձիերը տարաւ: Դրանով իհարկէ չի վերջանում նրա աւերածը, դեռ երկար շարունակուելու է: Նա ամեն մի յարձակումից յետոյ անցնում է Տաճկաստան և այնտեղ պատուսպարւում, իսկ սարդարը անկարող է հետեւի նրան և անցնել օսմանեան հողը: Սարդարը մի խորամանկ միջոց է ձեռք առել իր երկիր պաշտպանելու և իր թշնամու դէմ կռուելու: Մուստաֆա-բէյի կալուածները Սարդարը յանձնել է նշանաւոր Կոր-Մահմէդ-բէյին, որը նոյնպէս հայդարնցի է և Մուստաֆա-բէյի ոխերիմ թշնամին: Այսպիսով կռուի, արիւնհեղութիւնների ասպարէզը թողնում է սարդարը երկու քիւրդ ցեղապետներին:

Առհասարակ քիւրդ ցեղապետները և աշիրէթները հաշտ աչքով չեն նայում իրար վրայ, միշտ էլ աշիրէթների յարաբերութիւնները լարուած են. քիւրդի այդ թուրութիւնից շատ են օգտուել տաճիկ և պարսիկ կառավարութիւնները: Ով ուժեղ, հզօր է, նրան է և՛ իրաւունքը, և՛ հողը, նրա կողմն է և՛ արդարութիւնը: Այսպէս է տրամաբանում քիւրդի ուղեղը և այդ ընդունում է առաջնորդող դաւանանք: Եւ այդ հանգամանքը յայտնի չափով նպաստում է մի շարք կռիւնների, աւերածների առաջանալուն: Բայց չպիտի մոռանալ և այն, որ ընդհանուր թշնամու դէմ կռուելիս նրանք հեշտութեամբ կը թողնեն այդ աշիրէթական թշնամութիւնները և կը միանան թըշնամուն դէմ դնելու համար:

Պարսկաստանի քիւրդը առհասարակ գեղեցիկ է, բարձրահասակ, սև աչքերով, դուրս ընկած կրծքով, թուխ դէմքով:

Բայց կան և շէկ մազերով, կապոյտ աչքերով, ինչպէս օրինակ Աւդօի ցեղապետ Ջաֆար-աղան: Պարսկաստանի քիւրդը սիրում է հագնուել ձոխ, խայտաբղետ հագուստներ, վառ, փայլուն գոյներ, բարձր գլխարկներ՝ փաթաթուած գոյնզգոյն և շքեղ շալերով ու կազմաներով: Գեղեցիկ կտորից է լինում և նրանց գօտին, որ մի քանի տակ փաթաթում են, իսկ դրա մէջ էլ խրում են դանակներ, եաթաղաններ, ատրճառակներ, նրանք անբաժան են հրացանից և ժապաւէններով զարդարուած նիզակներից: Այսպիսի շքեղութեամբ քիւրդը սիրում է զարդարիլ և իր ձին, որին քիւրդը աւելի է սիրում, քան իր կնոջը: Քիւրդի զգեստները առհասարակ լայն են կարում, այնքան լայն, որ կարողանան ազատ շարժումներ անել մանաւանդ ձիու վրայ:

Պարսկաստանի քիւրդերը ընդհանրապէս շատ հմուտ են զինավարժութեան մէջ, մանաւանդ նրանք մեծ հմտութեամբ բանեցնում են դաշոյն, նիզակ, նոյնպէս և զեկավարում են ձիերը: Քիւրդերը հէնց մանուկ հասակից, իբր դպրոցական դասընթաց, վարժոււմ են զինավարժութեան և ձիավարժութեան մէջ, քաջ գիտնալով, որ դրանք են կազմելու նրա կեանքի անբաժան ընկերները:

Պարսկաստանի քիւրդ կիներն էլ գեղեցիկ է, առողջ, կանոնաւոր և սիրուն կազմուածքով, երկար և սև մազերով: Նրանք էլ իրանց ամուսինների նման սիրում են հագնուել գեղեցիկ և ձոխ: Ընտանեկան գործերին երբէք չի խառնոււմ քիւրդը, այդ թողնուած է կնոջը, քիւրդը տանն անդամ պարապ ժամանակ ձեռքից բաց չի թողնում իր զէնքերը, անդադրում նրանց հետ է խաղում, փորձեր անում, մաքրում, նոր փամփուշտներ լցնում և այլն, իսկ ձին էլ միշտ պատրաստ կանգնած է, որպէսզի վտանգի պարագային իսկոյն տէրը թռչնրա վրայ և շտապի յարմար դիրք գրաւել ու պաշտպանուել: Երեք բան չի կարելի տալ ուրիշին, ասում է քիւրդական ասացուածքը, — կինը, զէնքը և ձին:

Քիւրդերի կրօնական արարողութիւնները, օրինակ՝ ամուսնութիւն, թլպատութիւն և այլն, կատարում են շէյխերը և մոլլաները: Քիւրդ շէյխը հագնում է ոտից գլուխ մաքուր սպիտակ կտորից զգեստներ. սպիտակ է և նրա գլխի ապարօշը: Քիւրդ շէյխը խաղաղ ժամանակ հոգեւոր պետ է, իսկ պատերազմի ժամանակ քաջ զօրապետ է: Շէյխն է, որ թշնամու դէմ դուրս գալիս բարձրացնում է իր յուժեղու ձայնը, կոչ անում ընդդէմ թշնամու, ոտի կանգնեցնում և ինքն էլ՝ որպէս ընդհանուր զօրապետ՝ անցնում է աշիրէթների գլուխը: Ընդհանուր բապէս հոգեւոր պետերը շատ մեծ հեղինակութիւն և զիրք են

վայելում քիւրդերի մէջ: Եթէ շէյխ Մահմուդ Սըդիկը, հռչակաւոր շէյխ Իբրահիմ Իբրահիմ Իբրահիմ, մի կողմէ Պարսկաստանի ընդհանուր աշխրէթներին, բոլորն էլ ոտի կը կանգնեն, չնայած որ շատ աշխրէթներ կարող են նոյնիսկ նրան հակառակորդ, թշնամի լինել այժմ:

Այդ ընդարձակ տարածութիւնը, ուր այժմ ապրում են քիւրդերը, դարեր առաջ բնակուած էր հայ ժողովրդով: Դեռ մինչև այժմ էլ թէև անցել են ամբողջ դարեր, Սոմայի գաւառում կան հայութեան մնացորդներ,—գերեզմաններ, արձանագրութիւններ, եկեղեցիների բեկորներ: Այժմ Սոմայում կան միայն 4—5 տուն հայեր:

Այս մի քանի տարի է, ինչ դատարկուել է հայերից:

Ե. ՖՐԱՆԳԵԱՆ

(Վերջը յաջորդ համարում)

ԽԵՂՃ ՈՒ ԱՆՈՒՇ ԿՈՐԷԱ. *)

Սէուլին մօտենալիս Նամ-Սան բլրի վրայից ճանապարհորդը տեսնում է մի մեծ գիւղ ծղօտածածկ կտուրներով: Դժուար է հաւատալ, թէ դա Կորէայի մայրաքաղաքն է, բայց նրա ահագին տարածութիւնը, շրջապատող ամրութիւնները, հսկայական դռները կասկած չեն թողնում: Տնակներին նայելով Սէուլն աղքատ է, բայց ոչ տխուր: Խիստ յստակ և նուրբ լոյսի մէջ ողողուած այս աղքատութիւնը ի ցոյց է դրել բոլոր մանրամասնութիւնները:

Յաճրիկ և բարձր այդ կտուրները արևի փայլի տակ յիշեցնում են նստած կատուներ: Փողոցները զաւարում են

*) Այս վերնագրի տակ պ. Ժորժ Դիւլբուկ հրատարակել է Պարիզում մի հետաքրքիր պատկերագրող աշխատութիւն Կորէայի մասին: Հեղինակը ուղարկել է խմբագրութեան իր աշխատութիւնը: Ի նկատի ունենալով այն ահագին հետաքրքրութիւնը, որ յարուցանում է ներկայումս Կորէան շնորհիւ Ծայրագոյն Արևելքի անցքերի, մենք թարգմանաբար տալիս ենք պ. Ժորժ Դիւլբուկի գրքի բովանդակութիւնը մեր ընթերցողներին:

քմահաճօրէն համարեա իւրաքանչիւր տան անկիւնից: Մի քանի մեծ խճուղիներ կտրոււմ են քաղաքը մի ծայրից միւսը ուղիղ գծերով:

Այս շողազարդ կտուրներից, նեղլիկ և ծաղկազարդ բակերից, գալարուն փողոցներից վեր լողում է մի թեթև փոքրիկ ամպ, միանգամայն կապոյտ, որ բարձրանում է ուղղաձիգ, եթէ հով չկայ: Օջաղները ծխում են, երևի կանայք ներսում վառ են պահում կրակը, ուրեմն և այնտեղ իշխում է բարօրութիւնը:

*
* *

Կորէական տները փայտաշէն են: Կուտում են հողը, նրա մէջ դնում սիւներ, սրանց վրայ ձգում գերանները, և ահա պատրաստ է տան կմախքը: Այնուհետև հիւսնը գալիս է և բարակ տախտակի կտորներով այդ կմախքից պատրաստում փոքրիկ խուղ: Քամուց պաշտպանուելու համար ցեխի և զարմանի շաղախով ձեփում են փայտերի վրայ, և ահա տունը պատրաստ է: Այսպիսով կորէական պատը մերինի հակառակ յենարան չէ, այլ մի ծածկոյթ ցրտից պաշտպանուելու համար և մի պատըսպարան անհամեստ աչքերից և գուլերից:

Տները յարկեր չունին, այլ միայն մի քանի սենեակներ, որոնք փողոցի կողմից լոյս են ստանում փոքրիկ լուսանցքներից, որոնք ցանցաձև պատած են բաժրուկի փայտերով, ապա թղթով: Բակի կողմից միայն տները լաւ լուսաւորուած են: Կորէական տունը երբէք առանց բակի չէ: Կանայք, որոնք օջաղի պահապանները, յաճախ ստրկուհիներն են, շատ տխուր կեանք պիտի ունենային, եթէ այդ փոքրիկ քառակուսին չըլինէր, ուր նրանք մի քիչ ազատ օդ են շնչում: Այս բակերը, որոնք զարդարուած են շահոքրամի (oeillet) ծաղիկներով և միանգամայն բաց են արևի և ջերմութեան առաջ, փոքրիկ տարածութիւններ են պահում տների արանքում: Կորէացու իդէալն է ունենալ մի պարտէզ, բայց այդ թոյլատրելի է միայն ազնուականներին և կայսրին:

*
* *

Կորէացիների դէմքերը դեղիններին յատուկ անախորժ գծերը չունին: Նրանց երակներում խառնուել է իրար հիւսիսային ցեղերի և մոնղոլական արիւնը և առաջ է բերել այս ուժեղ, պնդակազմ, թիկնաւէտ մարդկանց տիպը: Կորէացու աչքերը

սղմուած չեն և ոչ էլ մշտապէս տենդոտ. նրա ճակատը բաց է, բարձր և կոկ: Դէմքը խիստ մազոտ է և յիշեցնում է Սախալին կղզու ափոսերին, այս վերջին հանգամանքը բաւական է կորէացիներին իրանց հարեաններից զանազանելու համար: Սըրանց մէջ մի տարր կայ, որ ոչ ճապոնական է և ոչ չինական: Նրանք ցեղակից են սիբիրեան հին ցեղերին, որոնք տակաւին ներկայացնում են նախնական վիճակը. նրանց դէմքի բնական արտայայտութիւնը խիստ հեզահամրոյր է, հայեացքը՝ նուրբ և երազուն, ձևերի մէջ ունեն մեծ անհոգութիւն և միամտութիւն: Նրանց անբաժան աղքատութիւնը նոյնպէս մի նշան է հոգու պարզութեան, որով նրանք արհամարհում են ժամանակակից կեանքը. նրանց իղձը միայն խաղաղութիւնն է:

Նրանց կանայք բարձրահասակ են, ուղղամէջք, իրանը բաւական ուժեղ գլուխների վրայ խոշոր ծանրոցներ կրելու համար և բաւական ճկուն աղբրի ափին երկար ժամանակ ծալապատիկ նստելու համար: Կանանց դէմքը բնորոշ գծերով՝ յուզիչ խոհունութիւն, լրջմիտ անուշութիւն ունի, որ այնպէս հակառակ է տղամարդկանց անհոգութեանը: Եւ դա հասկանալի է, քանի որ կեանքի դժուարութիւնները սրանց է վերապահուած: Մինչև իսկ ծեր օրերում այս կանայք պահպանում են իրանց սև աչքերի փայլը և քայլուածքի վեհութիւնը: Ջահիլների մէջ շատ սիրունները կան, ճակատի սքանչելի գծով, յօնքերի համարձակ կամարով, կենդանի հայեացքով, հեզնոց քթածակերով, փոքրիկ բերանով, ծնօտի կատարեալ ձևով: Սրանց նուրբ և փխրուն գեղեցկութիւնը կարծես ժառանգութիւն է մի շատ հին ցեղի, որ թմրած է, բայց ոչ անցած:

Այս խեղճերի զարդարանքը իրանց սև, կոկ ու հարուստ մազերն են, որոնք փայլում են իւղով օծելիս: Պէտք է կորէացին յետին ծայր աղքատութեան մէջ ընկնի, որպէսզի համաձայնի իր մազերը ծախել կեղծամ պատրաստող չինացուն: Ոչ ոք իր մազերը չի կտրում. տղամարդիկ զաւարում են գլուխների վրայ և ծայրը կապում կարմիր բուստով, պատանիները ծամ են հիւսում, ժողովրդի կանայք պսակ են կազմում, որ միևնոյն ժամանակ նրանց ծառայում է բարձի տեղ ծանրոցներ կրելիս, իսկ բարձր դասի կանայք ճակատի վերին մասում յարդարում են երկու հիւս և ծործորակի վրայ գալարում են ու պահում արծաթէ քորոցով:

Կորէացիին սիրում է սպիտակ գոյնի զգեստ. այդ գոյնը ամենից աւելի է պատշաճում այս մանուկ ժողովրդին: Վերնագգեստ, անդրավարտիք, գլխարկ, բոլորն էլ սպիտակ են գիւղերում. իսկ քաղաքացիք բոլորը կրում են փողփողուն վերնասգեստներ, որ կանայք սպիտակացնում, յարդարում, ողորկում են խնամքով: Մէուլի փողոցները ամեն օր, շնորհիւ այս սպիտակ զգեստների, տօնական կերպարանք ունին: Կորէացիք այդ լաւ գիտեն, նրանց ուրախութեան կէսը կը պակասի, թէ դադարեն սպիտակ հագնել: Ուր և գնայ հայրենիքից դուրս, կորէացիին պահպանում է իր սպիտակ զգեստը: Միւս գոյները թողուած են երիտասարդներին, կանանց և երեխաներին: Եւրեխաները իրանց գոյնզգոյն զգեստով յիշեցնում են խայտաբերդէտ թիթեռներ և այս անհոգ և սպիտակ ամբոխի մէջ կեանքի մի շող են կաթեցնում:

Կանայք համարեա կորչում են իրանց զգեստների մէջ: Նրանց շրջագգեստը հասնում է մինչև թևերի տակը: Նրանք ծածկում են գլուխները մետաքսէ լայնաթիւ ու մեծ վերարկուով, որի մէջ հագիւ են շարժւում, որովհետև ձեռները և ոտները ազատ չեն: Այս զգեստը ստիպում է քայլել ծանր, առանց շտապելու, իրանց կեանքի ընթացքին համապատասխան: Զգեստի սպիտակ գոյնը նրանց աչքում գին ունի, կորէացիք դժուարութեամբ են հրաժարւում նրանից, որովհետև ինչքան և աղքատ լինի կորէացիին, սիրում է ճերմակը, աչքի ուրախութիւն է այն: Միւս կողմից նրա կարծիքով կինը պարապմունք չէր ունենայ, եթէ առաւօտից երեկոյ դբադուած չլինէր ամուսնու զգեստը սպիտակ պահելու աշխատանքով: Մէուլը մի մեծ լուացարան է, ուր լուացքի թրխթրխոցը երբէք չի ընդհատւում: Կանայք աշխատում են, որպէսզի իրանց ամուսինները փայլփլուն զգեստ ունենան, և կորէացու կարծիքով կեանքն այսպիսով շատ լաւ է ընթանում:

*
*
*

Ունենալով շատ քիչ միջոցներ՝ կորէացիին այնուամենայնիւ երջանիկ է: Փողոցը նրա բոլոր դուարճութիւններին բաւականութիւն է տալիս: Վաղ առաւօտից ցուլերն առաջ արած՝ գիւղացիները քաղաք են գալիս վաճառելու կանաչեղէն, վառելիք: Այս կայտառ, զօրաւոր մարդիկ քաղաք են բերում մի փոքր իրանց ուրախ ընոյթից, իրանց դաշտերի, անտառների հոտից և այն զուարճալի խօսքերը, որով նրանք գիտեն ուրախացնել անցորդին: Երբ նրանք քաղաք են մտնում թեթեաքայլ,

ծեր մանդարիններն անգամ նրանց նախանձում են, իսկ մանուկներն յետներից են վազում հետաքրքրուած նրանց զամբիւղներով: Պաշարեղէնը ծախելուց յետոյ նրանք խմբւում են պանդոկներում քաղաքային ամբուլթիւնների մօտ: Այստեղ լաւ խումում են, նոր լուրերը իմանում, գնում են մի մտրակ կամ մի ուրիշ բան, մի քիչ իրար հայհոյում ախոռապանների հետ, ապա վեր աղանձում են գիւղ իրանց ցուլերի հետ, որոնք ոչխարի պէս հանդարտ են:

Սէ ուլի փողոցներում դատարկապորտները շատ են: Հասարակ դասի կանայք անցնում գնում են դէպի լուացարանները կամ ջրհորը՝ գլուխների վրայ տանելով մի ջրաման կամ սպիտակեղէնի կապոցը: Երիտասարդները հիացմունքով դիտում են կանանց սիրուն իրանը, նրանց ծառացած մէջքը: Շրջիկ առևտրականները, որոնք վաճառում են թռչուններ, ոտնամաններ, պարաններ, ջրկիրները, բեռնակիրները բոլորն էլ իրանց վրայ ծանրոց կրելու յարմարութիւններ ունին: Միւսնոյն ձևով են տանում կանայք ծծկեր երեխաներին: Երևի նրանք երբեմն մոռանում են երեխան իրանց ուսին— «Երեք տարի շարունակ նա փնդրում էր իր թիկունքի երեխան», ասում է կորէակաւն ատածը: Անցնում են փողոցով շաքար, դանակ, ակնոց ծախողներ, ձիաւորներ, փակ պատգարակներ, որոնց մէջ երևի նստած է մի ագնուական տիկին, անցնում են կոյրերի ամբողջ շարքեր: Ամենից բաղմաթիւ են սակայն դատարկապորտները, որոնք շաղակրատում են փողոցներում, ծխում են երկար չիբուխներ, պարծենում են իրանց առողջութեամբ, խօսում են լաւ եղանակից և իրանց նոր զգեստները ի ցոյց գնում: Այս անհոգ ու ծոյլ ամբոխի միջից եթէ շտապով անցնում է մի գործի մարդ, նա անշուշտ մի պաշտօնեայ է: Նրան ճանապարհ են տալիս արհամարհանքի ժպիտն երեսներին:

Ձմեռները սառած գետերի վրայ տղայ-աղջիկ սլլում են միասին և մէկը միւսից յետ չի մնում: Լաւ եղանակներին նրանք բաց են թողնում թղթէ փռուաններ, տանեակներով հետևում նրա ընթացքին, և եթէ ընկնում է, գնում են կտուրների վրայից յետ բերում և խաղը վերսկսում: Ահա գուցէ կորէացիների խոշոր թերութեան աղբիւրը, նրանք շատ են ապրում ամպերում, բայց և այնպէս սրբան զուարճալի է այս բոլորը: Աղջիկները գնդախաղը կատարում են ոտներով և խիստ շնորհալի ձևով:

Փողոցի այս տեսարանները էլ աւելի գեղեցկանում են շնորհիւ պայծառ օրերի: Երկինքն անամպ է, լոյսն այնպէս

յստակ է, որ ամեն ինչ նրա փայլի տակ երիտասարդանում,
կեանք է ստանում:

*
* *

Արևի մայր մտնելու ժամանակ խանութները փակում են, տների ծխնելոյղներից բարձրանում է սպիտակը ծուխը. Սէուլը փաթաթւում է մի ամպի մէջ, որից այրուած եղնու հոտ է գալիս. վրայ է հասնում գիշերը, լապտերները վառում են, և սկսում է մի տարօրինակ գիշերային կեանք, երբ բոլոր անցորդները նմանում են ոգիների: Այդ ժամանակ տարօրինակ զլխարկները և սպիտակ զգեստները լապտերների զողողոյուն լոյսի առաջ ամենից աւելի զբաւիչ են: Փողոցը կենդանանում է, բազմաթիւ մարդիկ գնում են հարկաններին այցելութեան: Սա այն ժամն է, երբ խանդոտ ամուսնու ձեռքի տակ ամբողջ օրը խտութեամբ պահուած ստրուկ կլինը իրաւունք ունի ազատ օդ շնչելու: Մի ժամանակ գիշերները քաղաքը նրանց էր պատկանում, և տըղամարդիկ իրաւունք չունէին զրօսնել այդ ժամին. այս սովորութիւնը վերացած է, բայց կանայք շարունակում են իրանց աւելի սպաս զգալ գիշերները: Բարեկեցիկ կանայք ոտքով են գնում. նրանք հագնում են մի քանի մետաքսէ շրջաւզգեստ իրար վրայ անձին աւելի կարեւորիւն տալու համար, վրաները ձգում են լայն վերարկու փողփողացող թեքերով և մի պառաւ աղախնի հետ գնում են քաղաքում իրանց սովորական պտոյտն անելու: Հարուստ կանայք զրօսնում են պատգարակով, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ լէոպարդի մորթով կամ մետաքսով պաստառած արկի, որ իրանց ուսերի վրայ կրում են չորս ծառաներ: Այս կանանց ներկայութիւնը մութ փողոցներում շատ խորհրդաւոր է: Նրանք առանձին տենչանքով սպասում են սիրային արկածի այս ժամին, երբ կարող են ստանալ կամ ձգել դոնից մի տոմսակ, և եթէ աղախինը ցաւակից է, գնալ մի սիրային տեսակցութեան: Սէուլը շատ սանտիմենտալ քաղաք է, կորէացիների մեծամասնութիւնը սիրային մի փոքրիկ արկած ունի: Նրանց ժողովրդական գրականութիւնը նուիրուած է միմիայն սիրոյ վշտին: Ահա մի նմուշ, ուր նշանուած աղջիկը իր կարօտն է երգում.

Անջատումը մի բոց է, որ այրում է մեր սիրտը,
Նւ արցունքը արձրել է նրան զովացնելու համար.
Նս խառնեցի հոգիս պինու հետ
Նւ տուի սիրելուս խմելու.

Գինին հզօր ըմպելի է,
 Նա հաւատարիմ կը պահի ինձ իմ սիրելուն.
 Արձաթափայլ լուսինը, երեկոյ ու վերջալոյսը
 Այսուհետեւ ոչինչ են ինձ համար.
 Ո՛վ մենաւոր վայրի սագ, որ անցնում ես իմ կտրի վրայից,
 Նրբ տեսնես ճանապարհին
 Նրան, որին սիրել եմ փշրուած սրտով,
 Ասա իմ կողմից,
 Թէ այս անջատումը մահ է»:

Երեկոն նաև պարող կանանց, այս գիշերային գեղունիներ-
 ըի ժամն է: Սրանք իսկապէս պատկանում են պալատին կայսը-
 ըի ձանձրոյթը իրանց պարերով փարատելու, բայց իշխանները
 յաճախ մի երեկոյի համար նրանց փոխ են վերցնում: Նրանք
 դուրս են գալիս կայսերական գոյնի լապտերներով և ճոխ
 զգեստների խշխշոցով: Ամենաընտիր մետաքսը, ամենաթանգ
 մորթին նրանց ուսերի համար է: Կայսեր ֆաւորիտի թևերը
 սկիւռի և կապոյտ աղուէսի մորթուց աստառ ունին. նրա մե-
 տաքսեայ թիկնոցը խողտեցուցիչ փայլ ունի. կրծքի վրայ
 կախուած է ահագին սաթ, իսկ բոլոր մատներին կրում է մա-
 տանիներ: Այն պատգարակը, որով շրջում է, ներսից պատած
 է սամոյրով:

Եւ սակայն այս սիրունները ձանձրանում են պալատում:
 Նրանք ջահիլ ու թարմ գալիս են Պեն-Իանից, որ սովորաբար
 մատակարարում է մայրաքաղաքին լաւագոյն զինուորներ և
 պարող կանայք: Պալատական ընդունելութիւնները, իրանց յա-
 ջողութիւնները, զարդերը չեն կարողանում այս կանանց մո-
 ռացնել տալ իրանց լեռները: Նրանց այծեամի աչքերի պէս
 խոշոր աչքերում, որոնք այնպէս սև են և անուշ, թախիժ
 կայ, հայեացքը ցաւոտ է, և տխուր մտքերը պաշարում են
 նրանց բաց ձակատը: Նրանք մի փոքր կենդանանում են միայն
 այն ժամանակ, երբ հնչում են հայրենի եղանակներ:

*
* *

Թաղումներն էլ կատարւում են գիշերով: Դեռ երեկոյից
 սկսւում է լապտերակիր մարդկանց մի անսովոր շարժում: Սո-
 վորութիւն կայ յուղարկւողներ վարձել թափօրը մեծացնելու
 համար: Լաւորներն ունին արևի, հովհարի կամ լոտոս ծաղկի
 ձև. կան այնպիսիները, որոնք շինուած են ջահի ձևով և պատած
 կարմիր կտորով. հեռուից խաւարի մէջ նրանք երևում են ինչ-
 պէս արեան րծեր: Մեռածի աղգականները և ընկերները կրում

Եւ սպիտակ լապտերներ: Բոլոր այս բոցերը հաւաքւում են ննջեցեալի տան շուրջը: Երկու դիակառք սպասում են դրանք. առաջինը, որ գնալու է Թափորի առաջից, դատարկ է. նրանով ղուարճացնում են սատանային՝ գցելով արծաթափայլ թղթէ դրամներ և աշխատելով նրան մոլորեցնել: Երկրորդ դիակառքը, որ զարդարուած է թղթէ գիրլիանդներով, տանում է մեռելին մի փոքրիկ դագաղի մէջ: Մեռածի որդիները նստում են այս կառքի մէջ իրանց հօր դիակի կողքին. նրանք որպէս սզի նըշան իրանց մագերի մէջ կրում են կանեփի ծաղիկներ, ձեռնիկներ՝ փոքրիկ բոժոժներ, որ հնչեցնում են և միևնոյն ժամանակ սարսափելի աղաղակներ բարձրացնում: Վարձուած լալկանները և ընտանիքի բարեկամները արձագանգ են տալիս, և տխուր թափորը անցնում է բոլոր մեծ փողոցներով՝ աղմկելով քաղաքը:

Այս կերոնները, այս լապտերները, աղաղակները, դագաղը, դիակառքը բոլորը միասին կազմում են մի տեսարան, որ յուզում է ժողովրդին: Տների լուսանցքներից հետաքրքիր կանայք նայում են շացած լապտերների լոյսով, և քաղաքը տալիս է լինում:

Սէուլի գերեզմանատները գտնւում են քաղաքից մի քանի ժամ հեռու մի ձորում, որ պաշտպանուած է քամուց: Դամբարանի տեղի ընտրութիւնը պատկանում է գեոմանցիներին (géomancien), որոնք ճանաչում են երկրի երակները և գիտեն այն տեղերը, ուր հանգուցեալը խաղաղ կը լինի: Նայելով մեռածի դիրքին՝ սատանաների գէմ ձեռք առնուած նախագգուշութիւնները աւելի կամ պակաս են. լինում: Ազնուականները ապահով լինելու և իրանց փառասիրութեան համար թաղւում են սեփական կալուածների մէջ: Յաճախ իրանք են շինում իրանց դամբարանները կենդանութեան ժամանակ. իրանց ապագայ հանգստեան տեղը թումբ են բարձրացնում, շրջափակում եղէնու փայտերով, որ նրանց կը պաշտպանի վատ քամիներից, մատուռ են շինում, քարեայ կրիայ են դնում և փոքրիկ տախտակ, ուր ոսկէ տառերով կը փորագրեն իրանց առաքինութիւնները և տիտղոսները: Կայսերական դամբարանները արուեստական բլուրներ են այս կամ այն գեղանկար դաշտում: Կայսրուհու գերեզմանը տնամտչելի է, նա շրջապատուած է եղէնու սրանչելի անտառներով և պահպանւում է գլխուորներով:

Ամուսնութիւնների ժամանակ նոյնպէս Սէուլի փողոցներում կարելի է տեսնել մեծամեծ թափօրներ: Պահծու զգեստները դուրս են բերւում, և կանանց գլուխների վրայ մազերի հաստ գալարներով ամրոջ աշտարակներ են բարձրանում ծաղիկներով զարդարուած: Հարսանեւորներն անցնում են փողոցով այնպիսի արագութեամբ, որ մարդ անկարող է լինում լաւ դիտել և միայն նրա փայլից շլանում է: Երթը բայց են անում աղջիկները, որոնք ունին թագած և հիւսուած մազեր, հին ձևի այնպիսի լայն շրջազգեստներ, որ իրանց փոքրիկ ձեռքերի մէջ հաւաքելով զգեստի ծալքերը՝ քայլում են դժուարութեամբ: Հարսին ընկերանալու համար ընտրում են սովորաբար ամենագեղեցիկ և բարձրահասակ աղջիկներին: Աղախիները հետևում են նրանց՝ տանելով զանազան ընծաներ մետաքսէ թաշկիւնակներով: յետոյ գալիս են մանուկները, որոնք՝ ինչպէս սուրբ նշխարներ՝ տանում են փայտեայ փոքրիկ, ներկած բաղեր, որպէս խորհրդանշան ամուսնական հաւատարմութեան: Հարսի փոքր եղբայրը գնում է մենմենակ, զարդարուած ինչպէս մի իշխան, հպարտ՝ թագաւորի պէս: Վերջը փեսան ձիու վրայ անցնում է սրարշաւ: Նրան առաջնորդում է մի ծառայ, որ քաշում է ձիու սանձից: Փեսան յաճախ մի պատանի է, անմօրուս, որին ամուսնացնում են ծնողները, և որը զուարճանում է երեխայի պէս: Ամենից վերջը նոյնպէս ձիու վրայ գալիս է մետաքսի և սպիտակեղէնի մի կոյտ, որի տակից երևում է մի դողդոջուն ձեռք՝ ամուսնական փայլուն օղակը մատին. դա հարսն է: Նա ենթարկուած է կատարեալ նահատակութեան: Հարսանիքի նախընթաց օրը ընկերուհիները նրա քունքերի մազերը քաշել են, նախշել են (tatouer) դէմքը՝ վարդ՝ այտերին, աստղ՝ ճակատին, ներկել են շրթունքները, յօնքերը, խցել քթածակերը և ականջները: Մազերը հիւսել են, զարդարել ծաղիկներով, ժապաւէններով և փաթաթել մետաքսի մէջ: Նա հանդէսի զարդն է, բայց ստիպուած է լինել համր, խուլ, կոյր: Տօնը նրա համար է, բայց միայն նա է տանջւում: Հարսանիքից նա կը յիշի միայն այդ սրարշաւ ընթացքը, որի ժամանակ մի քանի անգամ քիչ էր մնում վար գլորուի ձիուց: Տեղ հասնելով՝ նա յանձնւում է իր ամուսնուն ինչպէս մի հաշմանդամ: Այնուհետեւ նա ամրոջ ապէս կախուած է իր ամուսնուց, նա կարող է շնչել, խօսել, տեսնել, լսել միայն ամուսնու կամքով: Սակայն աղջիկը սովորաբար կանխապէս ճանաչում է իր նշանածին, թէև ծնողներն են ամուսնացնողները, բայց ջահիլները կարողանում են զաղամի կերպով տեսակցել:

Դրան առաջ փեսան հարսին վար է բերում ձիուց, նրան ներս է տանում և նստեցնում մի բարձր թախտի վրայ, որտեղից նա ինչպէս աստուածութիւն հարսանիքի խնջոյքը կը կառավարի: Ամուսինը նրան տալիս է այծեամի եղջիւր, հարսանեկան խորտիկները, քաղցրաւենիք, որ դարնանը հաւաքել են որսորդները, և հարսը ընդունում է այդ բոլորն ու սիրով ճաշակում:

Այնուհետև կեանքը կնոջ համար մի բանտարկութիւն է: Փակուած տան ներսում՝ նա փողոցից հեռու է և եթէ դուրս գայ, անպատճառ երեսը քողապատ: Նա պէտք է վեր կենայ առաւօտը վաղ, երբ լուսինը դեռ փայլում է, պատրաստէ բրնձէ կեւրակուրը, վերմիշելը, դդումից կամ շան մսից պատրաստած ապուրը, եփէ կարկանդակները, և մանաւանդ լաւ թափ տայ ամուսնու զգեստները, մինչև որ փայլեն: Ահա նրա կեանքը: Դեռ երջանիկ է այն կինը, որ պատահում է հաւատարիմ և ներողամիտ ամուսնու, որը թոյլ է տալիս նրան այցելութիւններ առնել հարեանուհուն կամ ընթերցարանները գնալ: Նրանք իրանց պարտքը կատարում են լուրթեամբ, որպէս հլու աղախիններ, որոնք իրաւունք չունեն ձայն բարձրացնելու: Կորէացի չի կարող տանել բողոքող կնոջը, կամ ինչպէս նա է ասում, «խօսող հաւը», կինը մնում է այնուամենայիւ կին, բոմաներ կարգացող, սանտիմենտալ, բայց միայն իր ամուսնու համար: Օտարականը տեսնել չի կարող կորէացու ներքին կեանքը, որը մնում է անթափանցելի: Եթէ նա յանկարծակի, անսպասելի կերպով ներս մտնի մի կորէացու տուն, կանայք կը փախչեն՝ դռները թրխկացնելով, յաճախ թողնելով խսրի վրայ մի ոտնաման: Ինչէր կը պատմէր այդ խղճուկ ոտնամանը, եթէ խօսել կարողանար:

*
* *

Կորէացի դրականագէտները սովորում են չինարէն և խորիմաստ բանաստեղծութիւններ են գրում այդ լեզուով դասաստականների նման: Բայց այս չինամոլութիւնը չի գրաւում ժողովրդի մարդուն, որն իր առանձին ազգային բանաստեղծութիւնն ունի: Կորէացի ժողովուրդը իր կեանքը, իր վիշտն ու իր երազները գտնում է մայրենի լեզուով գրուած երգերի ու տաղերի մէջ: Ձկնորսը երեկոյեան տուն դառնալիս, ձկներով լի կողովը շալակին, երգում է.

«Հէնց որ մայր մոտող արեւը
Շողազարդում է ծովը աղօտ փայլով,

Նս վերցնում եմ իմ կարծը
 Նև դիմում դէպի ասիերը:
 Հեռու, սլիքների փրփուրի վրայ
 Ֆէյաները վազում են թեթեւաքայլ,
 Նև ջրային արտուտները յողնած թեւերը ծալելով՝
 Մերթ թռչում, մերթ սուզում են ջրում:
 «Փռենք մեր արծաթափայլ ձկները,
 Նրանց ականջաձայրերից՝ անցկացնենք ուռնու մի շիւշ,
 Այնուհետեւ նախ դէպի գինեռուն,
 Ապա դէպի տուն:

Երիտասարդ դարերինը տեսնելով, թէ ինչպէս օրաւուր,
 ծերանում է իր հայրը, բացագանչում է ցաւագինօրէն.

«Ա՛խ, եթէ կարողանայի
 Երկաթի այս հաստ կտորից
 Մի երկար-երկար լար քաշել,
 Լարը պարզել եւ հասցնել արեւին,
 Բռնել նրան եւ արգելել իր մուտքը,
 Որպէսզի իմ ծնողները,
 Որոնց քունքերը ձերմակում են,
 Էլ չծերանան ո՛չ մի օրով»:

Կորէական երգերի մեծ մասը սիրային անմեղ գանգատ-
 ներ են, որոնցով յուսախաբ սիրահարը բնութեանն է պատ-
 մում իր ցաւը.

«Ուշ գիշերին ես լսեցի լացող վտակի հեծկտանքը.
 «Քո սիրահարը պատուիրեց ինձ
 «Այսպէս լաց լինել,» ասաց նա:
 Ո՛վ վտակ, աղաչում եմ քեզ,
 Դարձիր, դարձիր դէպի յետ
 Նև գնա պատմիր նրան,
 Թէ ես էլ եմ արտասւում»:

Ահա մի այլ երգ քամու ձայնի վրայ: Ով լսել է եղենի-
 ների ճռնչոցը փոթորկի տակ, նա սիրով այն կը կրկնի կրակե-
 առաջ նստած:—

«Երբ մայր երկիրը խոր հառաչանք է արձակում,
 Մենք ասում ենք՝ քամին բարձրացաւ.
 Նև երբ երկիրը հառաչում է իր բոլոր ձեղքերից,
 Ասում ենք՝ քամին շատ ուժգին է:
 Նև այն ժամին ի՛նչպէս սարսափում են ծառերը քլուրների վրայ:
 Հողի բոլոր ձեղքերը, խորերն ու անդունդները
 Լցւում են մոմոցով ու սուրճով,
 Նև հազարումի աղաղակներ են ջնջւում—

Մերթ մեղմ մրմունջներ, մերթ երկար հազոց,

Սուր ֆիւեր, սպառնալի մոռնչ,

Ցածր ձայներ ու անաղին որոտներ,

Ալիքների գոռոց եւ եզների բառաչ:

Նւ երկիրը հառաչում է իր բոլոր վէրքերից,

Անտառները հողում են մինչեւ աշխարհի հիմքերը»:

Երբեմն բանաստեղծը փխլիստփայլութիւն է անում, բայց միշտ տխուր, միշտ մեղամաղձոտ: Ահա վեց հազար տարի է, որ արեւելցիները չեն կարողանում մխիթարուել՝ տեսնելով ժամանակի փախուստը:—

«Մ՛վ սպիտակ, սրամուիչ արտուտներ,

Դուք լողում էք ազատ եթերում,

Չունիք ոչ ցաւ, ոչ հոգս,

Ասացէք, ո՛ւր են այն դիւթական կղզիները,

Ուր մահկանացուները կարողանան թողնել իրանց վիշտը

Նւ թռչել ձեր յիտեւից:

Այս լեռը եւ այս կապոյտ ջրերը

Միթէ մի օրում ստեղծուեցին,

Նրանք էլ ժամանակի հետ աճել են, մեծացել:

Նս էլ եմ աճել, հասակ առել:

Օրերս անցան, տարիներս գլորուեցին,

Նւ ահա ձերութիւնը մօտենում է քայլառքայլ:

Կեանքիս կէսն արդէն սահեց ու անցաւ,

Նւ էլ երբէք, երբէք ես ջահիլ չեմ լինի:

Ա՛խ, գոնէ ձերութեանս բնթացքը կանգ առնէր:

Գոնէ մազերս չսպիտակելու գաղտնիքը գիտենայի:

Միթէ մենք մի քանի մարմին ունինք,

Միթէ մենք մի քանի կեանք ունինք,

Ա՛հ, այս մէկը լոկ մի վատ երազ էր:

Մի վայրկեան հանգիստ ու դադար չունեցանք

Նւ ցաւը, միայն ցաւը ճաշակեցինք»:

Բանաստեղծութեան կենդանի իմաստը կորէացիք վաղուց են ըմբռնել: Նրանք երկար ժամանակ ապրել են երազներում. չէ՞ որ մինչև XVI-րդ դարը նրանք պաշտում էին աստղերը:

Բացի բանաստեղծութիւնից կորէացիք ունին նաև շատ առածներ ու ասացուածքներ, որոնց մէջ երևում է բաց խելք, կեանքի ծիծաղաշարժ կողմերը հեզնող ոգի, բայց առանց մաղձի: Կորէական իմաստութիւնը ոչ անհամ է, ոչ տափակ, նրա մէջ կայ հակիրճ ու սուր նկատողութիւն. նա կարողանում է երեք բառով ներկայացնել մի թերութիւն: Առածները ցեղերի հոգու հայելին են: Կորէական առածները

ցոյց են տալիս այդ ժողովրդի աղքատութիւնը. նա ստիպուած է ամեն բան հաշուի առնել: Այսպէս.

—Ընծայել մէկին մի հատիկ տանձ և յետոյ նւաճից մուրալ սերմերը:

—Ես չէի կամենայ գինի գնել նոյնիսկ իմ հարազատ հօրաքրոջից, եթէ էժան չէ:

—Թէ աղ եմ տանում վաճառելու, անձրև է գալիս, թէ ալիւր եմ տանում, քամի է բարձրանում:

—Կորէան մի երկիր է, ուր աղքատութիւնը չափազանց կեղտոտ է:

—Եթէ նոյնիսկ տունը ամբողջապէս հրդեհուի, էլի մի բարիք է, որ մարդ ազատուել կարողանայ մլուկներից:

Կորէացին հեգնում է փառասէրին.

—Նա կամենում է տաք ջուր քաշել ջրհորից.

Անմիտ աշխատանքի մասին.

—Եթէ ուզում էք ջրհոր փորել, գոնէ մի հոր փորեցէք:

Աշխարհի մեծամեծներին խրատ.

—Ինչքան և մեծ լինի մարդը, մի՞թէ կարող է նա աստղերը քաղել երկնքից:

Փոքրերի յանդուգն մեծամտութեան մասին.

—Շնիկը չի վախենում վագրից:

Կորէացին միամիտ ձևով պատմում է, թէ ինչպէս իրան խաբել են.

—Ինձ ասում է՝ բարձրացիր ծառը, և յետոյ ինքը թափ է տալիս:

Ինչպէս նա որոճում է մէկի երեսից իր կրած ցաւը.

—Մինչև իսկ հողի որդը չի մոռանում, որ իրան մի օր տրորել են ոտքով:

*
* *

Ազնուական, պրականագէտ թէ մանգաղին, բոլորն էլ ժողովրդի տէրերն են, նրա վաստակին նայող աչքեր: Հարկերի բեռի տակ հեծում է ամբողջ երկիրը: Մերթ մանգաղինը պարտական է ձարել կայսեր համար վագրի մորթու որոշ թիւ, և ահա որսորդներն ստիպուած են սար ու ձոր ընկնել. ուրիշ անգամ էլ նա տեսնում է որևէ գիւղում մի նոր կտուր, և ահա գիւղացին պիտի վճարի: Պետական հարկերն այնքան շատ են, որ կորէացին վերջիվերջոյ լաւ է համարում ոչինչ չանել: Սիրիւրում սակայն նա լաւ է աշխատում և դրամ է վաստակում: Նա ծոյլ է միայն, որովհետև իր կառավարութիւնն ազահ է: Ժողովրդից այսքան խտուրթեամբ յափշտակուած փողը ծառա-

յում է կայսեր քմահաճոյքները կատարելու համար. սրանով է նա կատարում իր ընդունելութիւնները, ճաշերը, հրավառութիւնները, իր ճոխ և մեծածախս զբօսանքները, հողում է իր ձիերի և փղերի ծախքը, բրինձ բաժանում մայրաքաղաքի բնակիչներին և պահպանում է զօրքը: Եւ ծախքերը խիստ մեծացել են այն ժամանակից, երբ կայսրը արձակեց իր միլիցիան և ձեռնարկեց ևրոպական ձևով զնդերի կազմակերպութեան: Նոր զնդերը ամեն առաւօտ վարժութիւններ են կատարում պալատական հրապարակի վրայ, առանց որևէ յառաջադիմութեան. մինչև իսկ զինուորական փողերը լաւ ածող չկայ: Նորակոչ զինուորները շատ յիմար տեսք ունին իրանց համազգեստով, իրանց ծամերի հիւսերի վրայ ցցած գլխարկով: Ոտնամանները քերթում են նրանց ոտները, և զինավարժութիւնների ժամանակ նրանք գալիս են կծկուած, ձեռքերը զրպաններում և հրացանը թևի տակ: Այրուծին աւելի լաւ չէ: Կորէական փոքրիկ ձիերը համարձակ են ու կատալի, նրանք կարողանում են անցընել լեռնային շաւիղներով և հիանալի կը լինէին յանկարծական, ծածուկ յարձակումների համար: Կայսրը սակայն սրանց փոխարէն իր զինուորներին տուել է աւստրալիական խոշոր ձիեր, որոնք բոլորովին անպէտք են կռուի մէջ, խիստ անյարմար խաղաղութեան ժամանակ:

ՆԻՑՃԷՆ ԻՐՐԵՒ ՓԻԼԻՍՈՓԱ

(Հանս Վայհինգերի)

Նիցշէի վարդապետութեան այսպէս ասած միջուկն ու արմատը գտնելուց և երևան հասնելուց յետոյ մենք կարող ենք այժմ հասկանալ նաև այն տարօրինակ սկզբունքների ներքին կապը, որ վերը զետեղեցինք, Նիցշէին կանխապէս բնորոշելու համար: Բոլոր այդ տեսդէնցիաները, որոնք սուր կերպով ուղղուած են սովորական հեղինակութիւններից շատերի դէմ, մաթեմատիկական անհրաժեշտութեամբ, կամ ինչպէս Սպինոզան է ասում՝ *more geometrico* բղխում է Նիցշէի վարդապետութեան կենտրոնից:

*) Տես «Մուրճ» № 3

Յիշեալ սկզբունքի անհրաժեշտ հետևանքն է կազմում նախ հէնց Նիցշէի հակա-յոռետեսական ուղղութիւնը: Իհարկէ՝ եթէ բնութիւնը ցանկանում է, որ ուժեղը յաղթէ իրանից թոյլին, եթէ նա գոյութեան կռիւը գործադրում է տեսակները կատարելագործելու համար, այդ դէպքում մենք իրաւունք էլ չունինք դատապարտելու կռիւը և նրա պատճառած չարիքները: Տեսակների կատարելագործումը և կեանքի բարձր զարգացումը իրրև նպատակ ընդունողը պիտի համակերպուի նաև միջոցներին. այսպէս օրինակ՝ նա պիտի ցանկանայ տարբեր անհատական ձգտումների ընդհարումը, աւելի ուժեղի յաղթանակը և թոյլի ջախջախումը. նա պիտի ընդունի, հաւանութիւն տայ այն բոլոր անգթութիւններին, որոնք անպայման կից են այդ կռուին: Այսպիսով յոռետեսութիւնը, որը գոյութեան կռուի անողորմութեան պատճառով լացուկոծ է բարձրացնում, մի խղճուկ թուլամորթութիւն, մի հակա-բնական երևոյթ է: Այս մտքով Նիցշէն կռիւ է մղում Շոպենհաուերի «նիհիլիստական այլասեռման» դէմ. նա պահանջում է, որ մարդիկ կեանքը ընդունեն, որ բազդը, նոյնիսկ ամենաշար բազդը սիրեն. նա պահանջում է amor fati (ճակատագրի սէր). ըստ Նիցշէի տրտունջը առհասարակ ստրկին յատուկ մի թուլութիւն է և հիմնուած է «փափկակեցութեան» վրայ: Հերոսը, վսեմ արարածը չէ տըրտնջում. նա մարտնչում է ժպտալով և նոյնիսկ անկման ժամին էլ պահպանում է այդ ժպիտը: Իհարկէ՝ ընդհարումը և կռիւը ցաւ է պատճառում. անթիւ ու դաժն ցաւեր. սակայն առողջ կամքն ընդունում է գոյութեան կռուի պատճառ այս ցաւերը իբրև կեանքի մակերևոյթը ամեն տեսակէտից բարձրացնող մի անհրաժեշտ միջոց. չկայ յառաջադիմութիւն առանց կռուի և չկայ կռիւ առանց ցաւերի: Ցաւը զօրացնում է ուժեղին և թուլացնում թոյլին. այսպիսով էլ հէնց կատարւում է նախասահմանուածը. չէ՞ որ թոյլը պիտի իսպառ ընկնէր, իսկ ուժեղը կատարելագործուէր *): Վառվռուն պերճախօսութիւններով Նիցշէն փառաբանում է բընութեան այս օրէնքը, նա ջատագովում է կեանքը և յոռետեսների յանդիմանութիւնների առաջ արդարացնում է բնութիւնը: Մի ժամանակ կարիք էր լինում «Աստծուն արդարացնելու» այն առարկութիւնների առաջ, որոնք հիմնուած էին աշխարհի չարիքների վրայ: Լայբնիցը իր «Theodicee»-ն այս տեսակէտից զրեց: Նիցշէն ջատագովում է ոչ թէ Աստծուն, այլ տիեզերքը, բնութիւնը և կեանքը: Մեկնելով այս տեսա-

*) Սա՝ իհարկէ՝ Նիցշէի և ոչ թէ պ. Վայհինգերի կարծիքն է: Ծ. Թ.

կէտից՝ Նիցշէն ձգտում է «փափկասուն» մարդուն կրկին կենսութեան խնամքին ներշնչել, այսինքն ռազմասէր դարձնել նրան: Դեռ Գեոթէն էր ասում, որ մարդ լինել՝ մարդիկ լինել է նշանակում: Ըստ Նիցշէի մարդ պիտի կռուի ոչ միայն արիւնքով, այլև խնդութեամբ: Նա յոյս ունի, որ ռազմասիրութեան և կենսութեան այս աւազանում մեր հիւանդ դարը կը բուժուի, որ վերջինիս յոռետեսութեան շնչով նուազած և այլասեռուած ոգին կը կազդուրուի:

Այս տեսակէտից Նիցշէի վարդապետութիւնը բնորոշող տարրը Շոպենհաուերի յոռետեսութեան յաղթահարելն է: Նիցշէի պատմական դիրքը, փիլիսոփայութեան պատմութեան մէջ ունեցած նրա դերը կախումն ունի գլխաւորապէս այն հանգամանքից, որ հիմնուելով հէնց իրա Շոպենհաուերի վոլունտարիզմի (կամքի վարդապետութեան) վրայ՝ նա վերջինիս յոռետեսութիւնը տապալում է: Երբ որևէ նախկին վարդապետութիւն տապալւում է, այդ դէպքում պատմականօրէն նշանաւոր է լոկ այն յաղթանակը, որի ելակէտը հէնց նոյն այդ հին ուսմունքն է կազմում: Այս դէպքում էլ ելակէտը վոլունտարիզմն է: Նիցշէն յատկապէս այն է բնորոշում, որ գլխաւոր կէտերում ընդունելով Շոպենհաուերի վոլունտարիզմը՝ նա ջուրն է նետում վերջինիս յոռետեսական տարրը: Այս հակա-յոռետեսական տենդենցիան մեծ դեր է խաղում Նիցշէի յաջողութեան վերաբերեալ. այս փիլիսոփայի առաջնորդութեամբ մարդիկ ուրախութեամբ են թօթափում իրանցից յոռետեսութեան լուծը, որը Շոպենհաուերից սկսած շատ շատերին է ճնշում:

Մինչև այժմ էլ յաճախ է կռիւ մղուել յոռետեսութեան դէմ, սակայն այդ կռուի շարժառիթները մի տեսակ անհիմն են եղել. այն հիմնովին տապալում է Նիցշէն, որը՝ ինչպէս ասացինք՝ անում է այդ հիմնուելով Շոպենհաուերի սկզբունքների վրայ: Նախ նա ընդունում է այն ամենը, ինչ որ Շոպենհաուերն ասում է աշխարհի և կեանքի դէմ, սակայն՝ չնայած այդ ամենին՝ նա չէ կորցնում իր «դէպ կեանքն ունեցած հաւատը». նրա կարծիքով «կեանքի դրական ոյժերը» («Die Iaschaffenden Gewalten des Lebens») այսուամենայնիւ յաղթող են հանդիսանում: Չնայած ցաւերին, նա քարոզում է «կեանքի յաղթանակը» — «Triumph des Lebens». վերջինս երևան է դալիս մանաւանդ նրա կէսգիշերային երգի՝ «Գինովցածի երգի» (trunkenen Lad) մէջ. սրա ասելով կեանքի ցաւերը պէտք է սիրով ընդունել:

Հէնց այս պատճառով էլ Նիցշէի լաւատեսութիւնը այն-

քան էլ պարզամիտ ու տղայական չէ, ինչպէս օրինակ Դաւիթ Շտրաուսի լաւատեսութիւնն է, որի դէմ նա իր ժամանակին շարժում էր թունալից երգիծաբանութեան (սատիրի) մտրակը: Նիցշէի լաւատեսութիւնը աւելի յիշեցնում է էլի Հերակլիտի սխտեմը. վերջինիս՝ ինչպէս արդէն գիտենք՝ մեր փիլիսոփան շատ բարձր էր դասում: Հերակլիտի լաւատեսութիւնը զուրկ չէ այն դառն ցասումից, որը ուղղուած է առօրեայ հոգսերից խզուած տառապանքների և մանրակրկիտ մարդկանց նախապաշարումների դէմ. նա ընդունում է նաև գոյութեան կատաղի կռիւը և վերջինիս իշխանութիւնը ամենալայն մտքով, որ երևում է նրա վերը յիշած հռչակաւոր նշանաբանից *): Չնայած իր համաշխարհային լաւատեսութեանը՝ Նիցշէն—ինչպէս մի ժամանակ Հերակլիտն էր անում—կատաղի հայհոյանքներ է թափում իր ժամանակակիցների հասցէին, որոնց նա ապականուած է համարում. ժամանակակից մարդկանց անկումը նրա կարծիքով երևում է այն հանգամանքից, որ սրանք փոխանակ արիաբար և զուարթ կերպով ճակատագրին դիմադրելու՝ մեղկօրէն խուսափում են վերը յիշած գոյութեան կռուից և սրան կից ցաւերից: Այսպիսով էլ պարզւում է այն տարօրինակ բանը, թէ ինչու Նիցշէին՝ լաւատեսութեան այդ մարդարէին՝ գործին անտեղեկ մարդիկ յոռետես են համարում: Ընդհակառակն՝ Նիցշէն Հերակլիտի և Հեգելի պէս արմատական, անյողդողդ լաւատես է. նրա սկզբունքն էլ է այս. *rerum concordia discors*. *discordia*-ն (հակաձայնութիւնը) գոյութիւն ունի միայն *concordia*-ին (համաձայնութեան) փայլ տալու համար: Սակայն ով անհրաժեշտ *discordia*-ի յետև համաշխարային *concordia rerum*-ը (իրերի համաձայնութիւնը) չէ տեսնում, ով դէպ կեանքը վառ հաւատ, կամ աւելի ճիշտ՝ բուռն ցանկութիւն չունի, նրա մէջ արդէն իշխում է անբնական տարրը: Ըստ Նիցշէի կեանքի բնական հակումները զրական են: Այս պատճառով նա դատապարտում է սովորական՝ այսինքն բացասական ասկետիզմը: Իր սեփական հայեցակէսի հիման վրայ նա ընդունում է լուրջ այն տեսակի զրական ասկետիզմը, երբ մարդիկ ապրելու և իշխելու նպատակով արիաբար ընտելանում են ցաւերին: Նրա կարծիքով յոռետեսութիւնը էներգիայի բացակայութիւն է, որը պարսաւելի երևոյթ է:

Կեանքը ըստ ծագման հաճոյք է, չնայած նրա ցաւերին.

*) Տես «Մուրճ» № 3, եր. 117. «Գուրջ ամեն բանի նախահայրն է. ընդհարումից և կռուից է բղխում ամեն մի յառաջադիմութիւն»:

ցաւը առողջ և ուժեղ մարդու համար նոյնիսկ հաճոյքների մի աղբիւր է ներկայացնում, որովհետև ցաւերի դէմ կռուի մէջ մարդ աւելի է գործադրում իր կամքը, իր սկզբնական բնազդները:

Այս ռազմասէր, եթէ կարելի է ասել՝ յորդառատ և կատաղի կենսութաւութիւնը՝ չնայած կեանքի բոլոր վշտերին՝ դարձնում է Նիցշէին մանաւանդ երիտասարդ արուեստագէտների, առանձնապէս Բեռլիլինի հետևողների աչքի լոյսը: Վերջինիս կենտարմաները և տրիտոնները գեղարուեստորէն ներկայացնում են այն բնական և անսանձ կենսութաւութիւնը, որ տեսականորէն Նիցշէն է պաշտպանում: Այստեղ կարելի է յիշել նաև Գլինզերին, մանաւանդ նրա մի շարք հոշակաւոր՝ «Մահուան մասին» կոչուած նկարները, իսկ սրանցից առանձնապէս մէկը, որը «Այնուամենայնիւ» («Und doch») բնորոշ ներքնագիրն ունի: Այս նկարն ասում է մեզ մտաւարձապէս հետեւեալը. «Չնայած բոլոր վշտերին ու ցաւերին, որոնք կապուած են մահուան հետ, կեանքը այնուամենայնիւ հաճոյք է»:

Այս մտքով Նիցշէի նշանաբանն է. «Memento vivere» (յիշիր կեանքը):

Ուրեմն Նիցշէի հիմնական սկզբունքը Շոպենհաուերի կամքի վարդապետութիւնն է, որը դարվլինիզմի ազդեցութեամբ շրջած է դէպ զբաւանդ: Այս հիմնական սկզբունքից է բղխում նրա հակա-յոռետեսական տրամադրութիւնը և ուղղութիւնը: Նոյն այս սկզբունքից անհրաժեշտորէն բղխում է նաև Նիցշէի հակա-կրօնական, յարակցաբար հակա-քրիստոնէական ուղղութիւնը:

Դէպի կրօնը և յատկապէս դէպի քրիստոնէութիւնը Շոպենհաուերը այնքան էլ թշնամաբար չէ վերաբերում, ինչպէս այդ յաճախ կարծւում է: Ընդհակառակն, կարելի է ասել, որ նոր փրկութիւններից և ոչ մէկը այնքան խորը չէ թափանցել քրիստոնէութեան մէջ և այնպէս վառ պաշտպան չի հանդիսացել նրա էութեանը, ինչպէս այդ Շոպենհաուերն է արել: Համեմատեցէք միայն այն, ինչ որ Կանտը, Ֆիխտեն, Հեգելը, Հերբարտը և նոյնիսկ Շլայերմախերն է ասել քրիստոնէութեան վերաբերեալ՝ Շոպենհաուերի ասածների հետ: Վերջինս խորին յարգանք է տածում առանձապէս դէպի քրիստոնէութեան այս երեք հիմնական գաղափարները—չարի, սիրոյ և աշխարհատեցութեան:

Չարը թէ՛ ֆիզիկական և թէ՛ բարոյական չարիքի իմաստով նշանաւոր դեր է խաղում Շոպենհաուերի աշխարհայեացքում: Ի՞նչպէս կարող էր նա չըմբռնել քրիստոնէութեան մի

համանման հիմնական գաղափար: Սակայն սիրոյ տեղ Շոպենհաուերը ընդունում է կարեկցութիւնը, որը նրա կարծիքով բարոյագիտութեան համաշխարհային սկզբունքն է: Ինչ վերաբերում է աշխարհատեսցութեան և սրա հետեանքին—աշխարհից փախուստ տալուն—սա իր փիլիսոփայական մեկնաբանութիւնը և արդարացումը իսկապէս լոկ Շոպենհաուերի շնորհիւ է ստացել: Ո՛րքան անհասկանալի է այն ամենը, ինչ որ միւս փիլիսոփաներն են ասում վանականութեան, ասկետիզմի և կուսակրօնութեան վերաբերեալ, համեմատած այն խորիմաստ բացատրութիւնների հետ, որ Շոպենհաուերն է տալիս այս երևոյթների մասին: Նրա երկասիրութիւններից մի ամբողջ շատագովական ճառ կարելի է քաղել քրիստոնէութեան վերաբերեալ, չնայած որ այլ տեսակէտներից նա այս վարդապետութեան և առաւել ևս սրա հիմնաքարի՝ հրէականութեան կատաղի հակառակորդն է:

Նիցշէից մենք չենք կարող սպասել մի այսպիսի համակերական վերաբերում դէպի քրիստոնէութիւնը: Այն հանգամանքը, որ Նիցշէն Դարվինի ազդեցութեամբ Շոպենհաուերի վուլունտարիզմը դէպ զրականն է շրջել, այդիսկ հանգամանքը պայմանաւորում է նաև նրա բացասական վերաբերումը դէպի քրիստոնէութիւնը: Բնական է, որ վերջինիս յոռետեսական տարրը վերը ասածներիցս յետոյ պիտի ամբողջապէս դէմ լինի նրա աշխարհայեացքին: Մանաւանդ՝ չէ՞ որ Նիցշէն չէ ընդունում բարոյական չարիքի, մեղքի գաղափարը (քրիստոնէական վարդապետութեան իմաստով): Նրա կարծիքով մեղքի հէնց այդ գաղափարն է կեանքի թարմութիւնը և զուարթութիւնը քայքայող տարրը: Քահանաները երևում են նրան որպէս կեանքի արժանիքների և խղճի կեղծիչներ: Ինչ որ բնական է, բնազդական է և օրիգինալ, նրանք յանցանք անուանեցին, իսկ երկչոտութիւնը, անգործութիւնը, էներգիայից և արիւնից զուրկ լինելը—առաքինութիւն: Ըստ Նիցշէի այսիսկ քահանաները ծաղկալիթի կեանքի փոխարէն տալիս էին գունատ առաքինութիւններ. նրանք նախատինք էին կարողում մարմնական կեանքի՝ դէմ և նսեմացնում նրան արիւնազուրկ ստուերների առաջ: Մարդի և կեանքի այս ամբողջ յոռետեսական ըմբռնումը Նիցշէն պիտի հիմնովին դատապարտէր: Նոյնքան քիչ կարող է յարգել նա քրիստոնէութեան երկրորդ հիմնական գաղափարը—սիրոյ գաղափարը: Չէ՞ որ սէրը կարեկցութիւն է, իսկ կեանքը (ըստ Նիցշէի) կարեկցութիւնից զուրկ է, նա կռիւ ու պատերազմ է, միայն սրանք են կեանքին զարկ տալիս, սակայն քրիստոնէական սէրը ձգտում է խոչընդոտ հան-

դիսանալ այսիսկ բնական կարգուկանոնին, որի շնորհիւ ապրելու անընդունակները ոչնչանում են և միայն ընդունակները կայուն մնում: Ուրեմն և երկրորդ հիմնական գաղափարի մէջ Նիցշէն ըստ իր հայեցակէտի մի անբնական բան պիտի տեսնէ: Իսկ ինչ վերաբերում է արդէն աշխարհատեսութեան և աշխարհից խոյս տալուն—քրիստոնէութեան այս երրորդ գաղափարը Նիցշէն պիտի ապերախտութիւն համարէ դէպ բնութիւնը, դէպ այնիսկ բնութիւնը, որը մեզ շրջապատում է, և որի զաւակներն ենք մենք: Բնութիւնը մեզ նշանակել է կռուելու և գործելու համար, իսկ քրիստոնէութիւնը կամենում է խել մեզնից մարանշելու պատրաստականութիւնը և ստեղծագործելու սէրը: Մենք պէտք է ջանք թափենք աշխարհիս և մեզ վրայ, որպէսզի «մեր երկրին մի միտք տանք»—իսկ քրիստոնէութիւնը դատապարտում է այս աշխարհը որպէս «աշխարհ», որպէս «երկրային», և ստիպում է մեզ տենչալ մի առասպելական, երազական հանգերձեալ կեանք, որի շնորհիւ մենք աչքից բաց ենք թողնում մեր պարտաւորութիւնը. վերջինս կայանում է նրա մէջ, որ այս կողմի, այսինքն երկրային գոյութիւնը մեր ոյժերի չափ ինքներս ձևակերպենք: Նրա կարծիքով քրիստոնէութիւնը փոխանակ իրական աշխարհի տէրը դարձնելով՝ մեզ մի ինչ-որ հնարովի Աստծու ստրուկներ է դարձնում: Այսպիսով Նիցշէն մի հազուագիւտ դառնութեամբ կռիւ է մղում քրիստոնէութեան և առհասարակ բոլոր կրօնների դէմ: Եւ անկարելի պիտի լինի մի այլ վերաբերում դէպ կրօնական ոյժերը, եթէ մարդ առանց այլևայլութեան ընդունի Նիցշէի սկզբունքը: Նրա գրուածքներում հազար ու մի վարիացիայով կարելի է գտնել Լուկրեցիայի հին դարձուածքը *Tantum religio potuit suadere malorum* (Վատերի կրօնը այդչափ կարողացաւ համոզել):

Նոյն հիմնական սկզբունքից բղխում են Նիցշէի վարդապետութեան նաև այլ կողմերը, որոնք արդէն վերը յիշատակուած են, այն է նախ՝ հակա-ռամկավարական և հակա-սոցիալիստականը:

Ինչ վերաբերում է հակա-ռամկավարական ուղղութեանը, կարելի է ասել հետեւեալը. արդէն վաղուց է յայտնի, որ դարվինականութիւնը արիստոկրատիական (ազնուապետական) վարդապետութիւնն է կամ հէնց արիստոկրատիայի վարդապետութիւնն է: ԶԷ որ դարվինիզմը ուսուցանում է, որ բնական օրէնք է, երբ անելի ուժեղը յաղթում է իրանից թոյլին: ԶԲ որ նա ուսուցանում է, որ գոյութեան կռուի շնորհիւ կռուողների առաւելութիւնները բազմապատկւում են և ժառանգաբար

անցնում սերնդից սերունդ: Մենք այստեղ նշմարում ենք լուկադնուակետական գծեր *). Նիցշեն էլ բնութեան ցանկացած մի կարգադրութիւն է համարում, որ ուժեղագոյնը իշխանութիւն ձեռք բերի: Նրա կարծիքով այն անհատները, որոնց մէջ «ձրգտումն առ իշխանութիւնը» աւելի կենդանի կերպով է արտայայտւում, իրաւունք էլ ունին գործի գլուխն անցնելու, իսկ առաւելութիւնները ժառանգաբար կ'անցնեն ապագայ սերունդներին:

Այդ համակրանքը, որ Նիցշեն տաժում է դէպի պատմական ադնուակետութիւնը, հասնում է երբեմն այն աստիճանի, որ նա սկսում է յափշտակուել 17-րդ և 18-րդ դարի հին ադնուակետական Ֆրանսիայով: Նա սկսում է հռչակել վերջինիս առաւելութիւնները, բացառիկ կողմերը, նրբութիւնները և կուլտուրայի վսեմութիւնը: Նա երբեմն հիանում է նոյնիսկ լեհական ադնուակետների իշխանութեան շրջանով, այն ադնուակետների, որոնց փայլը՝ ինչպէս գիտէք՝ կեղծ էր: Սակայն ադնուակետական հակումների շնորհիւ մեր փիլիսոփան մեծ թուով համախոհներ է ձեռք բերել: Հաւատացնում են, որ նոյն իսկ մեկլենբուրգեան բարոնները, որոնք իրանց հոգեկան սընունդը առհասարակ «Kreuzzeitung» և «Adelsblatt»**) թերթերից են ստանում, կէտառկէտ կարդում են Նիցշէի գրութեանը: Յամենայն դէպս Նիցշեն իր ադնուակետական հակումներով հաճոյանում է ժամանակակից մի հոսանքի: Միայն Գերմանիայում չէ, որ ադնուակետութեան ոյժը աճելու պրոցեսսի մէջ է գտնւում: Սակայն պէտք է նկատել, որ Նիցշեն այս տենդենցիային յետոյ էլ մի այլ գոյն է տալիս, երբ նա իր հայտացքը ուղղում է ոչ թէ դէպի անցեալը, այլ դէպի ապագան: Խօսելով ապագայի մարդկանց կրթութեան մասին՝ նա աչքի առաջ ունի ոչ այն ժառանգական ադնուակետներին, որոնք կարող են զարգանալ մարդկային հասարակութեան մէջ: Նիցշեն գլխաւորապէս զբաղւում է այս արիստոկրատիական հոգիներով և ոչ «անհափ շատեր»-ով—ամբոխով: Եւ արիստոկրատիական հոգիների համար նա բացառութիւններ է և նրբութիւնների մի օրնսգիրք է տալիս, որով սրանք որպէս ադնուակետներ կատարելապէս անջատւում են հլու մասսայից:

*) Մեկ թիւում է, որ պ. Վայհինգերի արած եզրակացութիւնը դարձնելով մի վերաբերեալ սխալ է. խօսելով զոյութեան կռուի և ուժեղի յաղթանակի մասին՝ ալի վարկապետութիւնը աչքի առաջ է ունեցել լուի Ֆիլիպական տոտալիտիւնները և ոչ ծագման առաւելութիւնները: Ծ. Թ.

**) Գերմանական թերթեր են խիստ պահպանողական ուղղութեամբ: Ծ. Թ.

Արդ՝ ի՞նչ է լինիլ հաճելի իրան էլ այդ առաջնակարգ-
 ների թուլին դասել: Մանաւանդ արուեստագէտներն ու գրող-
 ները, բայց նաև գիտնականները և առհասարակ բոլոր ասպա-
 րէզների առաջնորդող անհատները իրանց իրաւացի են հա-
 մարում այս աղնուապետական հասարակութեանը պատկանել:
 Իհարկէ՝ շատերը բաւարարութիւն և հաճոյք են գտնում
 Նիցշէի երկերի ընթերցանութեան մէջ այն ճակատագրական
 հանգամանքի համար, որ մեր հաւասարեցնող, ռամկավարօրէն
 «հարթ և աւելի հարթուող» դարում «ամենի համար հաւասար
 իրաւունք» է իշխում: Այսպէս է պատուիրում հարիւր տարուց
 ի վեր ռամկավարների նշանաբանը: Ամենի հաւասարութիւնը
 ֆրանսիական յեղափոխութեան նշանաբանն է. վերջինիս դէմ-
 առդէմ Նիցշէն շեշտում է մարդկանց անհաւասարութիւնը,
 և որովհետև մարդիկ անհաւասար են ու համարժէք չեն, ուստի
 Նիցշէն ատում է ռամկավարների ձգտումը, այն է—հաւասարե-
 ցնել նրանց: Այս ձգտումի մէջ նա տեսնում է մի անարդար
 վերաբերում դէպի այն բնութիւնը, որը արարածներին և
 մարդկանց անհաւասար է ստեղծել: Նիցշէի ասելով բնութիւնը
 ինքն է առաջարկել մեզ «դասակարգային պրոբլեմը». ուրեմն
 մենք յանցանք ենք գործում նրա դէմ՝ ձգտելով արուեստօրէն
 հաւասարութիւն ստեղծել այնտեղ, ուր նա իր իմաստութեամբ
 անհաւասարութիւն է առաջ բերել: Այս ըստ տեսակի անհա-
 վասարութեանը պիտի հետևէր նաև ըստ իրաւունքների անհա-
 վասարութիւնը: Նիցշէն ասում է, որ վսեմ էակները, ուժեղնե-
 րը, էներգիայով ներշնչուածները իշխելու համար են ստեղ-
 ծուած, իսկ աննշան, թոյլ և կամազուրկ էակների ամբո-
 խը—տիրապետուելու համար: Առաջինները պիտի վերջիններիս
 անհրաժեշտ «Distanz der Abhängigkeit»-ի (կախումի անջրպետ)
 վրայ պահեն: Սակայն երբ մասսան ինքն է իր ձեռքը վերցը-
 նում առաջնորդութիւնը, այնտեղ արդէն առաջնակարգները—
 ազնիւները ինքնաբերաբար ետ են քաշւում ասպարէզից: Վերջի-
 վերջոյ Նիցշէն ժողովրդի, մասսայի, դերը նոյնիսկ այն բանի
 մէջ է տեսնում, որ նա սակաւաթիւ արիստոկրատ հոգիների
 համար ծառայէ որպէս պատուանդան: Ահաւասիկ այստեղ նրա
 «անչափ շատեր» հարուածող խօսքը մերձէնում է Շոպենհաուե-
 րի՝ նոյնպէս մասսան հարուածող՝ «բնութեան տասնեակներով
 ապրանքը» դարձուածքին: Սակայն Շոպենհաուեը իր այս մե-
 ծամիտ արտայայտութիւնը մեղմացնում է կարեկցութեան բա-
 րոյագիտութեամբ, իսկ Նիցշէն, որը անցել է դարվինիզմի խն-
 տաշունչ դպրոցը և նրա գոյութեան կոռուի ուսմունքը, չունի
 այս մեղմացուցիչ տարրը: Նա ընդունում է, որ ինչպէս բնու-

Մայիս, 1904.

թիւնն է անկարեկից և անխիղճ, այնպէս էլ պիտի կուլ'տուրան լինի: Նրա համար «անչափ շատերը» (ինչպէս քիչ առաջ ասացինք) լոկ պատուանդաններ են սակաւաթիւ ընտրեալների և բացառիկ մարդկանց համար:

Բնականաբար Նիցշէի հակա-սոցիալիստական ուղղութիւնը նոյնպէս բղխում է այդ ընդհանուր սկզբունքից: Չէ՞ որ սոցիալիզմի հիմնաքարն էլ հէնց այն է, որ անհատը որպէս ծառայող անդամ ստորադրուի հասարակութեանը և միւսների հետ մի միտպաղաղ շարք կազմի: Սոցիալիզմը հասարակութեան, մասւայի, ընդհանրութեան երջանկութիւնը անհատական ցանկութիւններից և նպատակներից բարձր է դասում: Մի խօսքով նա ճշշում է անհատականութիւնը յօգուտ համայնականութեան: Ոչ մի բան չէր կարող սրա պէս հակառակ լինել Նիցշէի ուղղութեանը: Սոցիալիստական հասարակութեան մէջ էլ մեր կը մնայ «ձգտումն առ իշխանութեանը». չէ՞ որ այստեղ անհատը պիտի մատնուած լինի թուլութեան, չէ՞ որ նրա կամքը պիտի այս դէպքում ճշշուի: Այսպիսի մի հասարակութեան մէջ որեւէ ականաւոր իշխողի դիրք ձեռք բերելու մրցումը պիտի ջնջուի, կամ կեղծ ձև ստանայ, որովհետև ամեն ինչ այստեղ պիտի կանոնաւորուած, կարգաւորուած և հարթուած լինի: Ահաւասիկ անհատը զրկում է իր իշխանութիւնից, ազատ ոյժի տեղը այժմ բռնում է դադմի խորամանկութիւնը և ստոր ինտրիգան: Այստեղ ասպետական էսերդիան չբանում է. չէ՞ որ սոցիալիզմը ուղում է կոշտ ու կոպիտ գոյութեան կռուի փոխարէն տալ սոցիալական հաշտութիւն. նա թոյլերին պաշտպանում է ուժեղների գերիշխանութիւնից, նրանց ոյժ է ներշնչում, սակայն ուժեղին թուլացնում է: Սոցիալիզմի այս հաւասարեցնող տենդենցիան պիտի միանգամայն դէմ լինի անհաւասարութեան քարոզչին - Նիցշէին: Մենք տեսնում ենք, որ նրա հակա-սոցիալիստական տենդենցիան էլ շատ պարզ ու բնական կերպով բացատրւում է նրա ընդհանուր հիմնական սկզբունքի շնորհիւ:

Իր այս ուղղութեամբ Նիցշէն ահա կրկին մեծ թւով կողմնակիցներ է ձեռք բերում: Մարդկանց բնական անհաւասարութեան այս շեշտումի մէջ շատերը մի անհրաժեշտ հակակըշիւ են տեսնում սոցիալիստական ջանքերի ծայրայեղութիւնների դէմ: Օրինակ՝ այսպէս է ասում նաև Մ. Հայնցէն Մեի-րweg-ի նորագոյն փիլիսոփայութեան պատմութեան մէջ. «Խոհեմ մտածողներն էլ պիտի համաձայնեն, որ ուժեղ և կտրուկ կամքի տէր անհատների իրաւունքի շեշտումը շատ նշանաւոր շարժառիթներ ունի, որոնք դէմ են այժմ սի-

լուած հաւասարեցման տենդենցիային. ժամանակ է արդէն, որ նրանք եռանդուն կերպով արտայայտուեն: Ալտիզ Րիլն էլ նման կարծիք է յայտնում: Վերջինս Նիցշէի մասին մի խորիմաստ գրութեամբ ունի, որը այս հարցում փրկասփայլական տեսակէտից առայժմ միակ զոհացուցիչն է: Րիլը նոյնպէս ճիշտ կերպով նկատում է, որ մեր դարը զէպի կոլլեկտիվիզմն է հաւուած, որ աչքի առաջ ունենալով սոցիալական խնդիրները՝ նա երբեմն մոռանում է անհատի էութեան մասին մտածել: «Գուցէ այս է Նիցշէի իսկական դերը», ասում է Րիլը, որ նա ազդու կերպով մեր դարի առաջ դնէ այն վտանգը, որը ծագում է կուրորէն զնահատումից և հաւասարեցման ձգտումից և որը սպառնում է նսեմացնելու մարդիւ տիպը»: Այս ճիշտ և նշանաւոր հայեցակէտն է պատճառը, որ շատերը Նիցշէի գրութեամբնեքը համակրանքով են կարդում: Նրա հակա-սոցիալիստական տենդենցիան հասնում է երբեմն հակա-քաղաքականի. նա ընդհանրապէս յարձակում է տէրութեան և քաղաքական կեանքի վրայ: Չէ՞ որ նորագոյն տէրութեան մէջ քաղաքական սոցիալիզմը և բիւրօկրատիան ձեռք ձեռքի տուած են առաջ ընթանում և անխիւ կանոնադրութիւններով անհատի ազատութիւնը ճնշում: Եւ բոլոր այս կանոնադրութիւնները անհատական հանգամանքների վրայ շատ չնչին ուղադրութիւն են դարձնում: Կուլտուրական ազգերի մէջ իշխող այս հարիւրի համար գերմաներէն լեզուն մի պատշաճ դարձութեամբ ունի. «Das Schema F.»: Սա նշանակում է, որ բոլոր զէպերը առաջուց հմտորէն կարգաւորուած են. մի որեւէ զիպուածի ժամանակ պաշտօնեան պիտի միայն ընտրէ որեւէ կանոն A. B. C. D. E. F.-ի շարքից, և արդէն գործը կարգի է բերուած, սակայն անհատական կեանքը ճնշուած է: Այս պատճառով Նիցշէի գրութեամբները հէնց այնտեղ են հաւանութիւն գտնում, ուր անհատի քաղաքական-սոցիալական ճնշման վտանգը աւելի մեծ է, կամ ուր բիւրօկրատական սահմանափակումներն աւելի տաղտուկ կերպով են արտայայտուել: Կարելի է ասել, որ շատերը Նիցշէի հեղինակութիւններից վտանգի ճիչ են լսում տէրութեան և հասարակութեան ամենակարողութեան՝ եթէ կարելի է ասել՝ աւելի ու աւելի սաստկացող հոսանքի գէտ: Նիցշէի հետ միասին նրանք զրա մէջ տեսնում են կուլտուրայի համար վտանգ, որովհետեւ կուլտուրան կրողները և նրան առաջ մղողները մեծ անհատականութիւններն են: Նիցշէի կողմնակիցներն ասում են, որ մեր ռամկավարական, սոցիալիստական և բիւրօկրատիզմի մէջ յղփացած դարը ճնշում է անհատականութեան ոյժը և հասցնում նրան «անհատի շատերի»,

Թզուկ մարդկանց ոյժի մակերևոյթին: Սակայն մարդկային կուլ'տուրան դրանով պիտի ընկնի: Բոլորովին սխալ կարծիք է, իբր թէ Նիցշէն Րուսսօի պէս թշնամաբար է վերաբերում կուլ'տուրային և այս տեսակէտից պահանջում դարձ դէպ բընութիւն: Իհարկէ՝ Նիցշէն էլ է ցանկանում, որ մարդիկ դառնան դէպ բնութիւնը, բայց ոչ ըստ էութեան հակառակ կուլ'տուրայի, այլ հէնց ընկած կուլ'տուրան բարձրացնելու համար: Մեր կուլ'տուրայի անկման պատճառն այն է, որ ռամկավարութիւնը, սոցիալիզմը և բիւրօկրատիան հակառակ կողմերից ձեռք ձեռքի են տուել, որ նուազեցնեն անհատականութիւնը և նրա ոյժերը նսեմացնեն: Սակայն չպիտի մոռանալ, որ առանց ուժեղ անհատների ըստ Նիցշէի չկայ նաև բարձր կուլ'տուրա:

Թարգմ. Ս. Ի.:

(Վերջը յաջորդ համարում)

ԿՈՎԿԱՍԻ ԹՈՒՐԻ ՄԱՄՈՒԼԸ

Անցեալ անգամ մենք խօսեցանք «Շարքի-Ռուս»-ը օրաթերթ դարձնելու հարցի մասին: Շահթախթինսկին յայտնած էր, որ հարկ եղած դիմումն ըրած է, ուր որ պէտք է, լրագիրը ամենօրեայի վերածելու արտօնութիւնն ստանալու համար: Թուրք լրագրապետ այժմ կը հաղորդէ, թէ Կովկասի կառավարչապետը, իշխան Գուլիցին, իր բարեհաճ կամքով՝ ղուրբան բայրամի օրը «Շարքի-Ռուս»-ը ամեն օր հրատարակելու արտօնութիւն տուեր է: Շահթախթինսկի այդ արտօնութեան կարեորութիւնը վեր հանելէ յետոյ կը յայտարարէ, թէ թուրքերն ալ պիտի ունենան իրենց ամենօրեայ լրագիրը, որ զիրենք տեղեակ պիտի պահէ կեանքի փաստերուն, օրը օրէն կատարուող քաղաքական դէպքերուն, որոնց մէջ, այժմ, ամենուն ուշադրութիւնը կը գրաւէ ռուս-ճապոնական պատերազմը:

Այդ պատերազմը, կը գրէ Շահթախթինսկի, մեր սեփական պատերազմն է. «Շարքի-Ռուս»-ը կարդացող ռուս-մահմէդականները այդ պատերազմի դէպքերը կարդալով չպէտք է բաւականանան, այլ իրենց ձեռքէն եկած ամեն բան պիտի ընեն՝ որպէսզի ռուս աշխարհակալ կայսրի փառք ու պարծանքն ու

Ռուսաստանի իրաւունքները աւելցնեն: Ու այդ առիթով կը յորդորէ մահմէդականները դրամ հաւաքել պատերազմի դաշտն ուղարկելու համար բժիշկներ, գթութեան քոյրեր, կայլն կայլն: «Փառք Աստուծոյ, կը բացագանչէ թուրք խմբագիրը, մահմէդականները, ընդհանրապէս, Ռուսաստանի աղքատ ժողովուրդը չեն ներկայացներ. Բագուի, Կազանի մէջ ճրչափ միլլիոնատէր մահմէդականներ կան. հայրենիքի համար մեր սէրը գործով ապացուցանելու ամենայարմար ժամանակը հիմայ է. պէտք է հազարներով, հարիւր հազարներով, միլլիոններով փող հաւաքենք պատերազմական կարիքները լրացնելու համար, պէտք է Բագուի միլլիոնատէր մահմէդականները օգնութեան տեսրակներ բանան և նպաստ տուողներու գլխաւորները հանդիսանան. ուստի մահմէդականները, թէ թուրք և թէ թաթար, վեհանձն և առատաձեռն բնաւորութիւն ունին. եթէ դուք, միլլիոնատէրներ, անոնց առջին ընկնիք, ամբողջ ազգը, բոլոր ուստի մահմէդականները ձեզի կը հետևեն»:

Այս յորդորականէն յետոյ կ'անցնի ամենօրեայ «Շարքի-Ռուս»-ի հարցին ու կ'աւելցնէ. «Այս օրերս կը յայտնենք, թէ մեր լրագիրը զոր օրուընէ սկսած օրաթերթի պիտի փոխուի:

*

Յայտնի է թէ տգէտ հասարակութիւնները ինչ աչքով կը նային թատրոնի վրայ. բեմը եթէ սրբապիղծ չէ, գոնէ օյինբագութիւններու տեղ մըն է, ուր մարդիկ այս կամ այն կապիւթիւնները կ'ընեն: Մահմէդականները տակաւին այդ ըմբռնումը ունին թատրոնի մասին. բայց կամաց-կամաց երեւի թուրքերն ալ կ'աշխատին նախապաշարումի այդ քօղը պատռել: «Շարքի-Ռուս»-ի միւսնոյն համարին մէջ Կազանէն գրուած թղթակցութենէ մը կ'իմանանք որ տեղացի թուրք ինտելիգէնտները, թաթար լեզուով ներկայացում մը կազմակերպելու են Աղա էֆէնդի անունով մէկու մը տանը: Ներկայ գտնուելու ոչ միայն տղամարդիկ, այլ և կիներ, աղջիկներ: Ներկայացման կազմակերպումին օգնելու են գիմնագիտաւարտ թրքուհիներ, ուսանողներ և թուրք մէտրէսէի թալէպէներ: Ներկայացման մասնակցելու է Շէֆիգէ-խանում անունով թրքուհի մը և յաջող կերպով է կատարել գերը: Ահաւասիկ փաստ մը, որ թուրք կիներն ալ կը թօթափէ իր վրայէ հարեմական հասկացողութիւնները և կը մտնէ հասարակական գործողի մօրթին մէջ:

*

Օրենքադէմ թուրք արթուն ու խելացի գրող մը, «Գրիչ» ծածկանունին տակ, Կազանէն գրուած կղերամոլ նամակի մը պատասխանելով՝ երկու երկար բանասիրական կը նուիրէ իս-

լամ հոգևորականութեան: Գեղեցիկ կերպով ցոյց կու տայ այս վերջինի փողապաշտութիւնը, տղիստութիւնը, գործած չարիքները: «Բաղաքին մէջ երեք-չորս սեփհական տուններու տէր են, բնաւ պարտք չունին, ամսական ամնուադն 150 բուրլի եկամուտ կը ստանան կամ գրամատներու մէջ հինգ-տասը հազար բուրլի պտուկեցուցած են և իրենց մահէն յետոյ երբեմն յիսուն հազար, հարիւր հազար բուրլի արժողութեամբ կալուածներ կը թողուն, բայց այնուհանդերձ իրենց կեանքը կ'անցնեն աջահամրոյրներ, տասանորդներ, նսլաստներ ու նուէրներ կորզելով և զլիսուն տակ դնելու բարձ չունեցող խեղճէն, կեանքի անհրաժեշտ պետոյրներէն զրկուած գործաւորէն հինգ-տասը բուրլի չփրցուցած՝ պսակ չեն կատարեր ու չհաս, ասորէն պսակներ կ'օրհնեն քսանական, երեսնական բուրլի վարձատրութեամբ... «Ահաւասիկ ձեզի հաւատարիմ հայելի մը, որուն մէջ կարող են նայիլ և հայ քահանաները: «Իմամները, կ'ուկցընէ «Գրիչ», ազդին և հասարակութեան առաջնորդները կը նկատուին, անոնք իրջուած են ժողովուրդի կրօնական և աշխարհական բախտաւորութեան աշխատիլ, իրենց քարտիներով, հայրական խրատներով ժողովուրդի բարքը ուղղել, մտքերն ընդարձակել—ասոնք են, չէ՞, կղերի պարտականութիւնը: Բայց իրականութիւնը բոլորովին տարբեր է. անոնք հասարակութեան օգտակար ու անհրաժեշտ բարոյներ չեն տալ, կամ աւելի ճիշտը չեն գիտեր տալ: Անոնք երբեք տեղեկութիւն չունին թէ ժողովուրդը այս և հանդերձեալ աշխարհի մէջ ամենէն աւելի ի՞նչ բանի պէտք ունի, ժողովուրդի բարոյական և ֆիզիկական տանջանքներու միջոցին, կեանքի ու մահուան մէջ տեղ գտնուած այս ժամանակներուն մէջ անգամ, անոնք ժամաւաճառ կ'ըլլան սափրիչի ու դերձակի վայել շաղակրատութեամբ: Կը կարծեն թէ իրենց ամբողջ պարտականութիւնը կ'ամփոփուի շաքաթը անգամ մը թութակի պէս աղօթատեղիի բեմէն կարդալ արարեբէն յորդարական մը որը՝ ոչ թէ ժողովուրդը, այլ նոյնիսկ իրենք չեն հասկնար: Բայց հոգևորականները իրենց խղճմտանքի վրայ ունին ոչ միայն անպարտաճանաչութեան և պարտազանցութեան յանցանքները, այլև աւելի դատաւարտի միտք մը—անոնք արդեւ ու խոչընդոտ կը հանդիսանան առաջադիմութեան ամեն քայլի, որ կը փորձէ ընել իսլամ ժողովուրդը»:

«Այս վերջին ժամանակները—կը շարունակէ «Գրիչ» իր ամբաստանադիրը—մեր ռուս մահմէդականներուն մէջ սկսեցին կեանքի նշաններ երևալ. դարերէ իվեր իրենց թաղուած տգիտութեան գերեզմանի մէջէն փոքրիկ շարժումով մը իրենց զը-

լուխը բարձրացնելով ուղեցին դիտել լոյսին եկած կողմը. սակայն աւաղ, թաղուած մարմիններու վրայ փտեցնելու համար նստած «միկրոններն» ու «մակարոյծները» (պարագիտ) կեանքի ու շարժումի այդ նշանները զգալով՝ սարսափած որ մի գուցէ անոնք ոտքի կ'ընեն, իրենց ատամները աւելի ու աւելի խըրելով անոնց մարմնի մէջ՝ սկսեցին կատաղօրէն հող նետել անոնց դէպի լոյսը ուղղուած աչքերուն մէջ»:

«Լրագրին, ազգի հոգին եղող զբաղանութեան իրենց ատամներով և եղունգներով հակառակելով, նոր զրոգները, հրատարակիչները մինչև անգամ սպազրական նոր խօսքի ընթերցողները պիղծ գտնելով՝ ամեն տեղ իրենց ձեռքէն եկածին չափ հալածեցին զանոնք, հայհոյեցին անոնց, զանոնք հացէ կտրեցին»...

Պէտք է յիշել «Գրիչ»-ի մատնացոյց ըրած մէկ փաստն ալ: Ռուս զպրոցներու մահմէդական աշակերտներուն իրենց կրօնի ու ազգայնութեան սկզբունքները դասաւանդելու համար հրաւիրուած հոգևորականները՝ «այդ զրժ-րախտ երեխաներուն խլամութեան, կրօնի, ազգութեան մասին ոչինչ չկարդացնելով, չուսուցանելով՝ իրենց անիրաւ ամսականները ստանալու համար, ամիսը անգամ մը զսրբոյի մէջ իրենց գոյութիւնը ցոյց կու տան»:

Այս ու այս տեսակ մեղադրանքներու երկար շարքէ մը յետոյ, «Գրիչ» կ'առաջարկէ ընդունել հոգևորականներուն թոշակ նշանակելու սկզբունքը որը երկու կողմին համար ալ ձեռնուու է. հախ ժողովուրդին, որ այն ժամանակ տգէտ խմաներ չի ընտրէր, երկրորդ՝ կրօնաւորներուն, որ փոխանակ ծուխին գլուխը ուռեցնելու, նուէրի յուսով, իրենց համար թոշակ նշանակուած կ'ունենան և հանգիստ կ'ապրին:

Ընթերցողներուն յայտնի է թէ հիւանդութիւններու, համաճարակներու ինչ սարսափելի բոյներ են իսլամական ուխտատեղիները: Ամէն տարի Մէկկէէն վերադարձող հաճիները իրենց հետ կը բերեն քուբրայի սերմերը: Քէրքէլա, մահմէդականներու երկրորդ նշանաւոր ուխտատեղին, Մէկկէէի մրցակիցն է վարակիչ հիւանդութիւններու, համաճարակներու տեսակէտով: Շատեր գիտնն այս երեոյթի պատճառը—առողջապահիկ պայմաններու պակասը, կեղտոտութիւնն ու համախոնոււմը, որ կը ախրէ այդ ուխտատեղիներու մէջ: Բայց այս բոլորը գիտնալով հանդերձ՝ մարդ սարսափով կը կարգայ այն պատկերը, որ մեզի կը դժէ «Շարքի-Ռուս»-ի մէջ Աբրաա Ալիոֆ մէկը Բաղդադէն Քէրքէլայի մասին:

«Քէրքէլա 30,000 տնուոր տեղ մըն է. փողոցները, շուկանե-

ընդ, բազարները շատ նեղ են. տները քովքովի, իրարու վրայ դարսուած. գարշահոտութեան պատճառով մարդ փողոցներէն չի կրնար անցնիլ. տուններու մէջ անգամ նստիլ կարելի չէ: Քաղաքի կլիման նոյնպէս վատ է: Քէրքէլայի մէջտեղէն կ'անցընի գետակ մը, ուր կը թափեն աղբերը, ուր կը լուան իրենց բոլոր կեղտոտ շորերը. այս տարի շատ անձրև եկած չըլլալուն պատճառով գետի ջուրը նուազ էր, ջրի գոյնը խաղախորդարանի (դապապղխանէի) ջրի գոյնն ունէր. գարշահոտութենէն գետեզերքէն չէր անցնուիր. քաղաքի բնակիչներու գործածած ջուրն այս է. ջրկիրները՝ գետի մաքուր տեղէն (?) իրենց տիկերը լեցնելով՝ կը ծախեն ամեն տան հարկաւոր եղած ջուրը... Բնակիչներու մեծամասնութիւնը կերակուրը շուկայէն կը պատուիրէ. այս քաղաքին մէջ ճաշարաններ շատ կան, ու ժողովուրդը սովորութիւն ըրած է փոխանակ տունը կերակուր պատրաստել տալով ուտելու՝ ճաշարաններու մէջ կերակուրիլ: Խոհարարները այս տեսակ սովորութիւն ունին. նախ՝ ամենէն աւելի փլաւ կ'եփեն, եթէ փլաւը չի ծախուի և մէկ-երկու օր յետոյ դարձեալ մնայ, փլաւը տոլմա կը շինեն, մէկ-երկու օրէն տոլման քիւֆտէի կը դարձնեն, եթէ քիւֆտէն ալ մասամբ մնայ, չի ծախուի, չորպա (սուպ) կը շինեն: Միւս կերակուրներն ալ այս տեսակ են...

Նամակագիրը կը պատմէ որ Պարսկաստանէն, Հնդկաստանէն և շրջակայ երկիրներէն, այս տարի, այդ որջին մէջ թափուեր են ութսուն հազար ուխտաւորներ:

Ու ինչպէս շատ բնական է—հակառակը միայն կարող էր զարմացնել—այս տարի փետրուարի սկիզբները քուրա է ծագեր Քէրքէլայի մէջ և օրական 200 հոգիէն աւելի մահ է պատահեր: Թղթակիցը ուրիշ այնպիսի բաներ ալ կը պատմէ, որ մարդուն պարզապէս առասպելական կը թուին: Կը հաստատէ թէ Քէրքէլան ունի քաղաքապետութիւն, քաղաքային բժիշկներ, որոնք՝ շնորհիւ վեհափառ սուլթանին, քաղաքին փողերն ուտել և քաղաքացիները թալանել միայն կ'աշխատին: Թէ հաստատուած առողջապահական շղթաներն ու կարանտինները խաբէութիւններ կարելի է համարել, որովհետեւ մէկ-երկու օսմանեան ոսկիով հակողութեան տակ գտնուողները իրենց ուզած տեղը կարող են երթալ: Թէ Բաղդադէն ընտելութեան ուղարկած էնսպեկտորը—բժիշկ մը ուխտաւորներէն 800 ոսկիի չափ զբամ ժողովել յետոյ՝ կարանտինի անուան տակ լեցուցեր է աւերակ քարվանսարայի մը մէջ, ուր 2000 հոգի ցուրտէն ու անօթութենէն կոտորուեր են...

Նամակին մէջ այս կարգի փաստեր կը վիտան. աւելորդ

պիտի ըլլար աւելի երկարել: Եւ այս ամենէն յետոյ մտածել, որ քսաներորդ դարու, գիտութեան դարուն մէջ կ'ապրինք...

Այդ պատկերը, ինչպէս ամեն մարդ, վրդովեւ է և Թուրքիոյ ընդհանուր հիւպատոս Րիֆաթ բէյը, Թիֆլիսի մէջ: Այդ վրդովմունքը անշուշտ պատիւ կը բերէ Թուրքիոյ՝ Թիֆլիսի մէջ գտնուող ներկայացուցչին, որովհետեւ ան ցոյց կու տայ թէ Րիֆաթ բէյ կարգ մը Թուրք պաշտօնեաներու պէս չէ կորսնցուցած բոլորովին յուզուելու ընդունակութիւնը: Բայց այդ յուզումը Րիֆաթ բէյին մղեր է ոչ թէ խնդրի առարկայ եղող յօդուածը հասցնելու Պոլիս իր մեծերուն, որպէսզի անոնց հոգածութիւնը հրաւիրէ այդ սարսափելի որջին վրայ, այլ գրեւոր և հերքում մը և ուղարկելու «Շարքի-Ռուս»-ին: Դուք կը խորհիք հարկաւ, որ Րիֆաթ բէյը գոնէ հերքելու եղանակը գիտէ, այսինքն կը խօսի փաստերու, ֆակտերու լեզուով: Բայց ոչ. Թուրք հիւպատոսը կարծէք Հոռմի անսխալ պապին քթէն ընկած ըլլայ, իր այն և ոչ-ը բաւական են սկզբնական դարձնելու և փոխադարձաբար: «Շարքի-Ռուս»-ին պարզապէս կը գրէ որ Քէրբէլայի մասին տպուած յօդուածը, և պաշտօնեաներու մասին գրուածները մանաւանդ, զրպարտութիւններ են, սուտեր են, զորս կը խնդրէ որ լրագիրը բահահի հերքել:

Այս պարագային մէջ Թուրք թերթի խմբագիրը կը շարժի այնպէս, ինչպէս պիտի շարժէր իւրաքանչիւր ոք—հերքումը չը գոյ կը համարէ: Եւ Րիֆաթ բէյին խորհուրդ կու տայ իր վրդովմունքին մասնակից ընել և՛ իր կառավարութիւնը, ոչ այն նպատակով որ նոր հերքումներ տեղացնեն լրագրին վրայ, այլ ջանան մաքրել Քէրբէլան շնչաւոր ու անշունչ ապականութիւններէ:

*

Նախապաշարուած, տգէտ հասարակութիւններու փրկութեան միակ ճամբան, յառաջագիմութեան ու խելական մարդկայնութեան մէջ մտնելու միակ միջոցը լուսաւորութիւնը, կրթութիւնն է: Մահմէդական ժողովուրդը երկար ժամանակ անգիտացաւ այդ տարրական ճամբարտութիւնը, բայց որովհետեւ կեանքի դասերը ամեն իրատէ, ամեն խորհուրդէ աւելի պերճախօս են, մահմէդականներն ևս կ'ըսկսին ըմբռնել այդ ճամբարտութեան ուժը: «Շարքի-Ռուս»-ի № 24-ի մէջ մէկը կ'առաջարկէ տեսակ մը ուսումնական խորհուրդ կազմել, որը աշխատի ծրագրի միօրինակութիւն մտցնել Թուրք նախնական դպրոցներուն մէջ, կանոնաւոր դիւրութոյց դասաւորքեր կազմել տալ ձեռնհաս անձերու և մանաւանդ ջանալ մահմէդական երեխա-

ները այն աստիճան նախապատրաստել, որ անոնք տարրական ուսումնարաններու ընթացքն աւարտելէ յետոյ կարողանան ընդունուիլ գիմնազիակաները:

«Շարքի-Ռուս»-ի կարող աշխատակիցներէն մէկը Իրրահիմ, փետրուարի մէջ տեսակցութիւն մը ունեցել է Մուրադ բէյի հետ, որը ժամանակին «Երիտասարդ Թուրքերու» ղեկավարը և Աբդ-իւլ Համիդի ուխտած թշնամին էր: Բայց, ինչպէս վայել է «Երիտասարդ Թուրքին», քիչ յետոյ իր յեղափոխական համոզումները ծալից մէկ կողմ դրաւ ու ձեռքը երկնցուց Սուլթան Համիդին, որը բնորոշելու համար ամենասարսափելի բառերն անգամ բաւական խիստ չէր գտած: Սուլթանը կատու դարձուած երբեմնի առիւծը բնակեցուց Վոսփորի ակերտուն վերայ և անոր հասկցուց, որ խելօք կատուին համար ներկի չէր բնակարանին պատերէն անդին անցնիլ: «Շարքի-Ռուս»-ի աշխատակիցը անս այդ կամաւոր բանտին մէջ է որ տեսակցել է Մուրադ բէյի հետ: Երիտասարդ Թուրքերու նախկին պետը, մարզարէի մը պէս, որուն բերնին վրայ բառերը դադարած են այլևս ցատկոտ, շանթալից ու վրէժինդիւր ըլլալէ, Թուրք թերթի աշխատակցի պատմածին նայելով՝ խորհուրդ է տուեր «ուս» կառավարութեան վարչութեան տակ ապրող մահմէդականներուն հաւատարիմ գտնուիլ պետութեան, դրա հետ միասին ազգութիւնն ու թաթարութիւնը երբէք չմոռնալ. այդ կէտին շատ ուշադիր ըլլալու էք. ազգութեան ապական լեզուի պահպանութեան և լեզուի պահպանութիւնն ալ ազգային գրականութեան մէջ է: Մէկ ալ թաթարներու գաղթումի հարցը պէտք չէ մոռացութեան տալ. գաղթականութիւն պարզ ոճիւր մըն է. այս բանը ժողովուրդին հասկցնել նուիրական պարտականութիւն համարեցէր... Իրրահիմ կը յայտնէ որ Մուրադ բէյ բնիկ կովկասցի է և իր սկզբնական կրթութիւնը ուսուցողութիւն մէջ ստանալէ յետոյ, քսանեօթ տարի առաջ Պոլիս երթալով ուսումը վերջացուցել է այնտեղ: Թուրքիոյ ժամանակակից ամենակարող գրչի տէր մարդերէն մէկը՝ այժմ գրականութեամբ չղրադուիլ, այլ պարտիզախութեամբ: Այնուհանդերձ, խօսակցութեան ընթացքէն Իրրահիմ կուսեր է, որ Մուրադ բէյ շտապագրութեամբ քանի մը գործեր ունի. Մուրադ բէյի արտասանած ճառին մէջ հետեւեալ խօսքերը գուրկ չեն սակայն հետաքրքրութենէ ու խորհրդաւորութենէ. «Մարդ առիթը ձեռքէն երբէք փախցնելու չէ. բնաւ խարուելու չէ...»: Անօղուս աւազանքի մը գրողմը չէն կրեր այս դառնասիրտ խօսքերը:

ՎՐԱՅ ԿԵՆՆՈՒՅՑ ԵՒ ԳՐԱԿԱՆԹԻՒՆՆԵՑ

Թէ ինչպէս պէտք է զրել վրաց պատմութիւնը:—Վրացի գիտնականի կարծիքը վրացի հայրենասիրների մասին:—Բանաստեղծ Եոս. Բաքրաձէի մահը:

Վրաց «իվերիական» հին կուսակցութեան զրողները իրանց գործունէութեան մէջ սովորաբար ղեկավարուում են այն միակողմանի գաղափարով, թէ ժողովրդի մէջ հայրենասիրութիւնը զարգացնելու համար պէտք է ներկայացնել նրան իր նախնիների կեանքը ոչ թէ իսկական, այլ աւելի մեծացրած, փքած ձևով: Այդ է պատճառը, որ նրանք սատիիկ նեղանում են, երբ մի Ք. Պատկանեան կամ մի Մարբ փորձեր են անում երբեմնակի փոքր ինչ կրիտիկարար վերաբերուելու Վրաստանի պատմագրութեանն ու հին գրականութեանը: Մեր ընթերցողներին ծանօթ յայտնի մանկավարժ ու գրող պ. Եակոբ Գոգերաշվիլին («Ազգութեան հիմքը» գրքոյի հեղինակը) ուղղակի ասում է իր վերջին աշխատութեան մէջ, որ փոքր ազգութիւնների համար ազգային պատմութիւն գրելիս պէտք է այնպէս անել, որ անցեալ կեանքի արժանաւոր կողմերը աւելի մեծանան, իսկ պակասութիւնները աւելի փոքրանան... Պէտք է, ասում է, որ այդ պատմութիւնն ունենայ «ազնկատական», պաշտպանողական բնաւորութիւն... «Եսկ մեղանում ինչ ենք տեսնում, — բացագանչում է նա ու ցաւելով աւելացնում — մենք տեսնում ենք ուղիղ զրա հակառակը»...

Եւ այդ «հակառակը» ասելով՝ պ. Գոգերաշվիլին աչքի տռաջ ունի ամբողջապէս... երիտասարդ գիտնական պրոֆ. Ն. Մարբին, որին իր համարձակ ու անկախ կարծիքների համար ոչ մի պայմանով չեն համաձայնում ներել վերոյիշեալ կուսակցութեան անդամները...

Պատմական գիտութեան ու պ. Մարբին հասցրած այդ անտեղի վերաւորանքը չկարողացաւ տանել վերջինի արժանաւոր աշակերտ պ. Ի. Զաւախիշվիլին, որ պատասխանեց վերաւորողին իր մի վերջին աստիճանի հիմնաւոր ու անկողմնա-

պահ յօդուածով: Յօդուածը, որ կրում է «Հայրենասիրութիւն ու գիտութիւն» վերնագիրը, բռնեց «Յնորիս-Փուրցելի»-ի ամբողջ 6 բանասիրական և տպուեց ընդմիջաբար ապրիլի 1-ից մինչև 15-ը: Պ. Զաւարխիշվիլին Պետերբուրգի համալսարանի պրիվատ-դոցենտ է, հայագէտ և պահուում է այնտեղ որպէս յաջորդ վրաց լեզուի ուսուցչապետ պ. Ա. Յագարելու, երբ վերջինս ծառայութիւնը թողնէ: Նա թէ իր ուսէն և թէ վրացերէն աշխատութիւններում ամբողջապէս հետևում է իր ուսուցիչ Մարրի քննական ու անաշու մեթոդին և այդիսկ պատճառով յաջողել է արդէն գրաւելու իր որոշ գոյնի հայրենակիցներին... ատելութիւնը: Ամբողջ 15 տարի է, որ մենք հետևում ենք վրաց մամուլին և «Հայրենասիրութիւն ու գիտութիւն» յօդուածի նման ընտիր գրուածքներ մատնելով միայն կարող ենք ցոյց տալ այնտեղ: Պ. Գոգեբաշվիլին, իհարկէ, առաջինը չէր, որ այդ անհեթեթ ու անարդար կարծիքները յայտնում էր հայրենի մամուլում, բայց պ. Զաւարխիշվիլին է առել ջրելու նրա սխալ մտքերը այն պատճառով, որ նա «մեծ անուն ունի վաստակած, և վրաց հասարակութիւնը ուշադրութեամբ է լսում նրա յայտնած հայեացքները»:

Պ. Զաւարխիշվիլին կարելի է բաժանել երկու մասի. զրանցից մէկով նա հերքում է իր հակառակորդի սխալ հայեացքը ժողովրդական պատմագրութեան մասին, իսկ միւսով—բացատրում է ու պաշտպանում պրոֆ. Մարրի քննական դիտողութիւնները վրաց պատմագրութեան ու գրականութեան մասին: Նա ասում է, որ ինչպէս ամեն մի գիտութիւն, այնպէս էլ պատմական գիտութիւնը պէտք է հիմնուած լինի անպայման կերպով ճշմարտութեան վրայ: Այդ պատճառով վրացի հայրենասէրների պահանջը, որ վրաց պատմութեան ու գրականութեան հետազոտողները վարուեն աղմուկաւոր նման՝ մեծացնելով ազգի արժանաւորութիւններն ու փոքրացնելով նրա պակասութիւնները,—անարդար է, անպատուաբեր ու տրդիտութեան հետևանք: Պատմական ուսումնասիրութիւնները պէտք է զարգացնեն ժողովրդի ինքնաճանաչութիւնը՝ ղենելով նրա առաջ իր նախնիների իսկական կեանքը նրանց բոլոր լաւ ու վատ կողմերով. մինչդեռ յիշեալ հայրենասէրների պահանջած աղմուկատօրէն գրած պատմութիւնը կարող է առաջ բերել միայն խաբեբայութիւն ու կեղծիք, կը կապէ նրա աչքերն ու կը կուրացնէ, կը խանգարէ նրա ինքնաճանաչութիւնը, կը վարժեցնէ նրան մեծամտութեան ու անհիմ պարծենկոտութեան... Դա չի լինի ազգային պատմութիւն, այլ միայն ազգային ներբող... Եթէ մի ժողովուրդ զուրկ է ներկայումս ու-

րոշ արագութեամբ առաջ գնալու ընդունակութիւնից կուլ-տուրական ճանապարհով,—նրան չի օգնի ոչ միայն իր նախնիների շինծու, այլ նոյնիսկ ճշմարիտ փառահեղ կեանքը: Ասորեստանը, Պարսկաստանը, Եգիպտոսը ունեցել են շատ փառաւոր անցեալ, շատ մեծ ծառայութիւններ են մատուցել համաշխարհային քաղաքակրթութեան գործին, բայց այսօր նըրանք բոլորն էլ ներկայացնում են մի ցաւալի ողորմելիութիւն, համարեա թէ ոչնչութիւն... Դրա հակառակ՝ կան այսօր նշանաւոր, գեղեցիկ ապագայ խոստացող ազգեր, որոնք շատ քիչ բան են ունեցել անցեալում. այդպէս են ամերիկացիք, ֆինլանդացիք և ուրիշները...

Այնուհետեւ պ. Զաւախիշվիլին ցանկութիւն է յայտնում, որ վրացի գործողները չը հետևեն վերը նկարագրած «վախկոտ ու անճար» հայրենասէրների մոլորութեանը, իրանց համար իդէալ չլինեն Վրաստանի անցեալ կեանքը, անաչառ ու խիստ քննութեամբ հետազօտեն վրացի ժողովրդի թէ անցեալը և թէ ներկան: Պէտք է ուսումնասիրել ժողովրդի իսկական կարծիքները, աշխատեցնել նրան ժամանակակից քաղաքակրթութեան համար, զարգացնել նրա մէջ ոչ միայն ուսում, այլև արդիւնագործութիւն ու վաճառականութիւն...

Մեզ մի քիչ հեռու կը տանէր, եթէ մենք կանգ առնէինք նաև պ. Զաւ. աշխատութեան այն մասի վրայ, որով նա պաշտպան է հանդիսանում յարգելի պրոֆ. Մարրի կատարած մի շարք անկողմնակալ հետազօտութիւններին: Կ'ասենք միայն, որ նա ի միջի այլոց խորապէս ցաւում է՝ տեսնելով, թէ ինչպէս մի խումբ հայրենասէրներ՝ փրփուրը բերանին, բայց առանց որևէ հիմք ունենալով՝ ազգի դաւաճան են կոչում այն ուսումնականներին, որոնք համարձակոււմ են ասել, թէ քրիստոնէութիւնը մտել է արևելեան Վրաստան Հայաստանի միջոցով և և թէ վրացիները հայերէնից են թարգմանել աստուածաշունչը կամ նրա մասերը... «Եւ եթէ նրանցից լինէր կախուած,—շարունակում է նա,—այդ հայրենասէրները չէին զժուարանայ նոյնիսկ խաչելու այդօրինակ ուսումնականներին»... Եւ ապա՝ տալով շօշափած հարցի մի քանի հմուտ լուսարանութիւններ՝ պ. Զաւ. եզրակացնում է, որ մի այդպիսի անարդար վարմունք կարող էր հետևանք լինել միայն «մեր հայրենասէրների չափազանցացրած, հիւանդոտ ազգային ինքնասիրութեան»...

Երիտասարդ գիտնականի այդ հիմնաւոր գրուածքին նոյն «Ցնոբիս-Փուրցիլի»-ում (№ 2481) պ. Գոգեբաշվիլին պատասխանեց մի անգոր ու տարօրինակ յօդուածով՝ խոստանալով աւելի մանրամասն զրել ապագայում: Նա ասում է, որ պ.

Ջաւ. իր «Հայրենասիրութիւն և գիտութիւն» աշխատութիւնը գրած պէտք է լինի պ. Մարրի օգնութեամբ, որ այդ երկու պարոնները իր անձնական թշնամիներն են, որ այդ թշնամութիւնը առաջ է եկել նրանից, որ մի երկու տարի առաջ ինքը նրանց յանդիմանել է չափազանց հայասիրութեան ու դէպի վրացիները տածած թշնամութեան համար... Նա ուղղակի պարծենում է, որ պ. Ջաւախիշվիլուն ասել է. «Ձեռ կարող շնորհաւորել ձեր մօտակայ պրոֆեսսորութիւնը. պ. Մարրը առաջուայ պէս հայոց լեզուի ամբիոնից կ'երգէ վրաց ոչնչացման օպերան, դուք էլ վրաց լեզու ամբիոնից բարձր կերպով ձայն կը պահէք: Դուք կը գայ մի երեւիլի գոլէտ, և մեր օջաղը կը շէնանայ»... Վերջապէս պ. մանկավարժը չէ քաշոււմ իր այդ զարմանալի պատասխանը փակելու այսպէս. «Թող այսքանը իբրեւ նախաճաշիկ անուշ անեն իմ հակառակորդները, և ճաշն էլ իր ժամանակին կը մատուցուի նրանց»...

Չմոռանանք աւելացնել, որ պ. Գոգ. շատ է վրդովուել նոյնպէս, որ վրացի գիտնականը «շովինիստ» է կոչել նրան ու նրա պէս մտածող միւս հայրենակիցներին...

Մայիսի 14-ին վաճառուեց Թիֆլիսում, մօտ 50 տարեկան հասակում, բանաստեղծ-թարգմանիչ Եոսէր Բաքրաձէն: Հանդուցեալը 30 տարի շարունակ զետեղում էր իր ընտիր թարգմանութիւնները վրաց ամսագրներում ու լրագրներում: Նրա սիրած հեղինակներն էին Հէյնէն ու Բայրընը, որոնցից ունի վրացերէնի վերածած բաղմաթիւ բանաստեղծութիւններ ու պոէմաներ: Բաքրաձէի անունը կապուած է նաեւ հայ զրականութեան հետ. թէն ինքը չգիտէր հայերէն, բայց բաւական բան է թարգմանել մեր լեզուից ուրիշների օգնութեամբ: Նրա թարգմանած մեր «Ծիծեռնակը» մեծ յափշտակութեամբ էր երգւում մի ժամանակ վրաց մէջ: Երկար տարիների ընթացքում վրաց բեմի վրայ զրուող «Պեպոն», «Խաթարալան» և մեր նշանաւոր դրամատուրգի մի քանի ուրիշ պիէսները նրա թարգմանութիւններն են, սր նա կատարել է պ. Գ. Սունդուկեանցի աշխատակցութեամբ: Մօտ 4 տարի առաջ նա գեղեցիկ կերպով թարգմանեց մեր աշակցութեամբ պ. Յովհաննէս Թումանեանի մի քանի ոտանաւորները, որոնք ժամանակին լոյս տեսան «Իվերիա»-ում: Հանդուցեալը թէ իբրեւ հասարակական գործիչ և թէ իբրեւ մասնաւոր մարդ համակրելի անձնաւորութիւն էր:

ՔՆՆԱԿԱՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Յ Մանանդեան եւ Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վկաներ» (1155—1743),
Վաղարշապատ, 1903 թ., գիրն է 3 բուրլի:

Պ. Յ. Մանանդեանը այս գրքի յառաջարանում հետեւեալ խօսքերով է բնորոշում այդ գիտական հրատարակութեան նշանակութիւնը. «Զեռնարկելով պ. Հրաչեայ Աճառեանի տոկուն և սիրայօժար աշխատակցութեամբ Հայոց նոր նահատակների վկայարանութիւնների հրատարակման՝ իմ գլխաւոր նպատակն է հղել ծանօթանալ այնպիսի պատմական աղբիւրների, որոնց միջոցով հնարաւոր լինէր վաւերական փաստեր ունենալ Հայոց ներքին կեանքի մասին մահմէդականների տիրապետութեան շրջանում»... «Նախ և առաջ վկայարանական այս հատուածները խիստ թանկագին նիւթ են Հայոց եկեղեցական պատմութեան համար և միանգամայն վստահելի աղբիւր են, որովհետեւ ժամանակակիցների ձեռքով են գրուած, իսկ միւս կողմից կարեւոր են նաև քաղաքական-պատմական անցքերի և աշխարհագրական որոշ խնդիրների լուսարանութեան և միջնադարեան հայերէնի ուսումնասիրութեան համար»: Պ. Յ. Մ. յառաջաբանից բերած այդ տողերը միանգամայն պարզում են այդ հրատարակութեան նշանակութիւնը, որը աւելի ևս արժէքաւոր է դառնում, երբ ի նկատի ենք առնում որ գիտական բարեխղճութեամբ և ճշտութեամբ են կատարուած բազմաթիւ ձեռագրերի համեմատութիւնները և ծանօթութիւնները: Կարելի է ասել՝ էջմիածնում հրատարակուած գիտական գրքերի մէջ «Հայոց նոր վկաները» պէտք է բռնի ամենապատկանելի տեղ: Մասնագիտական լուրջ պատրաստութիւն ունեցող մարդկանց մի աշխատութիւն է այդ, որից կարող են օգտուել մեր լեզուագէտները և պատմաբանները միանգամայն ապահով լինելով որ վերաստուգուած և ճշգրիտ աղբիւրներ ունեն իրանց ձեռքի տակ:

Գրիգոր Արծրունու աշխատութիւնները. հատոր առաջին. 1865—1871. հրատարակութիւն «Մշակ»-ի խմբագրութեան. 406 էր., գ. 1 ր., Թիֆլիս, 1904 թ.

Վերջապէս՝ մենք ձեռքի տակ ունենք Գրիգոր Արծրունու աշխատութիւնների ժողովածուի առաջին հատորը և կարող ենք յուսալ, որ շուտով հնարաւորութիւն կ'ունենանք տեսնելու նաև հետևեալ հատորները:

Այդպիսով մենք շուտով բաւականաչափ նիւթ կ'ունենանք որոշելու և գնահատելու իր ամբողջութեան և իր մանրամասնութիւնների մէջ այն մարդու աշխարհայեացքը, որ հայկական նորագոյն մտքի իշխաններից մէկն է եղել:

Միւս կողմից Գրիգոր Արծրունու աշխատութիւնների հատորները մեզ միջոց կը տան պարզելու այդ խոշոր մարդու հայեացքների էվոլիւցիան, սկսած ուսանողական շրջանից մինչև հասունութեան գագաթնակէտը, և որոշելու այն եւրոպական ազդեցութիւնները, որոնց նա ենթակայ է եղել իր գրական գործունէութեան ընթացքում և այդ գործունէութեան նախընթաց պատրաստական շրջանում:

Աւելորդ է ասել, որ այդ հատորները մեզ կը տան նաև այդ հետաքրքրական անձնաւորութեան ներքին կեանքի պատմութիւնը, որովհետև Արծրունին այն հազուագիւտ անձնաւորութիւններից էր, որոնք չպարում են միմիայն գրականութեամբ և միմիայն գրականութեան համար:

Մտադիր լինելով մի ուրիշ անգամ աւելի երկար խօսելու «Մշակի» հիմնադրի աշխարհայեացքի մասին, առայժմ բաւականանում ենք մի քանի թուղիկ նկատողութիւններով նրա աշխատութիւնների առաջին հատորում զետեղուած յօդուածների մասին:

Այդ յօդուածները մեծ մասամբ զուրկ են գրական արժանաւորութիւններից, իսկ տեղ-տեղ նոյնիսկ աշակերտական շարադրութիւնների տպաւորութիւն են գործում *), թէև վերջին յօդուածների տարեթուից մի տարի անցած Արծրունին պէտք է դառնար «Մշակի» հիմնադիրը և խմբագիրը:

Ամբողջ հատորում, եօթ տարուայ ընթացքում գրուած 46 յօդուածների շարքում, մի յօդուած կայ միայն, որ Արծրուն-

*) Օրինակ, «Երկուսից մըն է լաւը» յօդուածի ամբողջ առաջին կէսը անհմտ թարգմանութիւն է Իպոլիտ Տէնի «Գեղարուեստի փիլիսոփայութիւն» հեղինակութեան յոռաշարանի առաջին երեաներից, թէև Արծրունին չի յիշատակում ոչ Տէնի անունը և ոչ էլ այն, որ իր գրածը ինքնուրոյն բան չէ:

նու ապագայ յաջող յօդուածներ յախանաշակն է տալիս: 1870 թ. «Հայկական Աշխարհ»-ում տպուած յօդուածն է այդ՝ «Մեծ Մխիթարի մահի տարեգարձը սուրբ Ղազարի վանքում»:

Պարզ է, որ Արծրունին գեռ չէր գտել գրելու «սամթը», եթէ թոյլ կը տրուէ մեզ գործ ածել այդ ռամկական բառը, որի գրականական հոմանիշը, եթէ կայ, մեզ յայտնի չէ: Ինչպէս պարելու համար պէտք է գտնել պարի որոշ քայլը (պա) և երգելու և նուագելու համար՝ որոշ բաղխում (տեմպ), այնպէս էլ գրելու համար պէտք է գտնել նիւթին և իր անհատական-նութեան յարմար մի ձև, մի չափ, նախադասութիւնների որոշ դասաւորութիւն, պարբերութիւնների որոշ տիպ:

Բացի այդ՝ լաւ գրելու, ինչպէս նաև լաւ խօսելու համար անհրաժեշտ է որոշ աստիճանի ոգևորութիւն, այն, ինչ որ, կարծեմ Գոնիւսը, անուանում է «ուղեղի բռնդ», որից, ի դէպ է ասել, և կախում է գրուածքի տեմպը և ութմը:

Արդ՝ զանազան մարդիկ զանազան պայմաններում են բռնում այդ «ուղեղի տնդով»: Ոմանց անհրաժեշտ է ունենդիր-ների բաղմութիւն—գրանք ճարտասաններ են, հոկտորներ. ոմանք ընդհակառակը բարոյապէս կուշ են գալիս բաղմութեան առաջ և կարող են ոգևորուել միմիայն առանձնասէնիսկի խաղաղ միայնութեան մէջ: Կան նոյնիսկ գրողներ, ինչպէս նորերըս մեռած ուսու Միխայիլովին, որոնք, իրանց ասելով, կարող են լաւ մտածել միմիայն գրիչը ձեռքներին: Կարելի է նոյնիսկ հաստատ ասել, որ գրողների, մանաւանդ օրագրողների (ժուրնալիստ) մեծամասնութիւնը մարդկանց այդ տիպին է պատկանում: Յիշեցէք, օրինակ, էմիլ Զոլային, որ կմկմալով էր խօսում դատաւորների առաջ: Ինկատի ունեցէք և այն, որ արտաքին պայմանների ազդեցութիւնը այնքան զօրեղ է այդ դէպքում, որ նոյնիսկ հոկտորների տարբեր տիպեր կան. հրաշալի քարոզիչը կարող է միջակ պարլամենտական ճառախօս լինել և բոլորովին վատ փաստաբան, և ընդհակառակը: Այդպէս ուրեմն որպէսզի մի տաղանդ, մի ձիրք արտայայտուի, անհրաժեշտ են յատուկ, համապատասխան պայմաններ:

Արծրունին, ինչպէս պէտք է ցոյց տար ապագան, իսկական մարտիկ գրող էր, այսինքն այնպիսի գրող, որի ոյժի և ընդունակութիւնների մաքսիմումը կարող էր արտայայտուել միմիայն բանակուտի դաշտում, հարուած տալիս և հարուած ընդունելիս: Նրան անհրաժեշտ էր համակրողների գունդ և թշնամիների բանակ: Բացի այդ՝ Արծրունին տաք տեմպերամենտի մարդ էր և ջլային: Նրան անհրաժեշտ էին յաճախակի կռիւներ, անընդհատ իրար հետևող ճակատամարտերի շարքեր: Մայիս, 1904.

Մի որևէ ամսագրի համար նա կը լինէր օգտակար, բայց թե-
րեւ միջակ հրապարակագիր, մինչդեռ օրագրում նա զգում էր
իրան ինչպէս ձուկը ջրում:

Այս բոլորից յետոյ հասկանալի է, թէ ինչու Արծրունին
իր գործունէութեան նախամշակական վեցամիսայ շրջանի ըն-
թացքում չկարողացաւ գտնել գրելու իր առանձնայատուկ, ան-
հատական ձևը, իր պարզ և ուժեղ ոճը, որ այնքան յիշեցնում
է դարբնի կռանի հակիրճ ու ուժգին հարուածներէ կրկնու-
թիւնը:

Գալով Արծրունու նախամշակական յօդուածներէ բովան-
դակութեան, պէտք է ասել, որ նրանք հէնց սկզբից ցոյց են
տալիս Արծրունու հրապարակագրական հակումները և պարու-
նակում են նրա ազատամիտ աշխարհայեացքի սաղմերը, ինչ-
պէս նաև նրա հայեացքների միակողմանիութիւնը և երբեմն
պարագործի չափեր ընդունող ծայրայեղութիւնը, որ այնքան
հակառակութիւնների և թիւրիմացութիւնների առիթ պէտք է
տար ապագայում:

Իր այդ յօդուածներում Արծրունին արդէն թունդ բէա-
լիստ և ուտիլիտարիստ է և սաստիկ կերպով հեղնում է ու
հարուածում իդէալիստներին, հասնելով իր յարձակումների և
պահանջների մէջ նոյն միամիտ միակողմանիութեան, որը Պի-
սարեւի բերնով ոչնչութիւն էր յայտարարում Պուշկինին, գա-
հազրկում էր Շեքսպիրին և խորհուրդ տալիս Շչեգրինին, որ
«երգիծաբանութեան անմեղ ծաղիկները» (այսինքն «Губернские
очерки»-ի նման գրուածքները) թողած՝ ղրազուի բնական գի-
տութիւններ ժողովրդականացնող գրքայիններ շարադրելով: Ար-
ծրունին էլ սաստիկ սիրահար է բնական գիտութեան, մինչ-
դեռ ամեն մի գեղարուեստական գործ պէտք է իր շօշափելի
օգուտը ապացուցանի, որպէսզի անցաթուղթ ստանայ նրանից:
Եւ ինչպէս Պիսարեւը, Արծրունին էլ շատ պրիմիտիվ գաղա-
փար ունի օգտի մասին: Որ հայը պէտք է հայերէն իմանայ
և սովորի, դա աքսիոմա չէ Արծրունու համար, և նրանք, ու-
րոնք այդ բանը ինքնըստինքեան հասկանալի և անհրաժեշտ
բան են համարում, դատարկ իդէալիստներ են նրա աչքում:
Լեզուն միջոց է և ոչ թէ նպատակ, բացաբանչում է Արծրու-
նին, մոռանալով, որ լեզուն ազգի մարմնացած հոգին է:

Քննադատելով իդէալիստների «արուեստը արուեստի հա-
մար» բանաձևը, Արծրունին ասում է. «Եւ միայն այն գիտեմ,
որ ես «ժողովուրդ» եմ և կը կամենայի, որ ամեն բան ինձ օգնէր լա-
ւանալու, ձգտելու դէպի բարոյականութիւնը, դէպի իմ կեան-
քի լաւացնելը, դէպի առաջադիմութիւնը... Իսկ այնպիսի նը-

կարչութիւնները, որտեղ ներկայացրած է (թէպէտ և երևելի Բաֆայէլի ձեռով) գեղեցիկ կնոջ տկլոր մարմինը, կամ բնութեան տեսարանը, սարեր, ձոր ու ջուրը,—սրանից, ես խոստովանում եմ ձեզ, սրանից ես առաւել ըարոյական չեմ դառնում»:

Արծրունուն, ինչպէս և Պեսարեւլին, իբրև իր առաջին ֆաղխում գանուող ուտիլիտարիզմի ներկայացուցիչներին, սխալ է թւում այն հայեացքը, որ իսկական գեղարուեստական գործը ինքնըստինքեան, ստեղծագործողի նպատակից անկախ, վերին աստիճանի օգտակար մի բան է, և այդ կողմից հետաքրքրական է Արծրունու վերոյիշեալ տողերի հետ համեմատել Գլեր Ուսպենսկու յօդուածը Միլոսեան Վենետիկի արձանի մասին: Ուսպենսկին, այդ «նարոզնիկը», որ իր գրուածքներում միշտ ժողովրդական ցաւերից է խօսել, նկարագրելով Վենետիկի արձանից իր ստացած տպաւորութիւնը, ասում է, որ շատ քիչ բան աշխարհում այնքան ալնուացնող տպաւորութիւն է գործել իր վրայ, որքան այդ արձանը, որ իր համաչափ մարմնաձևերով, իր իդէալական պրոպորցիաներով, շօշափելի կերպով զգալ է տալիս, թէ ինչ պիտի լինի «մարդը», աշխատանքի բաժանմունքից չխեղաթիւրուած, ճնշման տակ չկոտրացած և ներդաշնակ կեանքով ապրող մարդը:

Թատրոնական գրուածքներից Արծրունին ընդունում է միայն այն գրուածքները, որոնք դատաւիւտում են մարդկանց պաշտութիւնները, որևէ հասարակական հարց են բարձրացնում և մի բան են սովորեցնում հանդիսականներին: Ուրիշ խօսքով Արծրունու աչքում գին ունեն այն թատերադրութիւնները, որոնք *pièce à thèse* են կոչւում ֆրանսերէն:

Թէ որ աստիճանի միակողմանիութեան և ծայրայեղութեան էր հասնում Արծրունին իր սկզբնական յօդուածներում, երևում է նաև նրանից, որ Պոլ դը Կոկին մարդկութեան ամենա երևելի գրողների շարքն է դասում և ցաւ է յայտնում, որ հայրերիս մէջ չկան Պոլ դը Կոկի նման գրողներ:

Արծրունին թաղիոնալիստ է: Նրա կարծիքով ամեն ինչ կախուած է բանականութիւնից, խելքից: Մարդիկ վատ են միմիայն այն պատճառով, որ յիմար են կամ տգէտ: Պէտք է հասկացնել և սովորեցնել մարդկանց, և նրանք կը լաւանան: Պէտք է ազդել մարդկանց խելքի վրայ: Ինչ որ առողջ դատողութեան հակառակ է, նախապաշարմունք է կամ զառանջանք:

Աշխատանք և դիտութիւն, ահա բէալիզմի էութիւնը:

«Ուրեմն մեր ըողոր պահանջմունքն ի՞նչ է. «Աշխատանք»

մտաւորական և նիւթական»,—ասում է Արծրունին («Գրականութիւն չկայ», եր. 124):

Արծրունին հակայեղափոխական է: «Գերմանիան նշանակում է ազատութիւն, իսկ Ֆրանսիան միայն յեղափոխութիւն, ուրեմն Գերմանիան պաշտպանում է արդեան մի գաղափարը, իսկ Ֆրանսիան զժբախտապէս հետևում է մի հնացած գաղափարին» («Ֆրանսիա և Գերմանիա». Հայկական Աշխարհ, 1870, №9):

Արծրունին կանանց հարցի ջերմ կուսակից է: Այդ հարցին նուիրուած մի շարք յօդուածներ կան առաջին հատորում, որոնց մէջ Արծրունին քարոզում է կանանց կրթութեան անհրաժեշտութիւնը և պաշտպան է հանդիսանում կանանց իրաւունքներին և խառն (երկսեռ) դպրոցների սիստեմին:

Մի խօսքով, իր գործունէութեան նախաձեռնական շրջանում Արծրունին արդէն հանդէս է գալիս իբրև համոզուած լիբերալ:

Արծրունին, ինչպէս միշտ, իր սկզբի յօդուածներում էլ արտայայտում է վերին աստիճանի սուբիեկտիվ հայեացքներ: Զօրեղ անհատականութիւններից շատ քչերին է յաջողում օրիէկտիվ լինել իրանց դատողութիւններին մէջ: Իսկ Արծրունին ոչ միայն զօրեղ անձնաւորութիւն էր, այլև տանու դաստիարակութիւն ստացած, ուրիշ խօսքով՝ հեռու ընկերական լայն շրջանից, հեռու դպրոցից, ուր մարդիկ մանկութիւնից սովորում են նայել նաև ուրիշի աչքերով, մտնել երբեմն ուրիշի կաշու մէջ, ստուգել իրանց զգացածն ու մտածածը ուրիշի զգացմունքով ու մտածմունքով:

Այդ կողմից շատ բնորոշ է Թիֆլիսում համալսարան հիմնելու օգտակարութեան հարցը: Իր գործունէութեան սկզբում Արծրունին դէմ էր Թիֆլիսում համալսարան հիմնելուն: Ինչո՞ւ: Որովհետև, ասում էր նա, եթէ Թիֆլիսում համալսարան լինի, Թիֆլիսեցի հայերը իրանց զաւակներին չեն ուղարկի հեռաւոր համալսարաններ, և այդպիսով հայ երիտասարդները ընդմիշտ կը մնան իրանց բունակալ ծնողների ազդեցութեան տակ և իրանց ազգականների ու ծանօթների և տեղական անդարգացած հասարակութեան փտած շրջանում: Կարծէք թէ ամեն մի հայ ծնող նոյնպիսի բռնակալ էր, ինչպէս Գրիգոր Արծրունու հայրը, և նոյնպէս միջոց ունէր սկզբում տանու կրթութիւն տալ իր որդուն, հեռու պահելով ամեն մի շփումից, իսկ յետոյ ուղարկել Ռուսաստան և արտասահման: Եթէ այդ հարցը քննելիս Գրիգոր Արծրունին մի րոպէ մոռանար սեփական կեանքի առանձնայատուկ պայմանները, անշուշտ կը հասկանար, որ հայ ծնողները մեծագոյն մասը այն ժամանակ անկա-

րող էր զաւակներին ուղարկել հեռաւոր համալսարաններ: Եթէ Արծրունին գպրոցում սովորած լինէր, նա կը հասկանար, թէ ինչ ահագին նշանակութիւն ունի մի հասարակութեան համար այս կամ այն գպրոցի, մանաւանդ բարձրագոյն գպրոցի գոյութիւնը:

Իր սկզբնական յօդուածներում Գրիգոր Արծրունին ցոյց է տալիս նաև իր անտեղեակութիւնը հայոց պատմութիւնից: Խօսելով մի Փրանսիացի հեղինակի մասին՝ Արծրունին գրում է.

«Յաւելով ցոյց կ'տամ 361 երեսը, որը վկայ է հեղինակի բանի մի բաներում խորին տգիտութեանը: Քսաւն տարի առաջ, ասում է նա, հայերը (Թիւրքիայում) թիւրքեր էին թէ վարքերով թէ լեզուով: Այժմ իրանց մէջ մտցրած ազգային մի այբուբենի շնորհով, նոքա ևս մշակում են իրանց լեզու, նոքա ևս յոյների նման ձգտում են դէպի մեծ գաղափարը»: Ուրեմն հեղինակը չգիտէ, թէ մեր այժմեան օրագիրներում գործածուած գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր գործածում իր աստուածաբանական գրուածքներում: Զարմացած կարգացիւք գրքի մէջ, թէ հեղինակը Կ. Պոլսի մէջ է ապրում...» (եր. 303):

Նոյնքան, գուցէ և աւելի զարմանալի էր, ի հարկէ, այն, որ Գրիգոր Արծրունին, հայ լինելով, չգիտէր, որ «այժմեան օրագիրներում գործածուող գրերի» գիւտը եղել է Գրիգոր Լուսաւորչից շատ յետոյ:

Զնայելով այն բոլոր պակասութիւններին, որ մենք մանր-րամասնօրէն յիշեցինք, Արծրունու երիտասարդական յօդուածները չէին կարող բարեբար ազդեցութիւն չունենալ հայ ընթերցողի վրայ: Այն ժամանակ, երբ Արծրունին գրում էր իր այդ յօդուածները, լիբերալիզմը, իր սխալներով հանդերձ, ահագին դեր ունէր կատարելու մեր հասարակութեան մէջ:

Եթէ ծայրայեղութիւնը և միակողմանիութիւնը երբեմն անհրաժեշտ են լինում և յաճախ ներելի, այդ նրանից է, որ կեանքում տմեն ինչ աններգաշնակ է, բոլոր կշիւքները անհաւասարակշիւ և բոլոր ճիպտները մի կողմի վրայ ծռուած:

Միակողմանիութիւնը բացարձակ միասակար է միայն այն ժամանակ, երբ յօնքը շինելու տեղ աչքն էլ են հանում:

Արծրունու միակողմանիութիւնը, — եթէ օգտուենք այդ ժողովրդական ասացուածքի բառերից, — նրանումն էր, որ նա կոյրի աչքը բանալիս մի քիչ խանձում էր յօնքերը, մի բան, որ շատ անդամ անհրաժեշտ չէր:

Տ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Գարեգին Մեծաստուրեան՝ «Ընթերցարան կարճատևների կամ կարճատև (?) կովերը ձանաչելու միջոցները» (26 պատկերով), Ս.-Պետերբուրգ, 1904 թ., գլինը 15 կոպ.:

«Գիւղատնտեսական գրադարան» վերնադրով պ. Յովհաննէս Արամեանը ձեռնարկել է մի շարք հրատարակութիւնների, որոնց նպատակն է ծանօթացնել մեր գիւղացուն գիւղատնտեսական գործունէութեան լաւագոյն ձեւերի և միջոցների հետ, նրան մի շարք խորհուրդներ ու ցուցմունքներ տալ և միջոցներ առաջարկել բնութեան հետ աւելի յաջող կընուելու և իր ուժերը աւելի արդիւնաւոր գործադրելու համար:

Գովելի նպատակ: Մինչև այժմ հայերէն լեզուով գիւղատնտեսութեան վերաբերեալ շատ քիչ գրքեր է հրատարակուած, մինչդեռ այդտեսակ գրքերի անհրաժեշտութիւնը վաղուց է զգացուած մեզ մօտ:

Յիշած գրքի նիւթը ընտրուած է շատ աջող, բայց դժբախտաբար չի կարելի նոյնը ասել նիւթի մշակութեան մասին: Պ. Մեծատուրեան աշխատել է այս գրքում հաւաքել այն բոլոր նշանները, որոնք թոյլ են տալիս գտնել կովի կաթնատու լիւնելու մասին: Եւ այդ պատճառով նա գիտութեան մէջ ապացուցուած և բացատրելի յատկանիշների հետ միասին գետեղել է բոլորովին անհիմն և յամենայն դէպս անբացատրելի նշաններ, ինչպէս են՝ պոչի երկարութիւնը, ականջների մեծութիւնը (ի դէպ է ասել, որ խօսելով ականջները մասին՝ պ. Մ. սխալուած է ասելով, թէ լաւ կաթնատու կովի ականջները պէտք «խիտ մաղով ծածկուած լինին».— ընդհակառակը), ուլունքը և այլն: Նշանների այս կազմութիւնը ոչ միայն չի հեշտացնում գործը, այլ ընդհակառակը՝ կարող է միայն շփոթեցնել ընթերցողին: Կարող է նոյնիսկ պատահել, որ կով ընտրելիս իր ուշադրութիւնը դարձնի այդ երկրորդական, նոյնիսկ անպէտք նշանների վրայ, մոռանալով գլխաւորները:

Միթէ՞ արժէր, օրինակ, ամբողջ 7 երես և 10 նկար նուիրել այնպիսի երկրորդական նշանի, ինչպէս է կաթնանիշի ձևը, որի մասին ինքը պ. Մեծատուրեանն ասում է, թէ «կաթնանիշի տարածութիւնն է, որ նշանակութիւն ունի, և ոչ թէ ձևը» (եր. 34). նշանների այս բազմութիւնը և խառնաշփոթութիւնը մեր կարծիքով կազմում են գրքի ամենամեծ պակասութիւնը:

Ինչ վերաբերում է լեզուին, պէտք է ասել, որ նա ընդհանրապէս ծանր չէ: Բացատրելով այնպիսի խօսքեր, ինչպէս

«գեբ» և «նիհար», բացատրուած չեն օտար չափերը: Նկարները բացի երկուսից (15 և 16) յաջող են: Մենք արդէն ասացինք, որ վերջի 10 նկարները բոլորովին աւելորդ են և միայն թանգացնում են հրատարակութիւնը:

Գինը 39 երեսի և 26 նկարի նշանակուած է 15 կոպէկ. թուում է, թէ այսպիսի հրատարակութիւնների համար այնքան էլ էժան չէ:

Զնայած այս պակասութիւններին, գիրքը յամենայն դէպս կարող է օգտակար լինել մեր գիւղացիների համար, և ցանկալի է, որ նա տարածուի.

ԵՐ. ՍԱՐ.

Վախան Թաւարեղեանի «Բանաստեղծութիւններ», Թիֆլիս, 1903, գինն է 50 կոպէկ:

Տպագրուած խօսքի անհամ, անհոտ հեղեղ մըն է որ կը յորդի, կ'ողողէ հրապարակը: Դպրոցական գրասեղանը հազիւ թողած՝ կեանքը դիտելու և ըմբռնելու տակաւին անկարող՝ գրականութեան մէջ նետուելը թրքահայ բարքերու բնորոշ գիծերէն մէկը կը կազմէր: Հիմայ նոյն տեսարանին հանդիսատես կ'ըլլանք և ուսանայեցող մէջ: Գրելախառէ բռնուելու եւ ընդթը կը սկսի այսօր նոյնքան ընդհանրաբար Արաքսի այս կողմը, որքան այն կողմը: Օրինակի համար, ահաւասիկ ձեզի հարիւր երեսնոց բանաստեղծութեանց հատոր մը: Դրքի միայն առաջաբանը բաւական է, որպէսզի մենք համոզուինք թէ հեղինակը տակաւին շատ անգիտակից է ու միամիտ: Տեսէք:

«Եթէ նա քեզ դուր չի գայ—կը գրէ առաջաբանին մէջ պ. Թաւարեղեան իր բանաստեղծութիւններուն ակնարկելով— անշուշտ չես բարկանալ: Գիտե՞ս, որ այն նուիրական զգացմունքներն, որոնք բորբոքում են մեր սիրտն, այն վեհ գաղափարներն, որոնք յաճախ գալիս են մեզ այցելութեան ու մեզ շրջապատող անելանելի խաւարի մէջ լուսոյ շիթեր արձակում, երբ աշխատում ենք մենք թղթին յանձնել, մանաւանդ երբ ուզում ենք նոցա չափածոյ տարազով արտայայտել՝ կորցնում են իրանց գեղեցկութեան ամենահրապուրիչ մասն և նմանում են լոկ այլանդակ կմախքի»:

Պ. Թաւարեղեան իզուր է չարչարուել մեզի բացատրելու թէ որքան զգուար է բանաստեղծ դառնալ: Պէտք է ծնիլ բանաստեղծական աւիւնով:

Պ. Թաւարեղեանի հարիւրի մօտ բանաստեղծութիւններ-

բուն մէջ ոչ ձեռի և ոչ ալ յղացումի ներդաշնակութիւն կայ: Առաջ բերենք սակայն մէկ քանի նմուշներ պ. Թաւարբէգեանի ներշնչումէն: Հեղինակը իր բանաստեղծութիւնները բաժնէր է չորս գլուխներու. 1-ն Սիրոյ նուագներ, 2-ն Բնութեան պատկերներ, 3-ն Մրմունջներ, 4-ն Նոր գարուն:

Ահա առաջին մասէն կտոր մը:—Բանաստեղծը կեցած է սիրականին մօտ որ մանկիկ մը կուրծքին սեղմած կը համբուրէ: Ի՞նչ կը կարծէր որ անցնի պոէտի մտքէն—ամենառամիկ մարդու մտքէն անցածը—թէ մանուկն ի՞նչ կը հասկնայ իր գգուանքներէն. լաւ չէ որ համբոյրները ուղղուին իրեն, որու զգայականութիւնն աւելի զարգացած է անկասկած:

Փոքրիկ մանկան սեղմած ամուր

Չնաշխարհիկ քո կրծքին,

Բիւր, անհամար քաղցրիկ համբոյր

Դրոշմում ևս դու այտերին.

Իսկ ևս կանգնած նայում եմ լուռ

Մտածում եմ ակամայ,—

Ափսոս դգուանք անցնում է զուր

Զուր է... նա չի հասկանայ...

Նկատեցէք, որ ոտանաւորը անկատար, տգեղ է որքան ֆոնով նոյնքան ֆորմով:

Ուրիշ տեղ մը, սիրունին «արշալոյսի», «շուշանի» «դեռաբոյս ծաղիկի» և տակաւին այս կարգի սովորական, տափակ, ծամծմուած բաղդատութիւններով երգելէ և մանաւանդ «անզին մանկիկ» տարօրինակ կոչականով վայփայելէ յետոյ, կը բացաւանչէ.

Սակայն, հոգիս, շատ անգութ ևս

Ու չես խղճում ոչ ոքին,

Բայց մինչև այժմ, միթէ՞ չգիտես—

Պէտք է զիջիլ պօէտին...

Պ. Թաւարբէգեանի հաշուով քիչ ձեռնառու չէ բանաստեղծի մուսայ մը ունենալ !

Բանաստեղծի «բնութեան պատկերները» նոյնքան հազարակ, նոյնքան անշնորհք են: «Գեղեցիկ զարուն, օ չքնաղ դարուն, քո ծաղիկներով անոյշ բալասան...» եթէ այս տեսակ տողերով կարելի էր բանաստեղծի դափնիներ վատկիլ, ոչ մէկ ազգի մէջ բանաստեղծներն այնքան բազմաթիւ չէին ըլլար, որքան մեր մէջ:

Մրմունջներու և Նոր գարունի մէջ պ. Թաւարբէգեան

նոյն մաշուած, աններդաշնակ, անհոգի լարն է որ կը հնչեցնէ։
Մտիկ ըրէք հիմայ իր «Կեանքի նպատակը».

Ես պիտի ձգտեմ կեանքիս ընթացքում—

Դէպի մնայուն, յաւիտենական...

Հաճոյք ու գգուանք, սիրոյ հեշտութիւն—

Տեղում է միայն ուղիղ մի վայրկեան։

Կ'ուզէք ապացոյց բանաստեղծի «դէպի մնայուն, յաւիտենական» ձգտումին—բանաստեղծութիւններու հատորը։

Եթէ պ. Թաւարեզեանը աճապարած չըլլար և իր մտածումը հասունցնելէ, իր լեզուն, ոճը, բացատրութիւնները յղկելէ, ճշմանցնելէ, դաշնակաւորելէ յետոյ միայն հրապարակ իջնէր, գուցէ յաջողէր մեղի տալ քիչ ու շատ աջող երգեր։ Օրինակ, հետեւեալ ոտանաւորին մէջ, հակառակ իր անտանելի ձևին և արուեստի աչք ծակող թերութիւններուն՝ կայ յղացումի ինքընստապութիւն.

Ինչպէս մոգերն արեւելքում

Տեսան աստղ մի նորածին

Ու նորանով անշուք աշրում

Գտան մանուկ Յիսուսին,

Այգպէս էլ ես, երբոր տեսայ

Չնաշխարհիկ քո աչեր,

Իսկոյն, սիրելիս, հասկացայ,

Որ դու պիտ լինես իմ սէր...

Պ. Թաւարեզեանի բանաստեղծութիւններու ընթերցումով այն ընդհանուր տպաւորութիւնը կ'ունենանք թէ հեղինակը տակաւին շատ անփորձ, անպատրաստ և տաղաչափութեան արուեստին բոլորովին անծանօթ է։ Երեւեակեցէք ինչ աստիճան միամիտ է, որ չէ վարանած այս տեսակ նախադասութիւն մը զետեղելու «նկատումս վրիպակներ»-ու տակ.

«Իսկ եթէ պատահեն այլ սխալներ՝ խնդրում եմ ընթերցողները ուղղեն»։

ԶԱԻՆ

Հ. Համբարձումեան՝ «Անհունի էջերում»։ Ս.-Պետերբուրգ, 1904, գինն է 60 կոպ.։

Պ. Հ. Համբարձումեանը հրատարակել է ոտանաւորներին մի բաւական ստուար ժողովածու՝ բաղկացած 134 երեսից, «Անհունի էջերում» տարօրինակ վերնագրով։ Անհունի էջեր... արդեօք ինչ է նշանակում դա մարդկային սովորական լեզուով

—անշուշտ միայն ինքը հեղինակը կը հասկանայ իր գրքոյկի վերնագիրը և ոչ մեզ նման հասարակ մահկանացուները, որոնք «հպարտ չեն անհուն» պ. Համբարձումեանի նման և որոնց համար չէ գրուած ըստերևոյթին գրքոյկը: Սակայն մեզ թւում է, որ ինքը պ. Համբարձումեանն էլ չէ կարող պարզ բացատրել այդ մշուշապատ, եթէ չստենք անմիտ վերնագիրը: Կան մի քանի դժբախտ բառեր հայոց լեզուի մէջ, որոնց կարծես վիճակուած է անվերջ նահատակուել, և «անհուն»-ը այդ բառերից մէկն է: Ամենայն համարձակութեամբ և առանց խղճահարուելու նա կոխում է այդ բազմաշարժար խօսքը ամեն տեղ, ուր և պատահի,—«անհունի էջերը», «ես հպարտ եմ անհուն», «անհունի ամփերից», «անհուն է առագաստը հոգուս», «կարօտել է անհուն շոյում է անհուն», «վարքութեամբ անհուն», «ես անհուն եմ կըքով», «անհունից էլ աւել ես հպարտ եմ»... և այս բոլորը, բացի վերնագրից, մի ոտանաւորում միայն... Արդեօք սա նըշան չէ, որ պ. Համբարձումեանը անհուն (իր նման ասենք) յանցանք է գործում այն լեզուի դէմ, որով գրում է:

Սակայն վերնագրի անաջող ընտրութիւնը և «անհուն» ու այլ բազմաթիւ բառերի անտեղի գործածութիւնը դուցէ կարելի լինէր և՛ ներել հեղինակին, եթէ նրա ոտանաւորներն աւելի շնորհալի ու հասկանալի լինէին և աւելի միտք պարունակէին իրանց մէջ, քան վերնագիրը: Դժբախտաբար այդ էլ այդպէս չէ.—բառեր, բառեր, անթիւ, անհամար, անկաս, կուտակուած իրար վրայ, բարձրացած իրար թիկունք, խառնուած խճողուած իրար հետ, և սակայն քիչ, շատ քիչ, միկրոսկոպիական չափով միտք—ահա պ. Համբարձումեանի ոտանաւորները, մինչդեռ լաւ ոտանաւորի մէջ քիչ խօսում են և շատ բան ասում: Ահա մի նմուշ պ. Համբարձումեանի բառերի տարափից.

Կ Ա Յ Ծ Ա Կ Ն Ը Ր (երես 12)

Սեւամոյր, խոտացած,
Վշտածոր—վշտածին,
Կնճոռոտ—կսկծոտ,
Մշտալուռ ամսիքի
Յաւ-արիւն կամարում
Շանթահար-դալարուող,
Հրաքուղիս—բոցավառ,
Լեզուածեւ—պսպղուն,
Ու երկին ու եթեր,

Ու տարերքը ծեղքող,
Ոգեշունչ—կատաղի
Կրակէ կայծակներ,—
Որ իբրեւ բնութեան,
Հշմարտի զօրաւոր
Վեհապանծ—փառահեղ,
Անսահման—անսասան
Վսեմ-լոյս—յաղթանակ,—
Եւ իբրեւ փառաւոր,
Մտքից-վեր, ոյժից-լիր
Անսահման—անկուար
Գեղեցկի յղթութիւն,—
Ոգու-պէս, հոգու-պէս
Հախրելով մեզսաւոր
Սին-ունայն աշխարհի
Գծնաշունչ երեսին,—
Տապալում էք, այրում
Փէռ ու քար, չար-խաւար,
Ու կեանքեր, ու սրտեր...
Գալարուէք, բռնկուէք
Անսպաս ու զժոխք
Կրծքիս տակ, հոգուս մէջ...
Ու զարնէք, ու փշրէք,
Ու անհետ կործանէք
Վշտի ժայռը սրտիս...

Սա բանաստեղծութիւնն է, պ. Համբարձումեան, այլ շատախօսութիւն:

Սակայն այս կծու ճշմարտութիւնն ասելով հեղինակին՝ մենք ամենեւին միտք չունենք վհատեցնելու նրան, ոչ.—նրա գրքոյկի մէջ կան մի քանի ոտանաւորներ,—և իսկապէս քննում ենք գրքոյկը այդ մի քանի ոտանաւորների պատճառով—որոնք ցոյց են տալիս, թէ մի օր, երբ պ. Համբարձումեանը կը հասունանայ աւելի, քան այժմ, այն ժամանակ զուցէ կը կարողանայ կարդալու արժանի ոտանաւորներ գրել.—պ. Համբարձումեանի մէջ կայ մի փոքրիկ կայծ, մի փոքրիկ շնորհք, և այդ երևում է այն հազուագիւտ բողբոջներում, երբ նա չէ փաթաթւում նիցդէականութեան կեղծ քղամիդով, չէ համարում իրան «անյաղթ, անհուն, անհունից էլ վեր», չէ ցնդաբանում կայծակի, շանթի և որոտի լմասին, այլ բաց թողած անհունի փէշերը՝ իջնում է վայր—երկիր, խօսում է իր սրտին մօտ ցաւերի մասին, խօսում է ամենքին հասկանալի լեզուով,

ինչպէս օրինակ՝ հետևեալ ոտանաւորի մէջ, որ մեր կարծիքով,
փոքրիշատէ աշողուածներէց մէկն է.

ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Խնձնից երգ ես ուզում, երգ խնդուն, վաւովուն,

Քայց ես ինչը երգեմ քեզ համար...

Սո ծնուած եմ հեռու, ու անմէր, ու անտուն,

Սուգ մրուր եմ ըմպել անպսղար...

Արծրիս տակ ես սնել եմ ըղձեր ու տենչանք,

Իսկ ձեռիս ունեցել թուլութիւն...

Ինձ օտար է եղել աշխարհի միշտ քերկրանք,

Ինձ նկղել է յաճախ գերութիւն...

Նւ ամեն մի հնչիւն լսրերիս տխրամած

Միշտ անձուկ ու վշտո՞տ է երգում...

Ա՛խ, եղբայր, տես, չորս կողմն է դաժան, մուտլուած,

Ողջ աշխարհն է ողբում ու սգում...

Տես, պայծում է որոտ, որոտի յետեւից,

Նւ որքան են թօշնում ծաղիկներ...

Օ՛, որքա՛ն վառ յոյսեր ու տենչանք քերկրալից

Սին-խոնաւ գերեզման են մտել...

Ի՞նչ երգեմ ես խնդուն, քնարով իմ տխուր,

Նրբ որ վիշտն է հսկայ, եւ անհուն են ցաւեր...

Ի՞նչ ե՛րգեմ ես ուրախ, երբ աշխարհը հանուր

Այդքան պարզ է սգում օր-գիշեր...

Դժբախտաբար այսպիսի ոտանաւորներ միայն մի քա-
նի հատ կան «Անհունի էջերում»-ում, իսկ միւսները պատա-
նեկական-երիտաւորական զառանցաքներ են, կեղծ, հուս, ան-
մարտ, տենդային, հիւանդոտ և, որ ամենից աւելի վատն է,
չափազանց ինքնապաշտ ու յաւակնոտ...

Մեր կարծիքով պ. Համբարձումեանը սխալուել է՝ շտա-
պելով տպագրել իր ոտանաւորների ժողովածուն: Մի-երկու
տարուց յետոյ, երբ նա նորից կը թերթէր իր ոտանաւորները,
հաւատացած ենք, կը համոզուէր, որ նրանց ահագին մեծա-
մասնութիւնը տպագրելու բաներ չեն. երկրորդ և աւելի մեծ
սխալը գործել է հեղինակը՝ կցելով գրքոյին մի վերջաբան,

որ ամբողջովին ինքնագովաթիւն է և... հայրոյանք գրախօսաների դէմ. յամենայն դէպս այդ վերջաբանը մի վերին աստիճանի անվայել և անպատկառ գրութիւն է, որ պատիւ չէ կարող բերել աւելի ևս պ. Համբարձումեանի նման «Անհունի էջերով» սաւառնող մի «բանաստեղծի»...

U. U.

Օմար Խաչատրի «Գառեակներ», քննական ուսումնասիրություններ մը,
սյարսներէն ընտրէն թարգմանեց Գ. Փառնակ. Փարիզ, 1904.

Պարսկական գրականութիւնը բոլոր միւսիւման ազգաց մէջ
եղել է և նմում է ամենաբեղմնաւորը, եթէ կայ մի գրականու-
թիւն, որ նոյն բարձրութեան վրայ կանգնած լինէր, դա
կլասիկական արաբականն է անշուշտ, սակայն և այս գրակա-
նութեան մեծ ներկայացուցիչները եղել են պարսկական ծա-
գումից: Պարսիկը իր մտաւոր արտադրութիւններով մի պատ-
կառելի բարձրութեան վրայ է դնում՝ համեմատած իր դը-
րացի արիական կամ մոնղոլական ծովում ունեցող ազգերի
հետ. թէև շատ անգամ քաղաքականապէս ենթարկուել է նրանց
ազդեցութեան, բայց մտաւորապէս միշտ տիրապետող տարր է
հանդիսացել արեւելքում: Նա մշակել է գիտութիւնները, պատ-
մագրութիւնը, իսկ բելլետրիստիկան, մասնաւորապէս բանա-
ստեղծութիւնը հասցրել է մի ուրոշ կատարելութեան. այս վեր-
ջինիս մէջ, ինչպէս հայկիւում, արտացոլանում է պարսկի ճշ-
կուն, դիւրաթիւք, սրամիտ հոգին, նուրբ ըմբռնողութիւնը և
կայտառ երևակայութիւնը: Եւ այս բանաստեղծութիւնը իբրեւ
մի անսպառ աղբիւր դարերից 'ի վեր սնունդ է մատակարա-
րել ալլազան միւսիւման ազգերին սկսած Խնդոսից մինչև
Վոսփորի ափերը, և պարսկերէն քաղցրահնչիւն մուգիկալ լե-
զուն դարձել էր Առաջաւոր Ասիայում այն, ինչ որ էր Եւրոպա-
յում ֆրանսերէն լեզուն XVIII դարում:

Բաղմաթիւ Էն պարսիկ բանաստեղծները. ամեն շահ, ամեն աւատական իշխան, մինչև անգամ և հարուստ կալուածատէր իրան պարսք և պատիւ էր համարում բանաստեղծների մեկենասը զառնալու: Ղազնէվի հարստութեան ամենամեծ ներկայացուցչի՝ Սուլթան-Մահմուդի պալատում հովանի և ապաստան էին գտել չորս հարիւր բանաստեղծ: Բայց այս բանաստեղծների շատերի երկերը զարբերի ընթացքում անհոգութեան կամ ժողեանդ տգիտութեան զոհ դարձան, ուրիշները մնում են ղեռ, բայց ձեռագիրների մէջ և թաղնուած զանազան անկիւններում: Իսկ այն, ինչ որ հրատարակուել է արևմուտքում կամ

արեւելքում, մի շատ նիհար մասն է պարսկական գրական հարուստ ժառանգութիւնից: Բայց այս նիհար մասն էլ մնում է իր պատկառելի բարձրութեան վրայ թէ որակի և թէ քանակի կողմից՝ պարունակելով իր մէջ երեք մեծութիւններ այս բառի եւրոպական նշանակութեամբ. Ֆիրդուսի—էպիկ բանաստեղծ, Հաֆիզ—լիրիկ բանաստեղծ և Նայեամ—միստիկ բանաստեղծ: Ամենից բախտաւորը «Շիրազի Սոխակը»՝ Հաֆիզն է, որ իր կենդանութեան ժամանակ և այժմ էլ վայելում է պարսիկ ժողովրդի յարգանքը և երախտագիտութիւնը. նրա գագէշները անգիր հնչում են Պարսկաստանի ամեն անկիւնում: Աւելի դժբախտ էր Ֆիրդուսին: Նրա գիւցագնական նախ-միւսիւլման Պարսկաստանն իր Ռուստէմներով և Ջոհրարներով դուր չէր գալիս միւսիւլման Պարսկաստանի կեղծ-բարեպաշտ ժողովրդի խանդավրեւած ճաշակներին: Մնում է Ֆիրդուսի Շահնամէն, բայց անյայտ կորել է նրա գերեզմանը: Սակայն ամենից դժբախտը Նայեամն է. նրա գերեզմանի հետ պարսիկը անգիտանում է և նրա սքանչելի քառեակները *): Բայց Նայեամը մնում է մի առաջնակարգ մեծութիւն շատ բնորոշ ու օրիգինալ դէմք պարսկական գրականութեան մէջ իրրեւ միստիկ բանաստեղծ:

Միստիկականութեան ծագումը շատ հին է Պարսկաստանում. նա սկսել իսլամի հետ, և պարսիկ գրողներն իրանք հաստատում են, որ շիա դաւանութեան հիմնադիր Նալիֆ Ալին հիմնադիր է եղել և՛ միստիկականութեան: Նրա ծագման պատճառը պէտք էր փնտրել իսլամի մէջ, որ իր չոր, միօրինակ և դոկտրինալ բնաւորութեամբ չէր կարող համապատասխանել պարսկական պանտէիստ աշխարհայեացքին և հետքընդին ու էկսպանսիւ բնաւորութեան. և միստիկականութիւնը թէև բուսել էր Պարսկաստանում իսլամի հետ միասին, սակայն նրա արմատները շատ խոր են թաղուած, զրադաշտ կրօնքի մէջ, որ շատ զօրաւոր կերպով ազդել է մասնաւորապէս միստիկների այլաբանական լեզուի վրայ: Արեւելքի միստիկականութիւնը իր գլխաւոր գծերի մէջ նմանում է արեւմտակա-նին՝ իր կարգին ազգուած յունական նոր-պլատոնական փի-

*) Պամենալով երկու խօսք ստել Նայեամի մասին՝ նրա հայերէն թուրգմանութեան սովոր, իմ ամբողջ աշխատանքները գտնելու Թիֆլիսում Նայեամի մի որեւէ բնաղիրը՝ բոլորովին զուր անցան: Նոյն հետեանքն ունեցան և «Ջարքի-Ռուս»-ի խմբագիր պ. Չահթախթինսկիի սիրալիք կերպով յանձն առած որոնումները: Զարմացած մնացի, երբ Թիֆլիսի պարսկական բնագնանուր հիւպատոսարանում հիւպատոսը և իր բաղմամբիւ քարտուղարները առաջին անգամ ինձանից էին լսում Նայեամ բանաստեղծի անունը:

լիստիայութիւնից և հնդկական բրահմինական ուսումից. նա ծագկեց Պարսկաստանում X-XV դարերում: Այս վարդապետութեան համաձայն աստուածութիւնը սփռուած է ամբողջ բնութեան մէջ, նա պարունակում է աշխարհի մէջ, և աշխարհը պարունակում է նրա մէջ: Եթէ մարդը կարողանայ իր մէջ խեղդել անձնական եսը (նէֆս) և բոլորովին ոչնչացնել իր մէջ մարմինը, այն ժամանակ նա կը միանայ աստուածութեան հետ, (վէսլ կամ վէսալ), ինչ-որ կազմում է մարդու համար կատարելութեան վերջնակէտ և ծայրագոյն երջանկութիւն: Սէրը (էշկ), որ առաջին պայմանն է հասնելու այդ երջանկութեան, միատիկների լեզուով ոչ հասարակ երկրային սէր է, այլ դէպի վեր, դէպի աստուածութիւնը ձգտող սէր: Սիրոյ առարկան՝ աստուածութիւնը՝ որ սփռուած է ամբողջ բնութեան մէջ և որին փնտրում է միատիկը, դա այլաբանօրէն սիրելին, պաշտելին, կուռքը (մէշուքէ, մէհրուքէ, սէնէմ) կամ ընկեր բարեկամն (գուստ, եար) է կոչւում: Այն հոգեկան ինքնամոռացութիւնը, էքստազը, որը տիրապետում է միատիկին և նրան խլում է աշխարհից, դա այլաբանօրէն արտայայտւում է գինովութիւն (մէստի) բառով և միատիկն իր կեանքը միշտ գինով է անցկացընում: Միատիկը, որ Աստուծոյ հետ միանալու յուսով, անմխիթար, աշխարհում տառապում և թափառում է, կոչւում է սիրահար (աշիդ), թափառող (բինդ), իսկ նրա բնակավայրը գինետուն (մէյքէդէ), աւերակ տուն (խէրարաթ): Ահա այս է համառօտաբար միատիկ բանաստեղծութեան այլաբանական լեզուն:

Պարսից զրականութեան մէջ միատիկ բանաստեղծութեան հիմնադիրը Աբու-Մէլիդ-բէն-Աբու-Խայր մէյհէնեցին էր, որ առաջին անգամ քառեակներով սկսեց արտայայտել միատիկ զգացմունքները և մտքերը: Նրա բանաստեղծութիւնները իրանց բուն զգացմունքներով, հոգու անսահման զմայլումով, ազնիւ և այրող տենչով անշուշտ շատ բարձր են՝ կանգնած, բայց մտքի խորութեան, համարձակութեան, կորովի արտայայտութեան և ինքնուրոյնութեան կողմից զիջանում են Օմար Խայկամին. եթէ առաջինի մեծութիւնը մատչելի է արեւելքի զրական ճաշակներին, վերջինը պահում է այդ՝ տեղափոխուելով արեւելքից արեւմուտք:

Մի քիչ ժամանակ առաջ Օմար Խայամ բոլորովին անծանօթ դէմք էր ընդհանուր զրականութեան մէջ: Իր հայրենիքում, քաջի սակաւաթիւ միատիկներ, որոնք հոգեկան խորին հոգեզմայլութեան մէջ յափշտակւում էին նրա քառեակներով, նա բոլորովին մոռացուած էր. իսկ Եւրոպայում նա մի անորոշ մեծութիւն էր, որ անյայտութիւնից դուրս գալով՝ հետզհետէ

բարձրացաւ և պարսից բանաստեղծներից եթէ ոչ ամենամեծը, գոնէ ամենաժողովրդականը դարձաւ: Ֆոն-Համմերի, Ֆեց-Ջերալդի, Նիկոլայի և Ունեֆիլդի թարգմանութիւնները նրա համար պատրաստեցին պատուանդանը, որի բարձրութեան վերայ նա այժմ գտնուում է: Իբրև արձագանդ ևրոպական զրականութեան և կրիտիկայի այդ ընդունելութեան Պայետի քառեակները երևում են այսօր և մեր գրականութեան մէջ, Պարիզում, պ. Փառնակի պարսկերէն բնագրից թարգմանութեամբ:

Պ. Փառնակի թարգմանութիւնը առաջնորդում է մի քննական ուսումնասիրութիւն 41 երեսից բաղկացած, երեսների թուով մի քիչ միայն պակաս իսկական բնագրից (55 երես), բայց ծաւալովը գրեթէ նրա կրկնապատիկը: Այսքան ընդարձակ ուսումնասիրութեան մէջ կարելի է շատ բան ասել Օմար Պայետի մասին, և մենք վերնագրի համաձայն սպասում ենք մի լուրջ քննական վերլուծումն լսել պ. Փառնակից, քանի որ նա մասնագէտ է և ըստ երևոյթին բաւական հարուստ էրուդիցիայի տէր. բայց մենք տեսնում ենք մի քիչ տարբեր մեր սպասածից: Հակառակ թարգմանչի գործ դրած ջանքերին քննական վերլուծման հնթարկելու Պայետի քառեակները և նրա հոգեբանութիւնը, Պայետի դիմագծերը և աշխարհայեացքը այնուամենայնիւ մնում են մեզ համար անորոշ և անհասկանալի. խօսքեր, դարձուածքներ, ֆրազներ շատ կան, բայց մի միտք, որ արժանի լինէր վերնագրին, քննական ուսումնասիրութեան, այդ մենք չգտանք: Այստեղ Պայետի մասին նրա ասածը կրում է աւելի գովաբանական (panegyrique) բնուորութիւն, որ շատ տեղ համնում է հափաղանցութեան: Պայետի մեծութիւնը ապացուցանելու և համեմատելու համար մէջտեղ են բերւում և՛ Վոլտեր, և՛ Շէկսպիր, և՛ Գիտթէ, և՛ Տոլստոյ, և՛ Քրիստոս. յափշտակումներ և հափաղանցութիւններ, որոնք այնքան վրասում են քննական լրջութեան: Մի տեղ (երես ԺԷ) Պայետն մի երգուեալ եպիկուրեան է, մի տիպիկական ներկայացուցիչ «կեր, ւրը և ուրան լեր» վարդապետութեան, բայց միևնոյն ժամանակ (երես ԺԲ) մի մոայլ յոռետես է նա, «ինն դար առաջ յանկարծ Շոպենհաուեր և Բայրըն»: Ոչ առաջին կարծիքն է ճիշտ և ոչ վերջինը, ճիշտն այն է, որ Պայետը ոչ յոռետես է և ոչ եպիկուրեան, նա մի միստիկ բանաստեղծ է, որ ընթանալով այդ բանաստեղծութեան նախահայր Արու-Սէիդի ճանապարհով՝ այդ տեսակի բանաստեղծութեան կարողացաւ այդպիսի խորութիւն տալ և այդպիսի կոբով, ուժղնութիւն և անկեղծութիւն ներշնչել: Գուցէ նրա քառեակները բառացի ի-

մաստով են հասկանում լոնդոնի խայեամ-կլիբի անդամները, բայց մեզ համար միակ կարևորը գիտնական ճշմարտութիւնն է, և բոլորովին անհասկանալի են պ. Փառնակի զայրոյթը և նախատինքները դէպի խայեամի ֆրանսերէն թարգմանիչ Նիկոլան, որ իր թարգմանութեան յառաջարանում բացատրել է խայեամի իբրև միստիկ բանաստեղծի այլաբանական լեզուն. անհիմն է նոյնպէս և այն մեղադրանքը, որ այդ կարծիքը անցել է արևմուտք արևելքից. ճշմարտութիւնն այն է, որ անցել է բոլորովին հակառակ ճանապարհով (տես Крымский: «Супфизмъ»): Զուր են նոյնպէս պ. Փառնակի ջանքերը խայեամի տաղանդի յայտնութեան և մեծութեան պատճառը որոնելու քաղաքական անցքերի մէջ: Գոնէ հակառակն է վկայում պարսկական պատմութիւնը: Միւսիւլման գրականութեան ծաղկումը Պարսկաստանում կատարուեց Սամանիդների (Րուդէկի), Ապնէվիդների (Ֆիրդուսի), ծագումով ոչ պարսկական, այլ թիւրք հարստութիւնների կամ Շիրազի թոյլ Աթարէկների (Սաադի, Հաֆիզ) ժամանակ. մինչդեռ յետագայ փայլուն և արիւնով ու հոգով իսկական պարսիկ հարստութեան Սէֆէվիդների, սրբացրած Շահ-Իսմայէլի և մեծն Շահ-Աբրասի ժամանակ մենք տեսնում ենք մի տեսակ գրական ամուլթիւն: Ուրեմն պ. Փառնակ աննպատակ կերպով լցրել է իր փնտական ուսումնասիրութեան առաջին ութ երեսները սելջուկ վեհապետների կենսագրութեամբ, որոնք ոչ մի կապ չունեն խայեամի հետ, որովհետև խայեամը ծնունդ էր ոչ թէ ժամանակակից քաղաքական, այլ մտաւորական կեանքին. իսկ մտաւորական կեանքը XI—XII դարերում շատ բնորոշ էր. դա միստիկ գրականութեան և միստիկ բանաստեղծութեան բարգաւաճման դար էր: Օմարն աչքերը բանում էր Նիշաբուր քաղաքում այն ժամանակ, երբ այդ միենոյն քաղաքում աչքերը փակում էր միստիկ բանաստեղծների հայրը՝ Աբու-Սէիդը: Այս երկտողում դժուար և ընթերցողների համար ծանձրալի կը լինէր մտնել ապացոյցների մէջ, որոնք հետաքրքիր և գուցէ հասկանալի կը լինէին միայն մասնագէտների համար որոշելու խայեամի միստիկ ծագումը և միստիկ բնաւորութիւնը. միայն ես ինձ թոյլ կը տայի յանձնարարել պ. Փառնակին կարդալ (ես շատ կասկածում եմ, որ նա կարդացած լինի) հասկանալու համար Օմար խայեամին և նրան ծնունդ տուող XI և XII-րդ դարերը Աբու-Սէիդի ստուար կենսագրութիւնը՝ հրատարակուած պրոֆ. Փուկովսկու ձեռքով (Абу-Сеидъ Мейхенейскій, Тайна единения съ Богомъ):

Քննական ուսումնասիրութիւնը կաղմուած է անսխառմ մատիկ, կարելի է ասել՝ անկարգ կերպով. երկար և անտեղի

կանգ է առնուած կողմնակի՝ Օմարի հետ ոչ մի կապ չունեցող մարդկանց վրայ (Հալլաջ, Մաքթուլ)։ Սխալ է նոյնպէս նրա առաջարկած տողաշափական սխեման՝ բուպային, քառեակը չունի ոտքերի այն դասաւորութիւնը, որը աշխատում է տալ պ. Փառնակը։

Ահա քառեակի սխեմաները. — — — — —

— — — — — պարսկական բանաստեղծութեան մէջ սա է քառեակների մէջ ընդունուած սխեման, և այս սխեմայով է չափուում պ. Փառնակի մէջ բերած ոտնաւորը մի տուն հայերէն տրանսկրիպցիայով. հա սխալմամբ բաժանել է՝

Տէրեապ	քի էզրուհ ճիւ	տա խահի բէֆթ.
Տէր բէրտէի	էսրարը խիւ	տա խահի բէֆտ
Խօշ պաշ նէտա	նի էզ քիւճա	ամէտէի
Մէյ նուշ նէտա	նի քի քիւճա	խահի բէֆթ.

Պիտի լինէր այսպէս.

— — — — — Դէր եա բը | քի էզ բուհը | ջու դա խա հի | բէֆթ

— — — — — Դէր փէր դէ | յի էս բարը | խուդա խահի | բէֆթ

— — — — — Խօշ բա շը | նէ դա նի դէ | քուջա ա մէ | դէյ *)

— — — — — Մէյ նու շը | նէ դանի քի | քուջա խա հի | բէֆթ

Ներկայ քառեակի վերի բաժանումը մեր մէջ ակամայ կասկած է ծագեցնում, որ պ. Փառնակ մի շատ անորոշ հասկացողութիւն ունի պարսկական տաղաշափութեան կանոնների, երկար և կարճ վանկերի, ոտքերի, շեշտերի մասին։ Գուցէ «մեծ պարսկագէտը կարսէն տը Թասը իր բացարձակ անկարողութիւնը խոստովանած է այս քառեակներուն չափը հասկընալու», բայց մեր խորին համոզմունքով՝ հիմնուած աներկբայ փորձառութեան վրայ, վերոյիշեալ բուպայի՝ քառեակի չափը, իր երկու թեթև վարիանսներով պահւում է քառեակների մէջ իր կանոնի ամենախիստ ճշտութեամբ և

*) կամ ա մէ | դէ ի

անհրաժեշտ է կարգաւ անալայման այդ չափով թէ պարսկերէն ոտանաւորի քաղցրութիւնը իմանալու և թէ ճիշտ ու անսխալ կարգալու համար, որովհետեւ քառեակներէ չափը ոչ թէ խանգարում, այլ օգնում է մտքերը հասկանալու:

Երկրորդ կարևոր պակասութիւնը պ. Փառնակի անխտիր վերաբերմունքն է դէպի Օմար Սայեամի քառեակների ընտրութիւնը: Նրանց թիւը տարբերում է հրատարակութիւնների համեմատ: Նիկոլա՝ Փրանսերէն թարգմանիչը ունի մօտ 560 քառեակներ (և ոչ թէ 800, ինչպէս ասում է պ. Փառնակ), Whinfield (Trubnes's Oriental Series) նրանց թիւը հասցնում է մինչև 750, բողլէեան մատենադարանի ձեռագիրը (Օքսֆորդ) պարունակում է միայն 158 քառեակ, իսկ Ուտի թագաւորի մատենադարանում կային Սայեամի աւելի հին և աւելի հարազատ ձեռագրեր, որոնք զբաղարանի միւս գանձերի հետ կրակի զոհ գնացին: Պետերբուրգում տպուած ձեռագիրը պարունակում է 450 քառեակ միայն: Պարզ է ուրեմն, որ մինչև այժմ էլ մնում են խառնուած Օմար Սայեամի հարազատ և նրան վերագրուած, բայց ուրիշների գրած քառեակները, որով մի տեսակ մտքերի խառնաշփոթութիւն և արժանաւորութեան տեսակէտից անհաւասար հակասութիւն է առաջ գալիս: Այս միևնույն սխալից զերծ չէ մնացել և պ. Փառնակը, թէև նա աշխատել է հետեւել Բողլէեան գրադարանի ձեռագրին, բայց զրա հետևանքն այն է եղել, որ մի կողմից զուրա են մնացել 100—120-ի չափ քառեակներ և զԺրախատար ամենից օրիգինալ և կորովի քառեակներ, իսկ միւս կողմից անպակաս են եղել կրկնութիւնները կամ Օմարի գրչի և մտքի հետ կապ չունեցող անհարազատ քառեակներ: Այս տեսակէտից առանձնապէս աչքի են ընկնում ԺԳ, ԻԸ, ԽԵ, Հ, Ձ, ՃԽԷ, ՃԺԲ և ուրիշները *):

Գալով թարգմանութեան լեզուին, պէտք է խոստովանենք, որ պ. թարգմանիչը աշխատել և որոշ աստիճանի յաջողել է տալ բառական տեսակէտից հարազատ թարգմանութիւն, բայց այս բառական հարազատութեան նա զոհ է բերել բնագրի բանաստեղծիկ, զարգարուն և կորովի ոճը և, որ ամենից ցաւալին է, Օմարին միայն յատուկ օրիգինալ պարզութիւնը: Այսպիսի զոհաբերութեան ծանրութիւնը կը հասկանան նրանք,

*) Այս խնդրի մասին կարելի է տեսլ միայն այսօրան և սպասել Խոյիսմի քառեակների նոր հրատարակութեան և լուսարանութեան Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր պրոսկադէտ և միստիկ գրականութեան յայտնի մասնագէտ Վ. Ը. Ժուկովսկու ձեռքով: Յոյս ունենք, որ այս աշխատութիւնը, որքի վրայ յարգելի պրոֆեսորը աշխատում է հինգ տարի, պիտի լուծէ ընդմիշտ Սայեամի հարազատ և անհարազատ քառեակների տարակոյսը:

որոնք տեսել են բնագրի ոճի գեղեցկութիւնը, ահա թէ ինչու ես ինձ թոյլ կը տայի ասել, որ Օմարի քառեակները պէտք է թարգմանել, եթէ կարելի է, բանաստեղծի գրչով, բայց անպատճառ ոտանաւորով: Պ. Փառնակի թարգմանութիւնները շատ տեղ յիշեցնում են մեր աշուղների գիղակտիկական ոգով գրուած տաղերը, այնքան նրանք կորցրել են իրանց ոյժը և փայլը. երբեմն այնքան է մթնել Օմարի այդ լուսաւոր պարզութիւնը, որ գրեթէ անհասկանալի է դառնում. օրինակի համար. «Ես նորէն գինիի փարչը այն ատեն մէկդի կը դնեմ, երբ, իբր թէ աքաղաղ ըլլայի, գլխուս վրայ սղոց դնեն», կամ՝ «այժմ, երբ աշխարհիս վրայ երջանկութեան կարելիութիւն կայ, ամեն կենդանի սիրտը անապատի ըզմանքը ունի», կամ՝ «հրաժարման ուխտս քո խոստանքներուն պէս լի է ոլորքներով», կամ՝ «մինչև երբ ծովուն երեսը հող զարնեմ» և ուրիշները:

Թարգմանութիւնը գերծ չէ և՛ սխալներից: Դժբախտաբար ձեռքիս տակ չունենալով բնագիրը, ներկայ ըստէին կարող եմ վերարտադրել միայն անգիր իմացած քառեակները և ոչ բոլորը: Հէնց առաջին քառեակում «Մէկը» (մեծատառ) թարգմանիչը ուզեցել է հասկացնել «Աստուած», բայց պէտք է հասկանալ իր պարզ իմաստով «մէկը երկուք է չեմ ըսած»-ը, այսինքն՝ «չեմ կեղծել, մէկին մէկ եմ ասել, երկուսին երկու»: «Մահմէդի փոշին իմ գլխուս, ներիք» (երես 38) պիտի լինի «'ի սէր Մահմէդի գերեզմանին, ներիք» (խաբ—հող, գերեզման): «Մէկ օր սէտմադէ մը պակսեցուցի»—գողացայ: «Ուսմը մը գինի լուսնէն մինչև Մահի լաւ է» ծանօթութեան մէջ Մահի բացատրուած է Չուկն համաստեղութիւն. այդպիսի համաստեղութիւն և այդպիսի անուն պարսկերէնում չկայ. պ. թարգմանիչը երևի գիտէ, որ պարսկերէնում աստղագիտական տերմինօլոգիան արաբական ծագում ունի, իսկ Մահի պարսկերէն բառ է: «Էզ մահ թա մահի» (մի տեսակ նայնահնչիւնութիւն, —alliteration) նշանակում է լուսնից մինչև ձուկը. աւելի շատ ասում է (պարսկական միասերիաներում) «Էզ մահի սէմա թա մահիի դէրեա»—երկնքի լուսնից մինչև ծովի ձուկը, այսինքն երկնքի բարձունքից մինչև ծովի անդունդը, միևսիւսման հասկացողութեամբ տիեզերքի ամենամեծ պարունակութիւնը, համակ տիեզերքը: Կան սխալներ և՛ հնչիւնների մասին. պարսկերէնում չկայ իւ հընչիւնը, ճիւտա, խիւտա, խիւտա, քիւշա (ուղիղը ջուգա, խուգա, քուշա). դա երևի թիւրքերէնի գօրեղ ազդեցութիւն է: Մեր ակնարկը վերջացնելուց յետոյ աւելորդ չէր լինիլ հրկու խօսք ասել և՛ ծանօթութիւնների մասին, որոնք հինգ երես են բռնում. դրանցից շատերը իսկի էլ կարևոր չէին, օրինակ

բառախաղերը, որոնք խայեամի մէջ տառնեակներով են համարւում, կամ թէ Մէհրաբ բառը (ծանօթ. 3)—«Մէհրաբ մըզկիթներուն մէջ այն տեղն է, որ ցոյց կուտայ Մէքքէի ուղղութիւնը, որին պէտք է դառնայ ամեն մուսուլման աղօթած պահուն»։ Մէհրաբ—ամբիոն (մզկիթում, ինչպէս սեզանը եկեղեցում), ուրիշ ոչինչ։ Կամ թէ (ծանօթ. 28) «Ծովուն երեսը հող դարնել, խիշտ գէզէն», կը նշանակէ դուր աշխատութիւն մը ընել։ Այս աստութիւնը ծագում կառնէ Պարսկաստանի մէջ ծանօթ գործէ մը, այն է, խմորի վրայ հող նետելով ծեփել, և յետոյ փոքր քառակուսի կտորներու կտրելով ծախել իբր աղիւս, 1000-ը երկու ու կէս քրանի (մօտաւորապէս մէկ ֆրանկ 20 սանթրիմ) կը ծախուի»։ Այս երկար և անօգուտ ծանօթութիւնը հասկանալու համար հարկաւոր է իր կարգին մի նոր ծանօթութիւն ևս աւելացնել բացատրելու խմորի վրայ հող նետելով ծեփելու արհեստը, մինչդեռ պարսկերէն «բէր գէրեա (բէրաբ) խիշտ գէզէն» նշանակում է ծովի վրայ (շրի վրայ) հիմք դնել, տուն շինել, մենք ասում ենք՝ աւաղի վրայ տուն շինել, օղի մէջ ամրոցներ կառուցանել և այլն։

Ինչ որ վերաբերում է պ. Փառնակի աշխատութեան ընդհանուր տպաւորութեան, եթէ ուզում ենք անկեղծ լինել՝ պիտի ասենք, որ թարգմանութիւնը անբաւական է և իր ամբողջութեան մէջ։ Ճիշտ է այն, որ թարգմանիչը գիտէ պարսկերէն, գիտէ պարսիկ և արարկլասիկ գրականութիւնը, ծանօթ է արևելքին և գուցէ նա մասնագէտ էլ է, որոշ գիտնական պատրաստութեամբ, բայց ճիշտ է և այն, որ Օմար իր քառեակներով նրա գրչի տակ այնքան է կերպարանափոխուել, որ առաջին հայեացքից զգուար թէ կարելի լինէր նրան ճանաչել։ Լսելով Օմարի անունը, նրա մասին մինչև այժմ գրուածը, ասուածը, կարգալով զբքի քննական ուսումնասիրութիւնը, երբ դուք անցնում էք նրա իսկական բանաստեղծութիւններին, մի տեսակ հիասթափութեան մէջ էք ընկնում, ակամայ հարց էք տալիս—«Թրտեղն է սրա այնքան անգամ կրկնուած մեծութիւնը, «Բար է սրա այնքան գովուած գեղեցկութիւնը, մեղաւորը Օմարը չէ սակայն»։

Գիրքը տպուած է Պարիզում։ Գինը նշանակուած է (մօտ 100 երեսի համար) 5 ֆրանկ (1 ռուբ. 90 կոպ.), որ գուցէ ներելի կը լինէր շքեղ հրատարակութիւնների համար, բայց ներկայ զբքի համար դա շատ և շատ թանգ է և կ'արգելէ անշուշտ տարածուելուն։

Ա. ՍԱՓ.

Պատասխան պ. Ն. Լալայեանին.

Պ. Լալայեանը իմ քննադատութեան առիթով զրած իր պատասխանովը ինձ մեղադրում է, որ ես խեղաթիւրում եմ փաստերը.—

«Մուրճի» 162 երեսում (№ 4) գրում է «...Միանգամայն պարզ երևում է, որ այս յօդուածը դեռ չէ ամարտոնած... սա միայն սկիզբն է՝ և այն էլ միայն գողթան երգերի մի երրորդը, մինչդեռ արժ. Ղլտճեանը այս ցոյց է տալիս ընթերցողին իբր հայ-ազգագրութեան ամբողջացած տեսութիւն»։ Յօդուածը կոչւում է «Համառօտ տեսութիւն հայ ազգագրութեան»։ Նա իր տեսակի մի ամբողջացած յօդուած է, տակը շարունակութիւն չի գրուած. յօդուածի մէջ ասուում է, որ այդ հատուկտորներն են մնացել միայն, արդ, իրաւունք չունի՞նք ասելու, որ դա հայ-ազգագրութեան նոյնիսկ համառօտ տեսութիւն չէ, որովհետեւ եղած, արդէն գոյութիւն ունեցող՝ հին ու նոր նիւթերի մասին ոչինչ չի խօսուում։

Սաթենիկի և Արտաշէսի հարսանիքի և ամուսնութեան մեզ հասած կտորների մասին պ. Լալայեան ասել էր, որ դրանք փոխաբերութիւն և այլաբանութիւն են՝ արեւելեան երգերի ոգուն համաձայն։ Մենք ասել ենք, որ դրանց մէջ այլաբանութիւն և փոխաբերութիւն չկայ, իսկ թէ ինչ կայ, դրա բացարութիւնն ենք տուել։ Պ. Լալայեան մեզ պատասխանելիս պիտի ապացուցէր, որ մենք սխալ ենք, որ նրանք այլաբանութիւն և փոփոխութիւններ են։ Իսկ դրա փոխարէն նա ասում է, որ այդ բացատրութիւնը Արեղեանից ենք վերցրել և ապա գիտնականօրէն յայտնում է թէ այդ բաները նրա և Սալաթեանի «գրքի առիթով... դեռ վիճելի են, ուստի և այդպիսի մի հակիրճ պատասխանի մէջ չեն կարող վերաքննուել»։ Մենք ստիպուած ենք ասել, որ վիճելին ոչ թէ վերաբերում է նրան, որ այդ երգերը հարսանիքի և ամուսնութեան նկարագիր չեն պարունակում, այլ երգերի մէջ յիշուած անհատներին, հայկական վէպի (Արտաշէսի վէպի) գոյութեան մասին։ Պ. Լալայեան պիտի գիտենայ, որ կարող է հայ վէպի գոյութիւնը հերքուել, կարող են Արտաշէս և Սաթենիկ գոյութիւն չունենալ, սակայն ժողովրդական բանահիւսութեան նրանց նուիրած տողերը միշտ կը մնան ամուսնանալու, աղջիկ փախցնելու, հարսանիքի ժամանակ դրամներ շաղ տալու հին սովորութիւնների նկարագիրներ—ապացոյցներ, որոնց հետքերը մինչի օրս էլ կան։ Այդ բանի մասին ոչ ոք, ոչ պ. Սալաթեան և ոչ էլ պ. Արեղեան

չեն վիճել, և չին վիճի, որովհետև դա հայ վէպի գոյութիւն ունենալ չունենալուց անկախ՝ ազգագրական նիւթ է: Հապա ինչու՞ն է կայանում վիճելութիւնը. նրանում, կ'ասենք մենք, որ պ. Լալայեանը չի ճանաչում այդ երկու բաների տարբերութիւնը և վիճելի է հաշուով անվիճելին, վէճի տակ չեղածը: Իսկ տուածս բացատրութիւններն այնքան սլարզ բաներ են, որ հարկ չկար Աբեղեանին դիմել, ու եթէ ձեռքիս տակ ունենայի, չէի ամաչի առաջ բերել, դա անպատուութիւն չէր:

Կամենկա կոչուում է Ջալալ-օղլու գետակը, որին ինքը նաև Դեբէդ է ասում: Դալով մի-երկու անունների սխալ արտասանութեամբ գրուածներին, ասում է, որ «սրանք զժբախտաբար վրիպակներ են»: Դրա համար վերցնենք շտաբի քարտէզը Բորչալուի գաւառի, որից պ. Լալայեանն է արտագրել: Այնտեղ գրուած է օտար արտասանութեամբ Ценко, Акори, Хачина керцъ, Коръ Агбюръ, Кетеванъ, Пока, Арчаглухъ (և ոչ Арчаглухъ, որպէս Գ-ը տառը Դ է կարդացել սլարոնը) ևայլն, որոնց հիման վրայ էլ նա արտագրել է.— Յենկօ, Ակորի, Խաչինա-կերց ևայլն, փոխանակ-Ծենկօ, Աքորի, Քու աղբիւր, Փոգա ևայլն:

Ես ասել եմ, որ առհասարակ Ղարաբաղում կ'ինն ամենից քիչ է մասնակցում դաշտային աշխատանքներին և որ Վարանդայում կ'ինը դազանակով, իբր ընդհանուր սովորութիւն, կռիւ չի դուրս գալիս և հովուութեամբ ու տաւարածութեամբ չի պարապում: Դրա դէմ նա առաջ է բերում Ջելինսկու վրկայութիւնը Ձանդեղուրի-Սիսիանի մասին և ոչ Վարանդայի: Այդ վկայութեան մէջ նա ասում է, որ կանայք մասնակցում են դաշտային աշխատանքներին: Պ. Լալայեանի ասելով Վարանդայում կ'ինն ամառը 18 ժամ է աշխատում: Չափազանցութիւնն ակներև է, բայց այդ թողնենք և դիմենք նրան և հարցնենք, թէ պ. Ջելինսկին ճիշտեղ է ասել, որ վարանդացի կ'ինը հովուութեամբ ու տաւարածութեամբ է պարապում, կամ մահակով կռիւ է դուրս գալիս: Այդ ապացոյցները դուք չէք կարող բերել, որովհետև չկան, ինչպէս և գոյութիւն չունին ձեր ասածները:

Միևնոյն մարդը, որ գաւառացի էլ լինի, իր բարբառով խօսելիս, զանազան բարբառների ձևեր միևնոյն բառի մասին, մի նախադասութեան մէջ չի գործածի: Պ. Լալայեանը փոխանակ խոստովանելու իր սխալը, այժմ ասում է, որ ես ստորաբաժանումներին անծանօթ եմ, առանց մտածելու, որ բերած օրինակները չեն ասուած, թէ որ դիւ-

դուժն է լսել, այլ ընդհանուր անուամբ ամբողջ գաւառին են վերաբերում:

Պ. Լալայեան փոխանակ նախկին սխալն ընդունելու, այժմ մի նոր սխալ է անում, ասելով որ «Թոնրի պսակն աւելի նախնական» է, «իսկ գենսի պետի օջաղի վրայ կատարուող պսակն աւելի ուշ»: Մարդաբանութեան այդ մասնագէտը պիտի գիտենար նախ, որ օջաղը ժամանակով առաջ է, իսկ Թոնրը ուշ. օջաղ ունին բոլոր ազգերն անխտիր, իսկ Թոնրը բազմաթիւ ազգերին անծանօթ է եղել և է: Յոյներն ու հռոմէացիք Թոնրը չեն ունեցել, ինչպէս ռուսները ու այլ շատ ազգեր: Բացի դրանից մասնագէտ պ. Լալայեանը թող գիտենայ, որ հռոմէական ժողովուրդը նախքան թէ գենս և նրա պեան իրը հիմնարկութիւն կ'ունենար, նա ունէր օջաղի պսակը, այսինքն օջաղը կար այն ժամանակ, երբ գենսը գոյութիւն չունէր, ինչպէս և օջաղի պսակը: Այդ պարոնը նոյնիսկ իր ուսումնասիրած գաւառներում կարող էր տեսնել, որ տեղ-տեղ Թոնրին ամենեւին գոյութիւն չի ունեցել և չունի:

Մի քանի այլ կէտերի մասին ասելիք ունէինք, սակայն առանց այն էլ երկարացաւ մեր պատասխանը. ասածներէցս կարծում եմ պարզ է որ բարեխղճութիւն չէ մեզ մեղադրել խեղաթիւրումների մէջ:

Ա. Վ. ՂԼՏՃԵԱՆ

ՆՈՐ ՍՏԱՅՈՒԱՆԻ ԳՐԳԵՐ

- 1) Գ. Մեծատուրեան՝ «Ընկերութիւն կաթնատուների», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 15 կ.:
- 2) Բժ. Ա. Բուդուղեան՝ «Մնոտիապաշտութիւն և կախարդութիւն», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.:
- 3) Թ. Խուսկիվաձէ՝ «Կերեզմանատանը», Թարգմ. Ղ. Կ., Թիֆլիս, 1904, գ. 3 կ.:
- 4) Խ. Շահմազեան՝ «Վարդուհի», Թիֆլիս, 1904, գ. 3 կ.:
- 5) Հ. Համբարձումեան՝ «Անհունի էջերում», Ս.-Պետերբուրգ, 1904, գ. 60 կ.:
- 6) Վ. Փափազեան՝ «Աբաղայի դաշտում», Բագու, 1904, գ. 4 կ.:
- 7) Ա. Ահարոնեան՝ «Երեխաները», Բագու, 1904, գ. 2. կ.:
- 8) Գ. Բոյաջեան՝ «Հայ ժողովրդական երգեր»—1. Զան գիւլում, 2. Մըր խօր պապկէ գերեզման, 3. Հաբբեան, 4. Ճախարակ, 5. Գացէք, տեսէք, 6. Բերդիցը դուրս ելայ, 7. Գնաց աշուն, էկաւ գեարուն, 8. Բոյդ բարձր, 9. Անի քաղաք, 10. Մշու ողբը.—Պարիզ, 1904, գինն է 2 ր. 25

կ. ճանապարհածախսով. վաճառում է Սուղանաճեանի երաժշտական խանութում:

- 9) Ա. Տ.-Պ.՝ «Ակնարկ հին հայ բանասիրութեան վրայ», Պետերբուրգ, 1904, գ. 10 կ.:
- 10) Սալտիք՝ «Սիւնեցու քնարը», Թիֆլիս, 1904, գ. 10 կ.:
- 11) Մ. Աւետիսեան՝ «Կոյր Բաբին», Բագու, 1904, գ. 10 կ.:
- 12) Մաքս Նորդաու՝ «Հայրենասէր Իտալացին», Թարգ. Լ. Բարայեան, Թէհրան, 1904, գ. 10 շահի:
- 13) «Լուսաբեր» գրական հաւաքածոյ ի յիշատակ Ս. Էջմիածնի հասարակեցհարիւրամեակին, պրակ ա., Նիկոսիա, 1903, գ. 6 բէնի 65 սանթիմ:
- 14) Pierre Aubry: «Le rythme tonique dans la Poésie Liturgique et dans le Chant des églises chrétiennes au moyen age», Paris, 1903.
- 15) Georges Ducrocq: «Pauvre et douce Corée», Paris, 1904.
- 16) D-r. Mkrtitsch Ghazarian: «Armenien unter der arabischen Herrschaft bis zur Entstehung des Bagratidenreiches», Marburg, 1903.
- 17) В. Тогомианъ: «Задачи городского самоуправления», Петербургъ, 1904, ч. 20 к.
- 18) «Ազգագրական Հանդէս», XI գիրք, խմբ. Ե. Լալայեանի, Թիֆլիզ, 1904, գ. 2 բ.:
- 19) «Հանդէս հայագիտութեան», խմբ. Յակոբ Մանանդեանի, Մարբուրգ, 1904:
- 20) Բժ. Ա. Բուդուղեան՝ «Մտերմական խորհուրդներ պատանիներին», Պետերբուրգ, 1904, գ. 20 կ.:
- 21) Օր. Շ. Տ.-ն՝. «Փիղ», Թիֆլիզ, 1904, գ. 8 կ.:
- 22) Յ. Մանանդեան և Հ. Աճառեան՝ «Հայոց նոր վիճակը», Վաղարշապատ, 1903, գ. 3 բ.:
- 23) ?՝ «Ճշմարիտ մեծութիւնը», Պետերբուրգ, 1904, գ. 7 կ.:
- 24) Վ. Փափաղեան՝ «Մեծ փականք» և «Առիւծի մահը», Թիֆլիս, 1904, գ. 3 կ.:
- 25) Ե. Տ.-Արիստակէսեան՝ «Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը», Մոսկուա, 1904, գ. 20 կ.:
- 26) Յ. Կարապետեան՝ «Քրիստաֆօր Կարա-Մուրզա», Թիֆլիս, 1904, գ. 60 կ.:
- 27) Ուսուլէս՝ «Երեք մոզեր», փոխ. Յ. Կարապետեան, Թիֆլիս, 1904, գ. 10 կ.:

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Կովկասի ոսկու մասին

Բնութեան մէջ, ինչպէս յայտնի է, ոսկին պատահում է բիւրեղաձև, թիթեղանման, թելանման, իսկ աւելի յաճախ՝ թեփաձև և մանր փոշու նման: Աւելի սակաւ պատահում է և մեծ հատիկներով, որ կոչում են բնդածին ոսկի (самородок): Այդպիսի կտորներից մէկը, օրինակ, գտնուած է Սիբիրում և կշռում է 3 ֆունտ:

Նախկին ժամանակներում ոսկին հաւաքում էին մորթիների միջոցով: Գետերի ծանծաղուտ տեղերում դնում էին բրդոտ մորթիներ, որոնց վրայ ջրի հոսանքը բերում թողնում էր ոսկու հատիկները: Այստեղից առաջ է եկել ոսկեգեղմի պատմութիւնը, որ յոյները լսելով՝ «Արգոնաւտերի» արշաւանք սարքեցին դէպի Կովկաս: Այժմ, զանազան մեքենաների և ջրի միջոցով կարողանում են աւելի հեշտ և շուտ ջուրով ոսկին աւելորդ խառնուրդներից: Եթէ 100 պուդ հողի և աւաղի մէջ $\frac{1}{2}$ մսխալ ոսկի լինի, դա համարւում է ձեռնառու մշակելու համար. շատ տեղերում մինչև իսկ $\frac{1}{4}$ մսխալը մշակւում է, իսկ 3 կամ 4 մսխալից աւելին համարւում են հարուստ հանքեր: Այժմ Ռուսաստանը իր ամբողջ ոսկին ստանում է Ուրալից և Սիբիրից, իսկ Կովկասի ոսկու արդիւնաբերութիւնը ամբողջապէս պատկանում է անցեալին, քանի որ ներկայումս ոչ մի տեղ Կովկասում չեն մշակւում ոսկու հանքեր: Մի քանի տեղերում թէև գտնուել են ոսկու նշաններ, բայց զանազան պատճառներով չեն զբաղուել դրանց շահարկերութեամբ: Իսկ թէ Կովկասը ունեցել է ոսկու արդիւնաբերութիւն, և նրա բնակիչները ոսկին ստանալիս են եղել մեծ քանակութեամբ, դրան մատնացոյց են անում դեռ հնդկական Մանու օրէնագիրը, որ ապրում էր Քրիստոսից 2000 տարի առաջ, և յունական մի քանի պատմագիրներ:

Ստրաբոնը (66—24 թ. Ք. յ.) իր աշխարհագրութեան մէ

յիշելով ստաններին (ստան, սվան՝ այժմեան Սվանէթիայի բնակիչները) XI, 19 գլխում աւելացնում է. «Պատմում են, թէ այդ երկրի լեռնային հեղեղները իրանց հետ բերում են ոսկի, որ բարբարոսները հաւաքում են ծակոտկէն ամաններով և բրդոտ մորթիների միջոցով»:

Պլինիոս (29—79 թ. Ք. յ.) իր մատենագրութեան VI, 12 գլխում պատմում է, որ «սկսած կովկասեան դռներից, Կորդուաց լեռներում, ապրում են վալլ և սուան (valli, suani) աննուաճ ազգերը, որոնք հանքերից հանում են ոսկի»։ Իսկ XXXIII, 15 գլխում Կոլխիդայի Սատակ թագաւորի մասին պատմելով՝ աւելացնում է. «Նա (թագաւորը) սվանների կուսական երկրից հանում է մեծ քանակութեամբ ոսկի»։ Աւելի դրականապէս նա յիշում մի քանի յետագայ գլուխներում Կովկասի ոսկու վերաբերմամբ:

Նևոտաւիոս (XII դարի պատմիչ) Դիոնիսիոսին ուղղած թղթում խօսելով կոլխերի (կողքիսացոյց) մասին՝ գրում է. «Պատմում են, որ նրանց (կովկասեան լեռների) մօտ ապրում են սուանները, որոնք ոչնչով առաւել չեն իրանց հարեան ֆտորվազներից, բայց հարուստ են ոսկով. նրանց գետերը բերում են ոսկու հատիկներ, որ տեղական բնակիչները հաւաքում են մորթիների միջոցով»:

Իսկ Ապոլլինիոս ուղղակի ասում է. «Կովկասի շատ գետերում գտնւում է հատիկաձև ոսկի, որ տեղական ժողովուրդը մորթիները դնելով գետերի մէջ՝ հաւաքում է նրանց վրայ մընացած ոսկին»:

Կովկասի ոսկու մասին վկայում են և՛ Լուկիանոս, Փարմալիոն, Մազոսթէն և ուրիշները: Բաւական համարելով առաջինների վկայութիւնները՝ կ'աւելացնենք, որ Կովկասում ոսկի հանելու մասին վկայում է նաև մեր V դարի պատմագիր Ղազար Փարբեցին իր 20-րդ թղթում. նա վկայում է, որ ոսկի մշակում էր Այրարատեան գաւառում:

Պատմական այս աղբիւրներից յետոյ մինչև XIII դարի վերջերը մատենագրութիւնը ոչ մի տեղեկութիւն չի տալիս Կովկասում ոսկի հանքեր մշակելու մասին, միայն յայտնի է, որ XIV դարից սկսած Ինգուր, Ռիոն և Յիւնիս-Ծղալի գետերի ակունքները Իմրէթիայի թագաւորի կողմից կապալով էին տրւում դանազան մարդկանց ոսկու հանքածուները մշակելու: Իսկ 1796—97 թ. ճանապարհորդ Reinggs իր շարագրութեան մէջ յիշում է, որ տաճկաց տիրապետութեան ժամանակ Իվերիայում և Մինգրելիայում հրէաները պարապում էին գետերից ոսկի հանելով: Բացի մանրաձև հանքածու-

ներից՝ XIV դարի վերջերից մինչև XIX դարի սկիզբն, Անդըր-կովկասում վրաց թագաւորների հրամանով ոսկի էին հանում արծաթ և պղինձ մետաղներից, գլխաւորապէս Ախտալայի արծաթահանքից և Ալլահվերդու պղնձահանքերից: Այդ հանքերի գործարանների ամենածաղկած ժամանակ 92 պուղ արծաթից ստացուած է 2 պուղ 35 գրովանքայ ոսկի, որի մասալը վրաց թագաւորները ծախում էին 5 բուբլով:

Ոսկու հանքածոների հետազոտութիւնը և վերստին գտնելու փորձերը սկսւում են միայն ուսաց Կովկասի տիրապետութեան օրերից:

1799 թ. գրաֆ Մուսին-Պուշկին Կովկասում ճանապարհորդելու ժամանակ տեղեկութիւն է ստանում, որ յոյները Ղաղախում գտել են ոսկու հանքեր: Նա իր կողմից այդ հանքերը հետազոտելու համար ուղարկում է Ղաղախ բովաչափ (մարկշէյդեր) էյխվելդին, որ 1800 թ. գրում է՝ նրան, թէ 100 պուղ հանքից $2-3\frac{1}{2}$ մասալ ոսկի կարելի է ստանալ, իսկ մի քանի մասերում մինչև իսկ 14 մասալ. զժրախտաբար հարըստութիւն խոստացող այս հանքածոն ապագային չարգարացրեց շատերի յոյսերը:

1801 թ., Վրաստանը Ռուսաստանին միացնելուց յետոյ գրաֆ Մուսին Պուշկին մի գեկուցումով դիմում է Ալեքսանդր I կայսեր Կովկասում հանքային գործարաններ հիմնելու մասին: Ի միջի այլոց նա շեշտում է, որ Կովկասում պէտք է խրախուսել ոսկի արդիւնաբերողներին, որովհետեւ Կովկասի ոսկու հանքածոները մեծ յոյսեր են տալիս. նա գրում է, որ առաջ ոսկու արդիւնաբերութիւնը Վրաստանում հանդիպում էր մեծ արգելքների, քանի որ բոլոր հանքերից ստացած ոսկին իւրում էին հանքատիրոջից վրաց թագաւորները և չէին թողնում հանքատէրերին և ոչ մի մաս: Ոսկի արդիւնաբերողները մնալով դատարկածեմ, բնական է, որ չէին ուզում աշխատել այդ հանքերի վրայ, և դրանից է, որ շատ անգամ հարուստ ոսկի պարունակող հանքերն անգամ մնում են անուշադիր. ապա աւելացնում է, որ փորձելով Կովկասի նախկին արծաթի և ոսկու հանքերը, կարելի է վերսկսել մշակել նրանց:

Այս գեկուցման հետեանքը այն եղաւ, որ պետութիւնը զանազան անձնաւորութիւնների միջոցով ձեռնարկեց մի շարք հետազոտութիւններ անելուն Թիֆլիզի ու Գանձակի նահանգներում և ապա իր ուշքը դարձրեց պատմական Կոլխիդայի վրայ: Բայց այդ հետազոտութիւնները բերին այն եզրակացութեան, որ եղած ոսկին շատ չնչին է և մշակելու արժանի չէ: Նոյն եզրակացութեան եկաւ 1805 թ. լեռնային մասնագէտների մի խումբ,

1821 թ. լեռնային ինժեներ. Կարպինսկին, 1824 թ. Վոսկորոյ-նիկովը և 1843 թ. Կարտերոնը:

Բարձրագոյն հրամանով կազմակերպած լեռնային ժամանա-գէտների արշաւախումբը թէև սկսեց հետազոտութիւններ անել լայց էական հետեանքներ չունեցաւ, և գործը մնաց կիսատ, այն ժամանակուայ Կովկասի զանազան ժառերում տեղի ունեցած կռիւների պատճառով:

Միայն 1850 թ. ինժեներ Տոմիչեւ առաջին անգամ ցոյց տուեց, որ Կովսիդայի համարեա բոլոր գիւղերում կան ոսկու նշաններ: Նոյն բանը հաստատեց ինժեներ Գիլեով. իսկ 1861 թուականին Փրանսիացատակ Կոստանս անունով մէկը մինչև իսկ սկսեց արդէն մշակել Կովսիդայի հանքածոներից ոսկին, բայց միջոցներ չունենալով պատճառով ստիպուած եղաւ կիսատ թողնել սկսած գործը:

1876 թ. ինժեներ Սիմոնովիչ գետերի աւազուտների մէջ գտաւ եղիպատցորենի մեծութեամբ ոսկու հատիկներ: Նա եկաւ այն եզրակացութեան, որ եթէ գետերի ներքին հոսանքներում բերած աւաղի մէջ ոսկի գտնուած է, ապա ուրեմն նրա բուն հանքածուն պէտք է փնտրել գետերի աղունքներում: Եւ յիշաւի այդ տեղերում գտաւ ոսկու աւելի մեծ հատիկներ: Հետագոտելով այդ շրջանի ջրաբաշխները՝ նա եկաւ այն եզրակացութեան, որ Խնգուրի, Ռիոնի և Յիսենիս-Ծղալիի ջրաբաշխները ոսկեքեր են:

Նոյնը ասում է նաև ինժեներ Գիլեով՝ մասնացոյց անելով աւելի Սվանէթի լեռնաշղթայի վրայ:

Կովսիդայում բացի Ռիոնից, Խնգուրից և Յիսենիս-Ծղալիից ոսկեքեր էր նաև Ճօրոխ գետը, որ սկիզբն է առնում այժմ Սպերի և Բարերդի ջրանցքից:

Ստրաբոնը իր աշխարհագրութեան XI գլխում պատմում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին մի գունդ ուղարկեց Դսպն-ըադիտիս հարկը ոսկով հաւաքելու: Ստրաբոնը յաճախ յիշում է այդ երկրի անունը միայն զանազան կերպ, միշտ մատնացոյց անելով նրա աշխարհագրական դիրքը, որ համապատասխան է այժմեան Սպերի գաւառի տեղին: Նոյն տեղի վրայ մասնացոյց են անում նաև Դիոգորը և ուրիշները:

Նրանց յիշած Սիսպարիտիս, Դիսպարիտիս, Սէյսպարիտիս և պատմական Սուքեր, Սովքեր, Սպեր, Սպիր անունները բոլորն էլ հոմանիշ անուններ են, այդ երկիրը հայ և վրաց մատենագիրներին յիշած Սպերն է, որ մինչև այժմ կըրում է նոյն անունը (Էրզրումի վիլայէթում, Ճօրոխի վրայ գտնուած քաղաքը): Այժմեան Սպերի շրջակայքը յայտնի է իր

հանքային հարստութիւններով: Նրա ոսկու հանքերի վրայ մատնացոյց են անում հին մատենագիրները, նմանապէս Աստուածաշունչը, որ գովում է Սոբերայ կամ Սոփերայ ոսկին:

Հետազոտութիւններ եղել են 1820 թ. Գանձակի մօտ Կաշկարա գետի հովտում, և գտնուած են ոսկու նշաններ: Իսկ 1828 թ. մարկշէյդեր Կուն հետազոտելով Սևանայ լճի շրջակայքը, եկաւ այն եզրակացութեան, որ յոյս կայ այդ կողմերում ոսկու հանքեր գտնելու: 1830 թ. մասնագէտներ Վոսկոբոյնիկով և Դուրե կատարեցին մի շարք թեթև հետազոտութիւններ Գանձակի նահանգում և համարեա ամեն տեղ գտան ոսկու հետքեր:

1831 թ. մասնագէտ Կլէյմանով Ջալիբան-չայում նոյնպէս գտաւ ոսկու նշաններ: Իսկ ինժեներ Կոմարովը 1839 թուին Աղստաֆա գետի հովտում գտաւ $\frac{1}{4}$ — $1\frac{1}{2}$ մսխալ ոսկի իւրաքանչիւր 100 պուգի մէջ:

1840 թ. եղել են հետազոտութիւններ Գանձակի մօտ, Անենեֆելդ գերմանական գաղութի շրջակայքում, և ամեն տեղ գտնուած են ոսկու նշաններ: Կոմարովի կարծիքով այդ ոսկին բերուած է հեղեղների միջոցով աւելի հեռու տեղերից:

1851 թ.—1852 թ. Աղստաֆայի հովտում հետազոտութիւններ արեց ինժեներ Իվանեցկի և գտաւ մանրաձև հանքածու, որի միջից դուրս եկաւ մի կտոր ոսկի, գօտկի զարդի ձևով, հանքի հալոցք մի կտոր և արծաթեայ մի դրամ. սրանից նա եզրակացրեց, որ մի ժամանակ այդ հանքը մշակուելիս է եղել:

Նոյն անձնաւորութիւնը նշաններ գտաւ Փամբակ, Թարթար և Գեարգեար գետերի մէջ:

1865 թ. ինժեներ Կլէյմանով հետազոտութիւններ կատարեց Աղստաֆա, Ալգէտ և Արփա-չայ գետերում և եկաւ այն եզրակացութեան, որ Սևանայ լճի շրջակայքում և Կուր գետի ջրաբաշխում գտնուած ոսկու հետքերը մեծ գրաւական են, որ մի օր կը վարձատրուի լուրջ հետազոտողների աշխատանքը: Նա հաւատացնում է, որ այդ տեղերում անաւատճառ գոյութիւն ունին ոսկու ուշադրութեան արժանի հանքածուներ:

Բացի այս հետազոտողներից՝ 1875 և 1885 թ. Բորչալու գաւառի գետերի ջրաբաշխները հետազոտել է ինժեներ Յուլիկիձէ, որը Ալգէր գետում ստացել է 100 պուգից $\frac{3}{4}$ մսխալից մինչև $1\frac{1}{2}$ մսխալ ոսկի, իսկ Մաշաւարի գետի հովտում գտել է ոսկու նշաններ:

1891 թ. Աղստաֆա գետը կրկին ենթարկուել է հետա-

գօտութեան ինժեներ Մարկովսկու ձեռքով և 100 պուղ աւաղից ստացուել է մինչև $1\frac{2}{3}$ մսխալ ոսկի:

Ահա այս է Կովկասում կատարուած ոսկու հետազոտութիւնների կարճառօտ պատմութիւնը. ամենամեծ ուշադրութեան արժանի է Կուր գետի ջրարաշխը, որի ոսկերերութեան մասին աւելորդ չենք համարում բերել ինժեներ Լեբեգևի կարծիքը. նա ասում է. «Կուրի հովտում ցրուած բազմաթիւ շերտաւոր կոշտերը փշրելով ու լուանալով՝ համարեա միշտ երևացել են ոսկու նշաններ: Կուրի ջրարաշխում ոսկու մանրաձև հանքածուների հետքերը այնքան շատ են, որ հետապօտելիս մի փոս կամ գետակ չէինք գտնում, որ իր մէջ չպարունակէր գոնէ չնչին հետքեր այդ մետաղի, և քանի դէպի լեռներն էինք հեռանում, այնքան գտնում էինք աւելի խոշոր ձևով»:

Այս բոլոր հետազոտութիւնները բերում են այն եզրակացութեան, որ Կովկասը յիշաւի գուրկ չէ այդ ազնիւ մետաղից և որ ապագայում նա գուցէ արդարացնի որոնողների յոյսը: Մինչև այժմ մասնադէտները բաւականացել են միայն փաստը արձանագրելով, իսկ կապիտալիստներին մնում է ըստեղծել արդիւնագործութեան այդ ճիւղը: Առհասարակ լեռնային հարստութիւնների նախկին մշակման մեծամեծ հետքերը ցոյց են տալիս, որ Կովկասի ոչ միայն ոսկու, այլ և շատ հանքերի արդիւնաբերութիւնը պատկանում է անցեալին, և դարեւ առաջ Կովկասում ծաղկած էր մետաղագործութիւնը, բայց անընդատ պատմական հանգամանքների պատճառով ժամանակի ընթացքում նա չքացել է, և այժմ նորից կամաց-կամաց նոր թափով վերածնունդ են հին արդիւնաբերութիւնները. նոյնը սպասում է և ոսկու արդիւնաբերութեան ապագայում:

ՅՈՎ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

Մարդկային մարմինն արձակած ճառագայթները

Օր նոր, գիւտ նոր, առաջագիմութիւն նոր:

Հիները շատ անձուկ գաղափար ունէին նիւթի մասին, որը կոշտ ու բիրտ ածականներով որակել սովոր էին: Այսօր նիւթի գաղափարն ու ըմբռումը շատ ընդարձակուած, շատ ազնուացած են: Նիւթը որքան աւելի մօտէն կ'ուսումնասիրուի, այնքան աւելի հիացում կը պատճառէ իր զանազան յատկութիւններովը, որոնք կը յիշեցնեն աննիւթ կոչուածին յատկութիւնները: Հիանալի գործունէութիւն մը, եռանդուն ու անվերջանալի, կը յատկանշի՜նք արդի նիւթը, որուն մասնիկները ահագին ճամբորդութիւններ կ'ընեն, ահալի ընդգիմադրութիւններու կը յաղթեն իրենց նպատակին հասնելու համար: Պինդ պողպատը, որը առ երևոյթս անշարժ ու անզգայ է, փեթակ մըն է ուր մեղու-հիւլէնները անընդհատ կը շարժին, կը բլրան...

Շարժումը տիեզերական օրէնք մ'է, բացարձակ դադարը գոյութիւն չունի: Ամէն ինչ կը գործէ, ամէն ինչ կ'աշխատի բնութեան մէջ ծանօթ կամ անծանօթ նպատակներու հասնելու համար: Նիւթի հիւլէններուն և մասնիկներուն շարժումները զանազան շարժումներ յառաջ կը բերեն իրենք շրջապատող առաձգական միջավայրին, այն է՝ եթերին մէջ: Ուրիշ առթիւ եթերի շարժումներուն կամ թրթռացումներուն մի քանիսը տեսած լինելով՝ այս սողերով կ'ուզեմ խօսիլ ճառագայթներու վրայ, որոնք վերջերս գտնուած են Նանսիի պրոֆեսսորներէն պ. Բլոնդըլօի կողմէն, և կը կոչուին N Նանսիի յիշեցնելու համար:

Այս նորագիւտ ճառագայթները մեծ կարևորութիւն ըստացած են շնորհիւ նոյնպէս Նանսիի պրոֆեսսոր պ. Շարպանտիէի խուզարկութիւններու արդիւնքին, որը ցոյց կուտայ թէ մարդկային մարմինն ալ մեծ քանակութեամբ կ'արձակէ այդ խորհրդաւոր ճառագայթները: Այս գիւտը դուռ կը բանայ գիտական ամենաշահեկան խուզարկութիւններու, ինչպէս և ա-

ւելի կամ նուազ բանաւոր, երբեմն իսկ բոլորովին յանդուգն հաւաստումներու, հետևութիւններու:

Շատ հին ժամանակներէ ի վեր մոգութեան պաշտօնեաները կը հաւատային թէ մարդկային մարմինը անտեսանելի ճառագայթներու աղբիւր էր: Այսօր ալ շատեր կ'ընդունեն այդ հաւատքը ու անով կը մեկնեն զանազան երևոյթներ, ինչպէս են հիպնոտիզմը, անհատներու իրարու վրայ ըրած ազդեցութիւնը, համակրութիւնն ու հակակրութիւնը եւայլն: Նոր մոգութեան արդի պաշտօնեաները այժմ ցնծութեան մէջ են իրենց վարդապետութեան կամ տեսութեան (թէորիա) յաղթանակը գտնել կարծելով պ. Շարպանտիէի գիւտին մէջ: Բայց գոնէ առայժմ ստոյգ փորձերը անոնց խնդրութիւնը չեն արգարացներ, ուրիշ բան եթէ անոնք մտքերնին դրած են անպատճառ յաղթութիւն գոչել: Այս տողերով ըսել չեմ ուզեր որ բոլորովին անիրաւ են, այլ միայն թէ անտեղի ու տարածամէջ փորձերը կանխել: Ճշմարտութիւնը ոչինչ չկորսնցներ սղաւելով փորձերու դատաւճոխն: Բայց աւելորդ է այս կէտին վրայ աւելի երկարել. տեսնենք այժմ թէ ի՞նչ են Ն ճառագայթները:

Պ. Բլոնդըլօ ուզած է X ճառագայթներու բնութիւնը մօտէն ուսումնասիրել և չափել, ի մէջ այլոց, անոնց տարածման արագութիւնը: Շատ հանճարեղ փորձերէ վերջ, երկու կարեւոր հաղորդումներ ըրաւ Պարիզի գիտական ակադեմիայի, մին՝ թէ X ճառագայթները բևեռացած են, միւսը՝ թէ անոնց արագութիւնը հաւասար է լոյսի արագութեան:

Կարևոր էր խնդիրը, որովհետև փայլուն լոյս մը կը ձգէր այդ անծանօթ և խորհրդաւոր ճառագայթներու բնութեան վերայ, ընելով անոնք եթերի թրթռացումներ, ինչպէս են ելեկտրական, ջերմական, լուսեղէն և քիմիական ճառագայթները:

Յետագայ փորձերը սակայն շուտով ցոյց տուին գիտուն փորձարկուն որ ինք ոչ թէ X ճառագայթներու բևեռացումը ու արագութիւնը գտած ու չափած էր, այլ բոլորովին նոր ճառագայթներունը, որոնք առաջիններուն հետ ծնունդ կ'առնէին բոհոտպենեան սրուտկին հակակաթողէն:

Կարելի է ոմանք առարկեն այս տողերէն վերջ, թէ ամէնէն հանճարեղ և խորաթափանց գիտուններն իսկ կրնան սխալիլ: Պատասխանը հեշտ է. նախ որ գիտութիւնը իր պաշտօնեաներուն անսխալականութեան հրովարտակ չտար, յետոյ գիտական սխալներն ալ յաճախ, գրեթէ միշտ, օգտակար են իրենց յարուցած թերուղէմ փորձերովը, որոնք այսօր չէ վաղը սխալը երևան կը հանեն:

Մայիս, 1904.

Բեռնագնեհան սրուակին հակակաթողը չէ միայն աղբիւր, Ն ճառագայթներու, առէրեան լամպ մը մեծ քանակութեամբ կ'արձակէ անոնք, ինչպէս և բոլորակի պատրոյգով սովորական լամպ մը, առանց ապակեայ խողովակին: Արևն ալ մեզ կը զըրկէ անոնք: Երկար ատեն արևին տակ մնացած մարմիններ, ինչպէս խիճեր, կղմինդրներ Ն ճառագայթներու աղբիւրներ են: Ամառ ատեն, արևոտ օր մը, իրիկուան դէմ բակէն խիճ մը վեր առէք, վստահ էղէք որ ան մեծ քանակութեամբ կ'արձակէ նորագիւտ ճառագայթները: Ասոնք կ'արձակուին նաև այն ամէն մարմիններէն ուր նիւթը ճնշուած է. այսպէս պողպատը մեծաքանակ կ'արձակէ անոնք, և ինչ որ աւելի դարմանալի է, սա է որ հին պողպատէ առարկաները կատարելապէս պահած են իրենց այս յատկութիւնը: Տասնեկու դարուան հնութիւն ունեցող պողպատէ առարկայ մը այսօր այնքան գործօն է որքան նոր ջրուած պողպատ մը:

Ամէնը այս չէ. բոյսերն ալ, կենդանիներն ալ, հետևաբար մարդն ալ կ'արձակեն Ն ճառագայթներ: Հոն ուր նիւթը աւելի գործօն է, ինչպէս են մկանունքները, ջիղերը, ուղեղը, այնտեղ ճառագայթումը աւելի զօրաւոր է: Այս վերջին գիւտը, ինչպէս գիտենք, պ. Շարպանտիէի կը պատկանի:

Նորագիւտ ճառագայթները իրենց մեքենական յատկութիւններով բոլորովին կը նմանին լուսեղէններուն. ասոնց պէս հարթ երեսի մը վրայ իյնալով կը ցլանան, պրիսմակի մէջէն անցնելով կը բեկանին, անոնց պէս կրնան խոտորիլ, իսկ իրենց բնութեամբն իսկ բռնացած են: Իսկ լուսեղէններէն կը տարբերին անով որ նախ տեսանլի չեն, կարող չեն տեսողութեան ջիղին վրայ ազդել, յետոյ լոյսի հանգէպ աղօտ մարմիններու մէջէն կրնան թափանցել. օրինակի համար թուղթը, սև թէ ճերմակ, փայտը, ալիւմինիումը թափանցիկ են Ն ճառագայթներու համար ինչպէս ապակին լուսեղէններուն համար, մինչդեռ ուրիշ մարմիններ, որոնց մէջ կը գտնուի նաև ապակին, անթափանց կամ աղօտ են աւելի կամ նուազ աստիճանով:

Ն ճառագայթներու հետեւալ յատկութիւնները կը ծառայեն անոնց յաւանում ին և ուսումնասիրութեանը: Անոնք ֆոսֆորափայլ մարմիններու ֆոսֆորափայլութիւնը չեն կրնար զրգռել լուսեղէն և ուրիշ ճառագայթներու նման, բայց արդէն իսկ արևին բռնուած ֆոսֆորափայլ մարմիններուն՝ մթութեան մէջ արձակած լոյսը կը սաստկացնեն: Կրածինի կամ գինկօի ծծմբուկը, որ նախապէս արևոտած է, այդ նոր ճառագայթներու աղբիւրներն տակ մթութեան մէջ աւելի սաստիկ լուսա-

փայլութիւն ունի քան այն որ պիտի ունենար եթէ անոնց ազդեցութեան հնթարկուած չլլար: Փոքրիկ բոց մը, նոյնպէս հրաշէկ մարմին մը իրենց լոյսի սաստկութիւնը կ'աւելցնեն երբ N ճառագայթներէ կ'ընդհարուին:

Միայն լոյսի աղբիւրներու սաստկութիւնը չէ որ կ'աւելցնեն, այլ նաև լոյսը սփռող, ցրող երեսներուն: Արդարև ունէ կերպով լուսաւորուած երես մը—օրինակ թերթ մը թուղթ—N ճառագայթներու ազդեցութեան տակ աւելի փայլուն կ'երևի, որովհետև ցրած լոյսի քանակը կը շատնայ:

Այդ նորագիւտ ճառագայթները թէև մեր աչքի ցանցներին վրայ լուսեղէն ազդեցութիւն չեն ընել, բայց կը գրգռեն այն, տեսնելու, գործելու աւելի ընդունակ կ'ընեն:

Ի՞նչ են N ճառագայթները. պատասխանը դիւրին է—եթերի թրթռացումներ են անոնք լուսեղէն, ելեկտրական և այլն ճառագայթներու նման, և եթերի թրթռացումներու ստեղծաշարին վրայ իրենց տեղն ունին ելեկտրականներու և ջերմականներու միջև գտնուած խրամատին մէջ առանց այս վերջինը բոլորովին լեցնելու: Անտեսանելի ճառագայթները խորագրով յօդուածիս մէջ երկարօրէն խօսած ըլլալով եթերի թրթռացումներու ստեղծաշարին մասին, այստեղ աւելորդ է ունէ կըրօնութիւն:

Ինչպէս կը տեսնուի N ճառագայթները տեսականօրէն մեծ արժէք ունին:

Գործնականին մէջ աւելի մեծ է անոնց արժէքը ու հետեզհետէ ալ պիտի մեծնայ շնորհիւ պ. Շարպանտիէի դիւտին:

Նախապէս արևոտած լուսափայլ մարմին մ'առէք, օրինակի համար զինկօի կամ կրածինի ծծմբուկ: Պտտցուցէք այն, մութին մէջ, մարդու մը մարմինին մօտ, ու պիտի տեսնէք որ ծծմբուկին լուսափայլութիւնը կը սաստկանայ: Սաստկացումը զօրաւոր է մանաւանդ զնդերներու և ջիղերու մօտերը, այնպէս որ մարդ կարող է ջիղի մը ամբողջ ճիւղաւորութեան հետեիլ ծքմբուկը ձեռքը: Այսպիսով դրական իրականութիւն մը կ'ըլլայ այն իրողութիւնը թէ ջիղերը ելեկտրական հոսանք կ'արտադրեն:

Հետեւեալ փորձը աւելի մօտիկ գաղափար պիտի տայ այն ահագին ծառայութեան մասին, որ N ճառագայթները կարող են ընել գիտութեան: Սա հիմնուած բազմաթիւ զննութիւններու և փորձերու վրայ, ուղիղի այլևայլ մասերուն մէջ սահմանափակած, կետրոնացուցած էր ֆիզիկական և մտաւոր գործունէութեան զանազան խումբերը: Այսպէս յօդաւոր խօսքին կենսորոնն ընդունուած էր Բրոկարի շրջանին ոտքը, որ ուղեղին

ձախ կիսագունդին մէջ կը գտնուի, ճակտին կողմը: Արդ՝ եթէ ձեր ծծմբուկը մօտ բռնէք մէկու մը ճակտին ձախ կողմէն ու խօսել տաք անոր, պիտի տեսնէք որ ծծմբուկին լուսափայլութիւնը պիտի աւելնայ, փորձի ենթարկուողը ցած թէ բարձր ձայնով խօսի: Մինչդեռ եթէ նոյն ծծմբուկը ենթակային ճակտի աջ կողմին մօտ բռնէք, ոչ միայն անոր լոյսը չսաստկանար, այլև կրնայ մարիլ:

Հիանալի պատուհան մ'է որ այսպէս կը բացուի բնութեան ամենագաղտնի մէկ մասին վրայ: Աւելորդ է ըսել թէ ինչ ընդարձակ և բեղուն հորիզոններ կը պարզուին խուզարկու մտքերու առջև: Այդ նոր ճառագայթներն են հաւանականաբար որ հոգեբանութիւնը վերջնականապէս բնախօսութեան մէկ գլուխը պիտի ընեն:

Փորձերը նոր են ու խոստմնալի. սպասենք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

Լողան

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Բաղիումը շարունակում է գրաւել գիտնականների ուշադրութիւնը:

Շվեդական գիտնական Gaudin Ստոկհոլմից յայտնում է, որ նա գտել է մեծ քանակութեամբ ուրանի հանք, որից շուտով նա կը սկսի բաղիում ստանալ:

Հետաքրքիր են անգլիացի յայտնի քիմիկոս Բամսէի և նրա օգնական Սոդգիի արած փորձերը: Հիմնուելով այն երևոյթի վրայ, որ բաղիումի ճառագայթումից առաջ է դալիս հելիում տարրը, (որ գտնուում է արեգակի վրայ), Սոդգի փորձեց անմիջապէս բաղիումից հելիում ստանալ: Մի քանի շաբաթ չարհարուելուց յետոյ նրան յաջողուեց ստանալ ֆոքրիկ քանակութեամբ հելիում. բայց զժրախտաբար նա ծծուելով ապակու մէջ՝ շուտով անյայտացաւ: Այն ժամանակ Սոդգի փորձեց ազատել հելիումը ապակուց, դրա համար նա մանր ծեծեց ապակին և յետոյ այդ փոշին ենթարկելով կրակի, նրան յաջողուեց ստանալ հելիումը:

*

Անցեալ համարում մենք հաղորդել էինք «Մուրճ»-ի ընթերցողներին Շարպանտիէի և Բլոնդլօի գիւտի մասին: Վերո-

յիշեալ զիսնականները այժմ էլ շարունակում են զբաղուել N ճառագայթների ուսումնասիրութիւնով:

Շարպանտիէ գտել է, որ այդ ճառագայթները ազդում են թէ մեր հոտառութեան եւ թէ զանազան մարմինների հոտառութեան աստիճանի վրայ: Եթէ՝ օրինակ՝ վերցնենք մի աման անուշահոտ օծանելիք և զետեղենք այնպիսի հեռաւորութեան վրայ, որ հաղիւ զգալի լինի նրա հոտը, և յետոյ մեր հոտառութեան գործարանը կամ ինքը հոտառէտ առարկան ենթարկենք ճառագայթների ներգործութեան, կը տեսնենք, որ հոտը սաստկանում է: Այս փորձի հիման վրայ Շարպանտիէ ենթադրում է, որ իրանք հոտառէտ առարկաներն են ներկայացնում ճառագայթների ազդւելը:

Միւնխենի բժիշկ Շտրեբել գտել է կատողի*) ճառագայթների մէջ բուժիչ յատկութիւններ:

Շտրեբել գտել է, որ այս ճառագայթների ազդեցութիւնը յիշեցնում է բնադէնեան և բադիլուժի ճառագայթները: Սըրանք նոյնպէս թափանցում են փայտի, թղթի և բարակ մետաղէ թիթեղի միջով: Մարդու կաշուի վրայ առաջացնում են բորբոքումներ, որոնք կարող են կատարել բուժիչ միջոցների դեր, և վերջապէս այդ ճառագայթներն սպանում են բակտերիաներին: Շտրեբել փորձեց այդ ճառագայթների ազդեցութիւնը քաղցկեղի (բակի) ուռոյցքների վրա և նկատեց, որ այդ ճառագայթներից ուռոյցքները նոյնպէս փլուում և ոչնչանում են, ինչպէս և բադիլուժից: Բայց կատողային ճառագայթները ունեն հետեւեալ առաւելութիւնները. 1) նրանց կարելի է ստանալ ինչ ուժի ուղեւանք. 2) գործիքները, որոնց միջոցով ստանում են այդ ճառագայթները, կարելի է այնքան փոքրացնել, որ կարելի կը լինի զետեղել նոյնիսկ փոքր ուռոյցքների մէջ. 3) միւս կողմից այդ գործիքներին կարելի է տալ և մեծ ծաւալ, և ուրեմն ներգործել մեծ ուռոյցքների վրայ, մինչդեռ բադիլուժի պրեպարատներով կարելի է միայն տղքել շատ փոքր ասարածութեան վրայ և պէտք է երկար ժամանակ:

Լոնդոնից հաղորդում են, որ այնտեղ, նիւօրլէանեան բորոտների ապաստանի վերահսկող բժիշկ Դայեր (Deyr) գտել է հիւանդութիւններից ամենասարսափելիներից մէկը—բորոտութիւնը—բժշկելու միջոց: Դայերին յաջողուել է 10

*) Կատող—բացասական բնույթ (Տես «Մուրճ» 1903 թ., № 4, երես 203):

տարուայ ընթացքում բժշկել 20 հոգի: Նա ասում է, թէ իր հիւանդանոցում առհասարակ չի եղել դէպք, որ բորոտութեամբ հիւանդը չբժշկուի, եթէ միայն հիւանդը սկսել է բժշկուել հիւանդութեան առաջի շրջաններում: Այդ կարճ անդեկութեան մէջ չի ասուած, թէ ինչ միջոցով է բժշկում Դայերը: Միայն ասուած է, որ բժշկութիւնը Դայերի կարծիքով պահանջում է առնուազն մէկ տարի ժամանակ:

*

Նորագոյն առողջապահութեան առաջադիմութիւններից մէկն է կաթը չորացնելու եւ փոշի դարձնելու միջոցի գիւտը: Չորացրած կաթը յայտնի է եղել և՛ առաջներում, բայց նա շնորհիւ իր մի քանի պակասութիւնների՝ չի կարողացել շատ տարածուել: Կաթը չորացնելու նոր ձև, որը առաջարկել են ամերիկացիք և որը կոչւում է Just-Hatmaker-եան ձև, ունի այն առաւելութիւնները, որ այդ միջոցով ստացւում է ախտահանուած, այսինքն բակտերիաներից զուրկ, չորացրած կաթ: Դրա համար կայ առանձին մեքենա, որի շնորհիւ չորացրած կաթը ստացւում է բարակ գեղնադոյն թերթիկների ձևով, որոնք մի թեթեւ շարժումից փշրւում են ձիւնի քուլաների նման կտորների: Բաւական է այդ փոշուն աւելացնել ջուր, որ ստացուի կաթ, որը ոչ համով, ոչ գոյնով և ոչ էլ սննդականութեամբ չի դանազանւում թարմ կաթից: Այդ փոշին բակտերիաներից պահպանելու համար պահւում են առանձին տեսակ արկղներում: Թէ ինչպէս լաւ է պահպանւում որացրած կաթը այդ արկղներում, ցոյց է տալիս հետեւեալ փաստը. նորերումս քննութեան ենթարկեցին մի արկղ այդ կաթից, որը կատարել էր ճանապարհորդութիւն աշխարհիս շուրջը և ոչ մի փոփոխութեան չէր ենթարկուել: Ամերիկայում փորձի համար այդ տեսակ կաթնով մի քանի բարեգործական հիմնարկութիւններում կերակրել են 850 երեխայ և ստացել են շատ բաւարար հետեւանքներ: Այդ փորձերը ցոյց տուին ի միջի այլոց, որ չորացրած կաթը մարդու ստամոքսում կծկւում է մանր կտորների, ինչպէս և կնոջ կաթը, և շատ հեշտութեամբ է մարսւում:

Հասկանալի է, թէ ինչ ահագին գործնական նշանակութիւն ունի այս գիւտը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Ճահճի մեր» պիտը մեր ինտելիգենցիայի մասին:—

† Ի. Ք. Փիրոն:—† Փ. Բրեդիխին:—† Չահյալեան:—

Նոր փոխառութիւն:—Էթան քնակարաններ կառուցանող ընկերութիւնը
Պետերբուրգում:—Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ:

Ապրիլի 20-ին Բագու քաղաքում և 27-ին Թիֆլիսում
ներկայացրին մի նոր հայերէն պիես՝ «Ճահճի մէջ», հեղինա-
կութիւն ինժեներ Կոնստանտին Սատիսեանի:

Աւելի շուտ այդ պիեսը՝ մեր իրականութիւնից թուցիկ
զծերով նկարուած պատկերների մի շարք է, միացած հրապա-
րակախօսական խորհրդածութիւնների հետ, քան զեղարուես-
տական ամբողջութիւն ունեցող մշակուած մի երկ: Այդ խոր-
հրդածութիւններն էլ խկապէս ըստ էականի նորութիւններ
չեն մեր մամուլի համար. սակայն, չնայած այդ բոլորին, նոր
պիեսում շօշափուած հարցերը արժէր և՛ բեմից արծարծել,
մանաւանդ որ մեր հասարակութեան հէնց այն մասը, որի
հասցէով ուղղուած են հեղինակի Փիլիպպիկները, գէթ երբեմն
յաճախում է թաարոն, ուրեմն բեմից արձակուած սլաքները ի-
րանց նպատակին կարող են կպչել, մինչդեռ այդ բախտին
չեն արժանանում մեր մամուլի նետերը, որովհետեւ նրա էջերը
այդ դասակարգի համար մնում են terra incognita...

Ինձ հետաքրքրում է պիեսի հիմնական միտքը և այն լու-
ծումը, որ տալիս է շօշափած հարցին հեղինակը: Սօսենք
զբուածքի այդ կողմի մասին:

Պիեսի հիմնական միտքը այն է որ մեր ինտելիգենցիայի
մեծագոյն մասը, բարձրագոյն կրթութիւնը աւարտելուց յետոյ,
վազում է Բագու, և այդ «անիծեալ ճահճում» իսկոյն մոռա-
նում է իր ուսանողական իդէալները և բարոյապէս ընկնում.
վերջնական կորստից ազատուելու համար, պիեսի հերոս Ռուբէն
Արովեանի կարծիքով, զրանք պէտք է թողնեն «մեր երկրին
իբրև աստուածային նզովք և անէծք ուղարկուած քաղաքը» և

փախչեն այդտեղից դաւառ ու այնտեղ «մի նոր խելացի կեանք սկսեն»:

— Գաւառ, գաւառ, ուր ժողովրդին հարկաւոր են գիւղական բժիշկներ, ուսուցիչներ, քահանաներ և գիւղատնտեսներ, բացառանշում է Բագուի կեանքից հիասթափուած Ռուբէն Աբովեանը:

«Ծանօթ մտքեր, հարցի ծանօթ լուծում», կը նկատի մեր մամուլին հետևող ընթերցողը:

Նւ պէտք է տեսլ որ Արուիկանի այդ անկեղծ խօսքերը նոյնքան բողբոջական ոգևորութեան արդիւնք են, որքան և նրա ուսանողական ձգտումները, ինչպէս յայտնուում են դրանք առաջին գործողութեան մէջ. լրջութիւն, հաստատ աշխարհայեացքի հետքեր դուք մի որոնէք նրա խօսքերում, սակայն հաւատացէ՛ք որ այն բողբոջի երբ նա արտասանում է իր ոչ խոր մտքերը— նա անկեղծ է:

Արուիկանը սիրում է գեղեցիկ խօսքերով արտայայտել իր բողբոջական տրամադրութիւնները, սակայն նա այն բնաւորութիւններից է, որոնք ճառից յետոյ ամսիջապէս մոռանում են իրանց ոգևորութիւնը և ընդունակ են լինում արամազծօրէն հակառակ գործեր ձեռնարկելու: Այդպէս, նա ուսանողական հրաժեշտի ժամին իր ընկերներին գիմում է հետևեալ ոգևորուած խօսքերով. «Ընկերներ, մենք աւարտում ենք, մեր առջև բացուած է մեր կեանքի լայն ասպարէզը, դէպի որը ուղղուած են մեր յոյսերը և իղձերը: Այն իդէալները, որ մենք այնպէս խնամքով փայփայել ենք մեր ուսանողական ամբողջ կեանքի ընթացքում, որոնք դարձել են մեր գոյութեան անբաժան մասը՝ կանգնած են մեր առաջ, նրանք մեզ կանչում են: Ո՞ւր կը ձգէ մեզ մեր կեանքը, որտեղ պիտի սկսենք գործել, ի՞նչպէս պիտի գործադրենք մեր ուժերը, ես այդ դեռ չգիտեմ: Բայց ես զգում եմ, բոլոր էութեամբ զգում եմ որ մեր շրջանը, մեր խումբը ամբողջ գլխով բարձր է միջին, բուրժուա դասակարգից: Մեզ բնութիւնը տուել է աւելի, քան սովորական, միջակ մարդկանց, մեղանից էլ աւելի է պահանջուում: Իւրաքանչիւրը մեզանից թեւի է զգում իր ուսերի վրայ. մնում է թափ տալ այդ թեւերը և համարձակ թռչել դէպի Աստուծոյ լայն աշխարհը. և թող այդ լայն աշխարհում հնչի այն ներդաշնակ, հանդիսաւոր լարը, որ ամեն մէկը մեղանից կրում է իր կրծքի մէջ: Այս հրաւիրող կոչը, այս սուրբ կրակը, որ թաղնուած է մեր սրտերում, ուղում է դուրս թռչել, և ես գիտեմ, ես հաւատացած եմ, որ մենք այս բոլորը երեւան կը հանենք, մենք ապարդիւն չենք անցկացնի մեր կեանքը: Նա դրան

հաւատում եմ: Ես հաւատում եմ որ մենք բոլորս էլ կը նուիրենք մեր կեանքը այնպիսի նպատակների իրագործման, որոնք կը թողնեն մի լայն, հրավառ հետք իրանց ետևից: Ես հաւատում եմ, որ մենք կը յայտարարենք մի սարսափելի և անխնայ պատերազմ այն ամենին, ինչ որ դժգոյն է, մանր է, ֆրիկստերային է, և մեր բոլոր ոյժերը զոհ կը բերենք մեր փայփայած իդէալներին և՛ այդ իդէալները կ'իրագործենք կեանքի մէջ»:

Գեղեցիկ խօսքեր և ոչ մի դրական բան!

Եւ «իր բոլոր ուժերը իր փայփայած իդէալներին զոհ բերողը» այդ ոգևորուած ճառից յետոյ վազում է Բաբու և դառնում... նաւթային գործարանի կառավարիչ: Նրա այդ քայլի մէջ էլ անկեղծութիւն կայ, և բացատրութիւնը պատրաստ է. «Առայժմ պարտաւոր եմ բուրժուական գործերով, ասում է նա, աշխատում եմ որքան կարելի է շատ փող դիզել. հասարակական գործիչը պէտք է նիւթապէս ապահով լինի և անկախ»: Մի քայլ էլ, և փողը իբրեւ միջոց դառնում է կեանքի նպատակ. նա իր ազատ ժամանակն ևս շահագործում է փող աշխատելու համար. թղթախաղը «ընկերներին գրիւկու» մի զբաղմունք է դառնում: Փող ունենալու տենչը այնքան է զօրեղանում, որ երբ Արովեանի ամենամօտ բարեկամը, իդէալիստ Եփրեմ Բերունին, դիմում է նրան մի հասարակական ձեռնարկութեան համար ինչ որ չնչին գումար (մէկ թէ երկու հազար) ձարելու, Արովեանը, որ իբրեւ ինժեներ կառավարիչ անշուշտ 6—12 հազար եկամուտ ունի, նոյնքան, գուցէ և աւելի են ստանում նաև իր շրջանի մարդիկ, որոնք ամբողջ գլխով բարձր են միջակութիւններից, ահա այդ Արովեանը չի մտածում Բերունու գործի համար իր գրպանից տալ կամ իր շրջանի մէջ հուաքել այդ գումարը, մանաւանդ որ համակրում է նպատակին, այլ դիմում է... գողութեան. նա աշխատում է այդ գումարը իր «խողէինի» հաշուից վերցնել մի ճարպիկ կոմբինացիայով: Այդ քայլն էլ դարձեալ անկեղծօրէն է անում և ունի զրա համար պատշաճ բացատրութիւնը. «Մեր հարուստները իրանց յօժար կամքով մի գրող էլ չեն կամենում տալ ժողովրդի բարօրութեան համար, և եթէ մենք սպասենք որ նրանց մէջ զարթնի ինքնաճանաչութիւնը—մեր բոլոր ձեռնարկութիւնները կ'ոչնչանան. «նպատակը արդարացնում է միջոցները».— ահա ինչ եզրակացութեան է գալիս իդէալների մասին գեղեցիկ ճառեր արտասանող պարոնը, «ճանաչելով կեանքը» երեք տարուայ ընթացքում:

Եւ դուք կարծում էք որ գրանով վերջացան այդ ապագայ մեծագործի աշխարհայեցողութեան էությունը: Սխալւում էք.

բաւական են Բերունիի մի քանի խօսքերը, որ նա խկոյն փոխի իր հայեացքները և անկեղծօրէն այլ ծայրայեղութեան դիմի. տեսնելով իր իդէալական խօսքերի և արարմունքների մշտական հակասութիւնը և ինքն իրանից դժգոհ, նա դարձեալ առանց լրջօրէն խորհելու վճռում է որ իր նմանների բոլոր դժբախտութիւնների պատճառը «անիծեալ» Բագուն է, որ «ուղարկուած է մեր երկրին իբրև աստուածային նզովք և անէծք», ուստի խաղառ չկործանուելու համար պէտք է փախչել այդ տեղից և դնալ գաւառ... Եւ հաւատացած ենք որ այդ քայլն անելուց յետոյ էլ դարձեալ անկեղծօրէն նա մի նոր տարրեր ձեռնարկութիւն պէտք է սկսի, որովհետև գաւառն էլ անկարող է տալ այն, ինչ որոնում է և չի գտնում Արուիւսանը... Նա կրկին կը վերադառնայ Բագուն... եթէ միայն իր ճառը արտասանելուց յետոյ մինչև կայարան հասնելը չի փոխի իր մտադրութիւնը:

Ինչն է պատճառը որ իր «տաղանդաւոր» ընկերներից ամենահեռաւորունը և ամենատաղանդաւորը այդքան անաջողակ է իր իդէալները իրագործելու մէջ:

Ներկայ դէպքում երկու տեսակ պատճառներ կան—ներքին և արտաքին. մէկը բղխում է հերոսի բարոյական էութիւնից, միւսը՝ մեր կենցաղի ընդհանուր պայմաններից:

Անվրճելի իրողութիւն է որ մեր ինտելիգենտների ահագին մեծամասնութիւնը ընտրում է «հաց տուող» պրոֆեսիաներ, այն է ինժեներութիւն, բժշկութիւն և փաստաբանութիւն: Այդ երեւոյթի մէջ դեր են կատարում իհարկէ պահանջի և առաջարկի տնտեսական օրէնքի հետ և մեր իրականութեան այլ պայմանները:

Անշուշտ կենտրոնների ճակատագրական յատկութիւնը չէ՝ փչացնել մարդկանց, սովորեցնել թուղթ խաղալ, լովխլասութիւն անել, գողութիւն անել, անասնական անտարբերութիւն ցոյց տալ դէպի ամեն-մի հասարակական ձեռնարկութիւն, ազդուել տգէտ բուրժուաների հայեացքներից: Այդ բոլոր երևելի յատկութիւնները գուցէ աւելի ևս գծուած ձևերով արտայայտուում են և գաւառներում, մի որրեք Երևանում, Շուշում, Ալեքսանդրօպոլում, Ագուլիսում կամ Շուլաւերում... Միւս կողմից չպէտք է մոռանալ, որ կենտրոններ կան և Եւրոպայում, Ամերիկայում, և այլ տեղեր, և այդ կենտրոններն էլ լիքն են ինժեներներով, բժիշկներով, իրաւաբաններով, սակայն փչացած ինտելիգենտների թիւը այդ կենտրոններում այն ահռելի տոկոսը չի կազմում, ինչպէս Բագունի մէջ, եթէ հաւատանք այդ քաղաքը լաւ ճանաչող պ. Խա-

տիսեանի պատմածներին: Այդ ուրիշ երկրներում մեծ կենտրոնները ոչ միայն ճահիճ չեն, այլ լուսաւորութեան և ազատութեան օջաղներ, ազգային և մարդկային առաջադիմութեան բազմաթիւ ձեռնարկութիւնների որրաններ: Իսկ մեզանում «ճահիճը» կը մնայ ճահիճ, որովհետեւ ինչպէս ցոյց է տալիս պիեւը, ուսանողութիւնից դուրս են գալիս կամ Շիրվանեանների, Տէր-Նիկողոսեանների և Կարեօանների նման արարածներ, կամ Ռուբէն Աբովեանի նման բարոյական-մտաւոր լուրջ պաշարից դուրկ պրոթեկտորներ, երեակայութեամբ մարտնչողներ և ոչ իրապէս: Այդ գիտակցում է և ինքը պիեսի հերոս Ռուբէն Աբովեանը. «Մենք բոլորս երեակայում էինք մեզ ընդունակ մեծ գործեր կատարելու: Գիտութիւնը թողած մի կողմ, մենք օր ու զիշեր զբաղուած էինք ճարտարախօսութեամբ: Իբր թէ հերոսի ինչի՞ն է պէտք ընդհանուր զարգացումը: Մենք ամեն բանի կը հասնենք մեր խելքով: Եւ ահա մենք կեանք մտանք չնչին, ողորմելի մտաւոր պաշարով, առանց գիտութեան, առանց զարգացման... Եւ երեկուայ «Հայաստանեայց աշխարհի ճրագները» դարձան ամենասովորական, ամենախղճալի մարդուկներ»:

Ճիշտ է միանգամայն, միայն մոռացուած է աւելացնել, որ նաև աւելորդ են համարել լուրջ ծանօթութիւնը այն ժողովուրդի, այն երկրի հետ, որ պէտք է գործունէութեան ասպարէզ դառնար:

Հարկ չկայ որ Աբովեանները բանուգործ թողած՝ գաւառ վազեն, իրանք էլ չիմանալով թէ ինչ պէտք է անեն այնտեղ: Հիասթափութիւնը աւելի ևս զարհուրելի կը լինի:

— Բարձրագոյն հրաման ֆինանսների մինիստրին. «Պատերազմական դէպքերի պատճառով և պետական գանձարանի միջոցները բազմացնելու համար, գանձարանի և պետական բանկի ոսկի առձեռն դրամը մեծացնելով, Մենք բարուրդ համարեցինք, ձեր առաջադրութեան համաձայն, որ քննուել է մինիստրների կոմիտեում, բաց թողնել արտաքին պետական փոխառութիւն կարճ ժամանակով: Այդ նկատումներով հրամայում ենք ձեզ բաց թողնել ձեր որոշած կարգով և յաջորդականութեամբ 5% փոխառութիւն 300 միլիոն թուրքական անուանական դրամազլիի, հաւասար 800 միլիոն ֆրանկի, հետեւալ հիմքերով. 1) այս փոխառութիւնը մտցնում է պետական պարտագումարը՝ «1904 թուի պետական գանձարանի 5% պարտքը». 2) պարտամուրհակները արձակում են մատուցանողի անունով 187 ռ. 50 կամ 500 ֆրանկի և 1875 թուրքում կամ 5000 ֆրանկի արժէքով. 3) պարտամուրհակների եկամտի քանակու-

Թիւնը որոշուած է 5 տոկոս տարեկան, որ վճարուած է կիսամեայ վճարներով. տոկոսների սկիզբն է 1904 թ. մայիսի 1 (14)-ը. 4) տոկոսների վճարումը կատարուած է Ռուսաստանում բուրլիով և Ֆրանսիայում Ֆրանկով, հաշուելով 1 ֆրանկը հաւասար $37\frac{1}{2}$ կոպէկի, ձեր կողմից նշանակուած տեղերում, երբ կը ներկայացնեն պարտավորականների կուպոնները. 5) տոկոսների դրամագլխի վճարումը պարտավորականներով— կէտ 8-դ—աղատուած է ընդմիշտ ռուսական որևէ տուրքից. 6) կուպոնները կարող են առաջարկուել վճարման այն տասը տարուայ ընթացքում, որ նշանակուած է նրանց յետ գնման համար. 7) փոխառութիւնը բաց թողնելու ժամանակ դուք որոշում էք այն իրաւունքները և արտօնութիւնները, որոնք պէտք է յատկացուեն այժմ բաց թողնուող 5% պարտավորականներ ունեցողներին, վերաբերմամբ այն երկար ժամանակեայ պետական փոխառութիւնների ստորագրութեան, որոնք կարող են բաց թողնուել մինչև 1904 թ. մայիսի 1-ը (14ը), ինչպէս և նրանց պարտավորականների և կուպոնների ընդունելութեան վերաբերմամբ ի վճարումն մաքսային հարկերի, արքունի դրամականների և իրեն ապահովութիւն աւելիդական վճարների. 8) 1909 թ. մայիսի 1-ին (14-ին) այդ պարտավորականները պէտք է յետ գնուեն անունական գնով, իսկ մինչև այդ ժամանակամիջոցը հասնելը այդ փոխառութեան յետ գնումն տեղի չի ունենայ:» Իսկականի վրայ նորին Մեծութեան Սեփական ձեռքով ստորագրուած է. «Նիկոլայ». Յարսկոյէ Սեւո, 29 ապրիլի 1904 թիւ:

—«Մուրճի № 1-ում տեղեկութիւններ էինք տուել էժան բնակարաններ կառուցանող մի ընկերութեան մասին Մոսկուայում: Այդպիսի մի ընկերութիւն գոյութիւն ունի և Պետերբուրգում: Այդ վերջին ընկերութեան դրամագլուխը այժմ հասնում է 165 հազարի: Ապրիլի 28-ին ընկերութիւնը իրան պատկանող հողի վրայ, որ գտնուած է աղբատ դատակարգի բնակուած քաղաքամասում, ձեռնարկել է տան շինութեան, որ պէտք է բաղկացած լինի երեք, երկու և մի սենեականոց բնակարաններից: Ցանկալի է որ նման ընկերութիւններ կադմակերպուեն և մեր մեծ քաղաքներում, ուր տարեցտարի բարձրանում են բնակարանների վարձը և չքաւորների համար անսանելի դարձնում ապրուստը:

—Ապրիլի 22-ին Թիֆլիսում վախճանուեց յայտնի հայ հարուստ Դսայ Նգորովիչ Փիթօնը որ ահագին ծառայութիւն է մատուցել ռուսական դրամայի և օպերայի զարգացման կովկասում: Հանգուցեալը, ինչպէս և նրա եղբայր Իվանը ոչ

միայն իրանց եռանդն ու ժամանակն են նուիրել, այլև նիւթական ահագին զոհարերութիւններ են արել ռուսաց թաւորոնի և օպերայի բարգաւաճման թիֆլիսում: Գեղարուեստի սիրահար Իսայ Եգորովիչը ամուսնացած էր իր ժամանակ յայտնի ռուս դերասանուհի Օլգա Ստանիսլաւովնա Մարքսի հետ: Հանգուցեալը թիֆլիսում ունէր անային սեփական թատրոն, ուր տարիներից ի վեր ռուս լեզուով ներկայացումներ էին տալիս նրա ընտանիքի անդամները և նրանց շրջանին մօտ սիրողները: Հանգուցեալի ջանքերով և նախաձեռնութեամբ է կազմուել 1887 թուականին թիֆլիսի «Արտիստիկական ընկերութիւնը», որի նախագահն ու ղեկավարն էր նա: Համեմատաբար շատ աւելի համեստ էր Փիթօււի աջակցութիւնը հայոց թատրոնական գործին: Իր մեղմ, բարի, առատաձեռն բնավորութեան շնորհիւ նա հասարակութիւնից սիրուած անձնավորութիւն էր թիֆլիսում:

—Մայիսի 1-ին վախճանուեց նշանաւոր ռուս աստղագէտ Փէոդոր Ալեքսանդրովիչ Բրեդիխին մօտ 73 տարեկան հասակում: Մինչև 1890 թուականը նա դասաւանդում էր Մոսկուայի համալսարանում: Այդ թուականին ընտրուելով Կայսերական Գիտութեանց ձեմարանի ակադեմիկոս՝ նշանակուեց Պաւլովիան աստղադիտարանի (օբսերւատորիայի) վերատեսուչ: Գիտութեան մէջ նա յայտնի է իրրեւ գիսաւոր աստղերի հետազոտող:

—Մայիսի 2-ին Պետերբուրգում „Всѣхъ Скорбящихъ“ հիւանդանոցում վախճանուեց յայտնի հայ երգիչ Ներսէս Շահլամանը, որ վերջին երկու տարիները տառապում էր ջղային ծանր հիւանդութիւնից: Բնութիւնից օժտուած լինելով հաղուագիւտ ուժեղ և ախորժելի ձայնով՝ նա միայն առնական հասակում սկսեց կոտարելագործուել եւրոպական երգեցողութեան մէջ: Օպերային գերերում նա չունեցաւ մեծ աջողութիւն, մինչդեռ իրրեւ կոնցերտային սոլօ միշտ արժանանում էր մեծ գովասանքի: Նա սկզբում երգում էր իր ծննդավայր Գանձակի հայոց եկեղեցում, ապա մասնակցում էր Կարա-Մուրզայի համերգներում: Հրաւիրուելով Պետերբուրգ իրրեւ հայոց եկեղեցու երգիչ՝ այնքան ուշադրութիւն է դարձնում իր վրայ, որ հնարաւորութիւն է ստանում գնալ Իտալիա կատարելագործուելու համար:

Մամուլի վերաբերեալ կարգադրութիւններ.—

—„Новое Время“ լրագրի հրատարակիչ Ա. Ս. Սուլորինին թոյլատրուած է Մոսկուայում հրատարակել օրը երեք անգամ առանց կանխադրաբնութեան «Телефонъ Новаго Времени»

անունով լրագիր հետեւեալ բովանդակութեամբ. 1) Յօդուածներ և տեղեկութիւններ, որոնք լոյս են տեսնում „Новое Время“ում և հաղորդւում են Մոսկուա հեռագրով և հեռախօսով: Հաստով վաճառման գինը երեք կոպէկ է:

—Ներքին գործերի մինիստրի հայեցողութիւնից վերցնւում է և յանձնւում նահանգապետներին՝ այնպիսի պարբերական հրատարակութիւնների լոյս տեսնելու թոյլտուութիւնը, որոնց պրօգրամը սահմանափակւում է ամեն տեսակ յայտարարութիւնների տպագրութեամբ. նահանգապետիցն է կախուած նաև թոյլ տալ այդ հրատարակութիւնների անցնելը մէկ հրատարակչից միւսին և նրանց խմբագիրների փոփոխութիւնը:

—Թոյլատրւած են հետեւեալ նոր պարբերական հրատարակութիւնները. Սամարայում Самарский Курьеръ ամենօրեայ լրագիր, Ժիտոմիրում Волынский Вѣстникъ ամենօրեայ լրագիր, Սևաստօպոլում երկշաբաթեայ հանդէս Весна.

—Մամուլի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ Թինլանդիայում նախագգուշացում է արուած Հելսինգֆորսում լոյս տեսնող Ուիլզի Սիւոմետար լրագրին:

—Ներքին գործերի մինիստր ի կարգադրութիւն. — Գրաքննչ. և մամուլի կանոնադր. 144-րդ յօդ. հիման վրայ ի նկատի ունենալով Восходъ լրագրի վնասակար ուղղութիւնը, յայտնել երրորդ նախագգուշացում՝ դադարեցնելով նրա հրատարակութիւնը վեց ամսով:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Ռուս-անգլոնական պատերազմը.—Փրանսիայի եւ Վասիլիանի յարաբերութիւնները.—Սաւունի յիշկերը.—Դեղարուեսի եւ գիտութեան նշանաւոր կորուստներ եւրոպայում.—Լեմբախ, Իսկայ, Դիւլիօ, Տարդ, Սեննի:

Տիրերնշինեան ճակատամարտից յետոյ, ինչպէս յայտնի է լրագրներէրից, գեներալ Կուրոկի ներս խուժեց Մանջուրիա եւ առաջ խաղալով ապրիլի 22-ին գրաւեց Փընխուանչէն: Ամրանալով այդտեղ նա իր զօրաբանակից մասեր հանեց երեք ուղղութեամբ. դէպի արեւմուտք—Լեանան, ուր գեներալ Կուրոպատկինի զօրաբանակն է կենտրոնանում, դէպի հարաւ-արեւմուտք—մանջուրական երկաթուղու վրայ գտնուած Հայչէնի ուղղութեամբ, եւ դէպի հիւսիս—Մուկդէն: Նրա զօրաբանակի այդ հիւսիսային ճիւղը արդէն հասել է Կուանդիանսեան եւ ծոռել է այդտեղից արեւմուտք՝ Մուկդէնի ուղղութեամբ եւ մօտ է Սայմացղուին:

Նալու դետը անցնելը նշան էր, որ ճապոնական բոլոր զօրքի հրամանատար մարշալ Նոգուոն սկսի իրագործել իր ծրագրի եւ մնացած մասերը. իսկոյն երկրորդ զօրաբանակը հրամանատարութեամբ գեներալ Օկուի ափ իջաւ Կորէեան ծոցի Բիցղըվօ նաւահանգստում. ապրիլի 22-ին, փոխ-ծովակալներ Կատաոկիի եւ Հասոյիի ռազմական նաւախմբերի պաշտպանութեամբ, Լեանուդունեան թերակղզու վրայ ափ իջաւ ճապոնական երկրորդ բանակը: Մի քանի վաշտեր աճապարեցին գրաւել մանջուրական երկաթուղու Վաֆանդեան եւ նրանից 26 վերստ հարաւ գտնուող Պուլեանդեան կայարանները, իսկ զօրաբանակի գլխաւոր մասը դիմեց դէպի Կվանտունեան պարանոցը, ուր գտնուում էր ռուսներէրից սաստիկ ամրացրուած Յզինչոոուն: Միաժամանակ ափ էին իջնում ճապոնացիները նաեւ Լեանուդունեան թերակղզու վրայ, Բիցղըվօից հարաւ գտնուող մասերում: Առանձին ղեկավարութիւններ էր ներկայացնում Կերրեան ծովախորշը, որ ռուսները լքցրել էին ականներով: Ճապոնացիները պէտք է մաքրէին բազմաթիւ ականներից այդ ջրերը: Ապրիլի 27-ին

այդ գործողութիւնների ժամանակ նրանք զոհեցին № 48 ակա-
նանաւը և «Միակօ» փոքրիկ յաճանաւը: Դրանով չսահմանափա-
կուեցան կորուստները: Պորտ-Արտուրի ռուսաց նաւատորմիդն
ապրիլի 20-ից յետոյ, — երբ ճապոնացիները 8 բրանդերներ խո-
րասուզեցին նաւակայանի մուտքի առաջ, — զուրա չէր գալիս
ծովը, թէև նրա ականանաւերը երբեմն երբեմն երևում էին
գրսի նաւակայանում և լողացող ականներ ցրում:

Այդ լողացող ականները հոսանքով տանում էին Պորտ-
Արտուրից շատ հեռու, չէզոք ջրերը: Եւ ահա այդ ականները
պատճառ եղան որ մայիսի 2-ին ճապոնական նաւատորմիդն ա-
հագին կորուստ կրեց: Այդ օր Դաշիրա Էնթ-ծովակալի նա-
ւախումբը մի շարք դժբախտութիւնների հանդիպեց. զրահա-
կիր յաճանաւ «Կասսուգան» ընդհարուեց «Իռլինօի» հետ, որ
խակոյն խորտակուեց: Ապա 10 մղոն Պորտ-Արտուրից հեռու
ռուսական ականի վրայ ընկաւ «Եւաշիմա» զրահակիրը և պայ-
թիւնից ծակուեց, սակայն չխորտակուեց, նրան օգնութեան հա-
սաւ Էնթ-ծովակալ Դաշիրան «Հատսուգէ» զրահակիր վրայ: Այդ
ժամանակ «Հատսուգէի» տակ տեղի ունեցան երկու ականային
պայթումներ և մի բոպէից յետոյ վիթխարի զրահակիրը սկսեց
ջրասուզուել: Այդ օրը ճապոնացիները կորցրին երկու հոյակապ
ռադմանաւեր, որոնց հետ զոհուեցան մօտ 900 հոգի:

Այդ սոսկալի կորուստը յուզեց հասարակական կարծիքը
ոչ միայն Անգլիայում և Ամերիկայում, ուր բողոքում էին
չէզոք ջրերում լողացող ականներ պցելու գէմ, այլև Гражданинъ-ի
խմբագիր իշխան Մեշչերսկին գրեց մի յօդուած ականներով
կռուելու գէմ: Ծովի վրայ այդ կորուստները չխանգարեցին
ծովակալ Տոգօին գլուխ բերելու Յզինչժոուի ոմբակոծութիւնը
Լեաունդունեան ծոցի կողմից: Մայիսի 13-ին գէներալ Օկօիզօր-
քը յարձակուեց Յզինչժոուի վրայ և ահագին դժուարութիւն-
ներով գրաւեց այդ ամրութիւնները: Ահա ինչպէս են նկարա-
գրւում հեռագրները այդ արիւնահեղ կռիւը.

— Տոկիօ (Բէյտ. գործ.): Յզինչժոուի վրայ յարձակումն գործող
ճապոնական զօրքի հրամանատարը զեկույանում է. «Մայիսի 8-ին, ռուս-
ների թնդանօթածորութիւնը դիտելով սպառնուեց, որ նրանք դրել են Նան-
շան բլրի վրայ, Յզինչժոուից հարաւ, չորս՝ 15 սանտիմետրանոց եւ տասը՝
9—15 սանտիմետրանոց արագածիկ թնդանօթներ. բայց, դրանից ռուս-
ները կառուցել են տասը մարտկոյններ եւ բլրի ստորոտում տեղաւորուած
են մետաղեայ ցամեքեր եւ զրուած են ականներ. մայիսի 9-ին գրոհ
գործող զօրասիւնները սկսեցին յարձակումն: Հետեւեալ օրը յայտնուեց,
որ ռուսների աջ թեւը գտնուում է Խուանշանգուաօի մօտ, ունենալով 8
ծանր թնդանօթներ ուղղուած դէպի ծովը: Յզինչժոուում նկատուել են հե-

տեւակ զօրքի եւ արտիլլերիայի փոքր խմբեր: Մայիսի 12-ին, առաւօտեան, ծաւոնացիները յարձակուեցին Յզինչժողւի վրայ եւ կռուի քաշեցին ռուսաց արտիլլերիան Նանշանի մօտ: Մայիսի 13-ին, արեւածագին մարտկոցները սկսեցին ռմբակոծել ռուսաց դիրքերը, եւ այդ տեւեց 5 ժամ: Միեւնոյն ժամանակ ծաւոնական 3 պատերազմական նաւեր թնդանօթածուծիւն էին անում Յզինչժողւի ծոցից: Ռուսական թնդանօթածիկ նաւը հարուածում էր մեր ձախ թեւը Տալինովանի ծոցից: Փամի հինգ ու կէսին մենք վերջրինք գրոհումով Յզինչժողուն եւ սաստիկ կռուից յետոյ պրաւեցինք Նանշանը:

Այն նաւախումբը, որ մասնակցութիւն ունեցաւ Յինչժողւի ամրութիւնների աւման մէջ, Յինչժողւի ծոցը մտաւ չորեքշաբթի օրը: Ծովի չափազանց ալեկոծութիւնը խանգարեց գործողութիւններին անմիջապէս մասնակցել: Հէնց որ եղանակը թոյլ տուեց, նաւախումբը մօտեցաւ եւ սկսեց ռմբակոծել ռուսական մարտկոցները. ականանաւերի խումբը կրակ բացեց երկաթուղու գծի վրայ: Մեծ զինուորական նաւերի թնդանօթները, որ բերուեցին դէպի ծաւոնական բանակի ձախակողմեան թեւը, միասին առաջ շարժուեցին եւ աջակցեցին բանակի գործողութիւններին: Հապոնական գրոհումը Նանշանի բարձրութիւնների վրայ՝ ամենասաստիկ եւ արինաահեղն էր, որից աւելին յայտնի չէ ժամանակակից պատերազմական պատմութեան մէջ: Առաջին գրոհի ժամանակ բոլոր օֆիցերներն ու զինուորները դեռ ռուսաց առաջին գծին չհասած՝ կտրուեցին ռուսներից. այս պատճառով անհրաժեշտութիւն տեսնուեց նախապէս ռմբակոծել թշնամու դիրքերը եւ ապա ձեռնարկել վերջին յուսահատական գրոհումին, որ աջողութեամբ զլուխ եկաւ շնորհիւ նախկինից աւելի քաջարի զօրաբաժնին: Նրան աջողուեց մուտք գործել ռուսաց պաշտպանողական գծի մէջ, գտնելով ականային խափանիչների թելերը: Հապոնական հետեւակ զօրքը մի հրացանընկէց տարածութեամբ մօտեցաւ, բայց հանդիպեց մաւթուլի թելերից խափանիչների: Գտնուեց մի անցք, որի միջով առաջ գնաց հետեւակ զօրքը: Մեծ բաղդ էր ծաւոնացիների համար, որ ականային խափանիչների հաղորդիչ թելը գտնուեց. հեծ ականները պայթէին, սարսափելի մեծ կը լինէր ծաւոնացիների կորուստը, եւ ռուսները դիրքերը կը պահպանէին: Առաւօտեան 11 ժամին ռուսների զխաւոր մարտկոցները լռեցրուած էին: Հապոնացիները ռուսների խրամատներից 200 մետր հեռաւորութիւնից դրոհ տուին, բայց յետ ընկրկեցին: Հապոնական արտիլլերիան նախապատրաստական ռմբակոծութիւն կատարեց, եւ երեկոյեան դէմ ծաւոնացիների պաշտպանողական զիծը կտրեց: Զօրքի միւս բաժինները ընկերների այս աջողութիւնից խրախուսուելով՝ ամբողջ ճակատով վրայ յարձակուեցին եւ շուտով բլուրը տիրեցին:

“Рыс. Вѣд.” լրագրի սեփական թղթակիցը հեռագրում է Բերլինից թէ այնտեղի ղեկավարական շրջանների կարծիքով, Մայիս, 1904.

Ցզինչժոուլի մօտ կռիւը պատերազմական արուեստի պատմութեան մէջ պիտի դարագլուխ կազմի: Այստեղ հանգիպեցին իրար արժանի երկու հակառակորդներ. պաշտպանողների հերոսութիւնը հաւասարուած էր յարձակողների արհամարհանքին դէպի մահը: Իսկ այդպիսի պայմաններում, ի նկատի ունենալով սպառազինութեան նորագոյն ճարտարութիւնը (տեխնիկա) և անդրադարձնելու աւելի կատարելագործուած այլ եղանակները, գերմանական ռազմագիտութիւնը ցարդ անհաւատալի էր համարում թշնամու զիրքերի գրաւումը:

Ցզինժոուլին տիրելուց յետոյ գններալ Օկուլի զօրարանակը ներս խուժեց Կվանաունեան թերակղզին, գրաւեց Դալնըի ծովափնեայ քաղաքը և ցամաքից պաշարեց կուռախնձոր Պուրտ-Արտուրը:

Ժամանակակից «կատարելագործուած» պատերազմների ստեղծում պատճառող արիւնահեղ տեսարաններից աչք դարձնենք Եւրոպական արեւմուտք, ուր խաղաղ ճանապարհով զարգանում է Եկեղեցու և Պետութեան այն մեծ պայքարը, որ մղուած է ներկայ Ֆրանսիան Վատիկանի դէմ: Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Լուրէի այցելութիւնը Խալիսային մի կողմից առիթ տուեց խաղացիներին արտայտելու իրանց բոլոր համակրանքները արիւնակից Ֆրանսիացիներին, իսկ միւս կողմից՝ նորոգեց պապականութեան հին վէրքը, որ հասցըրել էր նրան ազատուած և միացած Խալիսան հիմնելով Վատիկանի կողքին խրոխտ Կվիրինալը: Այդ Կվիրինալի գոյութիւնը մի հարուած էր պապերի աշխարհական իշխանութեան, և այդ բնաւ չեն մոռանալ ս. Պետրոսի յաջորդները: Սակայն, աւանդ փառացս անցաւորի, որքան փոխուել են ժամանակները, կաթոլիկ տէրութեան՝ Ֆրանսիայի ներկայացուցիչ Լուրէն դալիս է Հռոմ, այցելում է Կվիրինալը, իսկ թէ ինքը և թէ մինիստր Դելկասսէն անտես են անում Վատիկանը: Պապը չէր կարող տանել այդպիսի վիրաւորանք, չնայած իր բոլոր «խաղաղասիրութեան»: Եւ հա բողոքեց: Այդ բողոքը տպուեց Ֆրանսիական լրագրներում և յարուցեց դիւրագրգիռ Ֆրանսիայում կուսակցութիւնների իրարանցում: Ամեն զոյնի արմատականները բնականաբար ուրախ էին որ Եկեղեցին Պետութիւնից բաժանելու ձգձգուող հարցին վերջապէս մի զօրեղ մղում տրուեց: Պապի բողոքը վիրաւորական էր Ֆրանսիայի համար, և այդ իրաւունք տուեց նրան երկարատեւ արձակուրդի պատրուակով հետ կանչել Վատիկանից Ֆրանսիական դեսպան Նիդարին: Դիպլոմատիական յարաբերութիւնների այդ խղումը առիթ է տալիս Ֆրանսիական

կղերական-պահպանողականներին հայրենիքի շահերի վտանգման մասին ճառել. չէ՞ որ, ասում են նրանք, Մերձաւոր Արեւելքում Փրանսիական ազդեցութիւնը դրանով կը թուլանայ, քանի որ կաթոլիկ կղերի միջոցով ենք մեր այդ ազդեցութիւնը պահպանում, և Փրանսիայի հակառակորդ Վիլհելմ կայսրը կ'օգտուի մեր կառավարութեան այդ անտակտ քայլից... Սակայն Մերձաւոր Արեւելքի գործերին հետևողը կարող էր պատասխանել, որ Փրանսիան վաղուց ի վեր դադարել է դործօն դեր խաղալ այդ թշուառ Արեւելքում, ուր նա յետևում է ուրիշների քաղաքականութեան:

Մերձաւոր Արեւելքում թիւրքիան պատրաստութիւններ է տեսնում կրկնելու 1894—95 թուականների արհաւիրքները: Ինչպէս և այն ժամանակ՝ կոտորածները սկսւում են Սասունից: Բոլոր աեղական ուսաց թերթերում, ինչպէս և «Մշակ»-ում, տպուած էին ապրիլի կէսից սկսած լուրեր Սասունում տեղի ունեցած անցքերի մասին: Այդ տեղեկութիւններից երևում է որ Սասունում հայերը ապստամբուել էին Անդրանիկի առաջնորդութեամբ. ահա մի մանրամասնութիւն այդ ընհարումներից.

Ապրիլի 12-ին, Երեկոյեան, Բաղէշի կուսակալը Սեմալ ուղարկեց Ս. Յովհաննէս վանքի վանահայր Առաքել վարդապետին իբրև պատգամաւոր, որ իր հետ տարաւ Օրմանեան պատրիարքի, Մուշի ու Բաղէշի առաջնորդների ու Մուշի երեւելի հայ անձնաւորութիւնների յորդորակոն նամակները՝ վարդնել զէնքերը և հպատակութիւն յայտնել: Ապստամբներն ևս իրանց պատգամաւորներին ուղարկեցին Գեղաշէն, որ որոշուած է ժողովման վայր: Սակայն կուսակալը դաւադրութիւն էր սարքել և նրա առաջարկը՝ բանակցութիւնների մէջ մտնել՝ կեղծ է եղել. նրա նպատակն եղել է թակարդ լարել, հայ պարագլուխներին հաւաքել մի տեղ և բռնել նրանց ու մէկ հարուածով ամեն ինչ վերջացնել: Ապրիլի 13-ին, առաւօտեան, երբ հայ պատգամաւորները սպասում են բանակցութիւնների սկսման, թիւրք զօրքը և քիւրդ աշիրէթները առաջանում են դէպի Շէնիկ և այնտեղից դէպի Սեմալ, որտեղ գտնւում էր Հրաչյըր իր խմբով: Վերջինս նշմարում է թիւրքերի յարձակողական դիրքը և անմիջապէս դատարկել է տալիս Դաշտակ և Սեմալ գիւղերը, որոնց բնակիչները փախչում են դէպի սար: Այդ գիւղերը կրակի ճարակ են դառնում, և հրդեհը թող չէ տալիս հայերին դիտել թիւրքերի շարժումները: Թիւրքերը ըսկըսում են թնդանօթի հարուածներով կրակ թափել Սեմալի վրայ, հայերը տեղի են տալիս և նահանջում մինչև Չայ, որի ժամանակ սպանւում է Հրաչյըր, մի հայ գինուորի Մատո անու-

նով և մի ուրիշը Կրպօ անունով: Թիւրքերը առաջանում են դէպի Գելիեկուզան, այդտեղ հայերը օգնութեան են հասնում իրանց ընկերներին և վերևից, սարից յարձակում են քիւրդերի վրայ, որոնք չդիմանալով այդ յարձակման, փախուստ են տալիս և հայերը բաւական տեղ քշում են նրանց: Թիւրքերից սպանուել և վիրաւորուել են 100 հոգուց աւելի, թողնելով 17 մաուզերեան հրացան. մի քանի հոգի ևս սպանւում են հայերից: Ահա այդ կռուից յետոյ ուսական, Փրանսիական և անգլիական հիւպատոսները որոշում են իրանք դիմել և բանակցել ապրստամբների հետ:

Սակայն մինչև այժմ յայտնի չէ թէ ինչ հետևանք ունեցաւ այդ հիւպատոսների միջամտութիւնը: Դրականապէս յայտնի է միայն որ Թիւրքերը աւերեցին աւելի քան 30 գիւղ, և ջնջեցին հայութիւնը Սասունում Եւրոպայի հէնց աչքերի առաջ:

Իհարկէ այդ նոյն Եւրոպան չի դադարում արտադրել համամարդկային նշանակութիւն ունեցող անհատներ, սակայն դժբախտ մեծ մասին արուեստի և գիտութեան մարդիկ են, որոնք միջազգային հարցերում ոչ մի դեր չեն խաղում, շատ աշխատանքներ միայն խառնում են իրանց ազգային-հասարակական գործերում: Այդպիսի անձերից էին վերջին ամսում վախճանուած հետեւեալ նշանաւոր անհատները: Միւնխենում ապրիլի սկզբում վախճանուեց հռչակաւոր գերմանացի (բաւարացի) նկարիչ Ֆրանս Լենքախ, որ յայտնի էր իբրև դէմքեր նկարող (պորտրետիստ). նրա վրձինի տակ Գլադստոնը, Բիսմարկը գտնում էին իրանց բնաւորութեան այտայտող գծերը: Իր հայրենիքից դուրս յայտնի էր և ունգարացի ծերունի գրող Մավր Իոկայը, որ իր ժողովրդին տուել է 200 հատոր վիպական, բանաստեղծական և երգիծական գրութեան, երկար տարիներ շարունակ խմբագրել է բազմաթիւ թերթեր, իսկ վերջերումս պետական օրգան Nemzet-ի գլխաւոր ղեկավարն էր: Ֆրանսիան ևս ունեցաւ նշանաւոր կորուստ, մեռաւ 64 տարեկան հասակում անմահ Պաստեռի աշխատակից, նրա ինստիտուտի տնօրէն, հռչակաւոր բնագէտ Էմիլ Դիւկլօն, որ գիտէր մաքառել ոչ միայն վնասակար միկրոբների դէմ, այլև դեմօկրատիկ հասարակութեան ցեցերի դէմ, ինչպէս այդ ցոյց տուեց նրա մասնակցութիւնը գրէյֆուսեան պայքարում: Աւելի քիչ հռչակ ունէր մի այլ Փրանսիացի գիտնական, որ հասարակութիւնների զարգացման պրոբլեմներով էր զբաղուած. մեր խօսքը սոցիոլոգ Գարբիէլ Տարդի մասին է, որի «հետևողութեան օրէնքները» (Les lois de l'imitation) աշխատու-

թիւնը, իբրեւ մասսայի հոգեւանութիւնը պարզող մի տեսութիւն, սոցիոլոգիա մանուկ գիտութեան շէնքում որոշ տեղ ունի գրաւած:

Անգլո-սաքս ցեղն ևս ունեցաւ մեծ կորուստ, մեռաւ Ստենլին որ կրում էր իր մէջ այդ ցեղի զօրեղ կամքի և գրականութեան բնորոշ գծերը, նրա կենսագրականը ընթերցողը կը գտնի ներքեւում:

Լ. Ս.

Մայիսի 19:

Հէնրի Ստենլի:—Յանձին Ստենլիի գերեզման իջաւ ամենանշանաւոր ճանապարհորդներից մինը, որը հռչակուել էր մանաւանդ Աֆրիկայի իր խիղախ հետազոտութիւններով և մեծ չափով նպաստել էր աֆրիկական մայր-ցամաքի կենտրոնական մասերում անյայտ հողեր գտնելուն:

Հէնրի Ստենլի (Stanley) անունը ճանապարհորդի տոհմային անունը չէ, նրան կոչում էին Ջեմս Բատլենդ: Աղքատ ֆերմերի որդի՝ նա ծնուեց 1841 թուականին և սկզբնական կրթութիւնն ստացաւ ապաստանում: Դէպքի բերմամբ նա դարձաւ նաւային իւնգա (աշակերտ նաւի վրայ), գէպքի բերմամբ էլ նա ընկաւ Նոր-Օրլէան, ուր նրան որդեգրեց տեղացի մի վաճառական—Ստենլի: 1862 թ. թաղելով իր երկրորդ հօրը՝ Ստենլին վոլոնտեր (կամաւոր զինուոր) մտաւ հարաւայինների զօրքը, գերի ընկաւ և նշանակուեց Միացեալ Նահանգների նաւատորմի պաշտօնեայ, ուր միջմանի աստիճանին հասաւ: Բայց Ստենլին տեղը հստոյ մարդ չէր: Հէնց որ պատերազմը վերջացաւ, նա իբրեւ թղթակից գնաց Թուրքիա և Փոքր Ասիա, իսկ երբ 1867 թ. պատերազմ ծագեց Անգլիայի և Հարէշտանի մէջ, նա իբրեւ New York Herald-ի թղթակից ուղեկցեց սնդլիական զօրքին: New York Herald-ի հրատարակիչ յայտնի Բեննետը դրանից յետոյ նրան զուտ ամերիկական յանձնարարութիւն արաւ—գտնել Աֆրիկայում Լեւինգստոնին—և տուաւ նրան այդ բանի համար բոլոր անհրաժեշտ միջոցները: 1869 թուականից ի վեր Լեւինգստոնի Վասին լուր չկար, և միայն գիտէին այն, որ գտնուում է Կենտրոնական Աֆրիկայում ինչ-որ մի տեղ, Տանգանիկի լճի մօտերը: 1871 թուի յունուարին Ջանգիբարում տեղացիներից մի խումբ կազմակերպելով՝ Ստենլին ոտք դրաւ Արեւելեան Աֆրիկայի ափը և ուղևորուեց գէպի Տանգանիկի լիճն, ամեն տեղ հարցաւորւած անելով տեղացիներին սպիտակ մարդու մասին: Վերջապէս նրան աջողուեց գտնել Լեւինգստոնին և նրա հետ

միասին հետազոտել Տանգանիկիի հիւսիսային մասը, որից պարզուեց, որ այդ լիճը Նեղոսի ջրաբաշխին չէ պատկանում։
 այդ ճանապարհորդութեան պատմութիւնն Ստենլին արել է «Ինչպէս գտայ Լեինգստոնին» գրքում (1872)։ 1873—1874 թուականներին Ստենլին իբրեւ զինուորական թղթակից ուղեկցեց արեւմտեան արեւադարձային Աֆրիկայում ապրող աշանթի ցեղի դէմ ուղարկուած անդլիական զօրքին և այնուհետև նրա կարագրեց իր տպաւորութիւնները «Կումասսի և Մադագլա» գրութեամբ (1874)։ Նոյն տարին New York Herald-ի և Daily Telegraph-ի միջոցներով նա նորից Աֆրիկա ուղևորուեց և կատարեց այդ մայր-ցամաքի իր նշանաւոր անցքն արեւելքից արեւմուտք—Բահամոյօից, Ուկուենէ կամ Վիկտորիա-Նիանց լճի մօտով, Ուգանդու և Ունիորօ երկրներով դէպի այն լիճը, որ յետագայում կոչուեց Ալ'բերտ-էդուարդ, և դէպի Նեղոսի սկզբը—նաւորութիւնը—Կագերա գետը։ Այդանդից Ստենլին դուրս եկաւ Տանգանիկի լիճը և զբաղուեց հետազոտելով այդ լճից դէպ արեւմուտք հոսող այն գետերը, որոնք երևաց որ պատկանում են Կոնգօ գետի ջրաբաշխին։ 18 մակոյկներով Լուալաբէ գետն ի վայր գնալով Ստենլին 1877 թուի օգոստոսին հասաւ Կոնգօի գետաբերանը, գրանով վերջացնելով իր դժուար և վճատանգաւոր անցքն Աֆրիկայի վրայով։ Այդ ճանապարհորդութեան նկարագրութիւնը «Սև ցամաքի վրայով» գրքի բովանդակութիւնը կազմեց (1878)։ Ստենլին հետազոտութիւններն առևտրի համար բացել էին լայն յատակագծեր, և բն'գիական կապիտալիստները Ստենլին հրաւիրեցին ղեկավարելու Կոնգօի պետութիւնը հիմնելու համար նոր պատրաստուած էկսպեդիցիան, որը նկարագրեց Ստենլին «Կոնգօն և ազատ պետութեան հիմնադրութիւնը» գրութեամբ (1885)։ Հինգերորդ անգամ Ստենլին Աֆրիկա ուղևորուեց 1887 թուին եւ գիպտական կառարարութեան հրաւերով գտնելու էմին-փաշային, որ Մադգիի ապստամբութեան շնորհիւ կորուսել էր Եգիպտոսի հետ յարաբերութիւն ունենալուց։ Այս անգամ Ստենլին գնաց արեւմուտքից արեւելք, ստորին Կոնգօից դէպի վեր այդ գետի ընթացքով մինչև Արուվիմիի նրա մէջ թափուելը, ապա այդ գետի վրայով նախնական անտառի միջով (ուր ի միջի ալլոց նա պատահեց թղուկների մի հետաքրքիր ցեղի) Նեղոսի աւազանը, դէպի Ալ'բերտ-Նիաց լիճը։ Միայն 1888 թուի ապրիլին նրան աջողուեց գտնել էմինին։ Ապա Ստենլին զբաղուեց Ալ'բերտ և Ալ'բերտ-էդուարդ լճերի հետազոտութեամբ և հաստատեց նրանց կապը Նեղոսի հետ Սեմլիկի գետի միջոցով։ 1889 թուի ղեկաւորներին Ստենլին հասաւ Բահամոյօ,

որտեղից վերադարձաւ Եւրոպա և նկարագրեց իր ճանապարհորդութիւնը «In darkest Africa» գրքում (1890): Ստենլիի ահագին ծառայութիւնները Կոնտրոնական Աֆրիկան հետազոտելու գործում մի քիչ նսեմանում են բնիկ-սեղերի հետ նրա խիստ կռուիտ վարուեցողութեամբը: Ստենլին աչքի էր ընկնում իր կատարեալ առողջութեամբ, որը և օգնեց նրան անպատիժ դիմանալ ծանր աշխատանքներին, զրկանքներին և հիւանդութիւններին, որոնց հետ կապուած է արեւադարձային Աֆրիկայում ճանապարհորդելը: Վերջին տարիները նա ապրում էր Լոնդոնում՝ հանգստանալով իր բաղմամբիւ էկզպեղիցիաներից:

„Русск. Вѣд.“

Թ Ա Տ Ր Ո Ն

Նկարիչ Թաճեանի. զրամա 4 գործողութեամբ. հեղ. Լ. Մանուէլեանի.

Դերասան Յովհաննիսեանը՝ օր. Խիթարեանի և սիրողների մասնակցութեամբ, մայիսի 18-ի երեկոյեան «Վրաց Ազնուականները» թատրոնին մէջ ներկայացուց պ. Լ. Մանուէլեանի յիշեալ դրաման:

Նկարիչ Թաճեանը առաջին անգամն է որ բեմական լոյսը կը տեսնէր Թիֆլիսին մէջ: Թատերախաղը՝ որուն բնագիրը այս էջերուն մէջ իսկ երեցաւ, ծանօթ է արդէն մեր ընթերցողներուն:

Խնչպէս գիտէք, հեղինակը ցոյց կու տայ մեզի նկարիչ մը, որ հասարակութենէն պէտք եղածին չափ չգնահատուելով՝ անկարող իր ընտանիքի կեանքը տպահովել զեղարուեստի միջոցաւ, կը հարկադրուի թողուլ իր սիրած ասպարէզը և մտնել առևտրական տուն մը իբրեւ «կորրեսպոնդէնտ»: Բայց այդ նոր պաշտօնին մէջ «համրիչների չըխկչըխկոցը», «գրիչների ճռճըռոցը», «հեռախօսի զանգահարութիւնը» միացած իր բարոյական տանջանքներին, այն աստիճան աղետաբեր ազդեցութիւն մը կը գործեն զեղարուեստագետին վրայ, որ սրտի հիւանդութիւն ստանալով կը մեռնի:

Այս է «Նկարիչ Թաճեանի» թեման:

Անկեղծօրէն ընելով՝ դրամայի ընթերցումը այնքան ալ գրաւիչ չեղաւ մեզի համար: Բայց կան պիեսներ, որ եթէ ըն-

Թերցումի ժամանակ շատ բան կը կորցնեն, մեծ բան կը շահին բեմի վրայ:

«Նկարիչ Թաշճեան»-ը, դժբաղդաբար, այդ փորձէն ալ յաղթական դուրս չեկաւ: Որովհետեւ Թատերախաղը՝ իր ձեւին՝ ֆորմին մէջ պակասաւոր է: Գործողութիւնը դանդաղ է, ու գլխաւորը՝ դրամատիզմ գրեթէ չի պարունակիր: Իրաւ՝ հերոսը շարք մը բարոյական տանջանքներէ յետոյ կը մեռնի, բայց այդ մահը դժուար թէ կարող ըլլայ դրամայի կորիզը կազմել:

Պ. Մանուէլեանի էական սխալը՝ հերոսը նկարչի մը դիմագծերու տակ մեզ ներկայացնելն է: Երեակայեցէ՛ք, իր դրաման ռեքան պիտի լայննար, եթէ իրբն հերոս ընտրած ըլլար գրագէտ մը կամ հրապարակախօս մը: Ի՞նչ հոյակապ տեսարաններ պիտի կրնար հանել Գաղափարի ու Ճշմարտութեան ջահը ձեռքը բռնող Անհատին ու Խաւարի ուժերով զինուած Հասարակութեան միջև տեղի ունեցող ընդհարումներէն: Գրագէտ կամ հրապարակախօս Թաշճեանը՝ տեսակ մը դոկտոր Շտոկման ըլլար գուցէ, եթէ ոչ նոյնքան վսեմ, գոնէ նոյնքան յուզող, որովհետեւ ան պիտի ապրէր ու պիտի գործէր մեր մէջ, ու մենք զինքը շատ լաւ պիտի հասկնայինք: Մենք շատ լաւ պիտի հասկնայինք ու նաեւ շատ բնական պիտի պոնէինք անոր կրած հալածանքները, ձախորդութիւնները, գառնութիւններն ու տանջանքները մեր մէջ, այսինքն անգիտակցութեամբ դրահաւորուած այնպիսի հասարակութեան մը մէջ, ինչպէս է հայ հասարակութիւնը:

Բայց Թաշճեանը նկարիչ մըն է, հետեաբար դործ ունի ոչ թէ որոշ հասարակութեան մը, այլ բոլոր հասարակութիւններու հետ: Իր ընտրած ասպարէզովն իսկ համաշխարհային մարդ, իր տաղանդին առջև բաց են բոլոր երկրները, եթէ հայը, թուրքը, վրացին, ռուսը չի գնահատեր իր ստեղծագործութիւնները, կան ֆրանսիացին, անգլիացին, իտալացին, որոնք պատրաստ են իր հայրենակիցներու անտարբերութիւնն ու արհամարհանքը փոխարինել իրենց քաջակերութեամբ, հիացումով:

Ահա այն մեծ թիւրիմացութիւնը, որու ցանցերուն մէջ կը բռնուի հեղինակը իր առաջին քայլին:

Բայց շարունակենք: Ենթադրենք, որ այդ նկարիչը պինդ կպած է իր հողին, իր միջավայրին, որ կովկասէն դուրս աշխարհ չկայ իրեն համար, որ ան վճռած է ապրիլ՝ ու պրոտոգրել զինքը շրջապատող անմշակ հասարակութեան համար: Այս պարագային պ. Մանուէլեան պէտք է ջանար ցայտուն կերպով պատկերացնել այն լուռ, բայց ողբերգական մաքառումը,

այն եղերական ու յուզիչ ու խուլ պայքարը, որ ստիպուած է մղել ճշմարիտ գեղարուեստագէտը անկիրթ, տգէտ, կոպիտ հասարակութեան մը հետ:

Այս թեման զարգացնելու համար հեղինակը պարտաւոր էր նախ՝ մեղի ցոյց տալ նկարիչ մը, որ ոչ միայն հոգով ու մարմնով նուիրուած է իր կոչումին, այլ և խակապէս արուեստագէտ է ու տաղանդաւոր: Անհրաժեշտ էր որ անոր արժանիքը անվիճելի ըլլար, որ ան եթէ ոչ հասարակութեան, զոնէ ձեռնհաս ու հեղինակաւոր անձերու հիացումը վայելէր: Յետոյ ալ, Մանուէլեանի կը մնար մեր առջև մերկացնել նկարչի ներքին կեանքը, այն նիւթական ու բարոյական անթիւ զոհաբերութիւնները, զրկանքներն ու չարչարանքները, որոնց գնով գեղարուեստագէտը կը յամառի՝ զինքը չհասկացող ու արհամարհող հասարակութեան մը բարձրացումին ու հոգեկան սփոփանքին համար ստեղծել գեղեցկութիւն, յուզում, կեանք: Ու այնուհետեւ, երբ ուրիշ ճար չկայ, երբ յոյսի ու փրկութեան բոլոր դռները փակուած են, երբ դաւնութեան ու զրկանքներու բաժակը լեցուած է — մղէր Թաշճեանը ցաւագին ու գերադոյն զոհողութեան:

Ահա այդ ժամանակ միայն մենք զոհողութեան մեծութեանը գիտակից, գեղեցկութեան ու իդէալին հայհոյող հասարակութեան մը անորակելի վարժունքէն վիրաւորուած՝ պիտի բաժնէինք Թաշճեանի զայրոյթը, խռովքը, ցաւը: Ահա այդ ժամանակ միայն դրաման, հոգեկան պայքարը պիտի փոխադրուէր և՛ մեր վրդովմունքի ու ցաւի հանդիմութեամբը եղբայրացած մեր հոգիներուն մէջ, ու մենք Թաշճեանի զոհաբերութեան տակ պահուած պիտի գտնէինք բողոք ոչ թէ իր ընտանիքին դէմ, որ անընդհատ տրտունջներով զինքը կը ջլատէ, այլ հասարակութեան դէմ, որ՝ մտքին թշնամի, ու նիւթին միայն մատչելի ու բարեկամ, կը խեղդէ ճշմարիտ գեղեցկութիւններն և մեծութիւնները: Ու նոյնպէս այն հասարակական կազմակերպութեան դէմ, որ անհատը կը բռնադատէ ապրիլ, զարդանալ իր բնական ընդունակութիւններուն հակառակ, չընել այն, ինչ որ կը ցանկայ ու ընել այն, ինչ որ չի ցանկար:

Մինչդեռ, իր ներկայ ձևին մէջ, ալ, Մանուէլեանի Թաշճեանը մեղի կը ներկայանայ իր անձնական փառասիրութեան թռիչքին մէջ վիրաւորուած հոգի մը, քան տաղանդի ու գաղափարի ներկայացուցիչ մը:

Բ. տեսիլէն իսկ մենք կ'իմանանք, որ իր պատկերներ «աշակերտական խճրճանքներ» անուանուած են նկարչական

քննադատի մը կողմէ: Գուցէ առարկէք, որ քննադատը սխալուած է. բայց այն ժամանակ ի՞նչ օգուտ կար աւել ցնել այդ գիծը, որ բացի թեման տկարացնելէ ուրիշ բանի չի ծառայեր: Իսկ մենք ի՞նչ փաստեր ունինք թէ գեղարուեստագէտին տաղանդն անսկիզբի է: Հեղինակը չի կրնար հաստատուած համարել այն՝ ինչ որ ապացուցութեան կարօտ է: Իր ենթադրութիւնը մեր համոզումը չի շիներ, մեզի փաստեր պէտք են: Որպէս զի մենք համակրենք Թաշճեանին, վստահ ըլլանք անոր կողմին ու նշանակութեան վրայ, բացարձակապէս անհրաժեշտ է որ անոր արժանիքը կասկածի տակ չի մնայ: Այդ փաստերը շատ խախտու են սակայն. ուրիշ թղթակից մը այցելելով անոր պատկերահանդէսը՝ կը յայտարարէ թէ իր պաշտօնակցին քննադատութիւնը «մի անպատկառ յօդուած էր» և կը խոստանայ գովել Թաշճեանի դործերը: Այցելու մը, որու ձեռնհասութիւնը մեզի անծանօթ է, կուգայ իր հիացումը յայտնել հետեւեալ միամիտ եղանակով. «Շնորհակալութիւնս եմ յայտնում այն մեծ զուարճութեան համար, որ ինձ պատճառեցին ձեր գեղեցիկ պատկերները: Մի քանիսը այնքան յաջողուած են, որ մարդ յափշտակուած է նայելիս... Հաւատացէք, պարոն Թաշճեան, որ եթէ ես միջոց ունենայի, անպատճառ ձեռք կը բերէի ձեր պատկերներէց գոնէ երկուսը»... Ի հարկէ կայ և իր բարեկամ բժշկին ու իր աշակերտին խօսք ընդմէջ հաստատուած թէ Թաշճեանը տաղանդ ունի, բայց այդ բոլորը, ինչպէս ըսի, մեզի համար բաւական համոզիկեր չեն: Ընդհակառակը կայ փաստ մը որ ջախջախիչ է: Մանասեան՝ Թաշճեանցի աշակերտը: Եւրոպա երթալ կատարելագործուելէ, արտասահմանի մէջ կարգ մը յաջողութիւններ գտնելէ յետոյ, երբ հայրենիք կը վերադառնայ, միեւնոյն նստարակութեան կողմէ այնքան փայլուն պնահատութեան կ'արժանանայ, որ տակաւին պատկերահանդէսը չի բացած երեք նկար կը ծախէ արդէն բաւական մեծկակ գներով:

Թէ նկարիչը հոգով արտիստ մը չէ, այլ գիլետանտ մը, ահաւասիկ ձեզի ուրիշ փաստ մը:

«Դու մի գեղարուեստագէտ ես» ներքին ձայնը միշտ լըսող Թաշճեանը, «լամ մանկութեան օրերից սկսած զգում էի իմ մէջ անդիմադրելի սէր և հակում զէպի ստեղծագործական մըտորումները» ուռուցիկ կերպով բացադանշող Թաշճեանը, տեսէք թէ ի՞նչ տրամադրութեամբ կը բաժնուի վրձինէն ու յանձըն կ'առնէ «կորրեսպոնդէնտ»-ի պաշտօնը:

Փլ.—Վերջապէս դու հօ ընդմիշտ չես թողնում վրձինդ: Դա կը լինի մի ժամանակաւոր զբաղմունք, մինչև որ մեր զը-

րութիւնը լաւանայ: Այնուհետեւ եղբայրդ Վահանն էլ կ'աւարտի, կը դայ, քեզ օգնութեան ձեռք կը մեկնի, դու կը թեթեւանաս հոգսերից, և այն ժամանակ ոգևորուիր, ինչքան սիրող տայ, թէկուզ գիշեր ու ցերեկ պատկերակալի մօտից մի հեռանար:

Միք.—(Դէմքը պայծառանում է) Այդ լաւ ասացիր, Ֆլորա: Վահանը կը դայ և ամեն ինչ կը բարեփոխուի: (Մտածելով եւ ուրախ) Այո, նա ձեզ կը տայ ձեր ուզած բաղիտաւորութիւնը, իսկ ինձ—ազատութիւն հոգսերի գերութիւնից: Այո, հիանալի կը լինի... և այլն:

Ծանօթ նկարիչ մը, որ հանգիստես էր ներկայացման, արդարացի կերպով կը նկատէր միջնարարի ժամանակ, որ նուիրուած գեղարուեստագէտ մը պիտի նախընտրէր իր գործերը աժան գնով վեջել առաջին յաճախորդին, քան զրժեղ իր կոչումին: Թաշճեանը, որ իր մէկ նկարը չէր համաձայնած 300 բուբլիով ծախելու, յետոյ կը վճռէ ձգել նկարչութիւնը:

Ուրեմն թատերախաղին երկրորդ առանցքն՝ զրկանքի կենցաղի մը ցուցադրութիւնը նոյնպէս կատարեալ լոյսի մէջ է:

Իսկ այն դրուագը, որով Մանուէլեան կը վերջացնէ պիեսը, չի շարժէր ունկնդիրը:

Մանասեան՝ Եւրոպայէն դարձած՝ կ'այցելէ ուսուցչին: Թաշճեան իր նախկին աշակերտէն յաջողութեան ու յաղթանակի լուրերն առնելով՝ դառնութեամբ կը լեցուի. «Ես մէկն եմ այն վատ արարածներից, որոնք դաւաճանում են իրենց կոչմանը և իրենց քանջարը *), այդ գեղեցիկ երկնային պարզւել, հողի տակը թաղում...» կը բացագանչէ: Մանասեանի մեկնելէն յետոյ կնոջը հետ ընդհարումի մէջ կը գնալատի որ «իր ստեղծագործութեան վրայ նայում էին, իբրեւ մի կթան կովի վրայ», կը քաշուի իր սենեակը, հաստատելով՝ որ ինքը ընդունակ է աշխատելու, որ «իր գլուխ-գործոցները դեռ սպասում են» իր առաջը. «ահա—հէնց այս բոլորէիս մի հոյակապ սիւսժետ լուսաւորեց իմ միտքը... դադափարը դեռ ևս աղօտ, դեռ սակաւ անորոշ, բայց ըստ ամենայնի մի հանճարեղ գործ պիտի լինի դա, արժանի նոյնիսկ Բէռլինի յիշատակին... Միայն հարկաւոր է մտածել, լաւ մտածել, և այն—միայնակութեան մէջ. այո, անպայման միայնակութեան մէջ»:

Նոյն բոլորէին ներս կը մտնէ Հոփսիմէ, Եւրոպա բժշկականութիւն ուսած տան բարեկամ մը, որ նոր կը վերադառ-

*) Պէտք է նկատել, որ գծուար թէ որեւէ մէկը իր մասին այդքան յաւակնութեամբ խօսէր:

նայ արտասահմանէն: Հռիփսիմէ երբ կը լսէ որ Թաշճեան ուրիշ գործով կը պարապի, շատ կը զարմանայ. «Գեղարուեստի երկրպագուն, նա որ մի ժամանակ վրձինը չէր թողնում ձեռքից, որի ստեղծագործութեան մէջ էր անփոփոխած իր ամբողջ աշխարհը, ձգել է վրձինը»...

Ու Հռիփսիմէի «անակնկալ երևալը», անոր «կշտամբանքը» և խռով եղբօր՝ Վահանի վերադարձի լուրը այն աստիճան խորապէս կը յուզեն, կը վրդովեն ու նաև կ'ոգևորեն նկարիչը, որ ցնցումին չգիմանալով սրտի պայթումէ մը կը մեռնի:

Պ. Մանուէլեան կը թուի թէ աւելի լաւ ըրած պիտի ըլլար, ձգելով՝ որ իր հերոսը առանց այդ օտարոտի միջամտութեան մեռնի: Թաշճեանի համար ուրիշներու դատաստանը, կարծիքը աւելի ծանրակշիռ չպիտի ըլլար, քան իր ներքին համոզումը, այն ցաւատանջ գիտակցութիւնը թէ ինք գեղարուեստի համար այլևս կորած է: Միթէ Հռիփսիմէի մը հաստատութեան պէտք ունէր զգալու համար որ դժբաժնի է իր կոչումին:

ՏԻԳՐԱՆ

ԽՄԲԱԴՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ

Շարունակուում է «Մուրճ»-ի 1904 թ.-ի բաժանորդագրութիւնը. նոր գրողները կը ստանան յունուարից լոյս տեսած բոլոր համարները: Հարկ ենք համարում յիշեցնելու, որ յաջորդ համարը (№ 6) կ'ուղարկուի միմիայն այն բաժանորդներին, որոնք լրացրած կը լինեն մաս-մաս վճարուող բաժանորդագինը:

Բաղուից, գետաչէնցի պ. պ. Ա. Մուսէլեանց (1 ռ. 50 կ.), Խ. Գաբրիէլեանց (1 ռ. 65 կ.), Ա. Այանեանց (1 ռ.), Մ. Քեոթանչեանց (1 ռ.), Գ. Մէժիեանց (1 ռ.), Ա. Զարգարեանց (1 ռ.), Առ. Զալալեանց (1 ռ.), Ալ. Զալալեանց (1 ռ.), Յ. Եղեանց (50 կ.), և Ս. Զիլինգարեանց (50 կ.) իրանց զիւզի համայնքի համար հաւաքել են ներկայ տարուայ «Մուրճ» ամսագրի մի բաժանորդագին: Յիշեալ համայնքին ուղարկուած են լոյս տեսած համարները:

Պ Ա Տ Ա Ս Խ Ա Ն Ն Ե Ր

ԿԱՐԱԿՈՒՐՏ (Բաշ-Քեոյ), Ա. Մ.—Զի տպուելու:

ՆՈՐ-ԶՈՒՂԱ, Տ. Ա.—Սպասում ենք մեր նամակի պատասխանին:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏԿԵՐՅԱՐԳՈՒԹԻՒՆԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԸՄՆ ԱՌԱՋԻՆ

Ս.-Պետերբուրգ, 1904 թ.

Գինն է 1 ռ. 50 կ.

Ծախւում է Թիֆլիսի «Կենտրոնական» և «Գուտտենբերգ» գը-
րավաճառանոցներում և Ալ. Ստեփանեանցի մօտ (Զուրաւովի
քարվանսարա: 2—6

Բումանիայում և Բուլղարիայում «Մուրճ»-ի բա-
ժանորդագրութիւնը ընդունւում է՝ Բուլղուկ քաղաքում,
պ. Գառնիկ Մազմանեանի գրախանութում:

Կ. ԿՈՒՍՏԻՅԵԱՆ և Լ. ՍԵՐԳՍԵԱՆ

Մ Ա Յ Բ Ե Ն Ի Խ Օ Ս Ք

ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ ՁԵՌՆԱՐԿ

(Երրորդ և չորրորդ տարիների համար)

Համառօտ հայերէն-ռուսերէն բառգրքով

Գինն է 70 կ.

(246 երես)

Դիմել Թիֆլիս՝ «Գուտտենբերգ», և «Կենտրոնական», իսկ Բա-
զու՝ Սամսոն Յարութիւնեանի և «Сотрудникъ» գրավաճառա-
նոցներին:

ԴՈԿՏՈՐ Կ. Յ. ՓԱՇԱՅԵԱՆ

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՍՆՈՒՆԴԸ

Ծննդից մինչև 15 տարեկան հասակը.

Դինն է 50 կոպ.

В Л А Д И М И Р Ъ Д А Л Ь
ТОЛКОВЫЙ СЛОВАРЬ
 ЖИВОГО ВЕЛИКОРУССКАГО ЯЗЫКА

3-е, исправл. и значит. допол. издание, под редакцией проф. Спб. университета И. А. Бодуэна-де-Куртене.—Настоящее издание рекомендовано Ученымъ Ком. М. Н. Пр.

вышелъ первый томъ (А—З).

СПБ., 1903—1904. 4°. Стр. 2 нен. + XIV + 1744 столбца + VIII стр.

ПОДПИСКА ПРОДОЛЖАЕТСЯ. Полное собрание состоитъ изъ ЧЕТЫРЕХЪ БОЛЬШИХЪ ТОМОВЪ, каждый томъ изъ 10 вып., всего слѣдовательно 40 вып., заключающихъ до 250 печ. листовъ *in-4°* или около 8000 столбцовъ текста на плотной глазированной бумагѣ. Подписная цѣна—20 р. Допускается разсрочка: при полученіи I тома 7 р. 50 к. и затѣмъ при полученіи выпусковъ XI—XXXV по 50 коп., или же при подп. 2 р. 50 к. и за кажд. изъ перв. 35 вып. по 50 к.—Перес. по дѣйств. стоим., при чемъ для удобства расчета подписчикамъ съ разсрочкою выпуски высылаются съ наложеннымъ платежомъ.

Подписка принимается: у издателей—въ книжныхъ магазинахъ Т-ва М. О. ВОЛЬФЪ—С.—Петербургъ, Гостиный Дворъ. 18, и Москва: 1) Кузнецкій Мостъ, д. Дзамгаровыхъ, и 2) Моховая, д. Чицова и Курьидиной (противъ университета), а также у всѣхъ др. столичныхъ и провинціальныхъ книгопродавцевъ.

Պ Ա Ր Տ Է Ձ

Շարաթական հանդես

Գրական, գիտական եւ մանկավարժական

Բաժանորդագրութիւն եւ պայմանք

ՊԱՐՏԷՁԸ կը հրատարակուի Շարաթ օրերը: Բաժանորդագրութիւնը տարեկան է եւ կը սկսի ամէն տարի Նոյեմբեր 1էն. տարւոյն ընթացքին մէջ բաժանորդագրողները կը ստանան Նոյ. 1էն հրատարակուած թիւերը: Բաժանորդագրինն է ԿԱՆԽԻԿ 60 զահեկան ողջ, Եգիպտոսի համար. արտասահման՝ 16 ֆրանք կամ 6 ռուբլի 50 կ. կամ 3,5 տոլար: Չհրատարակուած գրութիւնները չեն վերագարձուիր:

Ձեռքէ կը ծախուի հատը վաթսուն փարայի ողջ Հասցէ

Խմբագրութիւն «Պարտէզ» շարաթական Հանդէսի Ալեքսանդրիա (Եգիպտոս) Պարոս—Րամլէ

MIHRAN ASKANAZ

Rédacteur-propriétaire du Journal «Bardez»

(Egypte). Alexandrie, Bacos—Ramleh.

—Ամէն գիրք որմէ ՊԱՐՏԷՁԻ Խմբագրութիւնը կը ստանայ 1 օրինակ, իրաւունք պիտի ունենայ երեք սնկած մանուցման:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՇԵՐՈՒԹԻՒՆ ԳԼԵԹԱՐԱՆ ԼՈՋԱՆ, ՅՎԻՅՅԱՐԻԸ

Վարժարանիս ամառուան վեցամսեայի դասախօսութիւնները կը սկսին ապրիլի $\frac{1}{14}$ -էն:

Վարժարանս այդ վեցամսեայէն սկսեալ հինգ աշակերտ պիտի ընդունի մեծ վեղջով, այն է՝ տարեկան 520 ըուբլիով:— Վարժարանէս շրջանաւարտները կարող են առանց քննութեան մտնիլ համալսարան:— Տեղական կառավարական դպրոցները յաճախելու ծախքը վարժարանիս տարեկան տոկոսին մէջ կը պարունակուի:— Վարժարանիս անօրէնը յանձն կ'առնէ հայ օրիորդները պատուաւոր ընտանիքներու մօտ դնելու, ինչպէս և անոնց բարոյական և մտաւորական զարգացման վրայ հսկելու գործը:

Մանրամասնութիւններու համար դիմել՝ Թիֆլիզ, Գոլտտենբերգ գրախանութը, կամ տնօրէնին հետեւեալ հասցէով.

M. Nalbandian

Institut arménien

Lausanne, (Suisse).

LA REVUE

(Ancienne „Revue des Revues“)

Abonnement

Etranger (Union postale) 28 fr. par an, le prix du numéro séparé à l'Etranger. 1 fr. 50.

Directeur-Redacteur en Chef:

Jean Finot

Administration et Redaction: 12, Avenue de l'Opéra.

Paris

3—1

ՇՔԵՂ

ԴԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԱԼԲՈՐ

3 արտ

Ալբոսի իւրաքանչիւր օրինակի արժէքը 1 Ր. 50 Կ.

Դիմել՝ Тифсь, фототипія Гнуні-Маримъ.

Գումարով գնողներին $\frac{3}{10}$ զեղջ.

2—2

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՄՇԱԿ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՐԱԳՐԻ

(32-րդ տարի)

ՆԵՐԿԱՅ 1904 ԹԻԱԿԱՆԻՆ

«Մշակը» հրատարակուի է նոյն պրոգրամով եւ նոյն ուղղութեամբ

Ամեն օր քացի տօներին յաջորդող օրերից։

Բաժանորդագիւնը. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասնեւէկ եւ տասն ամսուանը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսուանը՝ 8 ռ., եօթն ամսուանը՝ 7 ռ., վեց ամսուանը՝ 6 ռ., հինգ ամսուանը՝ 5 ռ., չորս ամսուանը՝ 4 ռ., երեք ամսուանը՝ 3 ռ., երկու ամսուանը՝ 2 ռ. եւ մի ամսուանը՝ 1 ռուբլի։

Արտասահմանեան քաժանորդագրութիւնը. Ա. մ. եւ ը ի կ ա յ ի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 7 դոլլար. Եւ ը ռ պ ա յ ի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի։

«Մշակին» գրուել կարելի է յովքագրատանը՝ «Բազարնայա եւ Բարոնսկայա փողոցների անկիւն»։

Կայսրութեան ուրիշ բաղադրներից «Մշակին» գրուելու համար եւ առհասարակ նամակներ եւ ծրարներ ուղարկելիս՝ պէտք է զիմեւ հետեւեալ հասցէով. ТИФ-ЛИСТЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունուի են բոլոր լեզուներով։

Ապառիկ քաժանորդագրութիւն չէ ընդունուի։

Փամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Գ. Սպենգիարեան
Հրատարակչուհի՝ Վ. Գաւանեան

Բրեղիկին:—† Շահաժեան, Լ. Սարգսեան . .

Նոր փոխառութիւն:—Էժոն քնակարաններ կա-
ռուցանող քնկերութիւնը Պետերբուրգում:—Մամուլի
փերաքերիալ կարգադրութիւններ 187

20. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Ռուս-ձաղօնական պատերազմը:
—Ֆրանսիայի եւ Աւստրիանի յարաբերութիւնները:—
Ստաւնի գէպերը:—Գեղարուեստի եւ գիտութեան նշա-
նաւոր կորուստներ Աւրուստիայում—Լենքալս, Խոկայ,
Գիւլլօ, Տարդ, Ստեղի, Լ. Ս.
Հէնրի Ստեղի 195

21. ԹԱՏՐՈՆ, Լ. Մանուէլեանի «Նկարիչ Քաջման», Տիգ-
րանի. 203

22. ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՅ 208

23. ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ. —

24. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 209

25. I ՅԱԻԵԼՈՒԱԾ, Հէյմս Մորիէր՝ «ՀԱՁԻ ԲԱԲԱՅԻ ԱՐ-
ԿԱՆՆԵՐԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆՈՒՄ», վէպ պարսկ.
Կեանքից, թարգմ. անգլ. Մ. Կարապետեան 97—112

26. II ՅԱԻԵԼՈՒԱԾ, իշխ. Ա. Սումբատովի՝ «ԴԱԻԱՃԱ-
ՆՈՒԹԻՒՆ», զրամա 5 արար., թարգմ. ուսու-
բէնից Ա. Ծառուբեան. 23—38

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Խմբագրութիւնը յատուկ խնդրում է յօդուածագրերից՝ դրել պարզ,
մանաւանդ թեքը, յատուկ տնտեսներն ու օտար բառերը, ե թեքի միայն մի
կրեւի վրայ. առանձնապէս ուշ դարձնել կէտագրութեան վրայ: Թարգմանու-
թեան հետ պէտք է ուղարկել խմբագրութեանը ե՛ր քննադիրը:

2. Չքննարկուած մեծ յօդուածները պահուած են խմբագրատանը 6 ամիս,
իսկ յետոյ ոչնչացուած են: Չկապիրը լիտ ոտանալու համար պէտք է ուղար-
կել ճանապարհածախար: Փոքր յօդուածներն ու ոտանաւորները չեն վերագոր-
ծուում:

3. Գրուածքների վերաձուլութեան չափը սրտչում է խմբագրութիւնը:
Խմբագրութեանն առանց պայմանների ուղարկուած ձեռագիրները համարում են
անվճարելի:

4. Խմբագրութիւնը իրան է վերապահում ուղարկուած յօդուածները փո-
փոխելու կամ կրճատելու իրաւունքը:

5. «Մուտքի» համարը չափացուելու դէպքում պէտք է խմբագրութեանը
տեղեկութիւն տալ ոչ ուշ, քան յաջորդ համարի լոյս տեսնելը:

6. Խմբագրութեանը դատապարտ հարցումներով դիմող անձինք պէտք է
պատասխանի համար ուղարկել նամակապրօշմ կամ պատասխին բլանկ:

7. Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել 40 կողմ: Հասցէի փոփո-
խումը պէտք է ստացուի խմբագրատանը իւրաքանչիւր ամսուայ 25-ից ոչ ուշ,
որպէսզէն առաջիկայ համարն ուղարկուի նոր հասցէով:

ՅԵՐԱՐԵՆԿԱՌԻՄ Է ԲԵԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

1904 թ.

Մ Ո Ւ Ր Ճ

ԴՐԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

(Նոր շրջան IV տարի)

Խմբագրութեան եւ աշխատակիցների նոյն կազմով:

Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ն Ը

Ռուսաստանում՝ տարեկան 10 ռ.	Արաստահման՝ 12 ռ.	(32 ֆ.)
կէս տարին 6 »	» 7 »	(18 ֆ.)
1 ամսուան 1 »	» 1 » 20կ.	(3 1/2 ֆ.)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՒՈՒՄ Է.

Թիֆլիսում—խմբագրատանը (ձախճովաձեան փողոց, տ. № 16):
Կոյստուքեան ալ **საქართველოს** պէտք է ղիմել՝ Тифლისь, въ редакцію
журнала „МУРЧЪ“.

Արաստահմանից՝ Tiflis, Rédaction de la revue „MOURTCH“.

Բացի այդ, «Մուրճ»-ին կարելի է գրուել նաեւ.

Թիֆլիսում—«Գուտտենբերգ» զրաւագատանոցում:

Բազում—«Сотрудники» զրաւագատանոցում:

Մոսկուայում—ա.Վ. Քանանեանի մօտ (Сухаревская площ. с.д.):

Երևանում—«Արարտ» զրախանութում:

Արաստահմանի բաժանորդները կարող են ղիմել՝

Թեհրանում—Հայոց դպրոցներին տեսուչ պ. Լևոն Բաբայեանին:

Եզրայեստում—գովարդ Կ. Փաշայեան-Խանին (Ալէքսանդրիա):

Ծանօթութիւն. Բաժանորդագիրը կարելի է վճարել նաեւ մաս-մաս.
սկզբում 5 ռ., մայիսի 1-ին 3 ռ. և յուլիսի 1-ին՝ 2 ռ.—կամ՝ սկզբում 5 ռ. և
յուլիսի 1-ին 5 ռուբլի:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ընդունում է տմեն լիզուով: Յայտարարու-
թիւնների համար վճարում են—1 կրնա բունդ յայտարարութեան համար 15 ռ.,
1/2 կր.—8 ռ., 1/4 կր.—4 ռ., տղատեղ (կտրւել)—40 կ.:

Ձեռագիրները, նամակները և ծրարները պէտք է ուղղել
խմբագրութեան, ԼեհՈՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ անունով: